

ԿԱՐՈ ԺԱՄԽԱՐՅԱՆ

# ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2019

1612845 93(=919.81)(569.1) + 93(=919.81)(569.3)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԿԱՐՈ ԱՂՎԱՆԻ ԺԱՄԽԱՐՅԱՆ

# ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՎ ՀԱՅԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 1920-1930-ԱԿԱՆ ԹԹ.

ԵՐԵՎԱՆ 2019

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3
Ժ 210

Հրատարակվում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:

Հրատարակության պատրաստեց էթերի Մամուլյանը

խմբագիր՝ պ. գ. թ., դոցենտ է. Գ. Գևորգյան
գրախոս՝ պ. գ. թ. Ա. Ա. Ֆիշենկճյան

Ժամխարյան Կ. Ա.
Ժ 210 Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ.: Կ. Ժամխարյան.- Եր: ԱՀԱ Պոլիգրաֆ հրատարակչություն, 2019, 180 էջ:

Աշխատությունը նվիրված է 1920-1930-ական թվականներին Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների ձևավորմանը, հայապահպան առաքելության կազմակերպմանը, համայնքների որբանոցներին, կրթական հաստատություններին, թատերական, գրական կյանքին, պարբերական մամուլին: Նշված խնդիրներն ուսումնասիրված են արխիվային փաստաթղթերի, հուշագրությունների, ժամանակի մամուլի և գիտական գրականության համակողմանի օգտագործմամբ:

Գիրքը հասցեագրված է պատմաբաններին, բանասերներին, արվեստաբաններին, հայկական Սփյուռքի պատմությամբ հետաքրքրվող լայն հանրությանը:

Գրքի շապիկին Հալեպի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին է (1936 թ.):

ՀՏԴ 93/94
ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-853-32-1
© «ԱՀԱ Պոլիգրաֆ» հրատարակչություն, 2019

# ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայագիտության շրջանակներում առանձնակի կարևորություն է ներկայացնում հայկական Սփյուռքի պատմության ուսումնասիրությունը: Ինչպես հայ գաղթավայրերի, այնպես էլ սփյուռքահայ համայնքների գործունեության սահմաններում ուշագրավ է դրսաշխարհի հայության կրթամշակութային կյանքը: Բազմաթիվ կրթօջախների և մշակութային գործունեության հետազոտությունը գալիս է լրացնելու ոչ միայն տվյալ երկրի, այլև ողջ սփյուռքահայության պատմության ուսումնասիրության բնագավառում առկա բացը: Տարբեր ժամանակաշրջաններին վերաբերող սփյուռքահայ կրթամշակութային կյանքի լուսաբանումը պայմանավորված է ինչպես հայության, այնպես էլ տվյալ երկրում և տարածաշրջանում ընթացող զարգացումներով:

Սփյուռքի սկզբնավորման հատկապես առաջին տասնամյակների ընթացքում երևան եկան կրթական ու մշակութային գործիչներ, որոնց ջանքերի շնորհիվ պարարտ հող նախապատրաստվեց սփյուռքահայ դպրոցի հետագա զարգացման, կրթական գործի արդյունավետության բարձրացման, ինչպես նաև մշակութային վերելքի համար: Այս գործընթացը կարևոր նախապայման էր ցեղասպանությունից մազապուրծ հայության փրկության առաքելությունն իրագործելիս:

1920-1930-ական թթ. սփյուռքահայ մտավորականության ներկայացուցիչները ձեռնարկում էին ամենատարբեր միջոցները մատաղ սերնդի կրթության և դաստիարակության հիմնախնդիրները լուծելու, հայ ինքնության պահպանության նպատակով:

Նշված ժամանակաշրջանում սփյուռքահայ կրթամշակութային կյանքի ուսումնասիրության տեսանկյունից առաջնային նշանակություն ունեն Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում հիմնված կրթական հաստատությունների,

մշակութային կյանքի, ինչպես նաև կրթական ու մշակութային գործունեության կազմակերպմանը վերաբերող տեղեկությունների վերհանումը, համադրումն ու վերլուծությունը:

1920-1930-ական թթ. Սիրիայում և Լիբանանում սկզբնավորվող հայկական համայնքների կրթամշակութային կյանքի ուսումնասիրությունն ունի գիտական կարևոր նշանակություն: Թեմայի համակողմանի հետազոտությունը հնարավորություն է ընձեռում վերհանելու ոչ միայն համայնքների կրթամշակութային կյանքի զարգացման միտումները, այլև համարժեքորեն գնահատելու Սփյուռքի պատմության կոնկրետ ժամանակահատվածը:

Խնդրո առարկա ժամանակաշրջանում սկիզբ առավ Սփյուռքի կազմավորման գործընթացը: Ցեղասպանությունից հետո ողջ մնացած հայությունը սփռվեց ողջ աշխարհում: Նախքան Մեծ Եղեռնը աշխարհի տարբեր ծայրերում գոյություն ունեցող հայկական գաղթավայրերը համալրվեցին նոր գաղթականներով: Հայաշատ բնակավայրերում գործող համայնական կառույցները եկեղեցիները, դպրոցները, մշակութային օջախները, չէին կարող բավարարել հազարավոր գաղթականների պետքերը: Ակնհայտ էր, որ հայկական գաղթավայրերը կարճ ժամանակում ընդլայնեցին իրենց աշխարհագրական սահմանները, իսկ գաղթական հայերը լծվեցին նոր պայմաններին հարմարվելու, ներհամայնական կյանքը կազմակերպելու դժվարին գործին: Գաղթական հայությունը մեծ թիվ էր կազմում հատկապես Սիրիայում և Լիբանանում: Այս հանգամանքը հաշվի առնելով ինչպես ժամանակակիցները, այնպես էլ ներկայիս ուսումնասիրողները, անչափ կարևորել և կարևորում են այս համայնքների դերը Սփյուռքում: Մասնավորապես սիրիահայ և լիբանանահայ կրթական ու մշակութային կյանքի սկզբնավորումն ու հետագա զարգացումը գտնվել են նրանց ուշադրության կիզակետում:Նշանակալից հայապահպան գործունեություն էր ծավալում Կիլիկիո կաթողիկոսությունը, ինչը կարևոր էր սփյուռքահայության համախմբման, համայնական

կառույցների գործունեության համակարգման և միջհամայնքային կապերի ամրապնդման գործում: Որոշ ժամանակ անց Հալեպն ու Բեյրութը հանդես եկան որպես սփյուռքահայ մշակութային կենտրոններ, որտեղ կազմակերպվում էին համասփյուռքյան նշանակություն ունեցող կարևոր միջոցառումներ: Նշված համայնքները մեծ դերակատարում ունեցան սփյուռքահայ մտավորականության կայացման գործում: Թևակոխելով կրթական ու մշակութային կյանքի սկզբնավորման փուլ սիրիահայ և լիբանանահայ համայնքները ստանձնեցին ողջ Սփյուռքի համար կրթական և մշակութային գործիչների մատակարարի դեր: Հալեպում, Բեյրութում և մյուս հայաշատ քաղաքներում հիմնված հայ կրթական հաստատությունների շրջանավարտներն իրենց ծառայությունները մատուցեցին սփյուռքահայ տարբեր համայնքներում: Այս ամենը հաշվի առնելով՝ կարևորվում է կրթամշակութային կյանքի սկզբնավորման, ակունքների ուսումնասիրությունն ու մինչ օրս արդիական համարվող հիմնախնդիրների վերհանումը:

Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում ձևավորված կրթական համակարգի ու մշակութային կյանքի ուսումնասիրությունը մշտապես մեծ կարևորություն է ներկայացրել Մերձավոր Արևելքում տիրող քաղաքական անկայունության պայմաններում: Վերոնշյալ երկրները իրենց նորագույն պատմությունը կերտել են քաղաքացիական ու ազատագրական պատերազմներով: Մերձավոր Արևելքը, հանդիսանալով գերտերությունների աշխարհաքաղաքական շահերի բախման կենտրոններից մեկը, մինչ օրս շարունակում է աչքի ընկնել պատերազմական գործողություններով և պայքարի մշտական օջախների գոյությամբ: Նման պատմաքաղաքական պայմաններում Հալեպն ու Բեյրութը կայացել են որպես սփյուռքահայ կենտրոններ: Ուսումնասիրվող ժամանակաշրջանում հայ համայնքները մշտապես գտնվել են Սիրիայում և Լիբանանում մանդատային պարտավորություններ ստանձնած ֆրանսիական իշխանությունների

ուշադրության կենտրոնում: Վերջիններս ձգտել են գաղթական հայությանը մասնակից դարձնել իրենց իշխանության ամրապնդման նպատակով իրականացված գործողություններին, վերահսկել թուրքերի կողմից հրահրված հակահայկական քարոզչությունը, հօգուտ իրենց օգտագործել հայ ավանդական կուսակցությունների միջև ծավալված մրցակցությունը և հայ-արաբական հարաբերություններում ժամանակ առ ժամանակ առաջ եկող լարվածությունը: 1920-1930-ական թթ. արաբների բարյացակամ ընդունելության և գիտակից հայ քաղաքական ու հոգևոր գործիչների ջանքերի շնորհիվ սիրիահայ և լիբանանահայ համայնքները ներկայացնող հայերը չդարձան քավության նոխազ հանդես եկան արաբ ժողովրդի կողքին՝ Սիրիան և Լիբանանը համարելով իրենց երկրորդ հայրենիքը:

Վերջին տարիներին Սիրիայում տեղի ունեցած իրադարձությունները հրատապ են դարձնում հայ համայնքային ճգնաժամի հանգուցալուծումը, մշակութային արժեքների պահպանությունը: Հայկական մշակույթը ներկայացնող կոթողներին, եկեղեցիներին ու կրթական հաստատություններին հասցված վնասը, հայ համայնքի ապագային սպառնացող վտանգի գոյությունը խիստ արդիական են դարձնում Սիրիայի և Լիբանանի հայ համայնքների մշակույթի ու կրթության սկզբնավորման լուսաբանումը: Ներկայումս ֆրանսիական մանդատային իշխանություններին փոխարինել են այլ ուժեր, սակայն սիրիահայ համայնքին սպառնացող մարտահրավերները մնացել են նույնը: Անցյալում հաղթահարված խնդիրների ուսումնասիրությունը հնարավորություն կտա օբյեկտիվորեն վերլուծել հայ համայնքին սպառնացող արտաքին վտանգները և ճիշտ որոշումներ կայացնել Մերձավոր Արևելքում հայապահպանության առաքելությունն իրագործելիս: Սփյուռքի մշակույթի ու պատմության իմացությունը կարևոր խթան է ինչպես Հայաստանի Հանրապետությունում հաստատված սիրիահայերի կրթությունը և

կյանքը կազմակերպելու, այնպես էլ սփյուռքահայ երիտասարդության համախմբման համար:

Թեմայի բովանդակությունը աղերս ունի Հայաստան–Սփյուռք կապերի հետ: Սփյուռքահայ մշակույթի պատմության իմացությունը առաջնակարգ նշանակություն կարող է ձեռք բերել Սփյուռքի նախարարության գործունեության ու նոր ծրագրերի համակարգման հետ կապված: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականությունը մեծ նշանակություն է տալիս Սփյուռքի որպես հայկական գործոնի զորացմանը: Դժվար է պատկերացնել Հայոց ցեղասպանության դատապարտման և հայկական պահանջատիրության գործընթացներն առանց աշխարհասփյուռ հայության գործուն մասնակցության:

Հայաստանի անկախության պայմաններում ընդգծվում է ՀՀ-Սփյուռք փոխօգնությունը ինչպես այլ, այնպես էլ ազգային կրթության հիմնախնդիրները համատեղ ուժերով լուծելու խնդրում: Համապատասխան կադրերին կրթելու, վերապատրաստելու, դասագրքերով, մեթոդական և ուսումնական ձեռնարկներով Սփյուռքին օժանդակելու ուղեգիծը խրախուսվում է ՀՀ իշխանությունների կողմից: Այս քաղաքականության արդյունավետ կիրառումը հրամայական է դարձնում սփյուռքահայ դպրոցի և մանկավարժական մտքի խոր և համակողմանի ուսումնասիրությունը:

Նշված ժամանակաշրջանում Սիրիայում և Լիբանանում գործել են անհատներ, ովքեր իրենց ներդրումն են ունեցել ժամանակի կրթական հիմնախնդիրների լուծման և մանկավարժական մտքի զարգացման գործում: Աշխատանքը հնարավորություն է ընձեռում վերհանել այդ մարդկանց անունները որոշակիորեն օժանդակելով նրանց կյանքը և գործունեությունն ուսումնասիրող մասնագետին:

Հայտնի են 1920-1930-ական թթ. հիմնված մի շարք կրթական ու մշակութային հաստատությունների, համասփյուռքյան նշանակություն ունեցող օջախների անուններ, որոնք այսօր տարբեր պատճառներով չեն գործում: Ուսում-

նասիրվող թեման հնարավորություն է տալիս վերհանել այդ հաստատությունների սկզբնավորման պատմությունը: Հայապահպանության տեսանկյունից կարևոր նշանակություն ունեն նաև միմյանց հետ շաղկապված թատերական ու գրական կյանքի, ինչպես նաև պարբերական մամուլի դերի լուսաբանումը: Հարկ է նշել, որ ուսումնասիրվող ժամանակաշրջանը աչքի է ընկնում մշակույթի այլ ճյուղերի սկզբնավորմամբ նույնպես, սակայն կրթամշակութային կյանքի լուսաբանման տեսանկյունից կարևոր են վերոնշյալ բնագավառները:

Փաստորեն, թեմայի ուսումնասիրությունն արդիական է Սիրիայի հայ համայնքի ներկա ճգնաժամը հաղթահարելու, հայկական կրթական ու մշակութային հաստատությունները վերականգնելու, ինչպես նաև Սփյուռքի զորացման ու Հայրենիք-Սփյուռք կապն առավել ամրապնդելու տեսանկյունից:

Ուսումնասիրության նպատակն է ցույց տալ 1920-1930-ական թթ. Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների կրթական ու մշակութային կյանքի զարգացման ընթացքը: Ուսումնասիրության համար առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել հետեղեռնյան ժամանակաշրջանում տիրող միջազգային իրավիճակը, հայկական համայնքների ձևավորման ընթացքը:
- Հետազոտել Սիրիայում և Լիբանանում հաստատված հայության սոցիալ-մշակութային արժեհամակարգը, վերհանել այն բաղադրատարրերը, որոնք նպաստեցին կրթական գործի ու մշակութային կյանքի սկզբնավորմանը:
- Համակարգել կրթության զարգացման նախադրյալներն ու ուղղությունները, առկա հիմնախնդիրները: Այս համատեքստում կարևորել ենք հայ ազգային վարժարանի կազմակերպական կառույցը:
- Դիտարկել որբանոցները որպես հայ կրթական հաստատություններ կարևորելով դրանց դերը սիրիահայ և

լիբանանահայ համայնքներում միասնական կրթական համակարգ ստեղծելու տեսանկյունից:

- Ուսումնասիրել հայ առաքելական, հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանների հիմնումն ու գործունեությունը նշված ժամանակաշրջանում: Այս համատեքստում կարևորել ենք Հայ Առաքելական և Հայ Ավետարանական եկեղեցիների հովանու ներքո ստեղծված կիրակնօրյա դպրոցները որպես հոգևոր կրթության օջախներ:
- Բացահայտել հայ մշակութային կյանքի այն բնագավառների զարգացման միտումները, որոնք փոխկապակցված էին կրթական կյանքի հետ և հայապահպանության տեսանկյունից առաջնակարգ նշանակություն էին ներկայացնում:

Ուսումնասիրության թեման պատմագիտության կողմից համալիր ուսումնասիրված չէ: Խնդրին վերաբերող առանցքային հարցերին անդրադարձել են հայ և օտար մի շարք ուսումնասիրողներ, սակայն նրանց աշխատանքները ընդգրկուն չեն և վերաբերում են առանձին խնդիրների: Առաջին անգամ փորձ է կատարվել ընդհանուր գծերով ներկայացնել սիրիահայ և լիբանանահայ համայնքների կրթամշակութային կյանքի սկզբնավորումը, ինչպես նաև գիտական շրջանառության մեջ դնել մի շարք սկզբնաղբյուրներ ու վերլուծական գրականություն:

Աշխատանքի ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1920-1930-ական թթ.: 1920 թ. Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումը նոր իրողությունների սկիզբ դարձավ թե՛ Հայաստանի, թե՛ Սփյուռքի հայության համար: 1920-ական թթ. Սիրիայում և Լիբանանում սկզբնավորվեց կրթական ու մշակութային կյանքը իր հիմնական գծերով ձևավորվելով 1930-ական թթ. վերջին: Նման ժամանակագրության ընտրությունը պայմանավորված է նրանով, որ տվյալ ժամանակաշրջանում սկիզբ առած կրթական ու մշակութային կյանքի զարգացումը կարևոր հող նախապատրաստեց հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում

արձանագրված կրթական ու մշակութային վերելքի համար: Որոշ իրադարձություններ ավելի ամբողջական տեսքով ներկայացնելու անհրաժեշտությունից ելնելով աշխատանքում խիստ համառոտ, հպանցիկ տեղ են գտել ինչպես 1913-1919 թթ., այնպես էլ 1940-1943 թթ. տեղի ունեցած որոշ դեպքեր ու զարգացումներ:

Աշխատանքի մեթոդաբանական հիմքում դրված են պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքները: Արդյունքում հնարավոր է դարձել իրադարձությունները դիտարկել ոչ թե առանձնացված, այլ ժամանակի և դիալեկտիկական կապի մեջ: Տպագիր սկզբնաղբյուրների, արխիվային փաստաթղթերի, մենագրությունների, թերթերի, պարբերականների ու գիտական հոդվածների հաղորդած տեղեկատվության հայթայթումը, համադրումը, վերլուծությունը հնարավորություն է տվել իրականացնել թեմայի համալիր ուսումնասիրություն: Այդ գործին մեծապես օժանդակել են վիճակագրական տվյալները: Ելնելով թեմայի բազմակողմանի բնույթից աշխատանքում օգտագործվել են պատմամշակութային քննության մեթոդներն ու միջգիտակարգային հետազոտության մոտեցումները:

Այն գրվել է հայերեն, ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն սկզբնաղբյուրների, հուշագրությունների ու ուսումնասիրությունների համակողմանի օգտագործմամբ:

Ուսումնասիրության համար, որպես սկզբնաղբյուր, օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվի (ՀԱԱ), Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ), Մաշտոցի անվան Մատենադարանի (ՄՄ), «Կիլիկիո կաթողիկոսութեան արխիւներ» մատենաշարի փաստաթղթեր ու նամակներ[1]: Հատկապես կրթական և մշակութային գործի

[1] Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 409, ց. 1, գ. 4743, ֆ. 430, ց. 1, գ. 790, 799, 843, ֆ. 1421, ց. 1, գ. 27, 55, 117, 125, 154, ց. 2, գ. 9, 50, 71, 105, Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ), Բ. Աբովյանի ֆ., գ. 2/1, 11/1, Թ. Ազատյանի ֆ., գ. 8[հբ], Թ. Թորանյանի ֆ., գ. 21, 31, 49, Վ. Մալեզյանի ֆ., գ. 65, 76, Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ), Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 8, վավ.

սկզբնավորման և կազմակերպման խնդիրները լուսաբանելիս առաջնահերթ են տպագիր սկզբնաղբյուրները: Մեր ուսումնասիրության մեջ կարևորել ենք հետազոտության ոլորտների հետ կապված մի քանի տասնյակ տպագիր սկզբնաղբյուր:

Առաջնային նշանակություն ունեն կրթական և մշակութային կյանքի սկզբնավորման հետ կապ ունեցող տպագիր սկզբնաղբյուրները[2], սփյուռքահայության վարչական կազմակերպման և մատաղ սերնդի դաստիարակության հետ կապ ունեցող տպագիր սկզբնաղբյուրները[3], օտարալեզու տպագիր սկզբնաղբյուրները[4]:

---

24/11, 24/13, թղթ. 14, վավ. 32/52, «Կիլիկիո կաթողիկոսութեան արխիւներ» մատենաշար, թիվ 1, Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, Անթիլիաս, 1999, նամակ ԼԸ, ԽԳ, ԽԹ, թիվ 4, Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, Նիկոսիա, 2010, նամակ 24, 108:

[2] Ազգային Հայկազեան վարժարան, Ծրագիր, Հալեպ, 1931, Անուանացանկ Ճիպէյլի ամերիկեան որբանոցի սաներու. 1920-1925, Բէյրութ, 1969, Գրաճեան Ա., Քանի մը օր Լիբանանի լեռներու վրայ եւ լիբանանահայ կեանք, Բէյրութ, 1934, Գույումճեան Մ., Քէլէկեան-Միսուան որբանոցի վերջին անցքերու առթիւ, ա. տ., 1930, Երկու տանիմարգացի յոբելեարներ. միս Մարիա Փ. Ճէզըպսըն եւ միս Քարէն Մ. Փիթըրսըն, Բէյրութ, 1937, Կանոնագիր Ազգ. Սահակեան վարժարանի, Բէյրութ, 1935, Կրթական ծրագիր ազգային նախակրթարաններու, Բէյրութ, 1931, Կրթական ծրագիր ազգային վարժարանաց Բերիոյ թեմին, Հալեպ, 1934, Կրթական ծրագիր ծաղկոց-մանկապարտէզներու, Բէյրութ, 1930, Հայ ազգային առաջնորդարան. Ծրագիր-կանոնագիր Կրթական տուրքի Հայ ազգ. առաջնորդարանի, Հալեպ, 1923, Հայ եկեղեցասէր տիկնանց միութիւն, Կանոնագիր Հայ եկեղեցասէր տիկնանց միութեան Ս. Նշան եկեղեցւոյ: Հիմնուած 1927-ին, Բէյրութ, 1934, Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն, Ուսման ծրագիր գաղթական համայնքներու յատուկ նախակրթարաններու, Կահիրե, 1936, Հայ որբախնամ ընկերութիւն, Կանոնագիր հայ որբախնամ ընկերութեան, Ալեքսանդրիա, 1916, Հայ որբախնամ ընկերութիւն. Այնթապի որբանոց, Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն եւ քառամեայ պատմութեան վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս), Ալեքսանդրիա, 1923, Չօպանեան Ա., Մեր գրականութիւնը, Փարիզ, 1926, Պետրոսեան Դ., Որբին գիրքը: Յիշատակներ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց ընկերութեան գործունէութենէն: Սուրիա, Լիբանան եւ Պաղեստինի շրջան. 1915-1930, Բէյրութ, 1932, Պէյրութի հայ ճեմարանին ծրագիրը 1930, ա. տ., Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, Երևան, 1997:

[3] Աղազարեան Մ., Սիսի վերջին աթոռակալը եւ իր մեղապարտ գաւառականը, Բէյրութ, 1926, Արտաւազդ արքեպիսկոպոս, Ընտանեկան դաստիարակութիւնը մեր տուներէն ներս, Հալեպ, 1937, Արշակունի Ա., Վահան Վարդապետեան եւ Լիբանանի ազգային գաւառական ժողովը, Բէյրութ, 1927, Կէրկէկերան Օ., Դպրոցական առողջապահութիւն: Ուսուցիչներու, աշակերտներու, հոգաբարձուներու, ծնողքներու եւ ամէն անհատի համար, Բէյրութ, 1932, Հովհաննիսյան Ա., Գաղութահայ խնդիրներ, Երևան, 1925, ՀՕԿ. Ծրագիր-կանոնագիր Հ. Օ. Կ. Հայաստանի օգնութեան կոմիտէի Սուրիոյ եւ Լիբանանի

Հայ գաղթօջախների, Սփյուռքի և մասնավորապես Սիրիայի ու Լիբանանի հայ համայնքների պատմությանը անդրադարձել են մի շարք հայ պատմաբաններ[5]:Մեր ուսումնասիրության տեսանկյունից, սակայն, հույժ կարևոր նշանակություն ունեն հատկապես Ս. Վարժապետյանի և Ա. Սյուրմեյանի աշխատությունները: Ս. Վարժապետյանի «Հայերը Լիբանանի մէջ» խորագիրը կրող մեծարժեք աշխատությունը բաղկացած է հինգ հատորից. մեզ առավելապես հետաքրքրել են Բ, Գ և Դ հատորները[6]: Հեղինակը ջանք չի խնայել ամենայն մանրամասնությամբ ներկայացնելու լիբանանահայ համայնքի ձևավորման, վարչական կազմակերպման հետ առնչվող խնդիրները, տարբեր ժամանակներում լիբանանահայ մամուլում տեղ գտած վիճակագրական տվյալները հայ կրթական հաստատությունների վերաբերյալ, թատերական և գրական կյանքը, պարբերական մամուլը: Ա. Սյուրմեյանի աշխատանքին անդրադառնալով նկատում ենք, որ այն առաջնահերթ նշանակություն ունի Հալեպի հայ համայնքի

---

շրջան, Բեյրութ, 1936, Մամուր Ֆաթիմի Յ., Կիլիկիո կաթողիկոսությունը և գաղութահայությունը, Երևան, 1934, Մարտունի Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Երևան, 1924, Նիկոլ Ա., Սուրիա եւ մենք, Կահիրե, 1932, Չարըգ Դ., Յուշարար ազգ. դաստիարակութեան եւ ուսուցմանց: Ուսուցիչներու, աշակերտներու եւ ծնողներու համար, Բեյրութ, 1928, Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիոյ, Կոնդակներ եւ հայրական խօսքեր, Անթիլիաս, 1934, Սերոբեան Մ., Ազգ. դաստիարակութիւն ազգ. նկարագիր, Բեյրութ, 1928, Սիւրիոյ երուսաղէմապատկան թեմերուն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը, Երուսաղէմ, 1930:

[4] Армянский вопрос на Лозанской Конференции, Тифлис, 1926; Борьян Б., Армения, международная дипоматия и СССР, ч. 2, Москва, 1929; Кряжина В., Национально-освободительное движение на Ближнем Востоке, ч. 1, Москва, 1923; Barton J., Story of  Near East Relief (1915-1930), New York, 1930; Raymond O., Les Etats du Levant sous mandate Francais, Paris, 1931.

[5] Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, գ. Բ, Երևան, 1964, Աթիկեան Յ., Համառօտ պատմութիւն հայ գաղթավայրերու, Անթիլիաս, 1985, Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր: Մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, 1962, Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ, Երևան, 2004, Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, 1986:

[6] Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ, հ. Բ, Բեյրութ, 1981, նույնի, Հայերը Լիբանանի մէջ, հ. Գ, Բեյրութ, 1981, նույնի, Հայերը Լիբանանի մէջ, հ. Դ, Ֆերլոն, 1983:

անցյալի ու ներկայի ուսումնասիրության համար: Հեղինակը, լինելով եկեղեցական գործիչ՝ մասնավորապես Բերիո թեմի առաջնորդ, մեծ հաջողությամբ նկարագրել է Հալեպի հայ համայնքը ներկայացնող հայության կենցաղը, բարքերն ու սովորույթները, Հալեպ քաղաքի տեղական, ինչպես նաև ֆրանսիական մանդատային իշխանություններին ենթակա հաստատությունները: Աշխատանքը մեծ արժեք է ներկայացնում Սիրիայի հայ համայնքի հասարակական-քաղաքական, պատմամշակութային և ազգագրական ուղղություններով ուսումնասիրությունների տեսանկյունից[7]:

Թեմայի ուսումնասիրության գործում մեծ նշանակություն ունեն ժամանակակիցների հուշերը: Վերապրելով ցեղասպանությունը և բնակություն հաստատելով Սիրիայում ու Լիբանանում՝ մի շարք ժամանակակիցներ արժանահավատ տեղեկություններ են տրամադրել ներհամայնական կյանքի վարժարանների, որբանոցների, սիրիահայության և լիբանանահայության կրթական ու մշակութային գործունեության մասին[8]:

Սիրիայի և Լիբանանի վարժարաններից ու որբանոցներից շատերը տպագրել են իրենց հուշագրությունները: Այս աշխատանքներում ամփոփված են կրթական հաստատությունների պատմությանը վերաբերող փաստերը, իրադարձությունները, վիճակագրական տվյալները[9]:

---

[7] Սիւրմէեան Ա., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա, Հալեպ, 1940, նույնի, Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Բ, Բեյրութ, 1946, նույնի, Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Գ, Փարիզ, 1950:

[8] Անթոյեան Ս., Ինքնակերտումի ճամբով, Բեյրութ, 2006, Զոհրապեան Կ., Յուշեր, Վենետիկ, 2007, Ժամկոչյան Հ., Հիշատակ մնացողներին, Երևան, 2003, Ղարիպ Ա., Յուշերու բագին, Բեյրութ, 2009, Յուշարձան ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի, Երևան, 2010, Շահինեան Գ., Վերաքաղ, Բեյրութ, 2004:

[9] Ազգային միացեալ վարժարան, Դամասկոսի միացեալ վարժարանի քսանհինգամեայ յոբելեան. 1929-1954, Հալեպ, 1956, Զաւարեան վարժարանի տասներկու տարիները. 1936-1948, Հալէպ, 1948, Թորանեան Թ., Մարաշի Ազգ. Մեսրոպեան կեդր. երկսեռ վարժարանը 65 տարի հայ սերունդներու ծառայութեան մէջ, Հալեպ, 1988, Խրլոպեան Տ., Քսանհինգամեայ հունձքը: Լեւոնեան յոբելինական հատոր, Հալեպ, 1948, Համազգայինի եւ Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ. 1929-1954, Բեյրութ, 1954, Հայ աւետարանական գոլեճ. 1923-

Ն. Հարությունյանը, Ժ. Դանիեյանը հեղինակել են Սիրիայի և Լիբանանի հայ վարժարանների վերաբերյալ ընդհանրական ուսումնասիրություններ[10]: Այս երկու աշխատանքն էլ վերաբերում է 21-րդ դարում Սիրիայի և Լիբանանի հայկական վարժարանների առջև ծառացած հիմնախնդիրների, մարտահրավերների լուսաբանմանը և քիչ տեղեկություններ են պարունակում խնդրո առարկա ժամանակահատվածի վերաբերյալ:

Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքերի մշակութային կյանքի ուսումնասիրությամբ զբաղվել են մի շարք հետազոտողներ[11]: Թատերական կյանքի ուսումնասիրության տեսանկյունից կարևոր է Թ. Թորանյանի, Կ. Լեպեջյանի, Բ. Հովակիմյանի[12], պարբերական մամուլի ուսումնասիրության տեսանկյունից Ժ. Դանիեյանի, Ս. Գասպարյանի, Հ. Չոլաքյանի, Հ. Պարիկյանի, Հ. Վարժապետյանի, Ա. Տեր-Խաչատուրյանի[13], գրական կյանքի ուսումնասիրության տեսանկյունից Վ.

---

2008, Պէյրութ, 2008, Յուշագիրք Հայ ազգ. Սահակեան բարձրագոյն վարժարանի: Արծաթեայ յոբելեան. 1923-1948, Բեյրութ, 1948, Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), Հալեպ, 1996, Յուշամատեան Ճիպէյլի ամերիկեան որբանոցի. 1920-1925, Բեյրութ, 1969, Քէշիշեան Վ., Գոյապատում: Պատմութիւն Ս. Գէորգի եկեղեցւոյ եւ Մարաշի ազգ. Մեսրոպեան վարժարանի Հալէպ, Հալէպ, 2002:

[10] Դանիէլեան Ժ., Լիբանանահայ դպրոց: Թիւեր եւ մտորումներ, Բեյրութ, 2002, Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, 2002:

[11] Ասատրյան Ա., Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Լիբանանահայ թատրոն, Երևան, 2011, Նաճարեան Մ., Յուշագիրք. 1918-1948: 30-ամեա իրադարձութիւններ Սուրիոյ եւ Լիբանանի հայ կեանքէն առնուած, Բեյրութ, 1949:

[12] Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, Բեյրութ, 1973, Լէփէճեան Կ., 90 ամեակ Հալէպի «Անդրանիկ» թատերախումբի, Հալեպ, 2010, Հովակիմյան Բ., Ցեղասպանության թեման հայ թատրոնում (1885-1995), Երևան, 1998:

[13] Գասպարեան Ս., Միջազգային մամուլ եւ չորրորդ իշխանութեան դրոյթը, Հալեպ, 2005, Դանիէլեան Ժ., Ռամկավար ազատական մամուլը (Մատենագիտական ակնարկ), Բեյրութ, 1982, Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, Հալեպ, 1978; Պարիկեան Հ., Վարժապետեան Յ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, Հալեպ, 1973, Տեր-Խաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990), Բեյրութ, 1990, նույնի, Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան մամուլը (1887-1992), Բեյրութ, 1992:

Գաբրիելյանի, Գ. Սևանի աշխատությունները[14]: Այս ուսումնասիրողները ոչ միայն առանձնացված ցույց են տալիս տարբեր ժամանակաշրջաններում սիրիահայ և լիբանանահայ համայնքերի մշակույթի այս կամ այն ճյուղի զարգացման միտումները, այլև մատնանշում են կրթամշակութային կյանքի համալիր զարգացումը:

Օտարալեզու գրականությունը ներկայացնող ուսումնասիրությունները մեծամասամբ վերաբերում են Սիրիայի և Լիբանանի պատմությանը: Այս աշխատությունների որոշ մասը տեղեկություններ է պարունակում նաև հայ համայնքների գործունեության մասին[15]:

Աշխատանքում օգտագործվել են ինչպես ժամանակակից, այնպես էլ խնդրո առարկա ժամանակաշրջանում լույս տեսած պարբերական մամուլի և գիտական հոդվածների նյութեր, ամսագրեր, տարեցույցեր, օրացույցեր, համացանցային կայքեր և այլն: Մեր ուսումնասիրության տեսանկյունից հատկապես կարևոր նշանակություն ունեն «Գեղարդ», «Դրազարկ» տարեգրքերը, «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936»-ը, «Հասկ» և «Միութիւն» ամսագրերը, «Սուրիահայ տարեցոյց»-ը և «Սիւրիահայ տարեգիրքը»-ը[16]:

---

[14] Գաբրիելյան Վ., Հայ նորագույն գրականություն: Սփյուռքահայ գրականություն; Ուսումնական ձեռնարկ, Երևան, 2008, Սեւան Գ., Հայրենիք-սփիւռք գրական կապերը (1920-1985), Երևան, 1988, նույնի, Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985), Երևան, 1997:

[15] Григорян В., Хедвиг Бюль-эстонский друг армянского народа, Ереван, 2007; Дятлов В., Мелконян Э., Армянская диаспора: Очерки социокультурной типологии, Ереван, 2009; Луцкий В., Национально-освободительная война в Сирии (1925-1927), Москва, 1964; Салиби К., Очерки по истории Ливана, Москва, 1969; Тер-Мкртчян Л., Армяне в странах Арабского Востока на современном этапе, Москва, 1965; Hitti Ph., History of Syria, London, 1951; Sanjian A., The Armenian communities in Syria under Ottoman dominion, Cambridge, 1965.

[16] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Ա, Հալեպ, 1975, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Բ, Հալեպ, 1976-1978, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Գ, Հալեպ, 1985, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Դ, Հալեպ, 1991, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Ե, Հալեպ, 1996, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Զ, Հալեպ, 2000, «Դրազարկ», տարեգիրք Հ. Ե. Կ. Դ., Ա տարի, Անթիլիաս, 1967, «Դրազարկ», տարեգիրք Հ. Ե. Կ. Դ., Բ տարի, Անթիլիաս, 1968, «Դրազարկ», տարեգիրք Հ. Ե. Կ. Դ., Գ տարի, Անթիլիաս, 1969, «Դրազարկ», տարեգիրք Հ. Ե. Կ. Դ., Դ տարի, Անթիլիաս, 1970, «Դրազարկ», տարեգիրք Հ. Ե. Կ. Դ., Ե տարի,

Աշխատանքում ներկայացվել է սիրիահայ և լիբանանահայ համայնքների կրթամշակութային կյանքը: Այդ գործում անչափ կարևոր է նշված ժամանակաշրջանում Մերձավոր Արևելքում տիրող իրավիճակի, մեծ տերությունների ազդեցությունների պարզաբանումը: Արդյունքում ուրվագծվել է այն միջավայրը, որի սահմաններում սիրիահայերն ու լիբանանահայերը հիմնել են բազմաթիվ եկեղեցիներ, վարժարաններ, մշակութային օջախներ ու միություններ: Այս հաստատությունները կարևոր դեր են խաղացել հայապահպանության առաքելության իրականացման և Սփյուռքի կազմավորման գործում: Խնդրո առարկա ժամանակաշրջանին վերաբերող Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքների կրթամշակութային կյանքը առաջին անգամ է մանրամասնորեն լուսաբանվում: Անշուշտ, չենք հավակնում մեկ աշխատանքի շրջանակներում սպառված համարել թեմայի ուսումնասիրությունը:

---

Անթիլիաս, 1971, «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», Բեյրութ, 1936, «Հասկ», թիվ 1, 2, 4, Անթիլիաս, 1932, թիվ 12, 1933, թիվ 2, 6, 11, 1934, թիվ 5-6, 7-9, 10, 1935, թիվ 5, 1939, «Միութիւն», թիվ 83, սեպտեմբեր-հոկտեմբեր, Կահիրե-Փարիզ, 1921, թիվ 85, հունվար-փետրվար, 1922, թիվ 86, մարտ-ապրիլ, 1922, թիվ 87, մայիս-հունիս, 1922, թիվ 89, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1922, թիվ 105, մայիս-հունիս, 1925, թիվ 118, հուլիս-օգոստոս, 1927, թիվ 146, հունվար, 1931, թիվ 162, հուլիս-օգոստոս, 1933, թիվ 200, նոյեմբեր-դեկտեմբեր, 1939, «Սուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1924-1925, «Սիւրիահայ տարեգիրք», Բեյրութ, 1929:

# ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

# ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՀԱՅԱՊԱՀՊԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

## 1.1.Հայկական համայնքների ձևավորման պատմությունից

1916 թ. կնքված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով Մերձավոր Արևելքը բաժանվեց ազդեցության գոտիների: Հյուսիսային Իրաքը և Սիրիայի արևելքը հայտնվեցին ֆրանսիական, իսկ կենտրոնական Իրաքը և Անդրհորդանանը՝ անգլիական ազդեցության գոտիներում[17]: Առաջին համաշխարհային պատերազմում հաղթանակած երկրների ներկայացուցիչները 1920 թ. ապրիլի 20-25-ը Սան-Ռեմո քաղաքում համաձայնության եկան Սիրիայի մանդատը հանձնել Ֆրանսիային, Պաղեստինի մանդատը՝ Անգլիային: 1923 թ. սեպտեմբերին Ազգերի լիգան Անդրհորդանանի վրա հաստատեց բրիտանական մանդատը[18]: Փաստորեն, վերոնշյալ երկրները, ազատվելով օսմանյան լծից, ընկան ֆրանսիական և բրիտանական ազդեցության տակ: Կիլիկիան նույնպես հայտնվեց Ֆրանսիայի ազդեցության գոտում: Այս տարածքում ֆրանսիական մանդատի հաստատումից հետո հայոց ցեղասպանությունից ողջ մնացածները սկսեցին վերադառնալ իրենց հայրենի օջախները: Վ. Մալեզյանը, կանխազգալով դեպքերի ընթացքը, 1921 թ. Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանին ուղղված նամակում նշում է. «Աւելորդ է ըսել թէ վերջերս Կիլիկիոյ կացութեան մէջ տեսնուած բարւոքումը ինչ բերկրանքով կը լեցնէ մեր

[17] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 154, Салиби К., указ. соч., стр. 236.
[18] Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, h. 4, Երևան, 2007, էջ 13, 430-431, Кряжина В., стр. 33; Луцкий В., указ. соч., стр. 64-65.

սիրտերը: Բայց պէտք ալ չէ մոռնալ թէ այդ բարուքումը արդիւնք է քաղաքականութեան նորագոյն երեւոյթներու, զոր անակնկալ իրադարձութիւններ կրնան մէկ վայրկեանէն միւսը զգայապէս եւ գուցէ հիմնովին փոխել»[19]:

Իրավամբ, Կիլիկիայի հայության հույսերը չարդարացան: 1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքված պայմանագիրը վերջ էր դնում քեմալական ու ֆրանսիական ուժերի միջև ընթացող ռազմական գործողություններին: Ֆրանսիացիները պարտավորվեցին երկու ամսվա ընթացքում դուրս գալ Կիլիկիայի տարածքից: Արդյունքում, Եղեռնը վերապրած Կիլիկիայի հայությունը, 20.000-ից ավելի նոր զոհեր տալով, անվերադարձ կերպով հեռացավ բնօրրանից[20]:

1923 թ. Լոզանի կոնֆերանսի ավարտից հետո ակնհայտ դարձավ, որ Եղեռնի «մնացորդացը» այլևս չի կարող հույսեր կապել «Հայկական օջախ» կամ «Ազգային տուն» ստեղծելու գաղափարի հետ: 1923 թ. հունվարի 16-ին Սահակ Բ կաթողիկոսը Կիպրոսում գտնվող Պետրոս եպիսկոպոս Սարաջյանին գրած նամակում նշում է. «...Լոզանը, ուր խաղաղութեան կարօտով տառապողները, աչքերնին յառած էին, երկնող լերան ծնունդն ունեցաւ: Որչափ Ազգ. տան կամ օճախի խնդիր եղաւ, այնքան տառապանքնիս բազմապատկուեցաւ»[21]: Երկրի անվտանգության գործոնը և թուրքերի մեծամասնություն կազմելու փաստը շեշտադրելով՝ քեմալական կառավարությանը հաջողվեց առանց զիջումների ավարտել կոնֆերանսի աշխատանքները: Թուրքիայի ներկայացուցիչները թույլ չտվեցին 100.000 հայի համար Թուրքիայի տարածքում հողակտոր հատկացնելու

---

[19] ԳԱԹ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 76, թ.1:

[20] Ըստ Ա. Կիրակոսյանի նշված ժամանակաշրջանում կոտորված հայերի թիվը կազմում է 25 հազար (տե՛ս Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, 2006, էջ 30, նաև Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, 1970, էջ 267-268):

[21] Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, նամակ 24, էջ 78, «Սուրիական մամուլ», թիվ 155, օգոստոսի 5, Հալեպ, 1923:

գաղափարն իրագործել[22]: Չնայած մինչև 1929 թ. Ազգերի Լիգայում Հայկական հարցը եվրոպական պետությունների կողմից չարչրկվում էր, այնուամենայնիվ, այդ ուղղությամբ հատկապես Ֆ. Նանսենի ջանքերն ապարդյուն էին: Ֆրանսիացիների վարած քաղաքականության արդյունքում Կիլիկիան վերջնականապես լքելուց հետո այստեղի հայությունը սփռվեց աշխարհով մեկ: Նրանց որոշակի հատվածի համար փրկության դռներ բացվեցին Մերձավոր Արևելքի երկրներում՝ մասնավորապես Սիրիայում և Լիբանանում:

Հայերը վաղուց էին հաստատվել Սիրիայում: 1921 թ. իրադարձություններից առաջ հայերով էին բնակեցված Ալեքսանդրետ-Բեյլանի, Անտիոք-Սուետիայի, Քեսաբի, Յագուպիե-Ղընեմիեի շրջանները[23]: Ա. արք. Սյուրմեյանի հավաստիացմամբ, Հալեպի հայկական գաղթօջախը դեռ հին ժամանակներից ճանաչված էր որպես բարեպաշտ համայնք: Այստեղ յուրաքանչյուր ընտանիք շարունակում էր ապրել իր ծննդավայրի սովորություններով[24]: Այնուամենայնիվ, Սիրիայում հայերը մեծ թիվ չեն կազմել: Մինչև 19-րդ դարի վերջը տեղի հայկական գաղթօջախները մշակութային զարգացման ցածր մակարդակի վրա են գտնվել[25]: Այդ համայնքները ներկայացնող հայերը չեն ապրել հավաքական կյանքով: Նրանք շատ հաճախ համալրել են կաթոլիկ համայնքի շարքերը և ենթարկվել ձուլման[26]: Իրավիճակը փոփոխության է ենթարկվում Առաջին համաշխարհային պատերազմից հետո: Մեծ գաղթը «երիտասարդացնում» է այս գաղթօջախները. դրանք մտնում են զարգացման նոր փուլ[27]:

---

[22] Կիրակոսյան Ա., նշվ. աշխ., էջ 31, Մելիքեան Վ., Արեւմտահայերի համագումարները եւ Հայկական հարցի փուլերը 1917-1923թթ., Երևան, 2007, էջ 47-48, Армянский вопрос на Лозанской конференции, 31; Кряжина В., стр. 59-63.

[23] Տէմիրճեան Վ. եպս., Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա, Անթիլիաս, 1980, էջ 240:

[24] Սիւրմէեան Ա., նշվ. աշխ., հ. Գ, էջ 978:

[25] Աթիկեան Հ., նշվ. աշխ., էջ 65:

[26] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., գ. Բ, էջ 19, Тер-Мкртчян Л., указ. соч., стр. 9.

[27] Գասպարյան Ս., նշվ. աշխ., էջ 107, Sanjian A., ibid, p. 286.

Փաստորեն, Սիրիայի տարածքը անծանոթ չէր հայերի համար: Չնայած այդ երկրներում տիրող քաղաքական անկայունությանը, գաղթական հայությունը կարողացավ կարճ ժամանակահատվածում կազմակերպվել, զարկ տալ կրթության և մշակույթի աստիճանական վերելքին:

1918 թ. Սիրիայում բնակություն էր հաստատել Եղեռնից մազապուրծ 142.000 հայ, որից 60.000-ը Հալեպում և նրա շրջակայքում[28]: Ֆրանսիացիների կողմից Կիլիկիայի մանդատը ստանձնելուց հետո հայերի մի մասը գաղթեց Կիլիկիա: Ըստ վիճակագրության, Առաջին համաշխարհային պատերազմից հետո Կիլիկիայում բնակվում էր 182.500 հայ[29]: Կիլիկյան երկրորդ գաղթից հետո Սիրիան՝ մասնավորապես Հալեպը, երկրորդ անգամ դարձավ գաղթական հայությանն ընդունող կայաններից մեկը: 1920–1922 թթ. ընկած ժամանակահատվածում Սիրիայում և Լիբանանում հաստատված հայության թվաքանակը ստույգ հնարավոր չէ նշել[30]: 1920-ական թթ. սկզբներից զուգահեռաբար ընթանում էր Սիրիայի տարածքից դեպի ուրիշ երկրներ հայության արտագաղթի գործընթացը: Այդ պատճառով գաղթականությունը վերջնականապես չէր հաստատվում մեկ վայրում. մի մասը տեղափոխվեց Հյուսիսային և Հարավային Ամերիկա, Ֆրանսիա և այլ երկրներ: Հայերի գաղթը տեղի էր ունենում «տարերային կերպով»՝ «...իւրաքանչիւր անձ անհատապէս, ինքնիր գլխուն ճշդած է իր ճամբան, բնակելիք վայրը, աշխատանքի տեսակը: Գտնուած չեն իրենց երթալիք պայմաններուն ծանօթ

---

28 «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, 2003, էջ 512:

29 Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», Կ. Պոլիս, 1922, էջ 262:

30 Ըստ Լ. Չորմիսյանի, 1921 թ. վերջերին Կիլիկիայից հեռացողների թիվը կազմել է 250.000, 1922 թ. Կ. Պոլսից հեռացողների թիվը 80.000 մարդ, իսկ «...Իզմիրէն, Բիւթանիայէն, Պրուսայէն և հայկական նահանգներէն փախուստով հեռացողների թիւը 80.000 մարդ», որոնց «մեծագոյն զանգուածը ընդունող երկիրները եղած են Սուրիա և Լիբանան» (տես Չորմիսեան Լ., Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան (1908-1922), հ. Գ, Բեյրութ, 1975, էջ 649):

եղողներ»[31]: Հասնելով գաղթակայաններ՝ ցեղասպանությունը վերապրած հայությունը գտնվում էր ծայրահեղ ծանր վիճակում. նրանց թիվը գնալով աճում էր, և համայնական-կրթական կյանքի կազմակերպումը գնալով բարդանում էր: 1922 թ. Հալեպում հայերի թիվը կազմել է 33.978[32] մարդ: 1923-1924 թթ. Կիլիկիայի հայությունը ներկայացնող վերջին գաղթականները հաստատվեցին Սիրիայում և Լիբանանում: 1923 թ. մի նյութում առկա է տեղեկություն, որ որբանոցներում կա 10.000 որբ, իսկ գաղթական և տեղացի հայերը միասին կազմում են 150.000[33]: Գաղթական հայության թվաքանակը Մերձավոր Արևելքի երկրներում գնալով աճում է: 1932 թ. հետո Լիբանանում պաշտոնական մարդահամար չի անցկացվել[34], սակայն ակնհայտ է, որ 1930-ական թթ. հայության հոսքը դեպի այս երկրներ դադարել էր: 1936 թ. Բեյրութում լույս տեսնող ֆրանսիական «Լը ժուռ» թերթի տվյալների համաձայն Լիբանանի հայության թիվը կազմում էր 45.000, իսկ Սիրիայինը՝ 100.000[35]:

Սիրիայի տարածքում հայերի տեղաբաշխման մասին պատկերացում կազմելու համար ներկայացնենք որոշ վիճակագրական տեղեկություններ: Բնականաբար, դրանք ամբողջական լինել չեն կարող, քանի որ համընդհանուր վիճակագրական տվյալներ մեզ հասանելի չեն եղել:

Սիրիայի որոշ բնակավայրերում, այդ թվում երկրի հյուսիսում գտնվող Ալեքսանդրետում, հայերը հաստատվել էին դեռ վաղ ժամանակներից: 1924 թ. մարդահամարի տվյալներով Ալեքսանդրետում ապրում էր 5.875 առաքելական, 146 կաթոլիկ և 108 հայ ու այլազգի ավետարանական[36]: Կիլիկյան

---

[31] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., հ. Բ, էջ 21, Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ, էջ 176, Չորմիսյան Լ., նշվ. աշխ., հ. Գ, էջ 650-651:
[32] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 799, թ. 6:
[33] ՄՄ, Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 14, վավ. 32/52 (մամուլի կտրոն), թ. 1:
[34] «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 292:
[35] «Հայաստանի կոչնակ», թիվ 21, մայիսի 23, 1936, էջ 501:
[36] Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը», 1927, էջ 254:

երկրորդ գաղթից հետո հազարավոր հայեր հաստատվեցին Ալեքսանդրետի սանջակում[37]:

1920-ական թթ. սկզբին ֆրանսիական կառավարության օժանդակությամբ 35.000-40.000 վերապրող հայ ապաստանում է Դամասկոսում Կիլիկիա տեղափոխվելու համար: Գաղթական հայերից շուրջ 15.000 մարդ բնակություն է հաստատում Սիրիայի մայրաքաղաքում[38]: Դամասկոսի հայ բնակչությունը մինչև 1925 թ. կազմում էր 12.000-13.000: Ջեբել-Դրուզի ապստամբությունից հետո (1925-1927 թթ.) հայերի թիվը, սակայն, կրճատվում է հասնելով 3.000-4.000-ի. «...իսկ խաղաղութեան հաստատումէն մօտաւորապէս տարի մը յետոյ այս վերջին թիւը կը տարուի 6.000-7.000-ի»[39]: 1926 թ. Դամասկոսում ապրում էր 1.100-ից ավելի հայ ավետարանական[40]:

Հատկապես 1920-ականների դեպքում պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ գաղթական հայերն օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառներով հաճախ տեղաշարժվում էին մեկ բնակավայրից մյուսը: Այսպես եթե 1920-ական թթ. սկզբին Լաթակիայում բնակվում էր շուրջ 2.000 գաղթական հայ, ապա 1929 թ. այստեղ բնակվող հայերի թիվը ոչ թե աճ էր գրանցել, այլ պակասել էր դառնալով շուրջ 1500[41]: 1923 թ. Հոմսում ապրում էր 63 հայ ավետարանական և 25 ընտանիք հայ կաթոլիկ[42]:

Ք. Եպպեի ջանքերով Սիրիայի տարածքում հիմնվում է մի քանի գյուղ գլխավորապես գյուղատնտեսական նպատակներով, սակայն մեծ բարերարը, այս դեպքում էլ, չի անտեսում

---

[37] Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները (1920-1930-ական թվականներ), «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ», թիվ 12, 1964, էջ 29:

[38] «Դամասկահայ ամէնուն տարեգիրքը 1958», Դամասկոս, ա.թ., էջ 34-35:

[39] «Եփրատ», թիվ 20, սեպտեմբերի 10, 1927:

[40] «Դամասկահայ ամէնուն տարեգիրքը 1958», էջ 14:

[41] Տունկեան Գ., Նիւթեր Լաթաքիոյ եւ շրջակայքի հայ ազգաբնակչութեան պատմութեան, Հալեպ, 1983, էջ 17, 51, «Յուսաբեր», թիվ 88, հուլիսի 13, 1929:

[42] «Եփրատ», թիվ 285, մայիսի 3, 1930:

գաղթական հայերին կրթելու գործը: 1924 թ. հիմնվում են Թել-Արմեն և Թել-Սիմեն գյուղերը: Նույն թվականի աշնանը վերջինիս բնակչությունը կազմում էր 200 մարդ[43]: 1928 թ. Թել-Արմենից և Թել-Սիմենից ոչ հեռու հիմնվում է Շարպ-Պետրոս գյուղը[44], որը նախատեսված էր արաբական գերությունից ազատագրված երեխաների և քաղաքային միջավայրին չընտելացող մարդկանց համար: 1930 թ. գարնանը Շարպ-Պետրոս գյուղից հարավ հիմնվում է Թինա գյուղը[45]:

«Սուրիական մամուլ»-ի հաղորդմամբ 1925 թ. Մուսա լեռան կամ Սուեդիայի վեց հայկական գյուղում բնակչությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ՝ Յողուն Օլուք՝ 1109, Խըդր Բեկ՝ 989, Վակըֆ՝ 349, Հաջի Հաբիբլի՝ 929, Բիթիաս՝ 752, Քաբուսիե՝ 577: Այսինքն 4356 բնակիչ, որից «...չորս հազարը մօտաւորապէս լուսաւորչական»[46]: Ժամանակի ընթացքում բնակչության թվաքանակը կրել է աննշան փոփոխություններ: Ըստ «Սուրիահայ տարեցոյցի» Մուսա լեռան 6 գյուղի բնակչության թիվը կազմում էր 4598[47], 1930-ական թթ. սկսած բնակչության թիվն աճում է 1934 թ. հասնելով 5650[48]: 1920-ական թթ. սկզբին Լ. Նորաշխարյանի ջանքերով հիմնվում է նաև 7-րդ գյուղը Նոր Զեյթուն անվամբ, ուր հաստատվում է 45 զեյթունցի ընտանիք[49]:

Ջեբել-Ագարայի շրջանի կենտրոնը հանդիսացող Քեսաբը շրջապատված էր տասը գյուղով, որտեղ նախքան Մեծ Եղեռնը բնակվում էր շուրջ 6.000 հայ: 1925 թ. տվյալների

---

[43] Հայրունի Ա., Կարեն Յեպեի «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության» համապարփակ հայանվեր գործունեությունը Հալեպում 1923-1933 թթ., «Կանթեղ», թիվ 6, 2002, էջ 153:
[44] Չոլաքեան Յակոբ, Քարէն Եփփէ Հայ Գողգոթային եւ Վերածնունդին հետ, Հալէպ, 2001, էջ 121,126,128:
[45] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 428, 441, 484:
[46] «Սուրիական մամուլ», թիվ 382, մարտի 6, 1925:
[47] «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 241-243:
[48] «Յուսաբեր», թիվ 228, դեկտեմբերի 27, 1934:
[49] Յուշամատեան Մուսա լերան, Բէյրութ, 1970, էջ 110-116, «Յուսաբեր», թիվ 56, հունիսի 7, 1928:

համաձայն, Քեսաբն իր շրջակա գյուղերի հետ միասին ուներ 3.000 հայ բնակիչ, 1936 թ.՝ շուրջ 750 ընտանիք[50]:

Հարկ է անդրադառնալ նաև 1920-ականների երկրորդ կեսին Սիրիայի տարբեր բնակավայրերում հայերի տեղաբաշխման մասին վկայություններին: «Հուսաբեր» թերթում առկա տեղեկատվության համաձայն 1925 թ. Հոմսում ապրում էր 800 հայ[51], 1926 թ. Բեյլանի ընդհանուր բնակչության թիվը կազմում էր 4200 մարդ[52]: Մոտավորապես նույն տարիներին 1927 թ. Համայում ապրում էր 30[53], Դեր Զորում 40[54], հայ ընտանիք, իսկ 1928 թ. Ռաքքայում ապրում էին 60[55], Սողուկ-Սուում՝ 50 հայ ընտանիք[56]: 1920-ական թթ. երկրորդ կեսին Ազեզում բնակվում էր 350 հայ ընտանիք[57], 1928 թ. դրությամբ 15-ը հայ ավետարանական[58]: Միանշանակ չեն Աֆրինի հայության վերաբերյալ մեր հայթայթած տեղեկությունները: Ս. Ղազարյանը Աֆրինի վերաբերյալ նշում է, որ այն հետպատերազմյան հայկական գաղութ էր, որն ուներ իր եկեղեցին և վարժարանը[59]: Աֆրինին վերաբերող Հալեպի Ազգային առաջնորդարանի կողմից կազմված վիճակագրական տվյալների համաձայն. «Այս գաղութը հաստատուած է 1927-ին, շուրջ 40 տնուոր հայութեամբ: Եկեղեցի, դպրոց չունին»[60]: 1929 թ. Ռաս Ուլ Այնի շրջանում ապաստանած 65

---

50 «Աւետիք», թիվ 9, սեպտեմբեր, Զմմառ, 1936, էջ 195, «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 223-224, «Տաթև» կրօնական տարեցոյց, էջ 291:

51 «Յուսաբեր», թիվ 11, ապրիլի 28, 1925:

52 «Տաթև» կրօնական տարեցոյց, 1926, էջ 308:

53 «Եփրատ», թիվ 294, հունիսի 4, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 7, փետրվարի 12, 1927, էջ 217:

54 «Հայաստանի կոչնակ», թիվ 35, օգոստոսի 31, 1929, էջ 1114, թիվ 3, հունվարի 16, 1932, էջ 90, թիվ 18, մայիսի 4, 1935, էջ 422, «Յուսաբեր», թիվ 158, հոկտեմբերի 5, 1927, թիվ 34, մայիսի 11, 1929:

55 «Յուսաբեր», թիվ 224, դեկտեմբերի 21, 1928:

56 «Հայաստանի կոչնակ», թիվ 28, հուլիսի 14, 1928, էջ 891:

57 Ղազարյան Ս., Հայկական փոքր գաղութներ. Ազեզ, Աֆրին, Արաբ-Փունար, էջ 30-40:

58 Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 509:

59 Ղազարյան, Հայկական փոքր գաղութներ. Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, էջ 35:

60 «Տաթև» կրօնական տարեցոյց, 1929, էջ 384:

ընտանիք քրդախոս հայերը, ի վերջո, ապաստան են գտնում Կամիշլիում[61]:

Այժմ համառոտ ներկայացնենք մեր ուսումնասիրած աղբյուրների ու գրականության 1930-ականների առաջին կեսին վերաբերող տվյալները: Այսպես 1930 թ. Արաբ-Բունարում և շրջակայքում բնակվել է 236 հայ ընտանիք[62]: Ըստ Ա. Երեցյանի, «450 տնուոր Արաբ - Բունարի հայ գաղութը, իր հիմնադրութենէն-1923-երեք տարի ետք, 1926-ին կ»ունենայ իր եկեղեցին, եւ ապա յաջորդ տարին կը բացուի առաջին հայկական վարժարանը, Ազգային Խրիմեան անունով, որուն նիւթական և բարոյական հոգը կը բառնայ Բերիոյ Թեմին Ազգ. Առաջնորդարանը»[63]: Նույն թվականին Սելիմիեում բնակվում էր 20[64], Ռիհանիեում՝ 30[65], Հասիչիեում՝ 90[66], իսկ Ալեքսանդրետի մոտ գտնվող Ակ չայ և Աթըկ գյուղերում՝ 30-ական հայ ընտանիք[67]: 1931 թ. Թել Բրագ գյուղի մասը կազմող Սահակաշեն և Մեսրոպաշեն նորաշեն բնակավայրերում բնակվում էր 1.177 մարդ[68]: 1933 թ. Դրութ-յամբ Արամո գյուղում բնակվում էր 37[69], Ռաս ուլ Այնում՝ 70[70], Արաբ-Բունարում՝ 10 (հայ ավետարանականներ էին, իսկ հայ կաթոլիկներն այստեղ հաստատվել են 1932 թ.)[71] հայ ընտանիք: Աղբյուրներից մեկում կարդում ենք, որ 1935 թ.

---

[61] «Յուսաբեր», թիվ 27, մայիսի 2, 1929, թիվ 77, հուլիսի 1, 1929:
[62] «Եփրատ», թիվ 296, հունիսի 11, 1930:
[63] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Գ, էջ 459:
[64] «Արեւ», թիվ 3897, նոյեմբերի 17, 1931:
[65] «Եփրատ», թիվ 286, մայիսի 7, 1930:
[66] «Արեւ», թիվ 5615, հունիսի 21, 193,; «Եփրատ», թիվ 293, մայիսի 31, 1930:
[67] «Եփրատ», թիվ 289, մայիսի 17, 1930, թիվ 290, մայիսի 21, 1930:
[68] «Արեւ», թիվ 3782, հուլիսի 5, 1931, «Հայաստանի կոչնակ», թիվ 33, օգոստոսի 15, 1931, էջ 1051, «Յուսաբեր», թիվ 166, հոկտեմբերի 15, 1928, թիվ 64, հունիսի 17, 1935, «Միութիւն», թիվ 146, հունվար, 1931, էջ 11:
[69] «Արեւ», թիվ 4319, մարտի 30, 1933:
[70] «Հայաստանի կոչնակ», թիվ 37, սեպտեմբերի 16, 1933, էջ 885, թիվ 35:
[71] Ղազարեան Ս., Հայկական փոքր գաղութներ: Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, էջ 154-155, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Գ, էջ 457, «Հայաստանի կոչնակ», թիվ 10, մարտի 11, 1933, էջ 237:

Սուեդիայի Խըդր Բեկ գյուղում բնակվում էր 180 հայ կաթոլիկ[72]:

Անդրադառնալով Լիբանանի տարածքում հայերի տեղաբաշխմանը նշենք, որ գաղթական հայությունը հատկապես մեծ թիվ էր կազմում Բեյրութում կենտրոնացած լինելով վրանաքաղաքներում: Ամենամեծ վրանաքաղաքը կոչվում էր Կենտրոնական կամ Մեծ վրանաքաղաք, որի կազմում էր նաև Ամանոսը: 1930-ական թթ. սկիզբ առավ վրանաքաղաքների քանդման և նոր թաղամասերի կառուցման գործընթացը: Նոր թաղամասերից յուրաքանչյուրն ունենալու էր իր ազգային վարժարանը: 1920-ականների սկզբին շուրջ 15.000 գաղթական էր հաստատվել Կենտրոնական վրանաքաղաքում, որտեղ գտնվում էր Ս. Խաչ եկեղեցին: Մեծ վրանաքաղաքի փլուզումից հետո գաղթական հայերը սկսեցին կենտրոնանալ Անդր Նահրի շրջանում:

Ժամանակի պարբերական մամուլն արժեքավոր տեղեկություններ է պահպանել Լիբանանում հայերի տեղաբաշխման մասին: Այսպես տեսնում ենք, որ 1915 թ. Մեծ Եղեռնից հետո Զմմառի Դպրեվանքը շարունակում է իր գործունեությունը մնալով որպես «...կեդրոն մը Հայ Կաթողիկէ կղերի մտքին ու հոգիին»: Վիճակագրության համաձայն Զմմառի Դպրեվանք 1922 թ. հաճախել է 14, 1923 թ. 6, 1924 թ. 2, 1925 թ. 11, 1926 թ. 1, 1927 թ. 7, 1928 թ. 4, 1929 թ. 7, 1930 թ. 4, 1931 թ. 1, 1935 թ. 18, 1936 թ. 6, 1940 թ. 10 սան[73]: 1923 թ. Անթիլիասում բնակվում էր շուրջ 70 հայ ընտանիք: 1923 թ. «Արև» օրաթերթի խմբագիրը տեղեկացնում է, որ Անթիլիասում, Ջյունիում, Ղազիրում, Ջիբեյլում և Զահլեում բնակվում են մեծ թվով գաղթական հայեր, ովքեր անգործ են և դպրոցներ չունեն[74]: 1924 թ.վերաբերող տվյալ կա Ղազիրում 60-70 հայ ընտանիքի առկայության մասին[75]: 1927 թ. շուրջ 1000 հայ էր բնակվում

---

[72] «Աւետիք», թիվ 1, հունվար, 1936, էջ 15:

[73] «Զուարթնոց», թիվ 3, 1982, էջ 32:

[74] «Արեւ», թիվ 1229, մարտի 5, 1923:

[75] «Հայաստանի կոչնակ», թիվ 46, նոյեմբերի 15, 1924, էջ 1463:

Տրիպոլիում, որից 200-ը հայ կաթոլիկ և հայ ավետարանական, մյուսները Հայ Առաքելական եկեղեցու հետևորդներ էին[76]: 1928 թ. Սայդայում բնակվում էր շուրջ 25 հայ ընտանիք[77], 1929 թ. Սուրում բնակվող հայ ընտանիքների թիվը 13 էր[78]: 1928 թ. Լիբանանում բնակվում էին 28.671 Հայ առաքելական եկեղեցու և 4.188 լատին-կաթոլիկ ու ավետարանական եկեղեցիների հետևորդ հայեր[79]:

Վերը ներկայացված վիճակագրական տեղեկություններն ընդհանուր պատկերացում են տալիս հայոց ցեղասպանությունից մազապուրծ եղած և Սիրայում ու Լիբանանում ապաստանած հայ գաղթականների տեղաբաշխման մասին:

Խնդրո առարկա հարցի տեսակետից ուշադրության արժանի խնդիր է նաև սիրիահայ և լիբանանահայ վարչական համակարգի կազմակերպումը:

Կիլիկիո կաթողիկոսության պաշտոնական ճանաչմանը նախորդած ժամանակաշրջանում նշված երկրներում, ազգային կազմակերպման գործառույթը իրենց վրա վերցրին նախ միջգավառային, այնուհետև Հայ ազգային միությունները: Միջգավառային հայ միությունը կազմված էր գլխավորապես հայրենակցական միությունների ներկայացուցիչներից: Նախքան Լոզանում ընթացող բանակցությունների ավարտը, սփյուռքահայ համայնքներում հիմնված Հայ ազգային միությունները ներկայացնում էին Պ. Նուբարի գլխավորած Փարիզի հայ ազգային պատվիրակությունը: 1920 թ. Փարիզի ազգային պատվիրակության լիազոր ներկայացուցիչ Բ. Մելքոնյանի նախաձեռնությամբ ընտրվում է Բեյրութի ազգային միությունը[80]: Հայ ազգային միության խնդիրն էր Սփյուռքում համակարգել գաղթականության, որբերի տեղավորման և ազգային կյանքի կազմակերպման գործերը:

---

[76] «Լիբանան», թիվ 285, ապրիլի 5, 1927:
[77] Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 542:
[78] «Սիւրիահայ տարեգիրք», 1929, էջ 144-145:
[79] «Յուսաբեր», թիվ 61, հունիսի 13, 1928:
[80] «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 260:

Մ. Նաջարյանը նշում է. «Ազգային Միութեան կազմութիւնը կ'ապահովուէր գոյութիւն ունեցող քաղաքական կուսակցութեանց, երեք քոյր յարանուանութեանց և անկուսակցականներու երկուքական ներկայացուցիչներովը»[81]:

Հայ ազգային միություններ են հիմնվում հայաշատ բոլոր քաղաքներում: 1921 թ. գաղթական հայությանը ղեկավարում էր Դամասկոսի հայ ազգային միությունը, որն ուներ իր երկսեռ վարժարանը, լսարանը և թատրոնը[82]: Հալեպի ազգային միության կազմում ներկայացված էին երեք հարանվանության ներկայացուցիչները: Ըստ Ռ. Ջեբեջյանի, Հալեպի ազգային միության նպատակն էր զբաղվել գաղթականությանը վերաբերող տարբեր խնդիրների լուծմամբ[83]:

1925 թ. Սահակ Բ Խապայան կաթողիկոսի հայտարարության համաձայն որոշվել էր Լիբանանում ազգային գավառական ժողովի ընտրություն կազմակերպել, որը պետք է կազմվեր 21 անդամից, որից 3-ը լինելու էր կաթողիկոսի կողմից ընտրված հոգևորական, իսկ 18-ը՝ ժողովրդի կողմից ընտրված աշխարհիկ գործիչ: Գավառական ժողովի 14 անդամ ընտրվելու էր Բեյրութից, 4-ը՝ Ջյունիից, Ղազիրից, Տրիպոլիից, Զահլեից և Սայդա-Սուրից[84]: 1926 թ. տեղի ունեցած ընտրություններից հետո լիբանանահայ համայնքում սկիզբ են առնում հասարակական-քաղաքական խմորումներ: Գավառական ժողովի ընտրություններում կարևոր տեղեր են զբաղեցնում ՀՅԴ ներկայացուցիչները: Առաջ է գալիս ազգային միությունների և գավառական ժողովի իրավասության խնդիրը[85]:

Փաստորեն, մինչև 1920-ական թթ. վերջը սիրիահայ և լիբանանահայ համայնքները չունեցան վարչական կենտրոնացված համակարգ. «Սուրիոյ մէջ կամ այլուր ուր որ գաղութ

---

[81] Նաճարեան Մ., նշվ. աշխ., էջ 12:
[82] «Հայաստանի կոչնակ», թիվ 40, հոկտեմբերի 1, 1921, էջ 1214:
[83] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, էջ 36:
[84] «Յուսաբեր», թիվ 50, հուլիսի 30, 1925:
[85] Աղազարեան Մ., էջ 6, Արշակունի Ա., էջ 9-25, Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության, հ. Դ, Աթենք, 1995, էջ 325:

մը ունինք հոն կարելի է գտնել ազգային միութիւններ, միջգաւառայիններ եւ այլ տեսակ միութիւններ ու կազմակերպութիւններ, որոնք բաւականին հեռի են հաւաքականութիւն մը ներկայացնելէ»[86]: Ստեղծված կազմակերպությունները գործում էին անկախաբար և միմյանց գործելակերպից անտեղյակ էին: Առկա պայմաններում հայ քաղաքական կուսակցություններից յուրաքանչյուրը ձգտում էր հիմնել ազգային հաստատությունների սեփական ցանցը[87]: Սփյուռքահայ հասարակական միտքը մատնանշում էր համասփյուռքյան կենտրոնական մարմնի անհրաժեշտությունը: Այդ պատճառով Ա. Կիտուրը նշում է, որ գաղութահայության տնտեսական, հասարակական և կրթական դիրքերը խարխլված են. այն հիմքեր չունի իր դիրքերը վերականգնելու համար[88]:

Այնուամենայնիվ, հյուրընկալ երկրներում հայ գաղթականների ինտեգրումը միշտ չէ, որ սահուն է ընթացել. բացառություն չեն նաև Սիրիան և Լիբանանը: Հայ և արաբ ժողովուրդների դարավոր բարեկամության և արաբների հայերի նկատմամբ ունեցած ջերմ վերաբերմունքի, հայ գործիչների խորագիտության արդյունքում, սակայն, որոշ բացառություններով, հիմնականում հնարավոր է եղել խուսափել հակահայկական քայլերից:

Հայտնի իրողություն է, որ հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո արաբները գործնական օգնություն են ցուցաբերել հայերին. Նրանց հայանպաստ գործունեության արդյունքում փրկվել է տասնյակ հազարավոր հայ գաղթական ու որբ[89]: Այնուամենայնիվ, 1919 թ.

[86] «Լիբանան», թիվ 24, հուլիսի 1, 1924:
[87] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 386:
[88] «Լիբանան», թիվ 419, մայիսի 4, 1929:
[89] Մարգարյան Ն., Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.), Երևան, 2013, էջ 17-43, նույնի, Արաբների վերաբերմունքը Սիրիայում հաստատված հայ որբերի նկատմամբ, «Մերձավոր Արևելք:

Դամասկոսում և 1926 թ. Հալեպում արաբական խուժանի միջոցով թուրքերին հաջողվեց հայկական ջարդեր հրահրել: Վայրագությունները կասեցվում են միայն հայ և արաբ հոգևորականների վճռական միջամտության արդյունքում[90]: 1920-ական թթ. սկզբից արաբների և հայերի միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատելու նպատակով գործնական քայլեր են իրականացվում: 1920 թ. Հայ սահմանադրական ռամկավար կուսակցության տեղեկագրերից մեկում առկա է հայ-արաբական հարաբերությունների հետ կապված հետևյալ միտքը. «Հայ եւ արաբ յարաբերութիւնները ներկայիս լաւ վիճակ մը կը ներկայացնեն: Սոյն համերաշխութեան իրագործման համար կազմուած է խառն կոմիտէ մը…»[91]: Իրավիճակը, սակայն, անմիջապես չի կայունանում. 1922 թ. Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ-ն Եգիպտոսի թեմի առաջնորդ Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյանին ուղղված նամակներից մեկում տեղեկացրել է, որ թուրքերը Սիրիայում աշխատում են տեղացիներին գրգռել հայերի դեմ, ինչի հետևանքով Դամասկոսում արաբական թերթերը հակահայկական նյութեր են հրապարակում: Արդյունքում Հալեպում, Համայում, Հոմսում հասունանում են հակահայկական տրամադրություններ: Կիլիկիո կաթողիկոսը նշում է, որ իրավիճակը շտկելու նպատակով դիմումներ են արվել վերոհիշյալ կոմիտեին[92]: 1926 թ. գաղթական հայերից շատերը նպատակահարմար գտան գործել այնպես, որ թյուրիմացություն չստացվի՝ շատ տեղերում հրաժարվելով իրենց քաղաքացիական իրավունքներից և խորհրդարանական ընտրություններին մասնակցությունից[93]:

Փաստորեն, 1920-ական թթ. արաբական երկրներում թուրքերի հրահրմամբ առաջ եկած հակահայկական տրամադ-

Պատմություն, քաղաքականություն, մշակույթ», թիվ 3, Երևան, 2006, էջ 101-104, «Ազգ», թիվ 75, ապրիլի 24, 2007:

[90] Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ, էջ 16:

[91] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 790, թ. 3:

[92] Նույն տեղում, գ. 843, թ. 22:

[93] «Յուսաբեր», թիվ 33, մայիսի 11, 1926:

րությունները տեղական բնույթ էին կրում, այլ ոչ համաարաբական: Արաբները, նախկինում գտնվելով Օսմանյան լծի տակ, հայությանը հյուրընկալում էին բարեկամական զգացումով իբրև ընդհանուր թշնամուց տուժածների[94]: Չնայած լարված իրադրությանը, հայ-արաբական համընդհանուր թշնամանք գոյություն չուներ: Նշված ժամանակաշրջանի հայ-արաբական հարաբերությունները Թ. Գրինշիլդսի կողմից որակվում են որպես «թշնամական հարաբերություններ»[95], սակայն պարզ է, որ այս տեսակետը չափազանցված է: «Եփրատ» թերթի խմբագիրն այսպես է գնահատում հայ-արաբական հարաբերությունները. «Տառապանքի եղբայրներ եղած ենք տարիներէ ի վեր, որով երկու ժողովուրդներն կրնան գնահատել երջանկութիւնը և բարօրութիւնը, ասոնք բաղդի բերումով եկած են ապրիլ քով քովի, նոյն հայրենիքին մէջ և նոյն հորիզոնին տակ»[96]: Ուստի, չպետք է մոռանալ, որ արաբների բարյացակամ վերաբերմունքի արդյունքում հայության մի ստվար հատված փրկվեց Մեծ Եղեռնից և ապաստան գտավ Սիրիայում և Լիբանանում:

1930-ական թթ. ևս հայ-արաբական հարաբերությունները հարթ չէին ընթանում: Բեյրութում, Դամասկոսում, Հալեպում արաբական թերթերն իրենց հայատյաց հոդվածներով հաճախ անբարենպաստ մթնոլորտ էին ստեղծում հայերի շուրջ, որի արդյունքը նկատելի էր հայության գործունեության բոլոր ասպարեզներում[97]: 1932 թ. Ն. Աղբալյանը Կահիրեում հեղինակում է «Սուրիա եւ մենք» աշխատությունը նպատակ հետապնդելով չեզոքացնել Սիրիայի տարբեր քաղաքներում գտնվող թուրք լրտեսների գործողությունները և մեղմել

---

[94] Աբրահամյան Ա., նշվ. աշխ., գ. Բ, էջ 24, Ավագյան Ա., Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1994, էջ 132, Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ, էջ 12:

[95] Гриншилдс Т., Поселение армянских беженцев в Сирии и Ливане в 1915-1939 гг., Ереван, 1982, стр. 10-11.

[96] «Եփրատ», թիվ 109, հուլիսի 25, 1928:

[97] «Հայաստանի կոչնակ», թիվ 45, նոյեմբերի 8, 1930, էջ 1418, թիվ 8, փետրվարի 20, 1932, էջ 236:

արաբների հակահայկական տրամադրությունները: Ըստ հեղինակի, հայերի Սիրիայում հաստատվելը տեղի է ունեցել պատմական, քաղաքական և քաղաքակրթական պատճառներով: Ն. Աղբալյանը եզրակացնում է, որ ինչպես Սիրիան է հայերին անհրաժեշտ, այնպես էլ հայերն են պատրաստակամ օգտակար լինել սիրիացիներին. այս կարևոր հանգամանքը գնահատող արաբների թիվը գնալով շատանում է[98]:

Հայտնի իրողություն է, որ 1924 թ. հուլիսի 12-ին Ազգերի լիգայի խորհուրդը քննարկման դրեց գաղթականական գործերի գլխավոր կոմիսար Ֆ. Նանսենի ներկայացրած տեղեկագիրը հայ գաղթականների իրավական դրության մասին: Արդյունքում որոշվեց ընդունել և ճանաչել նանսենյան կոմիտեի կողմից հայ գաղթականներին տրամադրվող միջազգային անձնագրերի օրինականությունը[99]: Սկիզբ առավ աշխարհասփյուռ հայ գաղթականությանը քաղաքացիական իրավունքների շնորհման գործընթացը: Շուրջ 320.000 հայի տրամադրվեց Նանսենյան անձնագիր[100], որի զգալի մասը կենտրոնացած էր Մերձավոր Արևելքի երկրներում:

1924 թ. օգոստոսին Սիրիայում և Լիբանանում ընդունվում է քաղաքացիության օրենքը, ըստ որի Սիրիայում և Լիբանանում հինգ տարի անընդմեջ բնակվող անձանց շնորհվում էր քաղաքացիության իրավունք: Այս օրենքը ամրագրված էր նաև Լոզանի դաշնագրով[101]: Քաղաքացիությունը գաղթական հայերին հնարավորություն էր ընձեռում իրենց մասնակցությունը բերել տվյալ երկրի քաղաքական, տնտեսական, հասարակական կյանքին: 1925 թ. Բեյրութում Հայ ազգային միության նախագահ Բ. Մելքոնյանը լիբանանաբնակ հայերին քաղաքացիություն շնորհելու հետ կապված նշում է, որ

---

[98] Նիկոլ Ա., նշվ. աշխ., էջ 24:

[99] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 562, Մելիքսեթյան Հ., Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում, «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր: Հասարակական գիտություններ», թիվ 9, 1961, էջ 45-46:

[100] «Ազգ», թիվ 91, մայիսի 14, 2003:

[101] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 178, Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, 2006, էջ 566, «Յուսաբեր», թիվ 43, հուլիսի 14, 1925:

«…կարելի պիտի ըլլայ ջնջելով գաղթականի ստորնացուցիչ մակդիրը, ամրապնդել քաղաքական և քաղաքացիական դիրքը, պաշտօն գտնել կառավարական, վաճառականական, ճարտարուեստական, երկաթուղային հաստատութեանց մէջ, նոյնիսկ իրաւունք ձեռք բերել յառաջիկայ թաղական եւ երեսփոխանական ընտրութեանց մասնակցելու»[102]:

1920-ական թթ. Կ. Դալլաքյանի բնութագրմամբ հայտնի են որպես Սփյուռքի գոյավորման տարիներ, լիբանանահայ հասարակական գործիչ, մտավորական Բ. Փափազյանի բնութագրմամբ որպես գաղթականական տարիներ, իսկ Բ. Եղիայանը նշում է. «1921-1930 տարիներով շրջանակուած տասնամեակը՝ իր խորագոյն բնազաւառներէն յանկարծ խլուած դուրս նետուած ժողովուրդի մը կործանման վտանգաւոր գահավէժին եզերքը կանգնած տարիներ են…»[103]: Այսինքն, 1920-ական թթ. Սփյուռքի ձևավորման ծիրում Մերձավոր Արևելքի երկրներում հաստատված հայությունը գտնվում էր խիստ անորոշ իրավիճակում: Գաղթականությունը մի կողմից հայրենիք վերադառնալու հույսեր էր փայփայում, մյուս կողմից փորձում համակերպվել ստեղծված իրադրության հետ՝ հյուրընկալ երկրներում աշխուժացնելով կրթական և մշակութային գործունեությունը: 1920-ական թթ. առաջին կեսին որևէ երաշխիք չկար, որ գաղթական հայությունը կարող էր վերջնականապես հաստատվել Սիրիայում և Լիբանանում[104]: Նման պայման-ներում նշված երկրներում հաստատված հայերին հաջողվեց համեմատաբար կարճ ժամանակահատվածում ստեղծել բազմաթիվ կրթօջախներ, նպաստել մշակութային կյանքի զարգացմանը:

---

[102] «Հայաստանի կոչնակ», թիվ 13, մարտի 28, 1925, էջ 406:
[103] Դալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ, էջ 78, Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 209, Փափազեան Բ., նշվ. աշխ., էջ 5:
[104] Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. 1, էջ 136:

Սիրիան և Լիբանանը դարձան նորակազմ Սփյուռքի հայաշատ կենտրոններ: Կիլիկիո կաթողիկոսը, հայրենակցական միություններն ու վարչական կառույցների ներկայացուցիչները ջանում էին կանխել հայերի գաղթը Սիրիայից և Լիբանանից դեպի ԱՄՆ, Ֆրանսիա և այլ երկրներ՝ նրանց մայր հայրենիքի սահմաններին մոտիկ պահելու նպատակով: Քայլեր էին ձեռնարկվում համայնական կարգավիճակի հաստատման, ամրապնդման ուղղությամբ: Այդ ճանապարհին կարևոր էր հայ ինքնության՝ որպես հայապահպանության գլխավոր ազդակի պահպանումը: Նշված խնդրի լուծումը հրամայական էր հատկապես ցեղասպանությունից մազապուրծ և մահմեդական երկրներում հաստատված հայությանը փրկելու նպատակով:

Վերը թվարկված նախադրյալները կարևոր հիմք հանդիսացան 1920-1930-ական թվականներին Մերձավոր Արևելքի հայ համայնքներում կրթամշակութային կյանքի կազմակերպման համար:

## 1.2. Հայապահպան առաքելության կազմակերպումը

Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից գաղթած հայերը դարերի ընթացքում ձևավորված սոցիալ-մշակութային արժեհամակարգի կրողներն էին: Մեծ Եղեռնը վերապրած գաղթականները, իբրև նախնյաց ժառանգորդներ, հայոց մշակութային ավանդույթներն իրենց հետ տարան այն երկրներ, որտեղ ապաստան գտան[105]: Հաստատվելով Սիրիայում և Լիբանանում՝ հայությանը հաջողվեց ոչ միայն պահպանել, այլև, ըստ արժանվույն զարգացնել դարավոր ավանդույթներ ունեցող սոցիալ-մշակութային արժեհամա-

[105] Тер-Мкртчян Л., указ. соч., стр. 14.

կարգը: Այդ գործընթացը հատկանշական էր հայապահպանության տեսանկյունից: Սոցիալ-մշակութային արժեհամակարգի կարևորագույն բաղադրատարրերի պահպանությունն իր նպաստը բերեց կրթամշակութային կյանքի սկզբնավորման գործին: Այդ բաղադրատարրերն էին.

- Հայ ավանդական ընտանիքը

Ընտանիքը նոր ձևավորվող սփյուռքահայ համայնքներում եկեղեցու և դպրոցի հետ միասին դարձավ հայ էթնոմշակութային ինքնության պահպանման արդյունավետ միջոց: Հայկական ընտանիքի նման գործառույթն ընդգծվեց հատկապես Մերձավոր Արևելքի երկրներում, որտեղ մահմեդական բնակչությունը գերակշռող էր[106]: Ընտանիքի գոյությունը վտանգված էր ցեղասպանությունը վերապրած գաղթականության շրջանում: Նման իրավիճակում անչափ կարևորվում էր հայության հարատևումը. խրախուսվում էր ամուսնությունը, բազմածնությունը և զավակներին կրթելու ունակ մայրերին տրամադրվող օժանդակությունը[107]: Դեռևս 1918 թ. Սահակ Բ կաթողիկոսի կոնդակում քահանաներին կոչ է արվում ուշադիր լինել, որ նախքան ամուսնությունը, կողմերից մեկը չտառապի որևէ հիվանդությամբ: Դրանում համոզվելու համար կարևոր էր անշահախնդիր բժշկական վկայագրի առկայությունը[108]:

1920-1930-ական թթ. Սփյուռքում, ընտանիքի պահպանության տեսանկյունից, կարևորվում էր խառնամուսնությունների, ապօրինի և համարյուն ամուսնությունների բացառումը: Հայ Առաքելական եկեղեցին ամեն կերպ պայքարում էր այս արատավոր երևույթների դեմ՝ հորդորելով զգուշանալ նման ամուսնություններից. «...հայ երիտասարդին

---

[106] Мелконян Э., Армянская семья в условиях армянской диаспоры, "Советская этнография", н. 6, Москва, 1988, стр. 99.
[107] «Արև», թիվ 68, մարտի 2, Ալեքսանդրիա, 1923:
[108] Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիոյ, էջ 81, «Եփրատ», թիվ 31, հոկտեմբերի 19, Հալեպ, 1927:

երջանկութիւնը հայ պարկեշտ ու տանտիկին երիտասարդուհիի մը հետ իր ապագան կապելու մէջ է եւ փոխադարձաբար հայ օրիորդը միայն հայ ամուսին մը ընտրելուն մէջ պիտի գտնէ իր հոգեկան բոլոր պահանջներուն գոհացումը. Հակառակը աղէտալի է թե ամուսնացողներուն համար և թէ Հայաստանեայց եկեղեցւոյ համար»[109]: Ազգային ամուսնությունների դեմ Կիլիկիո կաթողիկոսն անգամ հատուկ կոնդակ է հրապարակել, որտեղ կարևորվում էր հայրենի ավանդությունների ու Լուսավորչի դավանանքի և հավատքի անաղարտ պահումը: 1931 թ. դեկտեմբերի 21-ին Կիպրոսի թեմի առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաջյանին գրած նամակում կաթողիկոսն այս առիթով շեշտում է. «Ախ, խառն ամուսնութիւն, ընտանիք քանդող եւ ապազգայնացնող ազդակ»[110]: Ինչ վերաբերում է համարյուն կամ «մերօք» ամուսնություններին, ապա 1925 թ. սկսած, ազգականների միջև ամուսնության դեպքեր են գրանցվում նաև Հալեպում: Հալեպի թեմի առաջնորդ Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանն այս առիթով քննադատում է հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչներին, որոնց շրջանում տարածված էին համարյուն ամուսնությունները նշելով, որ կաթոլիկ եկեղեցին պատրաստ է առանց քննություն անցկացնելու ամուսնացնել անխոհեմությամբ իրեն դիմողներին[111]: Ոչ պակաս կարևոր էր նաև ամուրիության կանխումը: Այս առիթով ժամանակակիցներից մեկը նշում է, որ ամուրին հայրենիքի և ազգի հանդեպ իր պարտքը չկատարած անձնավորություն է[112]:

Արաբական աշխարհում հայ ավանդական ընտանիքի գոյությունն անառարկելի նախապայման էր ոչ միայն երեխայի դաստիարակության, այլև հայապահպանության գործում:

---

[109] Արտաւազդ արքեպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 47, «Եփրատ», թիվ 22, սեպտեմբերի 17, 1927:
[110] Թղթակցութիւն Սահակ Բ. կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, նամակ 108, էջ 319, Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիոյ, էջ 120:
[111] Արտաւազդ արքեպիսկոպոս, նշվ. աշխ., էջ 57:
[112] «Սիոն», թիվ 3, մարտ, Երուսաղեմ, 1928, էջ 89:

- Մայրենի լեզուն

Կարևոր էր նաև հայերենի պահպանությանն ուղղված գործունեությունը: Ականավոր հայագետ Լ. Զեքիյանը, կարևորելով Սփյուռքում հայերենի ուսուցման գործում ծնողների մեծ դերակատարությունը, նշում է. «Օտար միջավայրերու մէջ իր ծննդեան օրէն երախային տրուելիք հայերէն ուսուցումը ծնողներէն կը պահանջէ որոշ իմաստութիւն, որոշ կորով, որոշ կամք եւ ազդեցիկ անհատականութիւն, դիւրացնելու լեզուական յարաբերութիւնը ընդմէջ հայերէնի եւ միւս լեզուին, ենթադրաբար՝ անգլերէն, ֆրանսերէն գերմաներէն, եւն...»[113]: Հայերենի իմացությունը, հատկապես Սիրիայի հյուսիսում, նորահաստատ գաղթականներին կարևոր կարգավիճակ էր շնորհում: Վերջիններս չէին ամուսնանում Հայ Առաքելական եկեղեցու հետևորդ, բայց հայերենին չտիրապետող քրդախոս հայերի հետ[114]. ֆրանսիական և անգլիական ազդեցության գոտիներում գտնվող Մերձավոր Արևելքի երկրներում արդիական էին համապատասխանաբար ֆրանսերենը և անգլերենը: Սիրիայում հատկապես ֆրանսերենով թարգմանություններն ու գրականությունը շատ տարածված էին[115]: 1920-ական թթ. պարզ է դառնում, որ առանց ֆրանսերենի և արաբերենի գիտության, անհնար է հասարակությունում դիրք ձեռք բերել: Այդ առումով ակնհայտ էր, որ հայ երիտասարդները պետք է տիրապետեին այդ լեզուներին, ինչն անհրաժեշտ ու անհետաձգելի պահանջ էր[116]:

1930-ական թթ. վերոնշյալ լեզուներին տիրապետելու պահանջն ավելի է մեծանում: Առկա էր այն մտայնությունը, որ ֆրանսերենի ուսուցումը չպետք է նվազի հայկական վարժարաններում[117]: Նույն ժամանակաշրջանում ֆրանսիա-

---

[113] Գասպարեան Ս., Ինքնութեան խճանկար, էջ 142:
[114] Дятлов В., Мелконян Э., указ. соч., стр. 49.
[115] Hitti Ph., ibid, p. 701.
[116] «Եփրատ», թիվ 4, հուլիսի 16, 1927:
[117] Սիւրմէեան Ա., նշվ. աշխ., հ. Ա, էջ 338:

ցիները նույնպես շահագրգռված էին, որ հայ ազգային վարժարաններում ավելի լուրջ ուսումնասիրվեն ֆրանսերենն ու արաբերենը: Լիբանանահայ թեմի առաջնորդ Եղիշե եպիսկոպոս Կարոյանին ուղղված պաշտոնագրում ֆրանսիական վարչակարգի կրթական դիվանից հրահանգում են այդուհետ ազգային վարժարաններում ֆրանսերենին և արաբերենին ավելի շատ դասաժամեր հատկացնել առանց հայերենի դասաժամերը կրճատելու[118]: Գաղթական հայությունը ներկայացնող պետական պաշտոնյաները նույնպես կարևորում էին հայկական կրթօջախներում արաբերենի և ֆրանսերենի ուսուցումը: 1938 թ. հայ երեսփոխան Վ. Լեյլեկյանի դիմումի համաձայն Լիբանանի կրթության նախարարությունից երեք նոր ուսուցիչ է տրամադրվում հայկական վարժարաններին արաբերենի ուսուցումը խորացնելու նպատակով[119]: Նույն տարում մոտ հիսուն հայ երիտասարդ դիմում է քաղաքչության Արաբական գրասենյակ արաբերենի ուսուցման մասնավոր դպրոց բացելու նպատակով: Արաբական գրասենյակը միջոցներ է ձեռնարկում անվճար գիշերային դասընթացներ անցկացնելու համար[120]: Հայությունը կարողանում է հաղթահարել հատկապես արաբերեն լեզվին տիրապետելու խոչընդոտները: Ակնհայտ է, որ հատկապես 1920-ականներին արաբերեն լեզվին չտիրապետելը հոգեբանական բարդույթի պատճառ չհանդիսացավ, և «...հայը իր ինքնութիւնը հասցուց մինչեւ բարձր պատուանդան»[121]:

Հայապահպանությանը խաթարող մեկ այլ մարտահրավեր էր թրքախոսությունը, որը տարածված էր նոր գաղթականների շրջանում, մինչդեռ տեղացի հայերը չէին օգտագործում թուրքերենը[122]: Արևմտյան Հայաստանից և հատկապես

[118] «Հայաստանի կոչնակ», թիվ 20, մայիսի 17, 1930, էջ 634:
[119] Նույն տեղում, թիվ 20, մայիսի 14, 1938, էջ 478:
[120] «Արարատ», թիվ 34, հունվարի 9, Բեյրութ, 1938:
[121] Ճէպէճեան Հ., Հայուն գոյապայքարի ճանապարհը, Բեյրութ, 2010, էջ 340-341:
[122] Սիւրմէեան Ա., նշվ. աշխ., հ. Բ, էջ 21:

Կիլիկիայից գաղթած հայության մի ստվար հատված թրքախոս էր: Բ. Փափազյանը նշում է, որ Կիլիկիայից գաղթած հայության մի մասը հայերեն չգիտեր և մոտ 800 տարի հաղորդակցվել էր թուրքերենով[123]: 1920-ական թթ. սկսած թրքախոսությունը տարածված էր և Սիրիայում, և Լիբանանում: 1922 թ. ժամանակակիցներից մեկը Բեյրութի հետ կապված գրում է. «Տիրող լեզուները արաբէրենն ու ֆրանսէրենն են: Տաճկախօսներու կը հանդիպիմ՝ սա Կիլիկեան երկրորդ գաղթէն վերջ.-անոնք տաճկախօս Հայերն են, և կամ՝ նորերս Մէրսինէն ու Անթալիայէն եկած ջոջ-թուրք վաճառականներ...»[124]: Հաստատվելով հյուրընկալ երկրներում՝ հայ մտավորական հայրերը գիտակցեցին, որ հայապահպանության տեսանկյունից առաջնահերթ է հայ բնակչության շրջանում թուրքերեն լեզվի չկիրառումը: Թրքախոսությունը շատ տարածված էր հատկապես հայ ավետարանականների շրջանում: Ինչպես նշում է Հ. Աhարոնյանը, հին սերնդի համար թուրքերենով Աստվածաշունչ ընթերցելը, երգելը, աղոթելը խիստ անհրաժեշտություն էր: Ավետարանական եկեղեցում, ըստ հերթականության, երկու լեզվով և՛ քարոզ էր ընթերցվում, և՛ երգարաններ օգտագործվում[125]: Ժամանակակիցներից մեկի կարծիքով թրքախոսությունը «...հայուն թարախոտ և սակայն հինցած ու զօրեղապէս հաստատուած վէրքն է. զօրավոր կամք ու միահամուռ ճիգ պէտք է զայն արմատախիլ ընելու համար»[126]: 1930-ական թթ. երկրորդ կեսին թրքախոսության դեմ պայքարն ավելի կազմակերպված բնույթ է ստանում: Այս գործի հաջողությանը աջակցում են հայ երիտասարդական միությունները, որոնց կողմից ձեռնարկված առաջին փորձը, թուրքերենով ներկայացումը ցուցադրելու դեմ,

---

[123] Փափազյան Բ., նշվ. աշխ., էջ 7:

[124] ՄՄ, Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 8,. վավ. 24/13 (մամուլի կտրոն), թ. 1:

[125] Աhարոնեան Յ., Հայ աւետարանական եկեղեցին ճանապարհներու խաչաձեւումին, Բեյրութ, 1988, էջ 35:

[126] «Եփրատ», թիվ 93, մայիսի 30, 1928:

հաջողությամբ է պսակվում[127]: Կարևոր էր նաև գաղթական հայությունը ներկայացնող պատկան մարմինների գործունեությունը: 1939 թ. Բեյրութում քաղաքական և կրոնական ժողովների խառը նիստում որոշում կայացվեց արգելել թուրքերենի գործածությունը դպրոցներում և եկեղեցիներում[128]:

- Հարանվան եկեղեցիները

Լիբանանում համայնական դրությունն արձանագրված էր իրավական հետևյալ ձևակերպմամբ. «Արաբ պետութիւնները, որոնք նախկին օսմանեան կայսրութենէն բաժնուած են, կը ճանչնան ոչ - իսլամ տարրերու համայնքային դրութիւնը: Այս մասին իւրաքանչիւր պետութիւն մասնաւոր օրէնքներ հրատարակած է, որոնք հիմնուած են ընդհանրապէս նախկին գոյավիճակը պահպանելու սկզբունքին վրայ, պարագայական սեղմումներով կամ ընդլայնումներով»[129]:

Նշված ժամանակաշրջանում Հայ Առաքելական եկեղեցին Սիրիայում և Լիբանանում ներկայացված էր ի դեմս Կիլիկիո կաթողիկոսության: 1924 թ. ֆրանսիացիները հավանություն են տալիս Սահակ Բ Խապայան կաթողիկոսին իր աթոռը հաստատել Լիբանանում: Սահակ Բ Խապայան կաթողիկոսը իր հերթին հայաշատ վայրերում նշանակում է կաթողիկոսական փոխանորդներ և ազգային վարչական ժողովներ[130]: Սիրիայի տարածքում գտնվող թեմերը, բացառությամբ Բերիո թեմի (Հալեպ), երուսաղեմապատկան էին, և Կիլիկիո կաթողիկոսի գործունեության արդյունքում երկվություն էր առաջացել: Սահակ Բ կաթողիկոսն իր նամակներից մեկում հավաստիացնում է, որ Կիլիկիայի կաթողիկոսության և Երուսաղեմի պատրիարքության միջև

---

[127] «Արարատ», թիվ 229, օգոստոսի 31, 1938, «Յուսաբեր», թիվ 155, հոկտեմբերի 3, 1934:

[128] «Հայաստանի կոչնակ», թիվ 18, մայիսի 6, 1939, էջ 441:

[129] Լիբանանի հայոց անձնական իրաւունքը, Անթիլիաս, 1956, էջ 44:

[130] Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, 1975, էջ 225:

եղբայրական համաձայնություն կարող է կնքվել միայն Ամենայն Հայոց կաթողիկոսի միջնորդությամբ[131]: 1929 թ. այս խնդիրն ստացավ իր լուծումը: Երուսաղեմի պատրիարք Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի օրոք Բեյրութի, Դամասկոսի, Լաթակիայի թեմական եկեղեցիներն ու ազգային վարժարանները փոխանցվեցին Կիլիկիո կաթողիկոսությանը[132]: 1930-ական թթ. սկիզբ է առնում Կիլիկիո կաթողիկոսության թեմական կազմակերպման գործընթացը: Նույն ժամանակաշրջանում Հ. Մամուր Ֆաթիմին իր աշխատանքում «Գաղութահայ Քաղաքականութեան դեկը» վերապահում է Կիլիկիո կաթողիկոսությանը[133]: Ակնհայտ էր, որ, սակայն, նորահաստատ կաթողիկոսական աթոռն ի զորու չէր միանգամից համախմբել սփյուռքահայությանը: Հատկապես մահմեդական երկրներում, Հայ Առաքելական եկեղեցին դիտարկելով որպես ինքնության պահպանման կարևորագույն միջոց, եկեղեցական և դպրոցական շրջանակներում առաջնահերթ է դառնում «ինչ որ կրնանք եւ ինչ որ կարելի է» հավատամքը[134]:

1927 թ. հայ ավետարանական ազգապետ Զ. Բեգջյանը Կ. Պոլսից տեղափոխվում է Բեյրութ[135]: Հայ ավետարանական առանձին համայնքը պետական ճանաչում չի ստանում: Նրանք պետք է բավարարվեին միայն ընդհանուր ավետարանական համայնքի մեջ մտնելով և միևնույն համայնական կարգավիճակն ունենալով արաբների, ասորիների հետ չկարողանալով կազմակերպել «Հայ ավետարանական» ինքնիշխան համայնք[136]: Հայ ավետարանականները Սիրիայում և Լիբանանում մեծ թիվ չէին

---

[131] ՀԱԱ, ֆ. 409, ց. 1, գ. 4743, թ. 2:

[132] Սիւրիոյ երուսաղեմապատկան թեմերուն Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը, էջ 38, «Սիոն», թիվ 5, մայիս, 1929, էջ 133:

[133] Մամուր Ֆաթիմի Յ., էջ 21-24:

[134] «Սիոն», թիվ 6, հունիս, 1929, էջ 164:

[135] Ահարոնեան Յ., նշվ. աշխ., էջ 47, Քասունի Ե., Լուսաշավիղ, Բեյրութ, 1947, էջ 505:

[136] Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 225:

կազմում: Այս առիթով Հ. Աիարոնյանը նշում է, որ արաբական երկրներում հայ ավետարանականների ընդհանուր թիվը մեծ չէր, բայց նրանք փոքրամասնություն չէին արաբ ավետարանականների համեմատությամբ[137]:

1923 թ. հայ կաթոլիկ պատրիարք Ա. Արփիարյանը Կ. Պոլսից տեղափոխվում է Հալեպ, իսկ 1931 թ. հոկտեմբերի 25-ին ընտրվում Կաթողիկոսական պատրիարք Տանն Կիլիկիո[138]:

1920–1930-ական թթ. Սիրիայում և Լիբանանում հայ հարանվան եկեղեցիները դարձան հայ սոցիալ–մշակութային արժեհամակարգի գլխավոր պահապանները: Հայ Առաքելական եկեղեցու կողմից սոցիալ-մշակութային արժեհամակարգի պահպանմանն է միտված Մեսրոպ եպիսկոպոս Նարոյանի հետևյալ միտքը. «...ամէն հայ, ուր որ բախտը նետած ըլլայ զինքը, պէտք է ջանայ պահել իր ինքնութիւնը ու հարազատութիւնը: Պէտք է սիրէ եւ պահպանէ իր Ազգ. Եկեղեցին, ուսանի իր մայրենի լեզուն եւ գրականութիւնը, ու նախանձախնդիր ըլլայ հայեցի ընտանեկան աւանդութիւնները չեղծանելու»[139]:

Ըստ Լ. Զեքիյանի, 1920-1930-ական թթ. հայ ինքնության կամ «սփիւռքային դրութեան» բևեռներն էին «ազգ», «մշակոյթ», «հայրենիք», «լեզու», «կուսակցութիւն», «եկեղեցի», «կրօնք», «դպրոց» հասկացությունները: Այս բևեռների շուրջ համախմբված հայության համար հեշտ չէր միանգամից միավորվել, հանդես գալ հավաքական ու քաղաքացիական գիտակցությամբ[140]:

Այնուամենայնիվ, 1920-ական թթ. մեծ կարևորություն է ձեռք բերում ազգապահպանման գաղափարաբանությունը, որը դառնում է սփյուռքահայության գործունեության առաջնահերթություններից մեկը[141]:

---

[137] Աիարոնեան Յ., նշվ. աշխ., էջ 36:
[138] Քէլէշեան Մ., Սիս – մատեան, Բեյրութ, 1949, էջ 348:
[139] «Տաթև» կրօնական տարեցոյց, Հալեպ, 1926, էջ 155:
[140] Զեքիեան Լ., Հայապատում, Լոս Անջելես, 2001, էջ 147:
[141] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 384:

Հայ ավանդական ընտանիքը, մայրենի լեզուն և հարանվան եկեղեցիները դարձան հայապահպանության այն կարևոր գործիքները, որոնց նշանակությունը գիտակցում էին ժամանակակիցները: Եկեղեցական գործիչները, քաղաքական կուսակցություններն ու բարեգործական կազմակերպություները ներկայացնող մտավորականների գործունեության նպատակը հայ ինքնության պահպանումն էր:

## 1.3. Որբանոցների նպաստը կրթական գործի կազմակերպմանը

1918 թ. հայ որբերի ընդհանուր թվաքանակը կազմում էր 77.275[142]: 1921 թ. վերջին ամիսներին 7500 որբ Մերսինից, Ադանայից, Մարաշից, Այնթապից, Դեորթ-Յոլից տեղափոխվեց Սիրիա և Լիբանան՝ հաստատվելով Բեյրութ, Հալեպ, Դամասկոս և Ալեքսանդրետ քաղաքներում: Բեյրութում ՀԲԸՄ լիազոր-պատվիրակ Ջ. Չակրի կողմից կազմակերպվում է խնամակալություն, որը կարևոր աշխատանք է իրականացնում հատկապես Լիբանանի որբանոցներում[143]: 1922 թ. հունվարի 3-ին Գ. Ձելվեյանին ուղղված նամակի հետգրությունում Փարիզի Ազգային պատվիրակության ներկայացուցիչ Վ. Մալեզյանը հաղորդում է, որ Մերսինի և Դյորթ-Յոլի մնացյալ որբերը մի քանի օր անց կհասնեն Բեյրութ, որտեղ նրանց կընդունի Ջ. Չակրը[144]: Որբերին ընդունելու և հավուր պատշաճի տեղավորելու կապակցությամբ իրականացվում են նախապատրաստական աշխատանքներ: 1922 թ. փետրվարի 7-ին Հալեպում կայանում է հայ-ամերիկյան ընդհանուր ժողով, որին մասնակցում էր 22 անձ: Ժողովը որոշում է Թուրքիայի

---

[142] Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ եղեռնի, հ. Ա, Լոս Անջելես, 1995, էջ 36:
[143] «Միութիւն», թիվ 85, հունվար-փետրվար, 1922, էջ 5:
[144] ԳԱԹ, Վ. Մալեզյանի ֆ., գ. 65, նամակ առաջին, թ. 3:

տարածքում մնացած բոլոր որբերին տեղափոխել Սիրիա և Լիբանան[145]: Որբերի «մեծ տեղաշարժը» իրագործում են շվեյցարացի հայասերեր Քյունցլեր ամուսինները: Հաջորդականությամբ Ուրֆայից, Տիգրանակերտից, Խարբերդի և Մալաթիայից շուրջ 8000 հայ որբ[146]տեղափոխվում է Հալեպ:

Փաստորեն, 1921-1923 թթ. հայ որբերի կենտրոնացման տարիներ էին. Սիրիայում և Լիբանանում ապաստան գտած որբերի թիվը կազմում էր մոտ 16.000-18.000[147]:

1920-ական թթ. վերոհիշյալ երկրներում որբախնամ գործունեությամբ էին զբաղված հետևյալ կազմակերպությունները

- Հայկական բարեգործական ընդհանուր միություն (ՀԲԸՄ)
- Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտե (Near East Relief)
- Գերմանական միսիոներական կազմակերպություններ
- Դանիական միսիոներական կազմակերպություններ
- Շվեյցարական միսիոներական կազմակերպություններ

1920-ական թթ. հիմնված որբանոցների կրթական կյանքը կարևորվում է հայապահպանության տեսանկյունից. որբանոցը միայն որբ երեխաներին կերակրող կառույց չէր: Այս հաստատությունը նպատակ էր հետապնդում իր հնարավորության սահմաններում գիտելիքներ տալ երեխաներին, օգնել նրանց ըմբռնելու և ճանաչելու աշխարհը նախապատրաստելով կյանքի դժվարություններին[148]:

Այդպիսով, որբանոցային կրթությունն ուներ իր նպատակները, որից գլխավորը նոր սերնդին ապագա կյանքին

---

145 Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 253-254:

146 Քյունցլեր Հ., Երեսուն տարի ծառայություն Արևելքում, Երևան, 2008, էջ 68, «Հայաստանի կոչնակ», թիվ 47, նոյեմբերի 19, 1927, էջ 1486:

147 Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 252:

148 Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 49:

պատրաստելն էր[149]: Այս առաքելությունը իրագործում էին որբանոցներում դասավանդող ուսուցիչները: Ս. Անթոյանը նշում է, որ որբանոցի ուսուցիչները ուսում տալուց զատ նպատակ էին հետապնդում դաստիարակել լավ մարդկանց, ովքեր կկարողանային դիմակայել բազմաթիվ խոչընդոտների և կերտել իրենց ապագան[150]:

Որբանոցները մեծամասամբ հիմնվում էին Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի կողմից: Բ. Եղիայանը ամերիկյան որբանոցային կրթության վերաբերյալ նշում է. «Ռիլիֆի որբանոցները կատարած են նաև լման նախակրթական ուսման դերը: Բոլոր որբանոցներուն մէջ, անխտիր, Ուսման Ծրագիրը կը կազմէին նախապատերազմեան հայկական դպրոցներու մէջ գործադրուած դասերն ու նիւթերը եւ Հայ կրօնական ու բարոյական դաստիարակութեան առարկաները, դասավանդուած՝ Հայ ուսուցիչներով եւ արդիական մանկավարժական մեթոտներով, հայեցի դասագիրքերով…»[151]: Ամերիկյան որբանոցներն ունեին ուրույն կրթական ծրագիր: 1919-1922 թթ. Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի որբանոցների կրթական ծրագրի կազման և ամբողջացման տարիներ էին[152]: Սույն որբանոցներից դուրս եկած սերունդը հետագայում մեծ դեր խաղաց սիրիահայության և լիբանանահայության գործունեության գիտական, տնտեսական և հասարակական ոլորտներում:

Որբանոցային կրթության կարևոր բաղադրամասեր էին դպրոցական և արհեստագործական ուղղությունները, ինչպես նաև մարմնակրթությունը[153]: Որբանոցները, տարրական կրթությունից բացի, հիմնական շեշտը դնում էին արհեստագործական կրթության վրա: Մարմնակրթությունը դասավանդվում էր վերոնշյալ բոլոր հաստատություններում,

---

[149] ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆ., գ. 8$^{հբ}$, թ. 1:
[150] Անթոյեան Ս., նշվ. աշխ., էջ 36:
[151] «Դրազարկ» տարեգիրք Հ.Ե.Կ.Դ.-ի, Դ տարի, էջ 80:
[152] Barton J., p. 230.
[153] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 273, Ֆիշենկճյան Ա., Սիրիահայ կրթական հաստատությունները 1920-1980 թթ., «Կանթեղ», Երևան թիվ 1, 2003, էջ 157:

բայց այս բնագավառի իսկական ռահվիրաները մարզական միություններն էին, որոնց շարքերը համալրված էին ուսանողներով և արհեստավոր պատանիներով[154]:

Դպրոցական կրթությունը որբանոցում, առաջին հերթին, կարևորվում էր հայերեն լեզվի կիրառումն ամրապնդելու տեսանկյունից: Ակնհայտ էր, որ որբ երեխաների մեծամասնության համար մայրենի լեզուն փոխարինում էին թրքերենով, քրդերենով կամ արաբերենով: Որբանոցների կրթական ծրագրի կարևոր բաղկացուցիչ էր նաև կրոնաբարոյական դաստիարկությունը[155]: Հատկապես Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի հովանու ներքո գտնվող հաստատություններում նրբորեն էին մոտենում կրոնական դաստիարակության խնդրին: Անթիլիասի ամերիկյան որբանոցում տնօրինության հրահանգով կրոնի դասը հանվել էր դասացուցակից, որով նպատակ էր հետապնդվում ավետարանական քարոզչության տպավորություն չթողնել[156]: Հ. Ժամկոչյանի հուշերը վերաբերում են Ջիբեյլի ամերիկյան որբանոցին: Կիրակի օրերին այստեղ սկզբնական շրջանում գալիս էին ավետարանական պատվելիներ և իրենց քարոզն անում թուրքերենով: Որբանոցի ուսուցիչներից Ս. Դարդունիի «Եթե հայերեն չքարոզես, ցած կիջեցնեմ» արտահայտությունը բավական եղավ, որ ավետարանականները այլևս չգան որբանոց[157]:

Ինքնաբավ քաղաքացիներ դառնալու մտայնությամբ թե՛ հայ, թե՛ օտար կազմակերպությունների խնամքի տակ գտնվող որբանոցներում չափահաս որբերի շրջանում զարկ տրվեց նաև գործնական կրթության՝ արհեստագործության ուսուցմանը: Վերջիններն ազատ էին արհեստի ընտրության հարցում: Որոշ ժամանակ անց տվյալ արհեստի մեջ

---

[154] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ա, էջ 396, «Երիտասարդ հայուհի», թիվ 2, նոյեմբեր, Բեյրութ, 1933, էջ 14-15:
[155] Պետրոսեան Դ., նշվ. աշխ.էջ 18-20:
[156] «Հայաստանի կոչնակ», թիվ 23, հունիսի 9, 1923, էջ 721:
[157] Անթոյեան Ս., նշվ. աշխ., էջ 38, Ժամկոչյան Հ., նշվ. աշխ., էջ 55:

ընդունակություններ չցուցաբերելու դեպքում որբը կարող էր փոխել իր նախընտրած արհեստը[158]: Հալեպը Մերձավոր Արևելքի արհեստագործական կենտրոններից էր: Այդ տեսանկյունից ուշագրավ է հետևյալ տեղեկությունը. «Հալէպ առաջնակարգ կեդրոնն էր, որ որբանոցի ծրագրին մէջ մտցուց արհեստներու ուսուցումը. լուրջ ուշադրութիւն դարձնելով անոր: Խանտէկ փողոցի երկայնքին կային շատ մը խանութներ, որոնք արտադրեցին ընտիր գործեր»[159]: Հայկական որբանոցի սաներին որբանոցի շրջափակում սովորեցնում էին շուրջ 18 արհեստ: Այդ արհեստներից տարածված էին կոշկակարությունը, դերձակությունը, ձեռագործությունը, երկաթագործությունը, թիթեղագործությունը, փռապանությունը, խոհարարությունը, կառապանությունը, ժամագործությունը, ատաղձագործությունը, ջաղացպանությունը, պարտիզպանությունը և այլն[160]:

Առաջին հերթին առողջ սերունդ դաստիարակելու նպատակ էր հետապնդում մարմնակրթությունը ինչպես բոլոր կրթական հաստատություններում, այնպես էլ որբանոցներում: Մարզական շարժման տարածում ուներ նաև իր հոգեբանական կողմը. «...գոյատեւման բնազդը կը տիրապետէր որբին հոգեբանութեան, ի զուր չէր որ ֆիզիքական զարգացումին ձգտէր ան, աւելի քան ուրիշներ»[161]: Որբանոցի հնարավորության սահմաններում որբերը մարզչի հսկողությամբ մարզվում էին մի շարք սպորտաձևերով, տարեվերջին կազմակերպում դաշտահանդեսներ կամ մարզահանդեսներ: Դաշտահանդեսի ընթացքում ցուցադրում էին իրենց մարզական հմտությունները: Պատահական չէ, որ հենց որբանոցի ներսում ծնվեցին ժամանակի պահանջներին համապատասխան առաջնակարգ

[158] Պետրոսեան Դ., նշվ.աշխ. էջ 7:
[159] «Սուրիահայ տարեգիրք», 1929, էջ 249:
[160] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Բ, էջ 385:
[161] Նոյն տեղում, գ. Դ, էջ 55:

սպորտային թիմեր: Որոշ որբանոցներում կազմակերպվեցին փողային նվագախմբեր:

*Սիրիա*

Սիրիայում հայ որբերը կենտրոնացած էին գլխավորապես Հալեպ քաղաքում: 1923 թ. Սահակ Բ Խապայան կաթողիկոսի կողմից Ամերիկահայ Կարմիր Խաչի գրասենյակ ուղարկված վիճակացույցի համաձայն Հալեպում գտնվում էր 1.300 որբ[162]:

1915 թ. հուլիսի 31-ին Հալեպում վերապատվելի Ահարոն Շիրաճյանի նախաձեռնությամբ հիմնվել էր հայկական որբանոց: Ժողովրդի շրջանում այն հայտնի էր «Ահարոն պատուելիին որբանոց» կամ «Շիրաճեան որբանոց» անվամբ: Տարբեր ժամանակներում որբերի թիվը հասել է մինչև 2.000-ի, իսկ ընդհանուր առմամբ որբանոց է հաճախել 5.000-ից ավելի որբ[163]: 1915-1918 թթ. որբանոցը գոյատևել է անհատների և տարբեր կազմակերպությունների նվիրատվություններով: Այնուհետև որբանոցի խնամակալությունն իրար հաջորդելով ստանձնել են անգլիական, ֆրանսիական իշխանությունները, Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեն, ՀԲԸՄ-ը: 1921 թ. որբանոցի սաների թիվը հասնում էր մոտ 900-ի: Երկսեռ որբերից 614-ը հաճախում էր ամենօրյա դպրոց, իսկ արհեստ սովորող 250 սան գիշերային դպրոց: Պաշտոնյաների թիվը կազմում էր 200[164]: 1922 թ. Ա. Շիրաճյանին որբանոցի տնօրենի պաշտոնում փոխարինում է Ա. Լևոնյանը:

Որբանոցի տնօրեն Ա. Լևոնյանը վկայում է, որ որբանոցի սաներն ու սանուհիները առաջին օրից սկսած ստանում են ազգային դաստիարակություն, մեծանում որպես իսկական հայ: Որբանոցի պաշտոնյաներն ու որբերը խոսում էին միմիայն հայերենով: Տղաների նախակրթարանում ուսանում է

---

162 Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 97:

163 «Հայաստանի կոչնակ», թիվ 38, սեպտեմբերի 23, 1922, էջ 1238, Kerr S., The Lions of Marash. Personal experiences with American Near East Relief, 1919-1922, Albany, 1973, p. 29.

164 Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 91:

130, ծաղկոցում 191, մանկապարտեզում 25 աշակերտ, աղջիկների նախակրթարանում 150, ծաղկոցում 93, մանկապարտեզում 25 աշակերտուհի[165]:

Ինչպես արհեստագործական կրթության, այնպես էլ մարմնակրթության պարագայում հայկական որբանոցը Հալեպում մարզական շարժման սկզբնավորման առաջատարներից էր: Որբանոցի մարմնակրթության պատասխանատուն Լ. Աբգարյանն էր: Առաջնակարգ էին շվեդական, ցատկի, բուրգ կազմելու, զուգափայտի, պտտաձողի, կարճ վազքի և այլ վարժությունները: Հայտնի էին որբանոցի «Տալվորիկ», «Կայծակ», «Արաքս», «Արծիվ» ֆուտբոլային թիմերը[166]: Որբանոցը փակվում է 1925 թ.:

Հալեպ քաղաքի Տիգրանակերտի հայրենակցական միության որբանոցում խնամվում էր 60-70 որբ, հիմնականում տիգրանակերտցի: Այս հաստատությունը օժանդակություն էր ստանում Ամերիկայում բնակվող տիգրանակերտցիներից[167]: Որբանոցում կազմակերպվել էր ֆուտբոլի թիմ[168]:

Խնդրո առարկա ժամանակահատվածում ոչ պակաս կարևոր կառույց էր մեծ հայասեր, ազգությամբ դանիացի Ք. Եպպեի որբանոց-այրիանոցը: 1921 թ. վերջերին ժնևում Ազգերի լիգան որոշում է կայացնում Մերձավոր Արևելքի հայ որբահավաքման ու գաղթականության տեղավորման գործի լիազոր քննիչ նշանակել Ք. Եպպեին[169]: Վերջինս մասնավորապես որբահավաքման գործն իրականացնում է իր որդեգիր Մ. Մելքոնյանի օգնությամբ: Որբահավաքման գործին ֆինանսական օժանդակություն են ցուցաբերում շատ կազմակերպություններ, հատկապես Հ. Լեփսիուսի «Արևելյան

[165] «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 57-58:

[166] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Դ, էջ 55 -59:

[167] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, էջ 427:

[168] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Դ, էջ 60:

[169] Չոլաքեան Յ., Քարէն Եփփէ: Հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալեպ, 2001, էջ 42-43:

առաքելությունը»[170]: Այս գործը ստանում է «Փրկության առաքելություն» կամ «Ազատարար առաքելություն» անվանումը: Որբանոց-այրիանոց էին ընդունվում հիմնականում արաբական ցեղերից փրկագնված որբերն ու այրիները: Որբանոց-այրիանոցի տնօրեններ են նշանակվում ուրֆացիներ Ե. Աբուսեֆյանը, Միհրան Հերարդարյանը: Քարեն Եպպեն ազատագրված որբերի դաստիարակության գործում կարևոր դեր էր վերապահում Հայ Առաքելական եկեղեցուն՝ մշտապես կապ պահելով հայ հոգևորականության հետ: Հայանվեր դանիացու նախաձեռնությամբ ամեն շաբաթ օր կազմակերպվում էին հավաքներ, որոնց ժամանակ փրկագնված հայ որբերը սովորում էին հայերեն երգել և ուսումնասիրում դրվագներ Հայոց պատմութունից: Ք. Եպպեի ազատագիրները հաճախում էին Հալեպի Սուլեյմանիե թաղամասի Ս. Խաչ եկեղեցու վարժարան, իսկ հետագայում իր կողմից գնված հողատարածքի վրա հիմնված Սահակյան Ազգային վարժարան[171]: Ազատագրվածները մեծամասամբ մոռացել էին հայոց լեզուն: Մոտ մեկ ամիս ամեն օր նրանց հետ անցկացվում էին հայոց լեզվի և թվաբանության դասընթացներ, այնուհետև մասնակցում էին երեկոյան դասընթացների: Կարևոր նշանակություն ունեին երգեցողության դասերը[172]: Կրթական այս ձեռնարկներն աստիճանաբար համակարգվեցին և ավելի կազմակերպված բնույթ ստացան: Կարևոր այս գործն ստացավ «հոգևոր կրթություն» անվանումը, որը, փաստորեն, հայ ինքնության պահպանման և հայապահպանության տեսանկյունից մեծ նշանակություն ձեռք բերեց [173]: Ինքնաբավ դառնալու

[170] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս. հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, 2001, էջ 119, նույնի, Կարեն Յեպեի և «Դր. Լեփսիուսի Արևելյան առաքելության» համապարփակ հայանվեր գործունեությունը Հալեպում 1923-1933 թթ., էջ 151:
[171] Չոլաքեան Յ., Քարէն Եփփէ: Հայ զողզոթային եւ վերածնունդին հետ, էջ 88-92:
[172] «Յուսաբեր», թիվ 57, օգոստոսի 14, 1924:
[173] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս. հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, էջ 118:

նպատակով տղաները արհեստ էին սովորում, իսկ աղջիկները՝ ձեռագործ: Հաստատությունն ուներ չորս արհեստանոց՝ ատաղձագործարան, կոշկակարատուն, խաղախորդարան, ասեղնագործարան[174]: Որբանոցում կարևոր նշանակություն էր տրվում մարմնամարզությանը. որբերն առավոտյան շվեդական մարզանք էին անում, ունեին նաև ֆուտբոլի թիմ[175]: 1924 թ. տվյալների համաձայն, Եպպեի որբանոցը վերջին մի քանի տարիների ընթացքում անապատներից ազատել ու պատսպարել էր 500 որբի, որից 400-ը այդ ժամանակ արհեստագործությամբ էր զբաղվում կամ ազգակցական-հայրենակցական կապերով հաստատվել էր հայ ընտանիքներում[176]:

Հաշվի առնելով որբերի տարիքը և որբանոցներին կից արհեստանոց պահելու դժվարությունները՝ 1921 թ. ՀԲԸՄ որոշմամբ Հալեպում հիմնվում է «Կիլիկյան» արհեստանոց-որբանոցը: Նախապես ընդունվում է 100 որբ: Արհեստանոց-որբանոցում կազմակերպվում են ազգային նկարագրի պահպանմանն ուղղված հավաքական դասախոսություններ: Կիրակի և տոն օրերին որբերը հաճախում էին եկեղեցի[177]: Արհեստանոց-որբանոցը նպատակ էր հետապնդում որբերին արհեստ ուսուցանել: «Միություն» ամսագրում նշված է. «Սոյն հաստատութեան մէջ, որ կարեւոր պակաս մը լրացնելու կոչուած է, ազգին սաները պիտի սորվին եւ մարզուին իբրեւ լուսանկարիչ, ոսկերիչ, շօֆէօր, երկաթագործ, մեքենագործ, դերձակ, կօշկակար, ատաղձագործ, եւն»[178]: 1922 թ. արհեստանոց-որբանոցն ավարտում են առաջին շրջանավարտները: Արհեստանոցից դուրս է գալիս 50 չափահաս տղա, իսկ 1923 թ.՝ 91[179]: Կիլիկյան արհեստանոց-որբանոցը գործում է մինչև 1925 թ.: Այս ընթացքում որբանոց-

---

[174] «Յուսաբեր», թիվ 56, օգոստոսի 12, 1924:
[175] «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 247:
[176] «Սուրիական մամուլ», թիվ 259, հունիսի 12, 1924:
[177] «Միութիւն», թիվ 83, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1921, էջ 66:
[178] Նույն տեղում, թիվ 89, սեպտեմբեր-հոկտեմբեր, 1922, էջ 78:
[179] «Հայաստանի կոչնակ», թիվ 19, մայիսի 10, 1924, էջ 599:

արհեստանոց է հաճախում 298 չափահաս որբ[180]: Վերջիններս, այս հաստատությունից դուրս գալով, պատրաստ էին սեփական աշխատանքով ապրուստի միջոցներ ստեղծել:

1923 թ. Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեն իր խնամակալության ներքո գործող որբանոցներից սկսում է ազատել չափահաս որբերին: 1924 թ. վերջիններիս ինքնաբավ դարձնելու նպատակով ՀԲԸՄ նախաձեռնությամբ Հալեպում հիմնվում է աշխատավոր սաների կայան տղաների և աղջիկների բաժիններով, որտեղ «պատսպարուած որբերը արհեստներու կը հետեւին քաղաքի հայ եւ օտար արհեստաւորներուն մօտ, օրավարձքով, ուրկէ կը զեղչուի իրենց պատսպարութեան ծախքը եւ մնացեալը կը պահուի իրենց հաշւոյն»[181]: 1926 թ. աղջիկների բաժնի փակվելուց հետո աշխատավոր սաների կայանը վերանվանվում է Հալեպի տղաների կայան, որտեղ պատսպարվում են հատկապես թուրքերի և արաբների մոտից փրկագնված 22-26 տարեկան որբեր: Այդ պատճառով հայերեն գրել-կարդալու դասընթացներ կազմակերպվեցին: Այս հաստատությունը գործեց մինչև 1931 թ.[182]:

Նույն պայմաններով Հալեպում Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կողմից հիմնվեցին «արհեստաւոր տղոց տուներ» կամ «ակումբներ»: Այստեղ հայ որբերը գտնվում էին «մայրիկի» և «hսկողի» խնամակալության տակ: Առաջինը զբաղվում էր «տան» գործերով, իսկ հսկողի պարտականությունն էր «...կազմակերպել գործը: Այսինքն տղոց մէջ զօրացնել ինքնավարութեան զգացումը»[183]:

Առաջին աշխարհամարտից հետո ՀԲԸՄ կողմից Դամասկոսում հիմնված որբանոցում և ապաստարանում պատսպարվեց և գիտելիք ստացավ տասնյակ երեխա[184]: 1929

---

[180] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 128:
[181] «Հունահայ տարեգիրք», Աթենք, 1929, էջ 327:
[182] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 131:
[183] Պետրոսեան Դ., նշվ. աշխ.էջ 56:
[184] Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 94:

թ. Որբերի ընդհանուր միության քարտուղարի ջանքերով Մարաշի հայրենակցական միության սրահում անցկացվում են գիշերային դասընթացներ, որի ընթացքում ուսուցանվում էին հայերեն, ֆրանսերեն և թվաբանություն[185]:

1930-ական թթ. Հ. Լեփսիուսի «Արևելյան առաքելության» ներկայացուցիչ Ա. Գավուգչյանն իր գերմանացի կնոջ հետ Քեսաբում հիմնած որբանոց-ագարակում խնամում էր 30-35 որբ-որբուհի: Որբանոցի շենքին կից գործում էին դպրոց և արհեստանոց[186]:

*Լիբանան*

1920-ական թթ. Լիբանանում բացվեցին մի շարք որբանոցներ, որոնց մի մասը գտնվում էին մայրաքաղաքից դուրս: Որբանոցները տարբեր պատճառներով հաճախ փակվում էին, և որբերը տեղափոխվում էին մեկ այլ որբանոց: 1923 թ. Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը Ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանին ուղարկված «Սիւրիոյ եւ Պաղեստինի հայ գաղթականութեանց մասին» տեղեկագրում նշում է.«...որբանոցներէն, մէկէն միւսը, փոխադրութիւններ եղած են, ատեն ատեն, ջուրի նուազութեան և կամ այլ անծանօթ պատճառներով, ոմանք ամբողջութեամբ, ոմանք ալ մասամբ...»[187]: Այդպիսիք էին Բեյրութի, Անթիլիասի, Մամուլթեյնի, Նահր-Իբրահիմի, Զուքի, Ջյունիի, Սայդայի, Սուրի որբանոցները: Ըստ Ժ. Դանիելյանի, այս հաստատությունները կարելի է համարել լիբանանահայության նորագույն շրջանի առաջին կրթօջախները, ուր հազարավոր որբեր ստացան նախնական կրթություն, սովորեցին տարբեր արհեստներ ապահովելով իրենց հետագա ապրուստի միջոցը[188]: Որբերի չափահաս դառնալը և նյութական սուղ պայմանները ստիպեցին նրանց մի մասին

---

[185] «Յուսաբեր», թիվ 237, հունվարի 8, 1929:
[186] Չոլաքեան Յ., Քեսապ, հ. Ա, Հալեպ, 1995, էջ 255:
[187] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, էջ 424:
[188] Դանիէլեան Ժ., Լիբանանահայ դպրոց. թիւեր եւ մտորումներ, էջ 43:

ուղարկել արտերկիր: Այս որբանոցներից հայ որբերի խմբեր ուղարկվեցին Ֆրանսիա, Եգիպտոս[189]:

1921 թ. ՀԲԸՄ-ն Կիլիկիայից իր որբանոցները տեղափոխում է Զմմառ: Ինչպես Հ. Կուսկուսյանն է նշում, որբերը ժամանում են Ալեքսանդրետ, այնուհետև Զմմառ, ուր նրանց սպասում էին Մերսինից ժամանած որբերը[190]: Զմմառ ժամանած որբերը միավորվում են. տղաները հաստատվում են Զմմառում («Քէլէկեան»), իսկ աղջիկները մոտակա Աշխուտ գյուղում («Սիսուան»)[191]: Շուտով, սակայն, որոշում է կայացվում որբերին տեղափոխել Բեյրութ: Լիբանանի մայրաքաղաքում վարձվում է հրեաների կողմից վարժարանի համար կառուցված շենքը, և այստեղ են տեղավորվում «Քելեկեան» տղաների և «Սիսուան» աղջիկների նախակրթարանները, ինչպես նաև երկսեռ մանկապարտեզը: 1922 թ. Քելեկեան-Սիսվան որբանոցն ուներ 581, 1925 թ.՝ 330 սան-սանուհի[192]: Որբանոցի գոյության ընթացքում տեղի են ունենում որբերի տեղափոխություններ: 1926թ. և 1928-1931 թթ. Ջյունիից և Երուսաղեմի ՀԲԸՄ որբանոցներից Քելեկյան-Սիսվան որբանոց ընդունվեց կամ որբանոցից այլ տեղեր տեղափոխվեց 500 որբ[193]: Որբանոցի տեսուչներ են նշանակվում Գ. Ամատյանը, Ղ. Ղլիկյանը:

Որբերի բազմակողմանի կրթության նպատակով որբանոցում կրթական ծրագրից բացի գործում էին կրոնագիտության և բարոյագիտության դասընթացներ, սկաուտական կազմակերպություն, փողային նվագախումբ[194]: Առավել արդյունավետ էին Ղ. Ղլիկյանի տեսչության տարիները. այդ ընթացքում ոչ միայն շարունակվեցին առավոտյան անցկացվող բարոյախոսությունները, այլև

---

[189] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 138-142, Պետրոսեան Ղ., էջ 58-59, «Ֆրանսահայ տարեգիրք», Փարիզ, 1927, էջ 212-214:
[190] «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 229:
[191] Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 94:
[192] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 109, «Հայ կեանք», թիվ 2, հունիսի 4, 1925:
[193] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 111:
[194] Նույն տեղում, էջ 112:

որոշակի դրամական օժանդակության արդյունքում դրսից հրավիրված մասնագետների կողմից անցկացվեց երեկոյան դասավանդում, վարձակալվեց նաև արաբերենի ուսուցիչ[195]: Որբերի առողջության տեսանկյունից կարևորվում էր մարմնակրթությունը, որի մասին հիշատակվում է. «Որբանոցի սաներու և սանուհիներու ֆիզիքականի մասին ոչ մէկ կասկած: Այս առթիւ անոնց տրուած խնամքը եթէ ոչ կատարեալ, գէթ գոհացուցիչ կրնանք սեպել»[196]: Քելեկեան – Սիսվան որբանոցը իր դռները փակում է 1932 թ.:

1920-ական թթ. երկրորդ կեսին Բեյրութում ՀԲԸՄ նախաձեռնությամբ հիմնվեց պատսպարան-աշխատանոց, իսկ Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի աջակցությամբ՝ «Աշխատող տղաների տուն»: 1925 թ. Բեյրութի պատսպարան-աշխատանոցում հաստատվել էր 71 որբուհի: Վերջիններս, աշխատելով և սովորելով արհեստագործության տարբեր ոլորտներում, օրավարձ էին ստանում[197]:

Լիբանանի մայրաքաղաքում հայտնի էին նաև Սենթ-Ջեյմս և Շըմլանի որբանոց-պատսպարանները[198]:

Անթիլիասի որբանոցը տնօրինում էին անգլիացի Նըտսըն ամուսինները: Հաստատված էին կանոնավոր մանկապարտեզի, նախակրթարանի դասարաններ, և անցկացվում էին գիշերային դասընթացներ: Տղաների բաժնում պաշտոնավարում էր 30 ուսուցիչ և 9 վարժուհի, իսկ աղջիկների բաժնում՝ 5 վարժուհի: Նախակրթարանում դասավանդվում էին հայերեն, անգլերեն, ֆրանսերեն և արաբերեն , նաև այլ առարկաներ[199]: 1928 թ. Անթիլիասի որբանոցում գտնվում էր 365 հայ որբ: Հաստատությանը կից գործում էին դերձակություն, կոշկակարություն, ատաղձագործություն, հացագործություն և ներկարարություն ուսանելու արհեստա-

---

[195] Գույումճեան Մ., նշվ. աշխ.էջ 45:
[196] «Սուրիական մամուլ», թիվ 249, մայիսի 25, 1924:
[197] «Միութիւն», թիվ 105, մայիս-հունիս, 1925, էջ 35:
[198] Պետրոսեան Դ., էջ 69, Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, էջ 423:
[199] «Հայաստանի կոչնակ», թիվ 23, հունիսի 9, 1923, էջ 721:

նոցներ[200]։ Օրվա մի մասը հատկացված էր ուսմանը։ Որբերի ընդհանուր վիճակը գոհացուցիչ էր, միայն թե առկա էր հայկական կրթության պակաս. «Ծրագրին մէջ, ամենէն աւելի արաբերէնին տեղ տրուած է, իսկ հայերէնը գրեթէ անտեսուած է»[201]։

1923 թ. Նահր Իբրահիմի որբանոցը ղեկավարում էին Քույր ամուսինները, նրանց օժանդակում էր Գ. Կայծակյանը։ Այստեղ պաշտոնավարում էր 30 ուսուցիչ, խնամվում էր շուրջ 1.000 որբ։ Գործում էին գիշերային և ցերեկային դասընթացներ[202]։

1916 թ. Ալեքսանդրիայում հիմնվել էր Եգիպտոսի Հայ որբախնամ ընկերությունը։ Ընկերության նպատակն էր «…ջարդին ու սովին արհաւիրքներեն ճողոպրած հայ որբերուն անմիջական նպաստ հասցնել, ըլլայ Հայաստանի, ըլլայ Կիլիկիոյ մէջ»[203]։ 1920 թ. այս ընկերության կողմից հիմնված Այնթապի որբանոցը 122 որբով իր վերջնական հանգրվանն է գտնում Ջյունիում։ 1923 թ. որբերի թիվը 284 էր։ Հաստատության տնօրենն էր Ղ. Ղպլիկյանը, պաշտոնավարում էր 4 մնայուն և 1 այցելու ուսուցիչ[204]։ 1925 թ. տղաների ընդունելությունը որբանոց դադարեցվում է։ 1926 թ. որբուհիների թիվը հասնում է 110-ի[205]։ Որբանոցի կրթական ծրագիրը կազմված էր հետևյալ կերպ՝ ծաղկոց, նախակրթարանի հինգ դասարան, որից վերջինը բարձրագույն։ Ուսուցանվում էին հայերեն, ֆրանսերեն, կրոնի պատմություն, Հայոց պատմություն, աշխարհագրություն, երգեցողություն, մարմնամարզություն, ընդհանուր պատմություն, բնագիտություն և այլ առարկաներ[206]։ Որբանոցում տղաները սովորում էին կոշկակարություն, կավագործություն, երգեցողություն, աղջիկները՝ ասեղնագործություն։ Վ. Արշարունու

---

[200] Անթոյեան Ս., նշվ. աշխ., էջ 43։
[201] «Յուսաբեր», թիվ 34, մայիսի 12, 1928։
[202] «Հայաստանի կոչնակ», թիվ 34, օգոստոսի 25, 1923, էջ 1077։
[203] Հայ որբախնամ ընկերություն, Կանոնագիր…, էջ 2։
[204] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, էջ 421։
[205] «Յուսաբեր», թիվ 195, նոյեմբերի 17, 1926։
[206] Հայ որբախնամ ընկերութիւն. Այնթապի որբանոց…, էջ 17։

վկայությամբ մարմնամարզությունը որբանոցում անտեսված չէր[207]: Մեծ տարածում ունեին հատկապես ըմբշամարտն ու բասկետբոլը[208]: Որբանոցն ուներ նաև իր նվագախումբը:

1920-1925 թթ. Ամերիկյան Նպաստամատույց կոմիտեի խնամակալության ներքո Ջիբեյլում իրենց ապաստանը գտավ շուրջ 1500 որբ[209]: Որբանոցն ուներ մանկապարտեզի, նախակրթարանի և բարձրագույն (երկրորդական) բաժիններ: Դասավանդվում էին հայերեն, հայ գրականություն, Հայոց պատմություն, Հայաստանի աշխարհագրություն, անգլերեն, ֆրանսերեն, արաբերեն և այլ առարկաներ: Աշակերտներին տրվում էին դասագիրք և գրենական պիտույքներ: Ջիբեյլում ազգային վարժարան չլինելու պատճառով ուսուցիչների և որբանոցում աշխատող այլ պաշտոնյաների երեխաները նույնպես հաճախում էին որբանոց[210]: Որբանոցն ուներ իր արհեստանոցները, որտեղ սովորեցնում էին դերձակություն, կոշկակարություն, ատաղձագործություն, քարտաշություն[211]: Այս որբանոցում նույնպես կարևոր նշանակություն էր տրվում մարմնակրթությանը: 1922 թ. Բեյրութի ամերիկյան համալսարանի մարզադաշտում կազմակերպված միջորբանոցային մրցումներին մասնակցում էին Ջիբեյլի, Սայդայի, Նահր-Իբրահիմի, Անթիլիասի և Մամուլթեյնի որբանոցների սաները: Ջիբեյլի որբանոցի թիմը առաջին տեղը գրավեց ունենալով նվագախումբ, գրական ակումբ[212]: Այն փակվեց 1925 թ.:

1919 թ. Ղազիրի որբանոցում ապաստանած սիրիացի երկսեռ որբերը տեղափոխվում են Սայդա: Այս տեղափոխությունից հետո սույն շինությունը վերածվում է հայ աղջիկների ամերիկյան որբանոցի: 1923 թ. փետրվարից որբանոցի տնօրինությունը ստանձնում են Քյունցլեր ամուսինները, որտեղ այդ պահին 30 ուսուցչի հսկողությամբ

207 «Արև», թիվ 44, օգոստոսի 9, 1922:
208 Հայ որբախնամ ընկերութեան. Այնթապի որբանոց..., էջ 18-19:
209 Անուանացանկ Ճիպէյլի ամերիկեան որբանոցի սաներու. 1920-1925, էջ 3-23:
210 «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 46:
211 Ժամկոչյան Հ., նշվ. աշխ., էջ 54:
212 Յուշամատեան Ճիպէյլի Ամերիկեան որբանոցի. 1920-1925, էջ 54-102:

խնամվում էր 1.414 աղջիկ[213]: Նրանց օժանդակող հայ ուսուցիչները ստացել էին բարձրագույն կրթություն և, ինչպես նշված է, ազնիվ մարդկային նկարագիր ունեին[214]: 1923 թ. մայիսին Հ. Քյունցլերին հաջողվում է հիմնել գորգագործական գործարան՝ որբուհիներին գործ հայթայթելու նպատակով: Սկզբնապես աշխատում էր 40 աղջիկ 12 դազգահով: 1924 թ. դազգահների թիվը հասավ 84-ի, իսկ 1925 թ.՝ 105-ի[215]: Աստիճանաբար որբուհիներն իրենց աշխատանքի շնորհիվ կարողանում են ապահովել օրվա ապրուստը և արդեն 1926 թ. գործարանում աշխատում էր 165 ինքնաբավ որբուհի[216]:

Վերապատվելի Ա. Շիրաճյանի և Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կողմից հավաքագրվել էր թվով շուրջ 120 կույր: Նպատակ էր հետապնդվում կույրերին տեղափոխել Երուսաղեմ, սակայն անգլիական իշխանությունների կողմից հարուցված խոչընդոտների պատճառով, ծրագիրը չիրագործվեց: Որբերը ժամանակավորապես հաստատվեցին Մամուլթեյնում: Ի վերջո, Հ. Քյունցլերի միջամտությամբ կույր որբերը (54 տղա և 66 աղջիկ) ապաստան գտան Ղազիրում: 1926-1928 թթ. նրանց խնամակալությունը ստանձնեց Ամերիկյան նպաստամատույց կոմիտեն, իսկ հետագայում՝ Շվեյցարիայի հայանպաստ ընկերությունը: Շուտով կուրանոցի տնօրինությունը ստանձնեց Թ. Վիզըրը, իսկ նրան օգնական դարձավ Ք. Մայըրը: 1929 թ. որբանոցում խնամվում էր 108 երկսեռ որբ՝ 13 տղա և 16 աղջիկ, ովքեր մինչև կեսօր գրել-կարդալ էին սովորում, իսկ կեսօրից հետո՝ արհեստ: Արհեստ էին ուսանում ընդհանուր 31 տղա և 10 աղջիկ[217]: 1937 թ. Ղազիրում խնամվում էր 120 երկսեռ կույր: Կույրերի դպրոցը բաղկացած էր 5 դասարանից, պաշտոնավարում էր 6

---

213 Քյունցլեր Հ., նշվ. աշխ., էջ 77-78:

214 «Հայաստանի կոչնակ», թիվ 34, օգոստոսի 25, 1923, էջ 1076:

215 «Որբաշխարհի աստղը», թիվ 7, սեպտեմբեր, Բեյրութ, 1925, էջ 5:

216 Ալէմէտտին Ի., Փափա Քիւնցլեր եւ հայերը, Անթիլիաս, 1999, էջ 159-160, «Յուսաբեր», թիվ 145, մարտի 13, 1926:

217 «Հայաստանի կոչնակ», թիվ 25, հունիսի 22, 1929, էջ 793:

ուսուցիչ, որոնց շարքում կային սույն հաստատության կույր ընթացավարտներ[218]:

Որբ կույրերը Մալաթիայի գերմանական կուրանոցից իրենց հետ բերել էին գրենական պիտույքներ: Սկզբում հնարավոր եղավ կազմակերպել նախնական կրթություն, տպագրել հատուկ կույրերի համար նախատեսված «Բրայլ» տառատեսակով գրքեր: Այս առթիվ ուշագրավ է հետևյալ տեղեկությունը. «Ընդհանուր առմամբ մեր դպրոցական ծրագրին նպատակն է կոյրերուն տալ նախնական կրթութիւն մը, և որչափ որ հնար ըլլայ արաբերէնի ծանոթութիւն մը՝ իրենք զիրենք հասկցնելու չափ»[219]: Որբանոցում անցկացվում էին կրոնաբարոյական դասընթացներ, որով զբաղվում էին կույր ուսուցիչները[220]: 1926 թ. Թ. Վիզըրի նախաձեռնությամբ 4 չափահաս որբ ուղարկվում է Երուսաղեմի Շնելլեր որբանոց, հմտանում արհեստագործության մեջ և վերադառնում Ղազիր իբրև վարպետներ սովորեցնելով մյուսներին: Կույրերի կողմից պատրաստվում էին աթոռներ, զամբյուղներ և այլ կենցաղային պարագաներ: Շուտով հիմնվում է «Ինքնապահների տուն»-ը, որտեղ հաճախող արհեստավոր սաները կարողանում են ինքնուրույն վաստակել իրենց ապրուստը[221]: Որբանոցում անտեսված չէր երաժշտությունը. Ս. Զավենի ղեկավարությամբ կազմվեց նվագախումբ[222]: Ղազիրի կուրանոց-դպրոցն իր գործունեությունը շարունակել է նաև հետագայում: 1934 թ. կույրերի թիվը 90 էր [223]:

1922 թ. Ջուքում հիմնված փոքրիկ որբանոցը 1923 թ. տեղափոխվում է Սայդա: Այստեղ դանիացի հայասերներ Մ. Յակոբսոնի և Ք. Փիթերսոնի ղեկավարությամբ գործում էր

---

[218] Նույն տեղում, թիվ 30, հուլիսի 24, 1937, էջ 729:
[219] «Սուրիահայ տարեգիրք», 1929, էջ 173:
[220] «Որբաշխարհի աստղը», թիվ 4, հունիս, 1925, էջ 6:
[221] «Լիբանանահայ պատկերազարդ օրացույց 1936», էջ 108-109:
[222] Մայըր Ք., Տեղեկագիր 25ամեայ Ղազիրի կուրանոց-դպրոցին եւ աչազուրկներու և համրերու դպրոցին ներկայ կեանքէն, Բեյրութ, 1953, էջ 11, «Յուսաբեր», թիվ 137, սեպտեմբերի 10, 1927:
[223] Գրաճեան Ա., նշվ. աշխ. էջ 88:

«Թռչնոց բույն» («Birds Nest») որբանոցը 300 որբով[224], որը շուտով տեղափոխվում է: 1928 թ. Դանիացի տիկնանց առաքելության կողմից գնվում են Ջիբեյլի որբանոցի տարածքն ու գույքը[225]: «Թռչնոց բույնը» տեղափոխվում է Ջիբեյլ և իր գործունեությունը շարունակում նաև հետագայում: 1934 թ. այստեղ խնամվել է շուրջ 240, 1939 թ.՝ 250 որբ[226]:

1923 թ. **Էշրեֆիեում** հիմնված հայ կաթոլիկ տղաների որբանոցի տեսուչն էր հայր Պ. Արիսը[227]: Որբերի թիվը 185 էր: Ինչպես Մ. Նաջարյանն է նշում. «...պզտիկները ուսումով կ՛զբաղէին, իսկ մեծերը՝ արհեստով»[228]: 1925 թ. մանկապարտեզի բաժնում սովորում էր 30 երեխա մեկ մանկապարտիզպանուհու հսկողությամբ: Նախակրթարանն ուներ 5 դասարան, պաշտոնավարում էր 6 ուսուցիչ, որից 5-ը մշտակա: Տղաներից մի քանիսը սովորում էին նվագել ջութակի և այլ լարային գործիքների վրա[229]: 1929 թ. որբանոցը տեղափոխվում է, իսկ 1929-1934 թթ. իր գործունեությունը ծավալում Բուրջ Համուդում[230]:

1924 թ. Բեյրութում հիմնվում են չափահաս որբերի միացյալ կազմակերպություններ: Քելեկյան որբանոցի միության հիմնադիրը որբանոցի տնօրեն Գ. Ամատյանն էր. «Նա ամեն ինչ անում էր տոհմային զգացումները արթնցնելու, կյանքին նախապատրաստվելու համար, բայց նորանոր սաների հավելումով սկիզբ առան կուսակցական խմորումներ, ներքին վեճեր, տարաձայնութիւններ»[231]: Ամերիկյան նպաստամատույց կոմիտեի կողմից հիմնված չափահաս որբերի

---

[224] Peterson M., "Starving Armenians": America and the Armenian Genocide, 1915-1930, Charlottesville, 2004, p. 141.

[225] Ազատեան Լ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 183, Երկու տանիմարզացի յոբելեարներ. Միս Մարիա Ճէզըպսըն եւ Միս Քարեն Փիթըրսըն, էջ 8, «Յուսաբեր», թիվ 12, ապրիլի 17, 1926:

[226] Գրաճեան Ա., էջ 69, «Հասկ», թիվ 6, հունիս, 1934, «Ջանասեր», թիվ 3, գարուն, 1939, էջ 65:

[227] «Սահակ-Մեսրոպ», թիվ 4, փետրվար, 1928, էջ 56:

[228] Նաճարեան Մ., նշվ. աշխ., էջ 66:

[229] «Հայ կեանք», թիվ 25, օգոստոսի 24, 1925:

[230] «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», էջ 100:

[231] «Լիբանան», թիվ 426, հունիս 5, 1929:

միությունը՝ Մերձավոր Արևելքի որբերի դաշնությունը, ավելի կազմակերպված էր, մասնաճյուղեր ուներ Բեյրութում, Հալեպում, Զահլեում, Անթիլիասում, Ջիբեյլում, Ալեքսանդրետում, Ղազիրում և Երուսաղեմում[232]: Միության կազմակերպական հարցերը քննարկվում էին պատգամավորական ժողովների ընթացքում: 1930 թ. որբերի ընդհանուր միության չորրորդ պատգամավորական ժողովի որոշման համաձայն կազմակերպությունը անվանակոչվեց Մերձավոր Արևելքի ընկերակցություն («Near East League»)[233]: Մերձավոր Արևելքի ընկերակցության շրջանակներում որբերը շարունակեցին որբանոցի մարզական, կրթական ավանդույթները: Կրթական կարևոր նշանակություն ուներ գիշերային դպրոցների, շրջիկ գրադարանների գոյությունը: Մերձավոր Արևելքի ընկերակցության Բեյրութի մասնաճյուղի ակումբում կազմակերպվում էին թատերական, երաժշտական, մարմնամարզական միջոցառումներ, անցկացվում բանախոսություններ[234]: 1932 թ. այս կազմակերպությունը, Կիլիկիո կաթողիկոսության հովանավորությամբ, վերածվում է Հայ երիտասարդաց ընկերակցության (ՀԵԸ), որը 1934 թ. փոխանցվում է ՀԲԸՄ-ին՝ վերածվելով վերջինի երիտասարդական կազմակերպության[235]:

1925-1926 թթ. որբանոցները, իրականացնելով իրենց առաքելությունը, մեծամասամբ փակվեցին,իսկ մի քանիսը գործեցին մինչև 1930-ական թթ. սկիզբը: Առավել երկար կյանք ունեցան Ղազիրի կուրանոց-որբանոցն ու Ջիբեյլի «Թռչնոց բույն»-ը: Հայ ազգային վարժարանների հետ իրենց գործունեությունը սկսած որբանոցները Սիրիայում և Լիբանանում հայ կրթական կարևոր հաստատություններ էին, նոր ձևավորվող համայնքային կրթական համակարգի բաղկացուցիչ մասեր:

---

[232] «Սուրիահայ տարեգիրք», 1929, էջ 254:
[233] «Որբաշխարհի աստղը», թիվ 8, հոկտեմբեր, 1930, էջ 1124:
[234] Նույն տեղում, թիվ 20, հոկտեմբեր, 1926, էջ 13:
[235] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Գ, էջ 412:

Փաստորեն, 1920-ական թթ. սկզբին Սիրիայում և Լիբանանում հիմնված որբանոցների դերը հայապահպանության տեսանկյունից անգնահատելի է: Այս հաստատությունները լուծում էին երկու կարևոր խնդիր՝ նախ պատսպարում, ապա կրթում էին ցեղասպանությունից փրկված որբերին: Ի դեպ, կարևորվում էր ոչ միայն դպրոցական, այլև արհեստագործական կրթությունը, արաբերենի ուսուցումը: Հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ որբանոցից հետո մատաղ սերունդը, պահպանելով իր ինքնությունը, չմոռանալով մայրենին, կարողանա որոշակի միջոցներ հայթայթել և արժանապատիվ ապրուստ ապահովել հյուրընկալող երկրներում: Ինչպես Կիլիկիո կաթողիկոսության, այնպես էլ ՀԲԸՄ, Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի և մյուս կազմակերպությունների ու նվիրյալների ջանքերը ապարդյուն չանցան: Որբանոցներից դուրս եկան արվեստի և մշակույթի բազմաթիվ ճանաչված գործիչներ, տաղանդաշատ արհեստավորներ ու մարդիկ, ովքեր մեծ դերակատարում ունեցան սիրիահայ և լիբանանահայ համայնքների կայացման գործում:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

# ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ

## 2.1. Կրթական գործի կազմակերպումը Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում

Ցեղասպանությունից մազապուրծ հայությունը, հաստատվելով Սիրիայում և Լիբանանում, ձեռնամուխ եղավ մատաղ սերնդի կրթության կազմակերպմանը՝ գիտակցելով վերջինիս կարևոր նշանակությունը հայապահպանության գործում: Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի առաջին գործը Սիրիայի և Լիբանանի հայ համայնքներում հայության բեկորները եկեղեցու և դպրոցի շուրջը հավաքելն էր[236]: Կարևոր նախապայման էր կրթական կազմակերպված ցանցի հիմնումը: Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայից հայերի զանգվածային արտագաղթի արդյունքում Սիրիայի ստվարացած հայ գաղթօջախում հիմնվեցին նոր դպրոցներ[237]: Ժամանակի մտավորականները հասկացան, որ անկախ քաղաքական, եկեղեցական պատկանելությունից, անհրաժեշտ է կրթել մատաղ սերնդին ոչ միայն գիտելիքների պաշար ամբարելու, այլև հյուրընկալ երկրներում ապագայի առողջ, իրենց ընտրած մասնագիտությանը քաջատեղյակ քաղաքացիներ դաստիարակելու նպատակով: Բ. Եղիայանը նշում է. «Հայ Դպրոցը ընդհանուր ուսում մատակարարելով, Հայ երիտասարդը կ'ընէ կարող ընկերութեան մէջ իրեն դիրք ապահովելու: Անկէ ալ աւելի. Հայ տղուն անձը կերտելու՝

---

[236] Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ, Էջմիածին, 1960, էջ 30:
[237] Sanjian A., ibid, p. 90.

բոլորակազմ զարգացումով. մարմնական, մտային, ընկերային և հոգեկան-բարոյական կրթութիւնով»[238]:

1920-1930-ական թթ. Սիրիայի և Լիբանանի հայ համայնքներում կրթական գործը կազմակերպվեց հետևյալ ուղղություններով՝

- դպրոցական կրթություն
- արհեստագործական (գործնական) կրթություն
- մարմնակրթություն
- հոգևոր կրթություն

Դպրոցական կրթության օջախներն էին մանկապարտեզները, նախակրթարանները[239], ինչպես նաև որբանոցները: Դպրոցն սկսվում էր մանկապարտեզից: ՀԲԸՄ-ից նպաստ ստացող դպրոցների ֆինանսական ծախսերի վերաբերյալ անթվակիր տեղեկագրում նշված է. «Անվիճելի իրողութիւն մըն է, որ դպրոցի մը աղբիւրը, անոր մանկապարտէզն է: Վերի դասարաններուն ու աշակերտութեան թիւը կախում ունի մանկապարտէզէն: Ուստի ամէն ջանք պէտք է թափել մանկապարտէզը ծնողներուն մատչելի՝ ու մանուկներուն հաճելի դարձնելու համար»[240]:

1930-ական թթ. Լիբանանում հիմնվեցին հոգևոր կրթության կենտրոններ: Կիլիկիո կաթողիկոսության հոգևոր կրթության կենտրոնն էր Անթիլիասի դպրեվանքը, հայ ավետարանականների հոգևոր կրթության կենտրոնը՝ Բեյրութի աստվածաբանական ճեմարանը, իսկ հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչներինը՝ Զմմառի դպրեվանքը:

Դպրոցները բացվում էին հայկական երեք հարանվան եկեղեցիների (Հայ Առաքելական, Հայ Ավետարանական, Հայ Կաթոլիկ), ավանդական կուսակցությունների (ՀՅԴ, ՌԱԿ, ՍԴ

---

[238] Եղիայեան Բ., Սերունդի մը դաստիարակութիւնը, Անթիլիաս, 1962, էջ 13:
[239] Բ. Եղիայանը նշում է. «1920-էն մինչեւ 1930-35 թուականները մենք հազիվ կարող էինք կազմակերպել նախակրթական ուսումը, երկրորդական մասին մէջ օգտուելով օտար հաստատութիւններէն» (տես Եղիայեան Բ., Սերունդի մը դաստիարակութիւնը, էջ 13):
[240] ԳԱԹ, Թ. Թորանյանի ֆ., գ. 49, թ. 1:

ՀԿ) կողմից: Ոչ պակաս կարևոր էին նաև բարեգործական կազմակերպությունների օժանդակությամբ, հայրենակցական միությունների և անհատների կողմից հիմնված դպրոցները: Հատկապես կուսակցական և եկեղեցական հովանավորչությամբ բացված դպրոցներին Բ. Եղիայանն անվանում է «գաղափարականի հրետանի»՝ նշելով. «Գաղափարական փրոփականտի այդ արդարացումով ամէն հատուած, ամէն հարանուանութիւն իր առանձին դպրոցը ունի մեր մէջ: Այս դպրոցը սա կուսակցութեան կը պատկանի, ան դպրոցը՝ միւս. դիմացինը Հայ Լուսաւորչական հովանիին տակ է, կողմինը՝ Հայ Կաթողիկէ, ետեւինը՝ Հայ Աւետարանական»: Հեղինակի դիտարկման ակունքները սերում են 1920-ականներից: Նշված խնդրին է վերաբերում նաև հետևյալ տեղեկությունը. «Վերջերս դպրոցը այն աստճանին հասած է որ տղաքները մոռցած իրենց դասերը՝ կուսակցական վիճաբանութեամբ կ»անցընեն ու կը վատնեն իրենց ժամանակը եւ վերջապէս հրաբուխը կը ժայթքի - երգեցողութեան միջոցին մէկը կ»առաջարկէ Դաշնակցական երգ երգել, ուրիշներ կը հակառակին, եւ յետոյ հոսանքն ու հակահոսանքը զատ զատ իրենց նախասիրած երգերը երգել կսկսին»[241]:

Հոգևոր և քաղաքական մրցակցություն էր ընթանում մի կողմից հայ հարանվան եկեղեցիների, մյուս կողմից՝ քաղաքական կուսակցությունների միջև: Կարծում ենք քաղաքական կուսակցությունների միջև ընթացող մրցակցությունը բարենպաստ է անդրադարձել Սփյուռքում հայկական դպրոցների ստեղծման ու կայացման վրա, իսկ կուսակցական գաղափարախոսությունը չի կաշկանդել դպրոցների լուսավորական ու հայապահպան գործունեությունը[242]: Ինչ վերաբերում է Հայ Առաքելական, Հայ Կաթոլիկ և Հայ Ավետարանական եկեղեցիների դավանաբանական տարբերութ-

---

[241] «Եփրատ», թիվ 308, մայիսի 31, 1927:

[242] Անտինյան Ս., Սփյուռքի հայկական կազմակերպությունների, միությունների և Հայ Եկեղեցու դերը հայկական դպրոցների ստեղծման ու զարգացման գործում, «21-րդ դար», թիվ 5, Երևան, 2011, էջ 48:

յուններին, ապա հարկ է նշել, որ Սփյուռքում կրթական գործի կազմակերպման բնագավառում այս կառույցների գործունեությունը կարելի է որակել որպես ազգաշահ գործունեություն: Հայ առաքելական և հայ ավետարանական դպրոցները գտնվում էին եկեղեցիների կողքին, և եկեղեցին հանդես էր գալիս որպես դպրոցի առաջին հովանավոր[243]:

1914 թ. Սիրիայում ուսանողության ընդհանուր թիվը կազմում էր 90.000[244]: 1920-ական թթ. Սիրիայում և Լիբանանում կրթական համակարգը զարգացած չէր: Ֆրանսիացիների կողմից հիմնված դպրոցները շատ չէին, և ոչ բոլորին էին հասանելի[245]: Նշված երկրներում մեծ չափերով տարածված էր անգրագիտությունը: 1927 թ. Լիբանանում անգրագետների թիվը կազմում էր ընդհանուր բնակչության 85 տոկոսը[246], բայց, այդուհանդերձ, իրավիճակն ավելի բարվոք էր, քան նախապատերազմյան ժամանակահատվածում: Այդ առիթով «Յուսաբեր» թերթում նշված է. «Պետական վարժարաններու պաշտօնական ուսուցումը հակառակ իր նոր զարգացմանց, հեռու է Եւրոպայի մէջ կատարած կարեւոր դերէն: ... Այսուհանդերձ, ասիկա արգելք չէ եղած որ հանրային կրթութիւնը անհերքելի առաջադիմութիւններ կատարէ»[247]:

Նման պայմաններում մեկը մյուսի հետևից հիմնվող հայկական դպրոցներում առկա էին խնդիրներ, ինչն առաջին հերթին պայմանավորված էր կենտրոնացված կրթական համակարգի բացակայությամբ. կանոնակարգված կրթական

---

243 Սիարոնեան Յ., նշվ. աշխ., էջ 89, Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 16, 50, Babikian M., Civilization and Education in Syria and Lebanon, Beirut, 1936, pp. 168-172.

244 Թյությունջյան Պ., Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը և հայ համայնքը (1920-1990 թթ.), Երևան, 1992, էջ 45:

245 Սեփոյան Ն., Ազգային կամ էթնիկական ինքնության հարցը հայ սփյուռքին մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, Երևան,1992, էջ 49, Дятлов В., Мелконян Э., указ. соч., стр. 54.

246 Raymond O., p. 154.

247 «Յուսաբեր», թիվ 138, սեպտեմբերի 12, 1932:

գործընթացում առաջնային էր ուսուցիչների դերակատարումը[248]:

Նորաբաց հայկական դպրոցները կանոնակարգված համայնական կյանքի բացակայության պայմաններում միասնական կրթական ծրագիր չունեին: Այսպես. «...իւրաքանչյուր դպրոց անջատաբար ու անկախաբար իրեն յատուկ և ըստ իր վարչական մարմնին քմահաճոյքին, մասնավոր ծրագիր-կանոնագիր մը որդեգրած՝ իր ըմբռնած ու փափաքած ձևով ուսմունք ու դաստիարակութիւն կը ջամբէ հայ նոր սերունդին»[249]:

1930-ական թթ. կատարվում են առաջին քայլերը միասնական կրթական ծրագիր կազմելու ուղղությամբ. 1930 թ. լիբանանահայ թեմի ուսումնական խորհրդի կողմից պատրաստվում և հրատարակվում ծաղկոց-մանկապարտեզների կրթական ծրագիրը: Ծրագրում փորձ է կատարվում համակարգված կերպով ներկայացնել ծաղկոց-մանկապարտեզի ուսուցման նյութերն ու դասավանդման մեթոդը[250]: Չի հաջողվում ծրագիրն անշեղորեն կիրառել, քանզի ոչ միանշանակորեն է ընդունվում լիբանանահայ հասարակության կողմից[251]: 1931 թ. հրատարակվում է Լիբանանի, 1934 թ. Բերիո թեմի ազգային վարժարանների կրթական ծրագրերը: Լիբանանի թեմի ուսումնական խորհրդի կողմից կազմված կրթական ծրագրում քննվում էր հայ ազգային վարժարանների հիմնախնդիրները: Ծրագրում նշվում է, որ 1897 թ. Կ. Պոլսում կազմված «Կրթական Ծրագիր Ազգ. վարժարանացը» այլևս ի զորու չէ բավարարել ընդհանուր կրթական ու տեղական կարիքները: 1928 թ. ուսումնական խորհրդի կողմից լույս տեսած «Առժամեայ Կրթական Ծրագիրը» չկարողացավ միաձևություն ներմուծել ազգային

---

[248] Նույն տեղում, թիվ 112, օգոստոսի 12, 1930:
[249] «Արև», թիվ 1979, օգոստոսի 27, 1925:
[250] Կրթական ծրագիր ծաղկոց-մանկապարտեզներու, էջ 1-10:
[251] «Եփրատ», թիվ 300, հունիսի 25, 1930, «Լիբանան», թիվ 532, փետրվարի 11, 1931, թիվ 558, մայիսի 16, 1931, թիվ 591, սեպտեմբերի 12, 1931:

վարժարանների շրջանում: Կրթական ծրագիրը համապատասխանեցված էր ֆրանսիական կրթական ծրագրի հետ[252]: Բերիո թեմի կրթական ծրագրի համաձայն, ազգային վարժարանները բաղկացած էին երկու բաժնից մանկապարտեզ և նախակրթարան: Մանկապարտեզը բաղկացած էր չորս կարգից «Ծիլ» (4-5 տարեկան), «Բողբոջ» (5-6 տարեկան), «Կոկոն» (6-7 տարեկան), «Ծաղիկ» (7-8 տարեկան): Նախակրթարանը բաղկացած էր վեց կարգից Ա կարգ (8-9 տարեկան), Բ կարգ (9-10 տարեկան), Գ կարգ (10-11 տարեկան), Դ կարգ (11-12 տարեկան), Ե կարգ (12-13 տարեկան), Զ կարգ (13-14 տարեկան)[253]: Աշակերտների փոքր թվաքանակի և նյութական սուղ պայմանների հետևանքով նախակրթարաններում և մանկապարտեզներում կարգերի թիվը հաճախ կրճատվում էր: 1931 թ. լույս է տեսնում Խ. Գաբիկյանի կողմից կազմված Հալեպի ազգային Հայկազյան վարժարանի կրթական ծրագիրը[254]:

ՀԲԸՄ-ն իր հերթին միասնական կրթական ծրագիր կազմելու և սփյուռքահայ կրթական և մշակութային կյանքը ղեկավարելու նպատակ էր հետապնդում: Մինչև 1930-ական թթ. վերջերը Սիրիայում և Լիբանանում ՀԲԸՄ-ն չուներ սեփական վարժարան, սակայն կրթական նպաստ էր հատկացնում մի քանի տասնյակ վարժարանի, որոնք որակվում էին որպես նպաստ ստացող վարժարաններ: 1929 թ. ՀԲԸՄ-ն նպաստ էր հատկացնում ինչպես Լիբանանում ու Սիրիայում, այնպես էլ Հունաստանում, Բուլղարիայում և Պաղեստինում գործող 78 վարժարանի: 1930-ական թթ. ՀԲԸՄ-ն ջանք էր գործադրում սփյուռքահայ կրթության կազմակերպման գործը ղեկավարելու ուղղությամբ. «Հ.Բ.Ը. Միութիւնը պէտք է ստանձնէ գաղթականական կարօտ շրջաններու կրթական ամբողջ գործին ղեկավարութիւնը, և միօրինակ ծրագրով մը պէտք է ապահովէ ազգային

---

252 Կրթական ծրագիր ազգային նախակրթարաններու, էջ 4-6:
253 Կրթական ծրագիր ազգային վարժարանաց Բերիոյ թեմին, էջ 36:
254 Ազգային Հայկազեան վարժարան. Ծրագիր, էջ 1-136:

դաստիարակութեան լաւագոյն ընթացքը՝ ի հարկին ազգային իշխանութեանց հետ գործակցաբար»[255]: 1936 թ. նպաստ ստացող վարժարանների կրթական գործունեությունն ուղղորդելու նպատակով ՀԲԸՄ նախաձեռնությամբ կազմվեց «Ուսման ծրագիր գաղթական համայնքներու յատուկ նախակրթարաններու» միասնական ուսումնական ծրագիր: Սփյուռքահայ նախակրթարանների համար նախատեսված կրթական ծրագիրը նպատակ էր հետապնդում հասնել նախակրթության միաձնությանը և արդիականանալ. «Ուստի կը յանձնարարուի գաղութահայ վարժարաններուն եւ ստիպողաբար Հ. Բ. Ը. Միութեան ենթակայ կամ նպաստընկալ վարժարաններուն, գործադրել սոյն Ծրագիրը, որպէս յարմարագոյն ուղեցոյց մը անկէ օգտուելով կարելիութեան սահմանին մէջ»[256]: Ծրագիրը կազմելուն իրենց մասնակցությունը բերեցին Լ. Բաշալյանը, Ա. Չոպանյանը, Կ. Թեքեյանը և այլք: Այս առիթով «Միութիւն» ամսագրում նշված է, որ ՀԲԸՄ-ն կրկին ղեկավարելու է կրթական գործը սփյուռքահայ համայնքներում հավատարիմ մնալով իր կոչմանը[257]: Այս ծրագիրը, սակայն, միանշանակ ընդունելություն չգտավ սփյուռքահայ համայնքներում արժանանալով քաղաքական-կուսակցական լուրջ ընդդիմության և անհաջողության [258]:

Ոչ պակաս կարևոր էր նաև դասագրքերի հիմնախնդիրը. նույն քաղաքում գործում էր մի քանի վարժարան անտեղյակ լինելով կիրառվող դասագրքերից[259]: Միաձնությունը բացակայում էր նաև դասագրքերի պարագայում: Ն. Աղբալյանի հավաստիացմամբ դասագրքեր շատ կային, բայց դրանք արդիական պահանջներին չէին համապատասխանում[260]:

---

[255] «Արև», թիվ 3803, հուլիսի 29, 1931:

[256] Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն, Ուսման ծրագիր գաղթական համայնքներու յատուկ նախակրթարաններու, էջ 3:

[257] «Միութիւն», թիվ 162, հուլիս-օգոստոս, 1933, էջ 51:

[258] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 407:

[259] «Եփրատ», թիվ 204, հունիսի 22, 1926:

[260] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 282, «Յուսաբեր», թիվ 16, մայիսի 8, 1924:

Լիբանանահայ և հալեպահայ թեմերի ուսումնական խորհուրդները ջանքեր են գործադրում դասագրքերի համընդհանրացման նպատակով: 1933 թ. լիբանանահայ ազգային վարչությունը որոշում է կայացնում վարժարաններից հեռացնել այն դասագրքերը, որոնք վավերացված չէին ուսումնական խորհրդի կողմից[261]: Այնուամենայնիվ, խնդիրն անմիջապես իր լուծումը չի գտնում: Մ. Օրջանյանի վկայությամբ 1935 թ. «...մին կը նախընտրէ հայ լեզուի ուսուցման համար «Թանգարան»-ի դրութիւնը, ուրիշ մը «Գանձատան»-ի դասընթացքը, եւ դեռ ուրիշ մը երկու դասագիրքերու ուսուցումը անյարմար գտնելով, ոյժ կու տայ «Լուսաբեր»-ներու կամ «Հայրենի աշխարհ»-ի մեթոտին: Նոյն հակամարտ դրութիւնը նաեւ գիտական, պատմական եւ օտար լեզուական դասագիրքերու համար»[262]: Լուրջ պայքար էր ծավալվել «Բարի լոյս» դասագրքի կիրառման հետ կապված: Մի մասն օգտագործում էր այն, իսկ մյուսները՝ ոչ[263]: Այս բնագավառում նույնպես ՀԲԸՄ-ն ոչ պակաս ջանքեր է գործադրում: 1933 թ. գործող ՀԲԸՄ դասագրքերի հանձնախումբը զգալի աշխատանքներ է տանում այս ուղղությամբ[264]:

Մյուս կարևոր հիմնախնդիրը վերաբերում էր հայ ուսուցիչներին. ոչ բոլոր նորաբաց դպրոցներում էր, որ դասավանդում էին մասնագետ-ուսուցիչներ: Այս առումով ուշագրավ է հետևյալ դիտարկումը. «...մեր մէջ ուսուցչութիւնը ամէն դասակարգի անգործներուն ապարէզ ճանչցուած է առհասարակ, ու շատ դիւրութեամբ ուսուցիչ կը դառնան եւ հողագործը, եւ դերձակը, եւ երկաթագործը, եւ վաճառատան գրագիրը, եւ կայարանի պաշտօնեան»[265]: Ուսուցիչների ճնշող մեծամասնությունը ներգրավված էր քաղաքական գործունեության մեջ և հանդես էր գալիս որպես քաղաքական

---

[261] «Յուսաբեր», թիվ 42, մայիսի 22, 1933:
[262] «Հայաստանի կոչնակ», թիվ 35, օգոստոսի 31, 1935, էջ 821:
[263] «Յուսաբեր», թիվ 174, հոկտեմբերի 25, 1934:
[264] «Հասկ», թիվ 5, մայիս, 1939, էջ 76-77:
[265] «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 94-95, «Հայ կեանք», թիվ 53, նոյեմբերի 30, Բեյրութ, 1925:

գաղափարների քարոզիչներ[266]: Կուսակցություններից յուրաքանչյուրն իր հերթին ձգտում էր գաղափարական ազդեցություն ունենալ ուսուցիչների շրջանում: Ռամկավար ազատական կուսակցության առաջին ընդհանուր պատգամավորական ժողովի ընթացքում որոշվում է առավել մոտենալ կրթական հաստատություններին, ձգտել ուսուցչական աշխատանքի մեջ ներգրավել ՌԱԿ անդամներին ու համակիրներին, իսկ արդեն գործող ուսուցիչներին ներգրավել կուսակցության գործունեության մեջ[267]: Այնուամենայնիվ, գաղթական հայերի շրջանում կային մասնագետ-ուսուցիչներ: Հալեպի հայ ազգային միության տեղեկագրերից մեկում նշված է, որ միայն Քիլիսից Հալեպ է գաղթել շուրջ 60 երկսեռ ուսուցիչ[268]:

Փաստորեն, կրթական համակարգի հիմնախնդիրը միասնական կրթական ծրագրի, դասագրքերի և մասնագետ ուսուցիչների բացակայությունն էր: Չնայած կատարված փորձերին, նշված ժամանակաշրջանում Սիրիայի և Լիբանանի հայ համայնքներում չհաջողվեց միասնական կրթական ծրագիր ստեղծել: Եվ կրթական ծրագիրը, և դասագրքերը համընդհանրացման կարիք ունեին, սակայն այդ նպատակն իրագործվեց հետագայում: 1930-ական թթ. վերջին ուսուցիչների մասնագիտացման նպատակով իրագործվեց առաջին քայլը. Սիրիայում և Լիբանանում հիմնվեցին ուսուցչական միություններ: Այնուամենայնիվ, այս հիմնախնդիրների առկայության պայմաններում հայ ազգային վարժարանները հավատարիմ մնացին իրենց կոչմանը՝ հայեցի դաստիարակություն տալով մատաղ սերնդին և նպաստելով հայ ինքնության պահպանմանը:

Ինչպես տեսնում ենք, Սիրիայում և Լիբանանում հաստատված հայությունը ջանք չէր խնայում կրթության կազմակերպման գործում հաջողություն ամրագրելու նպատակով:

---

[266] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 409:
[267] Դալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, էջ 53:
[268] ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 799, թ. 3:

Ճիշտ է, դպրոցական ցանցի կազմակերպումը տեղի էր ունենում տարերայնորեն, բայց ազգային վարժարանների մեծամասնությունը գտնվում էր համապատասխան թեմի ենթակայության ներքո, և վերջինս ամեն կերպ վերահսկում և օժանդակում էր վարժարաններին:

Ազգային վարժարանները, գտնվելով Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո, կազմակերպվեցին նախաեղեռնյան փորձառությամբ: Հայաշատ բնակավայրերում եկեղեցու կողքին հիմնված վարժարանները շատ հաճախ հիշատակվում էին ոչ թե կոնկրետ անվանումով, այլ որպես Ազգային վարժարաններ. «...Ազգ. Երկսեռ վարժարանն է, որ Առաջնորդարանէ նպաստաւորեալ, ուղղակի անոր իրաւասութեան ենթարկեալ է: Միւսները կը գործեն անկախաբար, կամ Ամերիկայի համանուն միութիւններու նպաստով»[269]:

1929 թ. երուսաղեմապատկան թեմերի փոխանցումից հետո Կիլիկիո կաթողիկոսությանն են ենթարկվում Հալեպի, Բեյրութի, Դամասկոսի, ինչպես նաև Կիպրոսի թեմերը[270]: Սահակ Բ Խապայանը նշանակում է թեմական առաջնորդներ, նախաձեռնում կրթության կազմակերպման գործընթացը: 1929 թ. հունվարի 27-ին Բ. Կյուլեսերյանը Սահակ Բ-ին ուղղված մի նամակում գրում էր. «Իմ կարծիքս այն է, որ Կաթողիկոսարանը ոչ միայն իր Դպրոցը հաստատելու է ռեւէ չափով, այլ նաեւ ի վիճակի ըլլալու է օգնելու որոշ չափով թեմական դպրոցներուն, որպէս զի կարենայ ատոնց կրթական Ծրագիրը եւ դաստիարակութեան ուղղութիւնը առնել իր հակակշռին ներքեւ, եւ եթե հնար է, ազատել ուսանող սերունդը հիւանդոտ դաստիարակութեան մը ազդեցութենէն»[271]: Նամակագիրը «հիւանդոտ դաստիարակութիւն» գրելով նկատի ունի կուսակցական ազդեցությունը մատաղ սերնդի վրա: Հայ ազգային առաջնորդարանի հաստատումից հետո ֆրանսիական մանդատային իշխանությունները արտո-

---

[269] «Հայ կեանք», թիվ 20, օգոստոսի 6, 1925:

[270] Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ, էջ 31:

[271] Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, նամակ ԼԸ, էջ 164:

նագիր էին տրամադրում հայ ազգային վարժարաններին: 1931 թ. Լիբանանի հայ ազգային վարժարանները արտոնագրվում և փոխանցվում են թեմի ենթակայության ներքո[272]:

Առաջնորդարանում կրթական գործի կազմակերպման համար պատասխանատու էր ուսումնական խորհուրդը: Ազգային վարժարանին օժանդակություն էին ցուցաբերում թաղական խորհուրդն ու դպրոցի հոգաբարձությունը: Թաղական խորհրդի գլխավոր պարտականությունը բյուջեի հավասարակշռումն էր, ելևմտից հաշվեկշռի համակարգումը թե եկեղեցում, թե դպրոցում[273]: Հոգաբարձությունը պարտավոր էր վարժարանի տնօրենի հետ խորհրդակցելով որոշել հաստատության բյուջեն, ապահովել հարկ եղած եկամուտները, օժանդակել ուսուցիչներին, վերահսկել նրանց գործունեությունը[274]: Ազգային վարժարանն անմիջականորեն ղեկավարվում էր տնօրենի կողմից:

1920-1930-ական թթ. ազգային վարժարանների բյուջեն հայթայթվում էր կրթական տուրքի, ՀԲԸՄ կրթական նպաստների, աշակերտական տարեվճարների, ֆրանսիական իշխանությունների, հայրենակցական միությունների, միսիոներական կազմակերպությունների և պատահական նվիրատվությունների հաշվին: 1923 թ. հաստատվում է Բերիո թեմի կրթական տուրքի ծրագիր-կանոնագիրը: Ծրագիր-կանոնագիրը կարևորում էր «պարտաւորիչ կրթական տուրքը» յուրաքանչյուր հայ անհատի համար[275]: Կրթական տուրքի վճարմանն օժանդակում էին հայրենակցական միությունները: Ասվածի ապացույցն է 1927 թ. վերաբերող տեղեկությունն այն մասին, որ այդ տարում հայերն ավելի շատ դպրոցական տուրք են վճարել, քան նախորդ տարիներին, և այդ

---

272 «Լիբանան», թիվ 510, նոյեմբերի 12, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 5, հունվարի 31, 1931, էջ 152:

273 Քէշիշեան Վ., նշվ. աշխ., էջ 44:

274 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 183-184, «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 72:

275 Հայ ազգային առաջնորդարան, Ծրագիր-Կանոնագիր կրթական տուրքի Հայ ազգ. առաջնորդարանի, էջ 3:

վճարումների մի մասն իրականացրել են հայրենակցական միությունները[276]: Կրթական տուրքին զուգորդվում էր նաև ազգային տուրքը: Սահակ Բ-ի շրջաբերականում նշվում է. «Մեր Կաթողիկոսութեան Թեմերը նոր նոր կը կազմակերպուին Լիբանանու, Սուրիոյ եւ Կիպրոսի մէջ: Տարագրութեամբ խճողուած Հայ բազմութիւններու հետեւանքով գործեր շատցած են, կարօտութիւններ բազմացած և դրամը ամէն ատենէ աւելի պէտք է այժմ: Ձեր դպրոցներուն ուսուցիչները ամիսներով չեն կրնար ստանալ իրենց համեստ թոշակը, ծեր Առաջնորդները անձկութեան ամիսներ կ'անցընեն: Ամէն տեղ ազգային սնտուկները բաց ունին»[277]:

Բեյրութի ազգային միության դիմումի հիման վրա ֆրանսիական բարձր կոմիսարությունը որոշում է կայացնում 1925 թ. սկսած որոշակի նպաստ հատկացնել Բեյրութի գաղթակայանի երկու վարժարանին և Լաթակիայի վարժարանին[278]: Վարժարաններին պետական նպաստ հատկացնելու գործին օժանդակում են նաև հայ հոգևորականները. Լիբանանի կաթողիկոսական փոխանորդ Եղիշե եպիսկոպոս Կարոյանը այդ խնդրանքով դիմում է ֆրանսիական կոմիսարությանը, և մանդատային իշխանությունները 7000 ֆրանկ գումար են հատկացնում[279]: Ազգային վարժարանների աշակերտները ոչ կանոնավոր օժանդակություն էին ստանում անհատներից, միսիոներական կազմակերպություններից. հիշատակելի են Գ. Կյուլպենկյանը, Ք. Եպպեն, Հ. Բյուլը, Է. Ռոբերտսոնը[280]:

Բեյրութի հայ ազգային վարժարանի տարեվերջյան հանդեսից հետո «Լիբանան» թերթում ներկայացվող հաշվետվությունը մատնանշում է վարժարանի ստացած նվերներն ու նպաստները.

---

[276] «Հայաստանի կոչնակ», թիվ 22, մայիսի 28, 1927, էջ 693:
[277] Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիոյ, էջ 128:
[278] «Յուսաբեր», թիվ 89, հոկտեմբերի 28, 1924:
[279] Նույն տեղում, թիվ 282, մարտի 4, 1930:
[280] Քեշիշեան Վ., նշվ. աշխ., էջ 50-51, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, էջ 148-157, «Ջանասեր», թիվ 3, գարուն, Բեյրութ, 1939, էջ 65, «Հայաստանի կոչնակ», թիվ 6, փետրվարի 10, 1934, էջ 140, Григорян В., указ. соч., стр. 30.

| Մուտք | Ելք |
|---|---|
| Սուր. Ոսկի | Սուր. Ոսկի |
| Աշակերտներէ գանձուած թոշակ – *2578.20* | Ուսուցիչների ամսաթոշակը - *3824.15* |
| Աշակերտներէ գանձուած մուտքի դրամ – *98.10* | Զանազան ծախսեր |
| Նպաստ | Դպրոցներու նստարան եւ գրասեղաններու նորոգութեան, դպրոցական պիտոյքներու, քարտէզ ելն գնումի: Ձեռագործի նիւթերու որոնցմով պատրաստուած է 41 կտոր ձեռագործ, որ հոս ցուցադրուած է: |
| Երուսաղ. 25 ե. օ. որմէ գոյացած է - *193.53* | Այլ եւ այլ ծասերու – *281.47* |
| Ոըլիֆէ ստացուած – *168.37* | Պատրաստ դրամ |
| Կառավարութենէ – *100* | 50 ս. հնչ. գնուած 623 1/2 եւ 10 ս. ոսկի եւ 32 1/2 գր. – *322.07* |
| Պարահանդեսէ 708.53 որմէ քէմբի վարժ.-ի վճարուած է 100 – *608.53* | |
| Իբր Նուէր | |
| Ծնունդի եւ Զատկի առթիւ ծախուած քօքարաներէ, փոխան այցելութեան եւ պատուասիրութեան, եւ զանզ նուէր - *216.46* | |
| Կրթական տուրքէ մինչեւ այսօր – *464.50* | |
| *Գումար – 4427.69* | *4427.69* [281] |

Ազգային վարժարանում դասընթացներից բացի, հանդեսների տեսքով անցկացվում էին տարեվերջյան փակման արարողություններ, մարզահանդեսներ, թատերական ներկայացումներ և այլ միջոցառումներ: Այս

[281] «Լիբանան», թիվ 214, հուլիսի 27, 1926:

միջոցառումների ընթացքում ժողովրդական հանգանակություններ էին կազմակերպվում ի նպաստ դպրոցի: Հանդեսները անցկացվում էին ոչ միայն տարեվերջին, այլև ողջ տարվա ընթացքում նպատակ հետապնդելով աշակերտների շրջանում զարգացնել համարձակություն, ինքնավստահություն, քաղաքակրթություն[282]:

Ազգային վարժարանի շրջանակներում լուրջ ուշադրության էին արժանանում մատաղ սերնդի դաստիարակության հետ կապված խնդիրները, կարգապահությունը համարվում էր դաստիարակության անքակտելի մասը: 1932 թ. լույս տեսած «Դպրոցական առողջապահութիւն» աշխատանքում Օ. Կերկերյանը հանդես է գալիս «...մանկավարժական այն սխալ, վտանգաւոր, անօգուտ, եւ վնասակար ընթացքներուն դէմ» խստորեն քննադատելով մարմնական պատիժների առկայությունը հայ վարժարանում[283]: Դաստիարակության գլխավոր խնդիրն էր հայ աշակերտին կրթել ազգային ոգով և ավանդույթներով: Հայապահպանության տեսանկյունից շատ կարևոր էր օտար ծագմամբ դաստիարակչական տարրերի բացառումը հայ երիտասարդության շրջանում[284]: Սիրիահայ և լիբանանահայ կրթական միտքը զատում էր դաստիարակությունը կրթությունից: Նշված ժամանակաշրջանին է վերաբերում Բ. Ժամկոչյանի հիշատակումն այն մասին, որ «...Նախակրթարանի, Երկրորդականի եւ Ուսուցչանոցի» վկայական ունեցող ուսուցիչներին Ազգային առաջնորդարանի ուսումնական խորհուրդը շնորհում էր դաստիարակի աստիճան[285]: Լ. Շանթը, իր հերթին, դպրոցի կազմակերպական կառույցը ներկայացնելիս շեշտադրում է «դաստիարակ-ուսուցիչ» կոչման կարևորությունը: Դաստիարակ-ուսուցիչը տվյալ դասարանի ուսուցիչներից մեկն էր, սակայն նրա

---

[282] «Արարատ», թիվ 434, հունիսի 30, 1939, «Հայ պատանի», թիվ 7, հուլիս, Բեյրութ, 1934, էջ 1:
[283] Կէրկէրեան Օ., նշվ. աշխ., էջ 66:
[284] Չարըգ Դ., նշվ. աշխ., էջ 11-12:
[285] Յուշարձան ուսուցչապետ Բենիամին Ժամկոչյանի, էջ 394:

ազդեցությունն աշակերտների վրա բացառիկ էր[286] այդ պատճառով 1920-ական թթ. կեսերից առաջ քաշված «Հայ ազգային վարժարաններում դաստիարակություն չկա» գաղափարաբանությունը մատնանշում էր դաստիարակ-ուսուցչի բացակայությունը[287]: Դաստիարակ, ով իր աշակերտին ոչ միայն փոխանցում էր իր մասնագիտական գիտելիքները, այլև դաստիարակում որպես օրինապաշտ քաղաքացի:

Հայ ազգային վարժարանների ձևավորումը մեծապես նպաստում էր կրթական գործի ուղղորդմանը, հիմնախնդիրների համընդհանրացմանը: 1920-1930-ական թթ. սկիզբ առավ հայ ազգային վարժարանների կայացման և կրթական համակարգի կազմակերպման գործընթացը, որն իր ավարտին հասցվեց ավելի ուշ ժամանակաշրջանում: Վարժարանի կազմակերպական կառույցի ամրագրումը նպաստում էր ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացմանն ու վարժարանների նկատմամբ կազմակերպված վերահսկողության հաստատմանը:

## 2.2 Կրթական հաստատությունները Սիրիայում

Սիրիայում հաստատված գաղթական հայության ջանքերով նոր վարժարաններ են հիմնվում Հալեպի, Դամասկոսի, Լաթակիայի, Քեսաբի և Սիրիայի հյուսիսում գտնվող այլ շրջաններում: Նախկինում գործող վարժարաններն ի զորու չէին կազմակերպել նոր ժամանած գաղթական երեխաների ուսումնական գործընթացը:

1920-1930-ական թթ. Հալեպում գործել է շուրջ 20 հայկական վարժարան.որոշները նյութական սուղ պայմանների

---

[286] Շանթ Լ., Երկեր, հ. 7, Բեյրութ, 1952, էջ 45-47:

[287] Սերոբեան Մ., նշվ. աշխ., էջ 11, «Հայաստանի կոչնակ», թիվ 31, օգոստոսի 1, 1936, էջ 727-729:

պատճառով փակվել են: Սիրիայի հայկական վարժարանների տարեկան գործունեությունն ամփոփված է մի շարք վիճակագրական ցանկերում[288]:

Վարժարանները հիմնվում էին Հայ Առաքելական եկեղեցու, ինչպես նաև հայրենակցական միությունների, անհատ բարեգործների կողմից: Վերջինների կողմից հիմնված վարժարանները թեև սկզբնական շրջանում անկախ էին գործում, այդուհանդերձ վիճակագրական ցանկերում հիշատակվում են: Հալեպում հիմնվեցին նաև գիշերային և կույրերի վարժարաններ: 1929-1930 թթ. սկիզբ առավ հայկական վրանաքաղաքների քանդման և նոր թաղամասերի կառուցման գործընթացը: Հայկական նոր թաղամասերի հիմնումը իրագործվում էր Նանսենյան գրասենյակի և հայրենակցական միությունների օժանդակությամբ: Հին և նոր թաղամասերում գտնվող վարժարաններին նյութապես օժանդակելու նպատակով հիմնվում է մի քանի միություն. 1920 թ. «Կիլիկեան նպաստից միութիւնը», որից 1924 թ. առանձնանում և անջատաբար գործում է «Այնթապի կրթասիրաց միութիւնը»: Այս կազմակերպությունների օժանդակությունը մեծ դեր է խաղացել սուղ պայմաններում վարժարանների գոյատևման գործում[289]:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ուներ ՀԲԸՄ նյութական օժանդակությունը Սիրիայի հայկական վարժարաններին: 1927/1928 ուսումնական տարում ՀԲԸՄ-ն Հալեպի և շրջակայքի Ազգային վարժարաններին հատկացրել է 325 օսմանյան ոսկուն համարժեք նպաստ[290]:

---

288 «Արեւ», թիվ 3918, դեկտեմբերի 11, 1931, «Եփրատ», թիվ 556, հունվարի 20, 1933, թիվ 558, հունվարի 27, 1933, թիվ 559, հունվարի 31, 1933, թիվ 564, փետրվարի 17, 1933, թիվ 576, մարտի 31, 1933, թիվ 579, ապրիլի 11, 1933, «Հայաստանի կոչնակ», թիվ 3, հունվարի 19, 1929, էջ 74-75, «Յուսաբեր», թիվ 76, հունիսի 30, 1928, թիվ 121, օգոստոսի 23, 1928, թիվ 125, օգոստոսի 27, 1929, «Սուրիական ալպոմ», թիվ 3, Հալեպ, 1929, էջ 112-114, «Սուրիական մամուլ», թիվ 373, փետրվարի 13, 1925, «Տաթեւ» կրօնական տարեցոյց, 1929, էջ 388:

289 Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), էջ 38, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 528:

290 «Եփրատ», թիվ 2, հուլիսի 9, 1927, «Յուշարար», թիվ 118, սեպտեմբեր, Բոստոն, 1927, էջ 2464:

1920-ական թթ. հալեպահայ կրթական կյանքի ռահվիրաներն էին Հայկազյան և Կիլիկյան գաղթականների վարժարանները, որոնք համեմատաբար ավելի երկար պահպանեցին իրենց գոյությունը կրթելով հազարավոր աշակերտների:

Հայկազյան վարժարանը հիմնվել է 1876 թ. Ներսեսյան վարժարան անվամբ Հալեպի Սուրբ Քառասնից մանկանց եկեղեցու շրջափակում, գործել է ընդհատումներով, ապա 1919 թ. կրկին վերաբացվել: Հայկազյան վարժարանն ունեցել է երեք շենք նախատեսված տղաների, աղջիկների և մանկապարտեզի համար: 1919/20 ուսումնական տարում Ներսեսյան վարժարանը միավորվել է արդեն մի քանի ամիս գործող Հայկազյան վարժարանի հետ[291] և հանդես եկել Ազգային Ներսեսյան-Հայկազյան միացյալ վարժարան անվամբ ունենալով շուրջ 1.000 աշակերտ[292]:

Կիլիկյան գաղթականների վարժարանը հիմնվել է 1921 թ., հովանավորվել ՍԴ Հնչակյան կուսակցության կողմից[293]: Ունեցել է մանկապարտեզի, նախապատրաստականի և բարձրագույն նախակրթարանի բաժիններ: Ներքին ցնցումների պատճառով 1925-1926 թթ. վարժարանը փակ է եղել, սակայն տագնապը երկար չի տևել. կազմվել է հատուկ խնամակալություն, որի ջանքերով վարժարանը վերսկսել է իր աշխատանքները[294] և հանդես եկել «Կիլիկեան երկսեռ վարժարան» անվամբ ունենալով շուրջ 1000 աշակերտ[295]:

«Կիլիկեան նպաստից միութեան» ջանքերով 1932/1933 ուսումնական տարում հիմնվել են վրանաքաղաքի, 1935/1936 ուսումնական տարում Նոր Գյուղ թաղամասի Կիլիկյան վար-

---

[291] «Յուսաբեր», թիվ 175, հոկտեմբերի 27, 1933, «Շիրակ», թիվ 10, հոկտեմբեր, Բեյրութ, 1986:

[292] «Արեւ», թիվ 3897, նոյեմբերի 17, 1931, «Հայաստանի կոչնակ», թիվ 20, մայիսի 19, 1928, էջ 660, «Յուսաբեր», թիվ 257, փետրվարի 1, 1935, «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 316, «Օշական», թիվ 1-2, հունվար-հունիս, Հալեպ, 1988, էջ 39:

[293] «Յուսաբեր», թիվ 223, դեկտեմբերի 20, 1926, թիվ 275, փետրվարի 21, 1929, «Օշական», թիվ 1-2, հունվար-հունիս, 1988, էջ 36:

[294] Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), էջ 52:

[295] «Սուրիական ալպոմ», թիվ 3, 1929, էջ 112, «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 316:

ժարանի մասնաճյուղերը, 1936 թ. Դավուդիե թաղամասի Կի-լիկյան վարժարանը: Վերջինս մեկ տարի անց վերանվանվել է Վարդանյան վարժարան[296]: Վարդանյան վարժարանը հանդես էր գալիս Այնթապի համանուն վարժարանի շարունակողի դերում: Դավուդիեի թաղական խորհուրդը ստանձնում է Վարդանյան վարժարանի նյութական մատակարարումն ու ուսումնադաստիարակչական վերահսկողությունը[297]:

1920-ական թթ. վարժարաններ են հիմնվել հայրենակցական միությունների կողմից. 1922 թ. հիմնվել է Չարսանջակցիների հայրենակցական միության, 1923 թ. Խարբերդի և Դատեմի, 1924 թ. Այնթապի, Մալաթիայի, Ուրֆայի հայրենակցական միությունների վարժարանները, որոնք ունեցել են մինչև 300 աշակերտ[298]:

1922 թ. հիմնված Չարսանջակցիների հայրենակցական միության վարժարանի տնօրինությունը համաձայնության է գալիս Նյու-Յորքի Չարսանջակ-Բերիի ուսումնասերների միության հետ, ըստ որի, վերջինս պարտավորվում է վճարել վարժարանի տարեկան բյուջեի կեսը: Վարժարանում կազմվում է «Պատանեկան միութիւն» իր գրադարանով: Չարսանջակցիների միության վարժարանը փակվում է 1928 թ.[299]:

Հալեպում Խարբերդի և հարակից գյուղերի հայրենակցական միության վարժարանը նույնպես մի քանի տարվա կյանք է ունենում: 1923 թ. հոկտեմբերի 6-ին հայրենակցական միության վարչությունը կոչով դիմում է խարբերդցիներին վարժարանին օժանդակելու նպատակով և հայտնում, որ աշակերտների թիվը 252 է: Խարբերդի հայրենակցական

---

296 Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), էջ 358-406, «Արարատ», թիվ 38, հունվարի 14, 1938:
297 «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Գ, էջ 299:
298 Ղազարեան Ս., Եղեռնի հետքերով, Բեյրութ, 1965, էջ 76, «Արև», թիվ 1979, օգոստոսի 27, 1925, «Հայաստանի կոչնակ», թիվ 30, հուլիսի 23, 1927, էջ 953, «Յուսաբեր», թիվ 223, դեկտեմբերի 20, 1926, «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 231, 316:
299 Երեւանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Բեյրութ, 1956, էջ 626-627:

միության վարժարանն այնուհետ միավորվում է ներքոհիշյալ Արմենյան անհատական վարժարանի հետ[300]:

Մալաթիայի կրթասերերի միության վարժարանը ընդհատումներով գործում է մինչև 1927 թ.: Վարժարանին օժանդակում է մալաթիացի երիտասարդներից կազմված երիտասարդական միությունը հանդես գալով դասախոսություններով, թատերական ներկայացումներով[301]:

Ղատեմի հայրենակցական միության վարժարանը հիմնվել է 1923 թ., գործել ընդհատումներով: 1924 թ. վարժարան էր հաճախում 100 աշակերտ[302]:

Ուրֆացի գաղթականների երկսեռ վարժարանը հիշատակվում է 1924/1925 ուսումնական տարում, ուր հաճախում էր մոտ 100 աշակերտ: Համիդիեի թաղամասում գործում էր վարժարանի մասնաճյուղը[303]:

Հայրենակցական միությունների կողմից հիմնված վարժարաններից իր գոյությունը համեմատաբար երկար կարողացել է պահպանել Այնթապցիների կրթասիրաց միության վարժարանը, որի տնօրենը 1929-1957 թթ. եղել է վաստակաշատ սփյուռքահայ մանկավարժ Գ. Պողարյանը[304]: Սկզբնական շրջանում վարժարանը գործել է մեծ դժվարություններով, ունեցել շուրջ 600 աշակերտ[305]: 1929/30 ուսումնական տարվա դասացուցի համաձայն վարժարանի տղաների բաժնում դասավանդվում էին հետևյալ առարկաները հայերեն, ֆրանսերեն, արաբերեն, թվաբանություն, երկրաչափություն, եկեղեցու պատմություն,

---

300 Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատեան ազգային, պատմական, մշակութային եւ ազգագրական, Նյու Յորք, 1959, էջ 1045, Քորթոշյան Ռ., Հալեպի արձանագրությունները, Երևան, 2013, էջ 55:

301 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ հայոց, Բէյրութ, 1961, էջ 1348, 1518, 1520:

302 Մեր գիւղը Ղատեմ, Բոստոն, 1958, էջ 211:

303 Քորթոշյան Ռ., նշվ. աշխ., էջ 56:

304 «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Բ, էջ 406:

305 ՀԱԱ, ֆ. 1421, ց. 2, գ. 50, թ. 1, «Եփրատ», թիվ 271, մարտի 12, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 34, օգոստոսի 20, 1927, էջ 1082, թիվ 20, մայիսի 19, 1928, էջ 660:

հայոց պատմություն, ընդհանուր պատմություն, աշխարհագրություն, գծագրություն, բարոյագիտություն, երգեցողություն և այլն: Աղջիկների բաժնում դասավանդվում էին նույն առարկաները, բայց երկրաչափությանը փոխարինում էր տնտեսագիտությունը: Կարևոր էր նաև ձեռագործի ուսուցումը[306]: 1929 թ. վարժարանում գործում էր հետևյալ ժամանակացույցը.

| | |
|---|---|
| $7^{00}$ - $7^{30}$ | բացում, աղոթք, սերտողութիւն |
| $7^{30}$ - $8^{15}$ | *Ա պահ* |
| $8^{15}$ - $9^{00}$ | *Բ պահ* |
| $9^{00}$ - $9^{10}$ | Դադար |
| $9^{10}$ – $9^{55}$ | *Գ պահ* |
| $9^{55}$ – $10^{40}$ | *Դ պահ* |
| $10^{40}$ – $10^{50}$ | Դադար |
| $10^{50}$ – $11^{35}$ | *Ե պահ* |
| $11^{35}$ – $2^{45}$ | Ճաշ |
| $2^{45}$ – $3^{00}$ | Սերտողութիւն |
| $3^{00}$ – $3^{45}$ | *Զ պահ* |
| $3^{45}$ – $4^{30}$ | *Է պահ* |
| $4^{30}$ – $4^{35}$ | արձակում[307] |

1922 թ. Հակոբ Բուռունսուզյանի և իր տիկնոջ՝ Մարիամ Բուռունսուզյանի կողմից հիմնվում է Արմենյան անհատական վարժարանը, որն ունեցել է շուրջ 100 երկսեռ աշակերտ[308] և գործել ընդհատումներով: Արմենյան վարժարանում հայոց պատմություն է դասավանդել վարժարանի հիմնադիր

306 ՀԱԱ, ֆ. 1421, ց. 2, գ. 50, թ. 1:
307 ՀԱԱ, ֆ. 1421, ց. 2, գ. 9, թ. 19:
308 http://grtasiratz.org/topic/86.

տիկինը[309]։ 1932 թ. բացվել է Արմենյան վարժարանի նորակառույց շենքը նյութական աջակցություն ստանալով «Կիլիկեան նպաստից միութիւնից»[310]։

1923 թ. մարաշցի տարագիրների կողմից հիմնվել է վրանաքաղաքի Մեսրոպյան վարժարանը, որը սկզբնական շրջանում գործել է Ս. Խաչ փայտաշեն եկեղեցում[311]։ 1924/1925 ուսումնական տարում վարժարան են հաճախել մոտ 150, 1925/1926 ուսումնական տարում մոտ 320, 1939/1940 ուսումնական տարում 330 աշակերտ։ 1937 թ. վրանաքաղաքի քանդման հետևանքով եկեղեցին և դպրոցը տեղափոխվել են Նոր Գյուղ թաղամաս[312] և գործել մինչև 2010 թ.։

Մինչև 1929 թ. Հալեպում բացվել է ևս երեք դպրոց՝ Սահակյան երկսեռ վարժարանը 200 աշակերտով, վրանաքաղաքի Ներսիսյան վարժարանը 250 աշակերտով և Հալեպի կենտրոնական միջնակարգ վարժարանը[313]։

1924 թ. մեծ բարերար Ք. Եպպեն Հալեպի Մեյդան (հետագայում Նոր Գյուղ) արվարձանում հողատարածք է գնում, որտեղ 1927 թ. կառուցվում է դպրոցական շենք. «... որ կը կոչուի Ազգ. Սահակեան վարժարան՝ ի պատիւ Սահակ Բ Կաթողիկոս Խապայեանի»[314]։ Սահակյան վարժարան էին հաճախում Ք. Եպպեի հովանավորյալ սաները, վարժարանի բյուջեն գոյանում էր աշակերտների կողմից վճարվող

---

[309] ԳԱԹ, Թ. Թորանյանի ֆ., գ. 31, թ. 4։

[310] «Եփրատ», թիվ 528, հոկտեմբերի 10, 1932, «Յուսաբեր», թիվ 175, հոկտեմբերի 27, 1933։

[311] Թորանեան Թ., Մարաշի ազգ. Մեսրոպեան կեդրոնական երկսեռ վարժարանը 65 տարի հայ սերունդներու ծառայութեան մէջ, էջ 21, 33, «Յուսաբեր», թիվ 163, հոկտեմբերի 11, 1927։

[312] Քեշիշեան Կ., նշվ. աշխ., էջ 55, 130։

[313] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 274, Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Երևան, 2011, էջ 18, http://sahagianschoolaleppo.com/pagea.php?id=6&lang=arm.

[314] «Հասկ», թիվ 12, դեկտեմբեր, 1933, էջ 64, «Օշական», թիվ 1-2, հունվար-հունիս, 1988, http://sahagianschoolaleppo.com/pagea.php?id=6&lang=arm.

տարեկան վարձավճարներից[315]: 1928 թ. աշակերտների թիվը կազմել է 140, պաշտոնյաներինը 3[316]:

1925 թ. այնթապցի գաղթականների կողմից հիմնվում է վրանաքաղաքի Ներսեսյան ծաղկոց-վարժարանը, որը 1932 թ. տեղափոխվում է Նոր Գյուղ թաղամաս: 1936 թ. այն անվանակոչվում է որպես Զավարյան[317]:

Հալեպի կեդրոնական վարժարանը գործել է միայն 1928/29 ուսումնական տարում: Նախատեսված էր սույն կրթական հաստատությանը կենտրոնական վարժարանի կարգավիճակ շնորհել ոչ միայն հալեպահայ, այլև սիրիահայ համայնքի շրջանակներում: Այդ առիթով «Եփրատ» թերթում նշված է, որ ազգային դաստիարակության հետ միասին պետք է զարկ տալ նաև արաբերեն և ֆրանսերեն լեզուների ուսուցմանը, քանզի բոլոր դասավանդությունները պետք է իրականացվեն ֆրանսերենով[318]: Նախնական որոշման համաձայն, կեդրոնական վարժարանը նպատակ էր հետապնդում դառնալ արդիական հայ ազգային վարժարան՝ բարձրագույն երկրորդական բաժնով: Սակայն 1929 թ. սեպտեմբերին նույն թերթում հանդիպում ենք հետևյալ տեղեկությանը. «Կեդր. Վարժարանի Խնամակալ մարմինը վերջնականապէս հրաժարած է և հրաժարականը ընդունուած, որով Կեդրոնականը չպիտի վերաբացուի յառաջիկայ դպրոցական տարեշրջանին»[319]:

1926 թ. հիմնադրվում է Հալեպի Հ. Փոլադյան գիշերային վարժարանը[320], որի նպատակն էր կրթություն տալ ուսումնազուրկ պատանիներին: Դպրոցում դասավանդում էին հայերեն, ֆրանսերեն, թվաբանություն, պատմություն և

---

[315] «Օշական», թիվ 1-2, հունվար-փետրվար, 1987:

[316] Չոլաքեան Յ., Քարէն Եփփէ: Հայ զողգոթային եւ վերածնունդին հետ, էջ 91-92, «Հայաստանի կոչնակ», թիվ 33, օգոստոսի 18, 1928, էջ 1052:

[317] Զաւարեան վարժարանի տասներկու տարիները. 1936-1948, էջ 7, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 523-524:

[318] «Եփրատ», թիվ 116, օգոստոսի 18, 1928, «Յուսաբեր», թիվ 81, հուլիսի 5, 1929:

[319] «Եփրատ», թիվ 225, սեպտեմբերի 21, 1929:

[320] Քոթթոշյան Ռ., նշվ. աշխ., էջ 57:

գծագրություն: 1928 թ. գիշերային վարժարանի աշակերտության թիվը 300 էր, սակայն մինչև ուսումնական տարվա վերջ աշակերտների թիվը կրճատվեց հասնելով 90-100-ի[321]:

1924 թ. հունվարին Ս. Մանուկյանի և իր երկու ընկերոջ կողմից բացվում է Հալեպի կույրերի վարժարանը, որտեղ կրոնական և սեռային խտրականություն չկար: Հայերենից զատ ուսանում էին արաբերեն, ֆրանսերեն, անգլերեն, թվաբանություն, աշխարհագրություն, երգեցողություն և կրոնագիտություն: Կարևոր էր նաև մի շարք արհեստների ուսուցումը[322]: 1925 թ. կույրերի վարժարանին օժանդակում էր «Ֆրենդս ավ Արմենիան» կազմակերպությունը[323]: Վարժարանը սկզբից ուներ կույր վարժուհի և հինգ աշակերտ, սակայն 1928 թ. վարժուհիների թիվը հասնում է 2-ի, աշակերտներինը՝ 14-ի, 1929 թ. 19-ի, 1933 թ. 18-ի, «...որոնք կը ներկայացնեն եօթը տարբեր քաղաքներ, չորս ազգութիւններ եւ վեց յարանուանութիւններ»[324]:

1930 թ. լոնդոնաբնակ Ն. Գյուլբենկյանի կողմից հիմնվում է Պողոս Գյուլբենկյան վարժարանը ի հիշատակ իր վաղամեռիկ որդի Պողոսի: Նշված ժամանակաշրջանում այն ուներ 300 աշակերտ[325]: Գյուլբենկյան վարժարանի շրջանավարտներից է սփյուռքահայ ականավոր հասարակական գործիչ, գրող, հրապարակախոս, բժիշկ Թ. Թորանյանը:

1935 թ. Հալեպ քաղաքում գործում էին Կիլիկյան, Ուսումնասիրաց, Հայկազյան, Պողոս Գյուլբենկյան, Կրթասիրաց, Արմենյան վարժարանները, Նոր Գյուղ թաղամասում Սահակյան, Արմենյան, Ուսումնասիրաց,

---

[321] «Հայաստանի կոչնակ», թիվ 35, սեպտեմբերի 1, 1924, էջ 1115:

[322] «Պատանեկան արձագանք», թիվ 17, օգոստոսի 1, Բեյրութ, 1937, էջ 135:

[323] «Լիբանան», թիվ 109, հուլիսի 25, 1928:

[324] Քասունի Ե., Լուսաշաւիղ: Պատմութիւն Հայ աւետարանական շարժման. 1846-1946, Բեյրութ, 1947, էջ 551, «Հայաստանի կոչնակ», թիվ 39, սեպտեմբերի 29, 1928, էջ 1238, «Յուսաբեր», թիվ 72, հունիսի 25, 1929, թիվ 77, հուլիսի 3, 1933:

[325] «Արեւ», թիվ 3970, փետրվարի 12, 1932, «Հայաստանի կոչնակ», թիվ 44, նոյեմբերի 1, 1930, էջ 1383, «Յուսաբեր», թիվ 152, սեպտեմբերի 29, 1930:

Ներսիսյան վարժարանները, վրանաքաղաքում Մեսրոպյան, Կիլիկյան, Ուսումնասիրաց, Կույրերի և այլ վարժարաններ[326]: 1937 թ. Հալեպի Գերմանիկ թաղամասում մարաշցիների ջանքերով հիմնվում է Գերմանիկյան վարժարանը[327]:

1920-1930-ական թթ. վարժարաններ են գործել նաև Հալեպի շրջակա հայաշատ մի շարք բնակավայրերում, այդ թվում Արաբ-Բունարում, Ազեզում, Աֆրինում, Ճարաբլուսում:

Մինչև 1920-ական թթ. սկիզբը վերոնշյալ վայրերում բնակչություն չկար, և գլխավորապես հայ գաղթականների ջանքերի շնորհիվ են այս տարածքները դառնում բնակելի: Բնակություն են հաստատում գլխավորապես ուրֆացի գաղթականները առաջին օրվանից լծվելով մատաղ սերնդի դաստիարակության և կրթության գործին: Սիրիայի այս հատվածում կային քրդական գյուղեր, և հայերը սկզբնական շրջանում աշխատում էին քրդերի կալվածքներում: Հայերենի ուսուցման գործը հայապահպանության տեսանկյունից խիստ անհրաժեշտություն էր:

Ըստ Ս. Ղազարյանի, Արաբ-Բունարում կրթական գործը սկսվել է դեռևս 1925 թ.: 1931 թ. Խրիմյան վարժարանի մանկապարտեզի բաժնում սովորում էր 150, 1933 թ. մանկապարտեզում և նախակրթարանում 110, 1938 թ. 300 աշակերտ[328]:

1922 թ. բացվել է Ազեզի ազգային Սահակյան վարժարանը, որը 1922-1923 թթ. գործել է Բ. Ղազեյանի տանը, 1923-1924 թթ.՝ Մ. Խամսյանի սրճարանում, 1924-1925 թթ. դարձյալ Բ. Ղազեյանի տանը 40 աշակերտով[329]: 1926 թ. Ազեզի Ազգային վարժարանի երկսեռ աշակերտության թիվը հասնում էր 45-ի,

---

[326] «Յուսաբեր», թիվ 257, փետրվարի 1, 1935:

[327] Քեշիշեան Կ., նշվ. աշխ., էջ 111:

[328] Ղազարյան Ս., Հայկական փոքր գաղութներ. Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, Բեյրութ, 1965, էջ 138, «Ամէնուն նոր տարեցոյցը», Բեյրութ, 1938, էջ 68, «Հայաստանի կոչնակ», թիվ 10, մարտի 11, 1933, էջ 237, «Յուսաբեր», թիվ 294, մարտի 17, 1931:

[329] Ղազարյան Ս., Հայկական փոքր գաղութներ. Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, էջ 30-40:

1927 թ. 135-ի, 1928 թ. 160-ի[330]: Գ. Գաբենջյանը վկայում է. «Առաջնորդարանի նախաձեռնութեամբ շինութեանը սկսուած Ս. Ս. Աստուածածին եկեղեցին վերջերս լրացաւ, որ կը ծառայէ թէ՛ պաշտամունքի և թէ՛ դպրոցի»[331]: 1928 թ. ամերիկաբնակ քիլիսցիների կողմից ուղարկված հանգանակությունների շնորհիվ ավարտին է հասցվում դպրոցի նոր շենքի կառուցումը:

1923 թ. Բաբկեն եպիսկոպոս Կյուլեսերյանը Հայ ազգային պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանին ուղարկված տեղեկագրում նշում է, որ Ճարապլուսում գործում է ազգային վարժարան. «100-ի մօտ երկսեռ ուսանողներով, որ կը կառավարուի ուսուցչի մը և օգնականի մը միջոցաւ: Վարժարանը իր գոյութիւնը կը պարտի Հ. Բ. Ը. Միութեան: Շէնքը սակայն անյարմար և ուսուցիչք անբաւական են պէտքին…

(Պաշտօնական արգելքներ կան եղեր սակայն վարժարանը բանալու)»[332]: 1924 թ. կառուցվում է հայ ազգային վարժարանի փայտաշեն շենքը: Նույն թվականին վարժարան էր հաճախում 100, 1926 թ. 110, 1929 թ. 130, 1933 թ. 250 աշակերտ[333]: Վարժարանը գործել է մեծ դժվարությամբ, ժամանակակցի վկայությամբ. «Կանոնաւոր շէնքեր կը պակսին այս դպրոցներուն համար: Ուսուցիչներու ամսաթոշակներն ալ կը հայթայթուին մեծ դժուարութեամբ»[334]:

1920-1930-ական թթ. Դամասկոսում գործել է 10 վարժարան, որից մի քանիսը քաղաքական անկայուն իրավիճակի հետևանքով կարճ կյանք են ունեցել: 1920-ական թթ. վերջին Դամասկոսի հայ համայնքի վարժարանների

---

[330] «Եփրատ», թիվ 34, հոկտեմբերի 29, 1927; թիվ 77, ապրիլի 4, 1928, «Սուրիական մամուլ», թիվ 527, փետրվարի 15, 1926:
[331] «Տաթև» կրօնական տարեցոյց, 1926, էջ 312:
[332] Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, էջ 419:
[333] Ֆիշենկճյան Ա., Ճարապլուս (սկիզբէն՝ 1920էն մինչև յիսունական թվականներ), «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2, 2005, էջ 231, «Արեւ», թիվ 4357, մայիսի 15, 1933, «Հայաստանի կոչնակ», թիվ 6, փետրվարի 7, 1925, էջ 183:
[334] ՄՄ, Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 8, վավ. 24/11 (մամուլի կտրոն), թ. 1:

բյուջեն կազմել է մոտ 800 օսմանյան ոսկի, որը գոյացել է աշակերտական վարձավճարներից, կրթական նպաստներից և պատահական նվիրատվություններից[335]: Մինչև Ջեբել Դրուզի ապստամբությունը Դամասկոսում գործում էին հետևյալ դպրոցները՝ Հայ ազգային վարժարանը, «Այնթապցիների կրթասիրաց վարժարանը» և «Հայ յառաջդիմասէր վարժարանը»:

Հայ ազգային երկսեռ վարժարանը հիմնվել է 1898 թ. Ս. Սարգիս եկեղեցու շրջափակում «Ազգային Թարգմանչաց դպրոց» անվամբ: Մինչև 1929 թ. Ս. Սարգիս եկեղեցին գտնվել է Երուսաղեմի պատրիարքության հոգևոր ենթակայության ներքո: Վարժարանը ընդհատումներով գործել է մինչև 1915 թ., վերաբացվել 1922 թ.: Նշված ժամանակաշրջանում ունեցել է շուրջ 500 աշակերտ: Ա. Ղարիբը նշում է, որ 1927/1928 ուսումնական տարում վարժարանում առաջին անգամ ձեռնարկվեց արաբերենի ուսուցումը[336]:

1923 թ. հիմնվել է «Այնթապցիների կրթասիրաց վարժարանը», սակայն երկու տարի անց սույն կրթական հաստատությունը փակվել է[337]: 1924 թ. հիմնվել է «Հայ յառաջդիմասէր վարժարանը»[338], որը համալրվել է աշակերտների վարձավճարների և պատահական նվիրատվությունների արդյունքում[339]:

Հայտնի էին նաև Դամասկոսի Գատեմ գաղթականական թաղամասի հայ առաքելական և ավետարանական ծաղկոց-

---

335 «Որբաշխարհիհի աստղը», թիվ 1, մարտ, 1929, էջ 803:

336 Ղարիպ Ա., նշվ. աշխ., էջ 20, Ֆիշենկճյան Ա., Սիւրիահայ կրթական հաստատութիւնները 1920-1980 թթ., «Կանթեղ», թիվ 1, 2003, էջ 156, «Արև», թիվ 27, հուլիսի 5, 1924, թիվ 1885, մայիսի 8, 1925, «Հայաստանի կոչնակ», թիվ 5, փետրվարի 2, 1924, էջ 146, «Հասկ», թիվ 5-6, մայիս-հունիս, 1935, էջ 70, «Յուսաբեր», թիվ 11, ապրիլի 28, 1925, թիվ 301, մարտի 26, 1930, թիվ 285, մարտի 6, 1931, թիվ 272, փետրվարի 18, 1936, «Սուրիական ալպոմ», թիվ 3, 1929, էջ 114, «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 257, «Փիւնիկ», թիվ 76, դեկտեմբերի 10, Բեյրութ, 1924:

337 «Լիբանանահայ պատկերազարդ օրացույց 1936», էջ 105:

338 «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 257:

339 «Արև», թիվ 1885, մայիսի 8, 1925:

մանկապարտեզները 60 աշակերտով[340]: 1929 թ. Սալիհիե թաղամասում հիմնվում է մանկապարտեզ 100 աշակերտով, որը 1934 թ. դառնում է նախակրթարան: Հայ առաքելական ծաղկոցների բացման գործում նյութական և բարոյական աջակցություն է ցուցաբերել Կիլիկիո կաթողիկոսությունը[341]: 1929 թ. Դամասկոսում գործել են Ազգային միացյալ և Ազգային Սահակյան վարժարանները. առաջինը հիմնվել է Լ. Փոթուքյանի և երեսփոխան Մ. Տեր-Գալուստյանի, իսկ երկրորդը՝ ՀԲԸՄ-ի օժանդակությամբ[342]: Միացյալ վարժարանը ունեցել է շուրջ 100 աշակերտ[343] և հովանավորվել է Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության կողմից[344]: 1930-ական թթ. վարժարանի հոգաբարձության նախաձեռնությամբ կազմակերպվել է ժողովրդական լսարան: Կիրակի կեսօրից հետո լսարանում անցկացվել են արդիական թեմաներով դասախոսություններ[345]: Սահակյան վարժարանի հոգաբաձությունը սկզբնական շրջանում 10 սենյականոց շենք է վարձակալել,իսկ արդեն 1934/1935 ուսումնական տարում ուներ 100 աշակերտ[346]: Նշված ժամանակաշրջանում Սահակյան վարժարանի շրջանավարտ է եղել սփյուռքահայ ականավոր մանկավարժ Գ. Շահինյանը:

1930-ական թթ. են հիմնվում Բաբկենյան մանկապարտեզը 4 դասարանում ունենալով 80 աշակերտ, 2 պաշտոնյա, ինչպես նաև Մարաշցիների վրանաքաղաքի մանկապարտեզը[347]:

1932 թ. մարտի 8-14-ին տեղի ունեցած եպիսկոպոսական ժողովի ընթացքում որոշվեց Դամասկոսի թեմի ենթակայության

---

340 «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 257:
341 «Լիբանան», թիվ 19, հունիսի 15, 1924:
342 «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 524:
343 Դամասկոսի միացեալ վարժարանի քսանհինգամեայ յոբելեան. 1929-1954, էջ 22, «Լիբանան», թիվ 546, մարտի 28, 1931, «Հայաստանի կոչնակ», թիվ 10, մարտի 7, 1936, էջ 237, «Յուսաբեր», թիվ 261, փետրվարի 6, 1930:
344 Շահինեան Գ., նշվ. աշխ., էջ 23, «Արեւ», թիվ 4045, մայիսի 11, 1932:
345 «Յուսաբեր», թիվ 295, մարտի 19, 1935:
346 «Հայաստանի կոչնակ», թիվ 48, նոյեմբերի 29, 1930, էջ 1530:
347 «Արեւ», թիվ 3785, հուլիսի 9, 1931:

տակ առնել Համայի, Հոմսի և Սելիմիեի շրջանները[348]: Դամասկոսի թեմի կազմում հիշատակվում են նաև Մեզզե, Կունետրա և Թրաա բնակավայրերը: Թրաա բնակավայրում ապրում էր 100 հայ ընտանիք: 1929 թ. հիմնվել էր մանկապարտեզ[349]: 1934 թ. Մեզզեի վարժարանում սովորում էր 24, Կունետրայի վարժարանում 21, Թրաայի վարժարանում 18 աշակերտ[350]: 1935 թ. Դամասկոսի թեմի վիճակագրությունը հետևյալ պատկերն ուներ.

| *Կրթական հաստատություն* | *Աշակերտության թիվը* | *Պաշտոնյաների թիվը* |
|---|---|---|
| Ս. Թարգմանչաց ազգ. վարժարաններ | 450 | 16 |
| Սահակեան ազգ. վարժարան | 150 | 6 |
| Բաբգէնեան մանկապարտեզ | 100 | 3 |
| Քունէթրա – Նուպարեան վարժարան | 37 | 1 |
| Տրաա – Ռուբինեան վարժարան | 20 | 1 |
| Մէզզէ – Սիսուան վարժարան | 40 | 1 |
| Սուէյտա – Ներսէսեան վարժարան | 55 | 2 |
| Հոմս – Սահակեան վարժարան | 130 | 5 |
| Համա – Մարկոսեան վարժարան | 37 | 1 |
| Սէլիմիյէ – Գազանճեան վարժարան | 36 | 1 |
| *Ընդամենը* | *1055* | *37*[351] |

348 Տէմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 319:
349 «Հայաստանի կոչնակ», թիվ 44, նոյեմբերի 1, 1930, էջ 1403:
350 «Հասկ», թիվ 2, փետրվար, 1934, էջ 16:
351 «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», էջ 51, «Հասկ», թիվ 5-6, մայիս-հունիս, 1935, էջ 70:

1920-1930-ական թթ. Սուետիայում գործել է 6 ազգային վարժարան, որոնց տարեկան գործունեությունն ամփոփված է վիճակացույցերում[352]:

1921 թ. Բիթիասում, Յողուն Օլուքում, Խըդր Բեկում, Վակըֆում և Քաբուսիեում գործում էին նախակրթարաններ «Սիսուան» անվամբ, որոնք աջակցություն էին ստանում ՀԲԸՄ-ից: 1922 թ. վեց դպրոցում սովորում էր 679 աշակերտ, «Սիսուան» վարժարաններում դասավանդում էր 17 ուսուցիչ[353]:

Վարժարաններում ուսանում էին հայերեն, ֆրանսերեն, կրոնագիտություն, պատմություն, թվաբանություն, աշխարհագրություն, գծագրություն, մարմնամարզություն, երգեցողություն և ձեռագործ: Դպրոցների բացմանը նպաստել է Ե. Կարիկյանը, իսկ ֆրանսիական կառավարությունը, ըստ «Սուրիական մամուլի», «...պիտի վճարէ գումար մը ֆրանսերէնի ուսուցիչներու ամսականները հոգալու համար»: 1924 թ. «Սիսուան» վարժարաններին գումար էին հատկացնում ՀԲԸՄ-ը, ֆրանսիական իշխանությունները: Վակըֆ գյուղում վարժարանի բացմանը նպաստել են Խ. Մատուռյանը և Խ. Կեոզջյանը[354]:

1922 թ. բացվում է Հոմսի ազգային վարժարանը, որտեղ 1926 թ. սովորում էր 110, 1927 թ. 100, 1932 թ. 100 աշակերտ[355]: Դասավանդվում էին գրեթե բոլոր առարկաները, առանձնապես կարևորվում էին հայերենը, ֆրանսերենը, արաբերենը, երաժշտությունը և մարմնամարզությունը[356]: 1927 թ., իբրև նպաստ, վարժարանը ՀԲԸՄ-ից ստանում է 20

---

[352] «Հայաստանի կոչնակ», թիվ 15, ապրիլի 11, 1925, էջ 471, «Յուսաբեր», թիվ 205, նոյեմբերի 29, 1929, թիվ 249, հունվարի 23, 1935, «Սուրիահայ տարեցոյց», 1924-1925, էջ 241:

[353] «Միութիւն», թիվ 86, մարտ-ապրիլ, 1922, էջ 26; «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 241-243:

[354] «Արարատ», թիվ 80, մարտի 4, 1938, «Յուսաբեր», թիվ 66, սեպտեմբերի 4, 1924, «Սուրիական մամուլ», թիվ 14, մարտի 19, 1922:

[355] «Արեւ», թիվ 4095, հուլիսի 8, 1932, «Եփրատ», թիվ 49, դեկտեմբերի 21, 1927, «Հայաստանի կոչնակ», թիվ 36, սեպտեմբերի 3, 1932, էջ 916:

[356] «Եփրատ», թիվ 285, մայիսի 3, 1930:

անգլիական ոսկի, ամերիկաբնակ Այնթապցիների միությունից՝ 23 անգլիական ոսկի, Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեից՝ 100 սիրիական ոսկի, և այդքան էլ ֆրանսիական իշխանություններից. «...պակասն ալ կը հայթայթեն ներկայացումներով, գանձանակով եւ այլն»[357]:

1922 թ. բացվել է Լաթակիայի Սուրբ Հակոբյանց վարժարանը՝ սկզբնական շրջանում գործելով համանուն եկեղեցում: Մինչև 1929 թ. Լաթակիայի Ս. Հակոբյանց վանքը գտնվել է Երուսաղեմի պատրիարքության հոգևոր ենթակայության ներքո: 1922 թ. վարժարանում սովորում էր 165, 1925 թ. 200, 1928 թ. 250 աշակերտ[358]: Ֆրանսիական իշխանությունները տրամադրում էին տարեկան 2.000 ֆրանկ գումար: Կարևոր էր նաև երկու այցելու ուսուցչի տրամադրումը արաբերեն և ֆրանսերեն դասավանդելու համար[359]: 1929 թ. վարժարանի տնօրինության կողմից Լաթակիայի թաղական խորհրդին ուղղված տեղեկագիրը տվյալներ է պարունակում վարժարանի կարգերի և աշակերտների թվի մասին.

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Ե | 2 | 9 | 11 |
| | Դ | 9 | 8 | 17 |
| | Գ | 10 | 12 | 22 |
| | Բ | 10 | 18 | 28 |
| *նախակրթարան* | Ա | 17 | 23 | 40 |
| | Գ | 14 | 16 | 30 |
| | Բ | 20 | 30 | 50 |
| *մանկապարտեզ* | Ա *դասարան* | 20 *աղջիկ* | 19 *մանչ* | 39 |
| *ընդամենը* | | *102* | *135* | *237*[360] |

[357] «Լիբանան», թիվ 280, մարտի 24, 1927:
[358] Տունկեան Գ., Նիւթեր Լաթաքիոյ եւ շրջակայքի հայ ազգաբնակչութեան պատմութեան, Հալեպ, 1983, էջ 17, 51, «Յուսաբեր», թիվ 88, հուլիսի 13, 1929, «Լիբանան», թիվ 218, օգոստոսի 10, 1926, «Հայաստանի կոչնակ», թիվ 20, մայիսի 20, 1922, էջ 672, թիվ 2, հունվարի 14, 1928, էջ 58, «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 216-220:
[359] «Սիւրահայ տարեգիրք», 1929, էջ 138-139:
[360] ՀԱԱ, ֆ. 1421, ց. 1, գ. 154, թ. 1:

Լաթակիայի շրջանում էին գտնվում Արամո և Ղընեմիե հայաբնակ գյուղերը: Այս գյուղերի բնակիչները մեծ ջանքեր են գործադրել հայ ինքնությունը պահպանելու, մայրենի լեզուն չմոռանալու համար, քանզի նրանց շրջանում հնուց տարածված էր արաբախոսությունը: 1932 թ. Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանի աթոռակից Բաբկեն Ա Կյուլեսերյանը, այցելելով այս գյուղեր, մեծ հիացմունք է ապրում տեսնելով նորաբաց դպրոց հաճախող և հայերեն խոսող մանուկների[361]:

1923 թ. բացվում է Համայի ազգային վարժարանը, որտեղ առաջին տարում սովորում էր 32, 1925 թ.՝ 41, 1930 թ. 30 աշակերտ[362]: Դասավանդվում էին հայերեն, ֆրանսերեն լեզուներ: Վարժարանը արտոնագրված էր ֆրանսիական իշխանությունների կողմից և 1924 թ. 30 օսմանյան ոսկու չափով նպաստ էր ստացել Մերձավոր Արևելքի ամերիկյան նպաստամատույց կոմիտեից[363]:

1929 թ. բացվել է Սելիմիեի ազգային վարժարանը[364], որը գործել է ընդհատումներով: 1930 թ. վարժարանում սովորում էր 20, 1937 թ. 40 աշակերտ[365]:

1933 թ. Արամո գյուղում գործում էր Սուրբ Մեսրոպյան վարժարանը: 1933 թ. Ղընեմիեի Եփրեմյան ազգային վարժարանում սովորում էր 25 աշակերտ[366], որը ևս գործել է ընդհատումներով: 1929/1930 ուսումնական տարվա դասացուցակը պատկերացում է տալիս վարժարանում դասավանդվող առարկաների մասին.

---

361 Տէմիրճեան Վ., նշվ. աշխ., էջ 245:

362 «Եփրատ», թիվ 294, հունիսի 4, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 20, մայիսի 19, 1923, էջ 642, թիվ 22, մայիսի 31, 1924, էջ 695, թիվ 7, փետրվարի 12, 1927, էջ 217, «Յուսաբեր», թիվ 11, ապրիլի 28, 1925:

363 «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 239:

364 «Արեւ», թիվ 3897, նոյեմբերի 17, 1931:

365 Նույն տեղում, թիվ 5627, հուլիսի 5, 1937, «Եփրատ», թիվ 313, օգոստոսի 9, 1930:

366 «Եփրատ», թիվ 583, ապրիլի 28, 1933:

| Դասաժամ | երկուշաբթի | երեքշաբթի | չորեքշաբթի | հինգշաբթի | ուրբաթ | Շաբաթ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | հայերեն | կրոնագիտ. | ֆրանսերեն | Հայերեն | կրոնագիտ. | Ուսումն չկայ |
| 2 | կրոնագիտ. | | թվաբան. | | հայերեն | |
| 3 | արաբերեն | հայերեն | արաբերեն | թվաբան. | արաբերեն | |
| 4 | թվաբան. | | կրոնագիտ. | | թվաբան. | |
| 5 | ֆրանսերեն | թվաբան. | հայերեն | կրոնագիտ. | ֆրանսերեն | |
| 6 | Երգ | երգ | երգ | երգ | երգ[367] | |

1929 թ. Ջըսըր Շուղուրի ազգային վարժարանում գործել են մանկապարտեզ և նախակրթարանի առաջին երկու կարգ: Աշակերտության թիվը կազմել է 15-25, պաշտոնավարել է մեկ ուսուցչուհի[368]: Վարժարանի մասնաճյուղը գործել է նաև Ընկզիկ գյուղում:

Այս տարածքի երկու կարևոր հայաբնակ գյուղերն էին Յագուպիեն և Գընիեն. առաջինը մեծ ջանքերի գնով կարողացավ պահպանել հայ ինքնությունը, Հայ Առաքելական եկեղեցու հանդեպ ունեցած հավատքը, իսկ երկրորդի բնակիչները դարձան լատինածես կաթոլիկներ և մոռացան հայերենը: 1923 թ. Յագուպիեիում հիմնվել է Ազգային Վերածնունդ վարժարանը, որը 1930 թ. սկսել է անխափան գործել 1932/1933 ուսումնական տարում ունենալով 85 աշակերտ[369]:

Արֆալիի ազգային Մեսրոպյան վարժարանը նպաստ էր ստանում ՀԲԸՄ-ից և ուներ 20 երկսեռ աշակերտ, 1 ուսուցիչ[370]:

1923 թ. Սահակ Բ Խապայյան կաթողիկոսը Հայ տարագիրների ամերիկյան կենտրոնական նպաստամատույց մարմնին ուղղված նամակներից մեկում նկարագրում է

---

[367] ՀԱԱ, ֆ. 1421, ց. 1, գ. 125, թ. 6:

[368] Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուձի հովիտի հայերը, Անթիլիաս, 2006, էջ 167:

[369] Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուձի հովիտի հայերը,, էջ 196-197, նույնի, Ծագումով հայ լատինները Սուրիոյ մէջ, «21-րդ դար», թիվ 2, 2012, էջ 71-72, «Գեղարդ» սուրիահայ տարեցոյց, գ. Բ, էջ 368:

[370] Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուձի հովիտի հայերը, էջ 165:

Թարթուս ավանում հաստատված մոտ 200 հայի վիճակը. «...մարդակերպ, նիհար, դալկահար, քուրջերու մէջ պարտկուած. ոմանք բոբիկ, ոմանք գլխաբաց, օրական չորաբեկ հացով գոհացողներ...»[371]: 1929 թ. Թարթուսում բնակվում էր 28 հայ ընտանիք, գործում էր ազգային վարժարան[372]:

1921-1924 թթ. Քեսաբում Հայ առաքելական ու ավետարանական համայնքները Ազգային Միության շրջանակներում ունեին երկու Միացյալ վարժարան տղաների և աղջիկների համար: Երկպառակությունների արդյունքում, սակայն, Միացյալ վարժարանները փակվում են և վերաբացվում ազգային ու ավետարանական անջատ դպրոցների տեսքով. «...մէկ կողմէ լուսաւորչական կրօնական պետերու անհեռատեսութիւնը և վանողական վերաբերումը, նոյն համայնքի մէջ ծայր տուած ներքին թայֆայական կռիւներն ու պայքարները, իսկ միւս կողմէ, միացեալ վարժարանը պահելու պարագային, միսիոնարութեան կողմէ բողոքական համայնքին տրուած նիւթական նպաստը դադրեցնելու սպառնալիքը, պատճառ կ'ըլլան, որ իւրաքանչիւր համայնք բանայ իր վարժարանը»[373]: Այդպիսով, իրենց դռներն են բացում հայ առաքելական, հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանները: 1920-ական թթ. Քեսաբում և շրջակա գյուղերում բացվեց 11 վարժարան[374], որոնք գործել են ընդհատումներով: 1935 թ. վիճակագրական տվյալների համաձայն Քեսաբում գործում էր 7 ազգային վարժարան 12 կրթական պաշտոնյայով և 325 աշակերտով[375]:

---

[371] «Հայաստանի կոչնակ», թիվ 46, նոյեմբերի 17, 1923, էջ 1459:
[372] ՀԱԱ, ֆ.1421, ց. 1., գ. 117, թ. 6, «Հայաստանի կոչնակ», թիվ 48, նոյեմբերի 29, 1930, էջ 1530:
[373] Չոլաքեան Յ., Քեսապ, հ. Ա, Հալեպ, 1995, էջ 245, «Հայաստանի կոչնակ», թիվ 14, ապրիլի 2, 1921, էջ 17, «Յուսաբեր», թիվ 10, ապրիլի 11, 1935:
[374] Չոլաքեան Յ., Քեսապ, հ. Ա, էջ 243-391, «Արեւ», թիվ 3855, սեպտեմբերի 29, 1931, «Յուսաբեր», թիվ 256, հունվարի 31, 1930, թիվ 133, սեպտեմբերի 7, 1931:
[375] «Յուսաբեր», թիվ 21, ապրիլի 25, 1935:

Քեսաբի ազգային Սահակյան վարժարանը հիմնվել է 1848 թ.: 1915 թ. դպրոցը փակ է եղել և վերաբացվել 1924 թ.: 1924-1938 թթ. գործել է նաև Ուսումնասիրաց ընկերության երկրորդական վարժարանը[376]:

1927-1928 թթ. Ալեքսանդրետում գործում էր Ազգային երկսեռ վարժարան 180 երկսեռ աշակերտով, պաշտոնավարում էր 9 ուսուցիչ[377], 1930 թ. մոտ 190 աշակերտ և 7 ուսուցիչ[378]: Այս քաղաքում առավել հայտնի էր 1922 թ. հիմնված և ՀԲԸՄ կողմից ֆինանսավորվող Նուբարյան վարժարանը, որի թիվը 300-350 էր: 1927 թ. աշակերտության թիվը կազմել է 297, որից 112-ը հաճախում էին նախակրթարան, իսկ 185-ը մանկապարտեզ, 1930 թ. ուներ 365 աշակերտ, դասավանդում էր 7-8 ուսուցիչ: 1937 թ. Ալեքսանդրետի սանջակում հայերն ունեին 34 ազգային վարժարան[379]:

1926 թ. Բեյլանում գործում էր ազգային վարժարան[380], իսկ 1928-1929 թթ. երեք հարանվանության մասնակցությամբ հիմնվում է նաև ազգային Միացյալ վարժարան[381], որի գործունեությունը կազմակերպված բնույթ էր կրում: Այս վարժարանում աշակերտության թիվը նախ 50, ապա 100 է դառնում, 1930 թ. 75[382]: Պաշտոնավարում էին երկու ուսուցիչ և մեկ վարժուհի: Վարժարանն ուներ երկամյա նախապատրաստականի և եռամյա նախակրթարանի դասընթացներ[383]: Ե. Քասունին նշում է, որ ֆրանսիական մանդատային իշխանութ-

---

376 «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Գ, էջ 281:
377 «Սուրիական ալպոմ», 1929, էջ 112:
378 «Որբաշխարհի աստղը», թիվ 5, հուլիս, 1930, էջ 1075:
379 Գուշագճեան Մ., Մուսա լերան հայկական գաղթօճախը. 1875-1939, Բեյրութ, 1988, էջ 150, Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 277, «Արև», թիվ 51, օգոստոսի 25, 1922, «Եփրատ», թիվ 256, հունվարի 18, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 31, օգոստոսի 4, 1928, էջ 987, «Հունահայ տարեգիրք», 1929, էջ 328, «Միութիւն», թիվ 87, մայիս-հունիս, 1922, էջ 47, թիվ 118, հուլիս-օգոստոս, 1927, էջ 56:
380 «Տաթև» կրօնական տարեցոյց, 1926, էջ 308:
381 «Արեւ», թիվ 3880, հոկտեմբերի 28, 1931:
382 Խրլոբյան Տ., Ոսկեմատեան, հ. Ա, Բեյրութ, 1950, էջ 321, «Եփրատ», թիվ 291, մայիսի 24, 1930:
383 «Նոր աւետաբեր», թիվ 26, նոյեմբերի 24, Բեյրութ, 1928:

յունները ու ՀԲԸՄ-ն նպաստել են վարժարանի գործունեությանը: Միացյալ վարժարանը գործեց մինչև 1931 թ.[384], սակայն ընդմիջումը երկար չտևեց. 1935/1936 ուսումնական տարում երեք հարանվանության ներկայացուցիչ դարձյալ վերականգնեցին նրա գործունեությունը[385]:

1920-ական թթ. **Կերեկխանում** գործող պետական վարժարանը հովանավորվում էր պետական գանձարանից, այստեղ դասավանդվում էին արաբերեն, ֆրանսերեն [386]: 1924 թ. Կերեկխանի ազգային վարժարանում սովորում էր 70, 1927թ. 210, 1929 թ. 200 աշակերտ[387]: 1931 թ. վարժարանի համար կառուցվում է նոր շենք[388]:

Դեր Զորի դպրոցը մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններով բացվել է ՀԲԸՄ օժանդակությամբ և 1927 թ. ունեցել է 40, 1929 թ. 55, 1932 թ. 100, 1935 թ. 95 աշակերտ[389]: Հալեպի Ազգային առաջնորդարանի վիճակագրական տվյալների համաձայն Դեր Զորում եկեղեցու և դպրոցի շենք չի եղել: Փոխարենը դասավանդումներն անցկացվել են վարձակալած տանը, որը ծառայել է նաև որպես եկեղեցի[390]: Դեր Զորի Նահատակաց վարժարանի շենքի կառուցմանը մեծապես նպաստել է եգիպտահայ բարերար Բ. Պալըգչյանը: 1931 թ. դեկտեմբերի 7-ին տեղի է ունեցել վարժարանի նոր շենքի բացման արարողությունը[391]:

1926 թ. հանգանակություն է կատարվել **Սողուկ-Օլուքում** դպրոց կառուցելու համար[392]: 1920-ական թթ. վերջին **Սողուկ-Սուում** հիմնվել է դպրոց: 1930 թ. ավարտվել է դպրոցի

---

[384] Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 495, 497:

[385] «Հայաստանի կոչնակ», թիվ 9, փետրվարի 29, 1936, էջ 207:

[386] «Սուրիական մամուլ», թիվ 328, հոկտեմբերի 30, 1924:

[387] Փաշայան Ա., Հարությունյան Լ., նշվ.աշխ., էջ 147, «Սուրիական մամուլ», թիվ 328, հոկտեմբերի 30, 1924:

[388] «Յուսաբեր», թիվ 19, ապրիլի 24, 1931:

[389] «Հայաստանի կոչնակ», թիվ 35, օգոստոսի 31, 1929, էջ 1114, թիվ 3, հունվարի 16, 1932, էջ 90, թիվ 18, մայիսի 4, 1935, էջ 422, «Յուսաբեր», թիվ 158, հոկտեմբերի 5, 1927, թիվ 34, մայիսի 11, 1929:

[390] «Տաթև» կրօնական տարեցոյց, 1929, էջ 386:

[391] «Արեւ», թիվ 3939, հունվարի 6, 1932:

[392] «Հայաստանի կոչնակ», թիվ 38, սեպտեմբերի 18, 1926, էջ 1337:

քարաշեն շենքի կառուցումը[393]: «Սուրիական ալպոմ»-ում հիշատակություն կա այն մասին, որ 1928 թ.-ին Թել-Սամեն գյուղում «...ժողովուրդը կը զբաղի երկրագործութեամբ: Ունի իր դպրոցը»[394]: 1929 թ.-ին դպրոց էր հաճախում 30 աշակերտ[395]: Թել-Արմենից և Թել-Սամենից ոչ հեռու հիմնված է **Խարբերդ-Պետրոս** գյուղում 3. Լեփսիուսի աջակցությամբ Խ. Հակոբյանը 1929 թ. հիմնում է կիրակնօրյա դպրոց: 1934 թ. կառուցվում է Թինեհի դպրոցը[396]: 1928 թ. **Ռաքքայի** Ազգային վարժարանում սովորում էր 70 աշակերտ[397]: **Թել-Աբիաթ** բնակավայրում նույնպես գործում էր Հայ ազգային վարժարան[398]: 1933 թ. **Ռաս ուլ Այնի** վարժարանի աշակերտների թիվը հասնում էր 95-ի, 1935 թ. 75-ի[399]: 1930-ական թթ. սկզբին կառուցվում է Կամիշլիի ազգային վարժարանը: 1935 թ. աշակերտության թիվը կազմում էր 270[400]: 1929 թ. **Հասիչիեում** Հ. Կարայաղուբյանի նախաձեռնությամբ կազմակերպված ազգային վարժարանում սովորում էր 35, 1937 թ. 50-60 աշակերտ[401]: 1930 թ. **Ռիհանիե** բնակավայրի վերաբերյալ «Եփրատ» թերթում նշված է. «Մեր նորահաստատ մանկապարտէզը ունի 25 երկսեռ աշակերտ, իսկ մնացեալ մեծամասնութեան համար կան աղջկանց վարժարանէն զատ մանչերու **րիւշտիյէ** մը որուն ֆրանսերէնի ուսուցիչն է Վահան Քէշկէկեանը: Այս երկու վարժարանաց աշակերտներուն թիւն է

---

[393] Նույն տեղում, թիվ 14, ապրիլի 5, 1930, էջ 440:
[394] «Յուսաբեր», թիվ 224, դեկտեմբերի 21, 1928, «Սուրիական ալպոմ», 1929, էջ 109:
[395] «Յուսաբեր», թիվ 239, հունվարի 10, 1929:
[396] Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 428, 441, 484:
[397] «Յուսաբեր», թիվ 224, դեկտեմբերի 21, 1928:
[398] «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 524; «Յուսաբեր», թիվ 251, հունվարի 26, 1932:
[399] «Հայաստանի կոչնակ», թիվ 37, սեպտեմբերի 16, 1933, էջ 885, թիվ 35, օգոստոսի 31, 1935, էջ 836:
[400] Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 404, «Եփրատ», թիվ 575, մարտի 28, 1933, «Յուսաբեր», թիվ 262, փետրվարի 7, 1935:
[401]«Արեւ», թիվ 5615, հունիսի 21, 193,; «Եփրատ», թիվ 293, մայիսի 31, 1930:

100»[402]: Ալեքսանդրետի մոտ գտնվող Ագ չայ գյուղի վարժարանում 1930 թ. սովորում էր 34, Աթըգում 42 աշակերտ[403]: 1933 թ. Հալեպի ազգային առաջնորդարանի կողմից պատրաստված վիճակագրության համաձայն Սողուք-Օլուք գյուղում սովորել է 106, Աթըգում 40, Բեյլանում 119, Կերեկխանում 315, Սողուք-Սու-ում 42, Չաթալ-Թեփեում 21 աշակերտ[404]:

1936 թ. Դեր-Զորի ազգային վարժարանի ուսուցիչ Գ. Լությանի հաղորդմամբ Տեր-Զորի վարժարանում սովորում էր 80, Կամիշլիի վարժարանում 400, Հասիչիեի վարժարանում 90, Տերիկի վարժարանում 100, Վանիկի վարժարանում 60, Ռաքքայի վարժարանում 80, Թել-Աբիաթի վարժարանում 100 աշակերտ[405]: 1931 թ. Թել Բրագ գյուղի միացյալ վարժարանն ուներ 3 բաժին, որից յուրաքանչյուրում դասավանդում էր մեկ ուսուցիչ: Աշակերտների թիվը 138 էր[406]: Թվով մոտ 100-120 հայ երեխա սովորում էր ամերիկյան դպրոցում (American Presb. Mission School) և Դամասկոսի համալսարանում: Վերջինս մինչև 1946 թ. Սիրիայի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն էր[407]:

Փաստորեն, 1920-1930-ական թթ. սիրիահայ համայնքը կրթության կազմակերպման գործում լուրջ հաջողություններ արձանագրեց ոչ միայն Հալեպում, այլև մյուս հայաշատ բնակավայրերում: Սիրիայի տարածքում գործող Կիլիկիո կաթողիկոսության թեմերը ոչ միանգամից կարողացան լիակատար վերահսկողություն սահմանել և նյութապես օժանդակել նորաբաց վարժարաններին: Հայ ազգային վարժարաններում

---

[402] «Եփրատ», թիվ 286, մայիսի 7, 1930:
[403] Նույն տեղում, թիվ 289, մայիսի 17, 1930, թիվ 290, մայիսի 21, 1930:
[404] «Հայաստանի կոչնակ», թիվ 16, ապրիլի 22, 1933, էջ 381, «Սարկաւագին եգիպտահայ տարեցոյցը», Կահիրե, 1935, էջ 47:
[405] «Հայաստանի կոչնակ», թիվ 36, սեպտեմբերի 5, 1936, էջ 855-856:
[406] «Արեւ», թիվ 3782, հուլիսի 5, 1931, «Հայաստանի կոչնակ», թիվ 33, օգոստոսի 15, 1931, էջ 1051, «Յուսաբեր», թիվ 166, հոկտեմբերի 15, 1928, թիվ 64, հունիսի 17, 1935, «Միութիւն», թիվ 146, հունվար, 1931, էջ 11:
[407] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 276, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, էջ 202:

պարտադիր ուսուցանվում էր մայրենին, և դա գլխավոր ձեռքբերումն էր: Մյուս առարկաները դասավանդվում էին հաշվի առնելով համապատասխան ուսուցչի ներկայությունը և նյութական պայմանները: Կրթական կյանքի կազմակերպման գլխավոր թերությունն այն էր, որ վարժարանների տնօրենները մեծամասամբ որոշումներ էին կայացնում անկախաբար և տեղյակ չէին միմյանց գործունեությունից: Ճիշտ է, փաստացի ենթարկվում էին համապատասխան թեմին, բայց սկզբնական շրջանում դա ձևական բնույթ էր կրում: Հալեպում, Դամասկոսում և մյուս հայաշատ բնակավայրերում ավելի մեծ ուշադրություն էին դարձնում վարժարանների գործունեությանը, քան ծայրամասերում: Փոքրիկ գյուղավաններում ու սահմանամերձ շրջաններում հիմված հայ ազգային վարժարանները ավելի շատ տեղի բնակչության նախաձեռնության արգասիք էին, և նրանց հոգածության առարկան էին:

Հայ առաքելական համայնքի հետ հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքների կողմից ևս հիմնվում էին վարժարաններ: Ի տարբերություն հայ ազգային վարժարանների, հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանները հիմնվում էին ոչ բոլոր հայաբնակ վայրերում, քանզի այս համայնքների ներկայացուցիչները շատ հաճախ լինում էին ընդամենը մի քանի տասնյակ ընտանիքներ, և նրանց երեխաները հաճախում էին հայ առաքելական դպրոցներ: Բացի այդ, Հալեպից, Դամասկոսից, Քեսաբից ու Լաթակիայից բացի մյուս վայրերում հայ կաթոլիկները հաստատվել են շատ ավելի ուշ: Հայ ավետարանական վարժարանները օժանդակություն էին ստանում ամերիկյան միսիոներական կազմակերպություններից, հատկապես Արտաքին առաքելությունների ամերիկյան հանձնախմբից (American Board of Commissioners for Foreign Missions), որն ավելի շատ հայտնի էր Ամերիկյան Բորդ անվամբ և 1918 թ. Նյու Յորքում

ստեղծված Հայ Ավետարանչական ընկերակցությունից[408]: Հայ կաթոլիկ վարժարանների գործունեությանը օժանդակում էին Հիսուսյան հայրերի, Ֆրանչիսկյան հայրերի, «Անարատ հղության քույրերի» կազմակերպությունները: Հիսուսյան հայրերը Հալեպի մեջ հիմնեցին 3 վարժարան 500 աշակերտով, վերջիններս աջակցություն էին ստանում Վատիկանից, ֆրանսիական կառավարությունից և կաթոլիկ միաբանություններից[409]: Ճիշտ է, հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանները չէին կատարում այն դերը, որ կատարում էին հայ ազգային վարժարանները, այնուամենայնիվ, նրանց գոյությունը շատ կարևոր էր հայ ազգային վարժարանների կողքին:

1922 թ. Հալեպում հիմնվել է հայ ավետարանական իգական վարժարանը, որը Այնթապի աղջիկների սեմինարիայի շարունակությունն էր: 1926 թ. այն դառնում է բարձրագույն վարժարան[410]: 1924 թ. հիմնվել է հայ ավետարանական արական վարժարանը, որը 1876 թ. Այնթապում հիմնված Կեդրոնական քոլեջի շարունակությունն էր: Վերջինս Սիրիայում ստացավ «Հալեպ քոլեջ» անվանումը[411]: 1927 թ. այս դպրոցի ուսուցիչների կողմից պատրաստված ուսումնական ծրագիրը հաստատեց Մերձավոր Արևելքի հայ ավետարանական եկեղեցիների միության տարեկան ժողովը[412]:

1922 թ. այնթապցի ուսումնասերների միության հովանավորությամբ բացվում է վրանաքաղաքի Այնթապցի ուսումնասերների վարժարանը: Նույն թվականին վարժարանը վրանաքաղաքում ուներ 2 գիշերային և 1 ցերեկային դպրոց[413], այս վարժարանը միջիարանվանական էր: 1927 թ. Հալեպի

---

[408] Աիարոնեան Յ., նշվ. աշխ., էջ 126, 142, «Նոր աւետաբեր», թիվ 4, հունվարի 7, 1928:
[409] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 276, «Եփրատ», թիվ 4, հուլիսի 16, 1927:
[410] Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 494:
[411] Թութիկեան Վ., Հայ աւետարանական եկեղեցին (1846-1996), Դետրոյդ, 1996, էջ 215, «Հայաստանի կոչնակ», թիվ 8, փետրվարի 21, 1925, էջ 244, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, էջ 356-364:
[412] Աիարոնեան Յ., նշվ. աշխ., էջ 96, Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 166:
[413] Քորթոշյան Ռ., նշվ. աշխ., էջ 54:

Վեքիլիե թաղամասում հիմնվում է նույն վարժարանի արհեստանոցը[414], որի աշակերտները հետևում էին փորագրության, դերձակության, կոշկակարության և այլ արհեստների: 1929 թ. այնթապցի ուսումնասերների միության ջանքերով վարժարանի ևս մեկ մասնաճյուղ է բացվում Նոր Գյուղ թաղամասում: Նշված ժամանակաշրջանում վարժարանն ունեցել է 1.000-ից ավել աշակերտ[415]:

1923 թ. հիմնվում է Բեթել վարժարանը, ուր 1928 թ. սովորում էր 375 աշակերտ, դասավանդում 30 ուսուցիչ[416]: Սկզբնական շրջանում երեխաները դասընթացներն անցկացնում էին եկեղեցում, իսկ 1938 թ. սկսվում է դպրոցական շենքի կառուցումը[417]:

1923 թ. բացվում են Էմանուել եկեղեցին և դպրոցը, որտեղից 1924 թ. հայ ավետարանական Ա. Սեֆերյանի ղեկավարությամբ սկիզբ է առնում Հայ եղբայրության եկեղեցին: Այն շուտով առանձնանում է Էմանուել եկեղեցուց հանդես գալով որպես առանձին եկեղեցի ուղղափառ «Կենաց վարժարան» դպրոցով[418]:Այս վարժարաններում 1920-ական թթ. սովորում էր մոտ 1000 աշակերտ: Հայ ավետարանական դպրոցներում դասավանդվում էին. «քրիստոնէական դաստիարակութիւն, տոհմային կրթութիւն, գիտական նիւթեր և չորս լեզուներ»[419]: Այդ լեզուներն էին հայերենը, արաբերենը, ֆրանսերենը, անգլերենը:

Ինչ վերաբերում է հայ կաթոլիկներին, ապա «...1922-ի արտագաղթէն առաջ Սուրիա գտնուող հայ կաթոլիկները, որոնք բաւական հոծ թիւ մը կը ներկայացնէին ժամանակին, և հիմա ապազգայնացած ըլլալով հայ կաթոլիկ ցուցանիշը կը

---

414 «Եփրատ», թիվ 123, սեպտեմբերի 17, 1928:

415 Նույն տեղում, թիվ 288, մայիսի 14, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 4, հունվարի 26, 1929, էջ 118-119, թիվ 35, օգոստոսի 30, 1930, էջ 1110:

416 «Հայաստանի կոչնակ», սեպտեմբերի 22, 1928, էջ 1210-1211:

417 Նույն տեղում, թիվ 31, հուլիսի 30, 1938, էջ 735, «Օշական», թիվ 1-2, հունվար-հունիս, 1988, էջ 45:

418 Թութիկեան Վ., նշվ. աշխ., էջ 155, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, էջ 49:

419 Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 167:

կրեն իրենց վրայ, շատ հաւանաբար հոն ապաստանած են Կիլիկեան թագաւորութեան անկումէն (1375) վերջ»[420]: 1924-1925 թթ. Հալեպում գործող հայ կաթոլիկ դպրոցների թիվը չորսն էր 1.200 աշակերտով, 63 ուսուցչով և 4.000 օսմանյան ոսկի կազմող բյուջեով[421]: 1925 թ. «Սուրիահայ տարեցոյցում» նշված է, որ Հալեպի հայ կաթոլիկ վարժարաններում երկսեռ աշակերտության թիվը հասնում է 1.300-ի, դպրոցների պաշտոնյաների ընդհանուր թիվը՝ 61-ի: Հոդվածագիրը եզրակացնում է, որ եթե այս հաստատություններում հայեցի դաստիարակությունը ավելի խորացված իրականացվեր, ապա վերջիններս կդառնային Հալեպի ամենաարդյունավետ, բյուջեով ու ամենալավ պայմաններով օժտված հայկական կրթօջախները[422]: Հայ կաթոլիկ ոչ բոլոր վարժարաններում էր դասավանդվում հայերենը: Հալեպի հայ կաթոլիկ վարժարանի մասին «Եփրատ» թերթի խմբագիրը նշում է, որ մայրենի լեզուն սովորում են նախ ընտանիքում, ապա վարժարանում, սակայն կաթոլիկների պարագայում վարժարանը չի իրականացնում այդ կարևոր գործառույթը[423]:

1930-ական թթ. Հալեպում գործող ֆրանցիսկյան վարժարան էր հաճախում 350 հայ և 150 տեղացի աշակերտ: Սույն վարժարանում հայերեն չէր դասավանդվում[424]:

1932 թ. Հալեպում գործում էր «Անարատ հղության քույրերի» 4 վարժարան, որտեղ հաճախում էր 940 աղջիկ: 1937/1938 ուսումնական տարում վարժարաններից մեկում սովորում էր 166 աշակերտ[425]:

---

[420] Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 71:

[421] Թոփուզյան Հ., նշվ. աշխ, էջ 275, «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, էջ 416:

[422] «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 316:

[423] «Եփրատ», թիվ 124, սեպտեմբերի 22, 1928, թիվ 137, նոյեմբերի 7, 1928:

[424] «Արեւ», թիվ 4304, մարտի 13, 1933:

[425] «Աւետիք», թիվ 5, հուլիս, 1932, էջ 28, «Օշական», թիվ 1-2, հունվար-հունիս, 1988, էջ 37:

1936 թ. Կրթանես վարդապետ Խանբեկյանի ջանքերով բացվեց Հալեպի հայ կաթոլիկ Մխիթարյան վարժարանը[426]:

1923 թ. Ճարապլուսում արաբ գյուղացուց վարձակալած սենյակում բացվել էր հայ ավետարանական դպրոց, ուր հաճախում էր 67 աշակերտ, պաշտոնավարում մեկ ուսուցչուհի և երկու վարժուհի[427]: Ըստ Ե. Քասունու, 1927-1935 թթ. Ճարապլուսում հայ ավետարանականներից գործել է Հ. Ղարակճյանը իրականացնելով նաև կրթական առաքելություն[428]: Ճարապլուսում հայ կաթոլիկ տղաների վարժարան չի գործել: «Անարատ հղության քույրերի» վարժարանում ուսանել է 100-ից ավելի աշակերտուհի, որից 70-ը հայ, դասավանդվել են հայերեն, ֆրանսերեն, արաբերեն, երգեցողություն և ձեռագործ[429]:

1935 թ. Ազեզում վարձակալված տան մեջ գործում էր դպրոց, ուր հաճախում էր 50 աշակերտ[430]:

1922 թ. Դամասկոսում գործող ավետարանական երկսեռ վարժարանին մեծ օժանդակություն են ցուցաբերում միսիոներները տրամադրելով սենյակ, ինչպես նաև դրամական միջոցներ: 1924 թ. Դամասկոսի հայ ավետարանական եկեղեցուն կից հիմնված վարժարանն ուներ 160-180, 1930 թ. 200 աշակերտ[431]: 1922 թ. Դամասկոսում Գ. Գորդիքյանի ջանքերով բացված հայ կաթոլիկ դպրոցի տղաները որոշ ժամանակ անց հանձնվեցին Հիսուսյան հայրերի կազմակերպության խնամակալությանը[432]: Հայտնի էին նաև 1922 թ. հիմնված Հայ կաթոլիկ օրիորդաց դպրոցը (120

---

[426] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Բ, էջ 400-404, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 525:

[427] Խրլոբյան Տ., Ոսկեանատեան, գ. Ա, էջ 315:

[428] Ղազարեան Ս., Հայկական փոքր գաղութներ: Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, էջ 26-27, Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 510:

[429] «Աւետիք», թիվ 3-4, մարտ-ապրիլ, 1936, էջ 49, թիվ 8, օգոստոս, 1936, էջ 179-180:

[430] Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 509:

[431] Նույն տեղում, էջ 476, 477, «Հայաստանի կոչնակ», թիվ 3, հունվարի 17, 1937, էջ 76, «Նոր աւետաբեր», թիվ 22, սեպտեմբերի 29, 1928:

[432] «Աւետիք», թիվ 7, սեպտեմբեր, 1933, էջ 100:

աշակերտով), Ճիզվիտների ֆրանս-հայկական դպրոցը (120 աշակերտնով) ու Մխիթարյան միաբանության հայկական դպրոցը (100 աշակերտով)[433]: 1930-ական թթ. կեսերին Դամասկոսի հայ ավետարանական և կաթոլիկ կրթական հաստատությունները ՀԲԸՄ-ից 45 սիրիական ոսկու չափով կրթական նպաստ էին ստանում[434]:

1924 թ. կառավարության անցկացրած մարդահամարի տվյալներից պարզ է դառնում, որ Սուեդիայում հաստատվել էր մոտ 380 հայ ավետարանական, 240 հայ կաթոլիկ[435]:

Բիթիաս և Յողուն Օլուք գյուղերում գործում էին հայ ավետարանական վարժարաններ: Բիթիասի հայ ավետարանական վարժարանը հիմնվել է 1920-ական թթ. սկզբին: 1925 թ. վարժարան էր հաճախում 52, 1930 թ. 67, 1936 թ. 115 աշակերտ[436]: Ուներ մանկապարտեզի 2 և նախակրթարանի 5 դասարան[437]: Յողուն Օլուքի հայ ավետարանական վարժարանի հիմնադրման տարին հայտնի չէ[438]: Վարժարանը գործել է մեծ դժվարություններով: 1924 թ. վարժարան է հաճախել 24 աշակերտ[439]:

1935 թ. կազմված վիճակագրությունը վկայում է այն մասին, որ Սուեդիայում գործում էր մեկ կաթոլիկ դպրոց 110 աշակերտով, 3 ուսուցչով[440]: Խոսքը Խըդր Բեկ գյուղի մասին է: Տղաների դպրոց էր հաճախում 70, իսկ աղջիկների դպրոց 50 աշակերտ[441]: 1923 թ. Հոմսի հայ կաթոլիկ վարժարան էր հաճախում 20-25 երեխա[442]: 1920-ական թթ. Հոմսի հայ

---

[433] «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 257:
[434] «Յուսաբեր», թիվ 303, մարտի 28, 1935:
[435] Նույն տեղում, թիվ 78, հոկտեմբերի 2, 1924:
[436] «Եփրատ»,թիվ 303, հուլիսի 5, 1930, «Հայաստանի կոչնակ», թիվ 45, նոյեմբերի 7, 1936, էջ 1070, «Յուսաբեր», թիվ 15, մայիսի 7, 1925:
[437] Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 513, «Հայաստանի կոչնակ», թիվ 34, օգոստոսի 23, 1930, էջ 1083:
[438] Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 345:
[439] «Յուսաբեր», թիվ 99, նոյեմբերի 20, 1924:
[440] Նույն տեղում, թիվ 249, հունվարի 23, 1935:
[441] «Աւետիք», թիվ 1, հունվար, 1936, էջ 15:
[442] «Եփրատ», թիվ 285, մայիսի 3, 1930:

ավետարանական դպրոցը գործել է արաբ ավետարանականների նախակրթարանում՝ որպես հայկական ճյուղ[443]:

1923 թ. սկսած Քեսաբի շրջանի Գարադուրան, Քեոքքիունե, էքիզ Օլուք, Պաղճաղազ գյուղերի հայ ավետարանական վարժարանները բացվել են Ազգային միացյալ վարժարանների փակվելուց հետո[444]:

1925 թ. Քեսաբում Ֆրանցիսկյան միաբանության լատինածես կաթոլիկ հայրերի կողմից կառուցվել են Ս. Միքայել եկեղեցին ու վարժարանը[445]:

1930 թ. Քեսաբում գործում էր 5 ավետարանական, 2 կաթոլիկ վարժարան[446]: Հայ կաթոլիկ ընտանիքների թիվը հասնում էր 80-ի: 1932 թ. Քեսաբի «Անարատ հղության քույրերի» անվճար վարժարանում սովորում էր 120 աշակերտուհի[447]:

Նշված ժամանակաշրջանում Լաթակիայում գործում էր ամերիկական առաքելության դպրոցը, որի տնօրինության կողմից Լաթակիայի հայոց թաղական խորհրդի նախագահ Վահան վարդապետ Գևորգյանին գրված նամակում նշված է, որ ուսումը վճարովի է: Դպրոց ընդունվել ցանկացող աղջիկներին կհանձնվեն գրքեր՝ տարեվերջին վերադարձնելու պայմանով[448]: Լաթակիայում ամերիկացի միսիոներների գործունեության մասին է վկայում նաև Ե. Քասունին. «1924-ին մեծ յոյս կար որ այս կարևոր կեդրոնին մէջ (Լաթակիա - Կ. Ժ.) ուժով Աւետ. եկեղեցի մը պիտի զարգանար: Տեղվոյն Երիցական միսիոնարներն ալ պատրաստ էին ամէն կերպով քաջալերելու այս գործը: Բայց ...1928-ին հոն չկար ո՛չ կազմակերպեալ գործ և ո՛չ կանոնաւոր դպրոց»[449]:

---

443 Խրլոբյան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 450-451, Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 523:
444 Խրլոբյան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 368-371:
445 «Զուարթնոց», թիվ 20, Ձմեռ, 2009, էջ 60:
446 «Յուսաբեր», թիվ 256, հունվարի 31, 1930, թիվ 133, սեպտեմբերի 7, 1931:
447 «Աւետիք», թիվ 5, հուլիս, 1932, էջ 28, 30:
448 ՀԱԱ, ֆ. 1421, ց. 1, գ. 27, թ. 2:
449 Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 517:

Ալեքսանդրետում հայ կաթոլիկները հաճախում էին Ֆրանցիսկյան հայրերի քոլեջ, ուր սովորում էր 300 աշակերտ: Հայ ավետարանական վարժարանը հիմնվել էր 1927 թ. տախտակե խրճիթում, որտեղ պաշտոնավարում էր մեկ ուսուցչուհի[450], իսկ վարժարանի աշակերտների թիվը հասնում էր 40-ի, դասավանդվում էին հայերեն, ֆրանսերեն, անգլերեն[451]: 1928 թ. ավետարանական վարժարանում սովորում էր 35 աշակերտ, պաշտոնավարում էին մեկ վարժուհի և վերջինիս օգնականը[452]: 1923 թ. կաթոլիկ վարժարանն ուներ 2 երկսեռ ուսուցիչ, 30 աշակերտ, դասավանդվում էին հայերեն, ֆրանսերեն, արաբերեն լեզուներ[453]:

Ֆարթըսլը հայաբնակ գյուղի բնակչությունը ամբողջությամբ հայ ավետարանական էր: 1928 թ. հիմնվել է տեղի հայ ավետարանական վարժարանը[454]:

1928 թ. Կըրըկխանի հայ ավետարանական վարժարանում սովորում էր 35 աշակերտ, իսկ հայ կաթոլիկները հաճախում էին հիսուսյանների վարժարան[455]: 1931թ. Բեյլանի ավետարանական վարժարան էր հաճախում 30 աշակերտ, պաշտոնավարում՝ 2 ուսուցչուհի, դասավանդվում էին հայերեն, ֆրանսերեն, անգլերեն [456]: 1939 թ. հիմնվել է Կամիշլիի հայ կաթոլիկ Ս. Հովսեփ վարժարանը, իսկ հայ ավետարանականները գործում էին արաբ ավետարանականների հետ[457]:

Ըստ Կյուրեղ եպիսկոպոս Զոհրաբյանի, Հասաքեի հայ կաթոլիկները հաճախում էին ասորիների դպրոցը: Ասորիները

---

[450] Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 327, «Նոր աւետաբեր», թիվ 26, նոյեմբերի 24, 1928:
[451] «Լիբանան», թիվ 295, ապրիլի 30, 1927:
[452] «Նոր աւետաբեր», թիվ 26, նոյեմբերի 24, 1928:
[453] «Սուրիական մամուլ», թիվ 328, հոկտեմբերի 30, 1924:
[454] Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, գ. Ա, էջ 324, Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 512:
[455] «Աւետիք», թիվ 1, մարտ, 1933, էջ 15, «Նոր աւետաբեր», թիվ 26, նոյեմբերի 24, 1928:
[456] «Արեւ», թիվ 3880, հոկտեմբերի 28, 1931:
[457] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Բ, էջ 372:

անտեսում էին հայերենը և ամեն կերպ ձգտում իրենց ծեսին մասնակից դարձնել հայ պատանիներին[458]:

Փաստորեն, հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանները նույնպես ունեցան իրենց դերակատարումը հայապահպանության գործում: Նրանք հովանավորվում էին օտարազգի կազմակերպությունների կողմից: Այս հաստատություններում շատ հաճախ մոռացության էր տրվում հայերենի ուսուցումը, որը բացասաբար էր ազդում երեխաների ինքնության պահպանության վրա: Այնուամենայնիվ, ոչ բոլոր դեպքերում էին գերակայում օտար լեզուները: Այս հարանվանությունների գործունեությունը կարևոր դեր խաղաց Սփյուռքի սկզբնավորման գործում:

## 2.3. Կրթական հաստատությունները Լիբանանում

Լիբանանում հաստատված գաղթական հայության ջանքերով վարժարաններ են հիմնվում Բեյրութում և մյուս հայաշատ շրջաններում: Ժ. Դանիելյանն ընդգծում է, որ 1920-ական թթ. Լիբանանում հայկական դպրոցների հիմնումը Հայ Առաքելական եկեղեցու, հայ համայնքի ղեկավարության, կրթական պատկան մարմինների և հատկապես հայ ծնողների միասնական գործակցության արդյունք էր[459]:

1920-1930-ական թթ. Բեյրութում գործել է 13 հայկական վարժարան: Լիբանանի վարժարանների տարեկան գործունեությունն ամփոփված է վիճակագրական ցանկերում[460]:

---

458 Զոհրապեան Կ, էջ 306-307:

459 Դանիէլեան Ժ., Լիբանանահայ դպրոցը. թիւեր եւ մտորումներ, էջ 21:

460 «Ամէնուն նոր տարեցոյցը», 1938, էջ 265-268, «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», էջ 75-76; «Հայաստանի կոչնակ», թիվ 9, մարտի 1, 1930, էջ 267, «Յուսաբեր», թիվ 59, հունիսի 11, 1928, «Սուրիական ալպոմ», թիվ 3, 1929, էջ 111:

1927 թ. ՀԲԸՄ Բեյրութի մասնաճյուղի կողմից նպաստ ստացող վարժարաններն էին հետևյալ կրթական հաստատությունները. վրանաքաղաքի վարժարան 700 աշակերտով, 16 կրթական պաշտոնյայով, ստացել է ամսական 5 անգլիական ոսկու չափով նպաստ, Ամանոս վրանաքաղաքի վարժարան 300 աշակերտով, 5 կրթական պաշտոնյայով, ստացել է ամսական 5 անգլիական ոսկու չափով նպաստ, Էշրեֆիեի վարժարան մանկապարտեզի բաժին 66 աշակերտով, 1 ուսուցչուհով, ստացել է ամսական 2 անգլիական ոսկու չափով նպաստ, Անդր-Նահր վրանաքաղաքի վարժարան մանկապարտեզի բաժին 40 աշակերտով, 1 ուսուցչուհով, ստացել է ամսական 3 անգլիական ոսկու չափով նպաստ, Սայդայի վարժարան 2 կրթական պաշտոնյայով, ստացել է ամսական 4 անգլիական ոսկու չափով նպաստ: ՀԲԸՄ վիճակագրության վերջում նշված է, որ Լիբանանի առաջնորդական փոխանորդը խնդրել է ՀԲԸՄ-ից նպաստել Բիքֆայայի վարժարանի գործունեությանը, որտեղ հաստատված է 32 հայ ընտանիք և տեղի դպրոց է հաճախում 20 աշակերտ[461]:

Ինչպես նշում է Բ. Եղիայանը, 1922 թ. աշնանը գրեթե բոլոր գաղթակայաններն ունեին իրենց կանոնավոր-անկանոն մանկապարտեզի ու նախակրթարանի բաժիններով դպրոցները[462]: 1923-1924 թթ. Ե. Տոհմունի և Խ. Աջապահյան առաջնորդական փոխանորդների օրոք կառուցվում են տախտակաշեն եկեղեցիներ և դպրոցներ: Աշակերտության թիվը հասնում է 1.800-ի, կրթական պաշտոնյաներինը 45-ի [463]:

Լիբանանում հիմնված հայրենակցական միություններն օժանդակում էին չունևոր աշակերտներին վճարելով նրանց

---

[461] «Յուշարար», թիվ 119, հոկտեմբեր, 1927, էջ 2489:

[462] Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 229:

[463] «Հայաստանի կոչնակ», թիվ 44, նոյեմբերի 3, 1923, էջ 1403, «Սիւրիահայ տարեգիրք», 1929, էջ 152-156:

տարեվճարները, իսկ Մալաթիայի կրթասերերի միության կողմից բացվել էր գիշերային դպրոց[464]:

Մինչև 1930 թ. Բեյրութում գործում էր 9 վարժարան՝ Ս. Նշան եկեղեցու ազգային վարժարանը, Հայկազյան վարժարանը (Մազրաա թաղամաս), Սահակյան վարժարանը (Մեծ վրանաքաղաք), Մեսրոպյան վարժարանը (Ամանոս վրանաքաղաք), Նուբարյան վարժարանը (Անդր Նահր՝ Թիրո թաղամաս), Լուսինյան վարժարանը (Անդր Նահր՝ Նոր Սիս թաղամաս), Արամյան վարժարանը (Անդր Նահր՝ Սին էլ Ֆիլ թաղամաս), Եփրեմյան վարժարանը (Էշրեֆիե), Թորգոմյան վարժարանը (Հայկաշեն թաղամաս): Արդեն 1940թ. վարժարանների թիվը հասել էր 13-ի: 1930-ական թթ. բացված նոր վարժարաններն էին՝ Ս. Քառասուն մանկանց ազգային վարժարանը (Անդր Նահր՝ Նոր Մարաշ թաղամաս), Աբգարյան վարժարանը (Անդր Նահր՝ Թրատ թաղամաս), Ռուբինյան վարժարանը (Անդր Նահր՝ Ոըմեյլ թաղամաս), Կիլիկյան վարժարանը (Անդր Նահր՝ Նոր Ադանա թաղամաս)[465]:

Բեյրութի ազգային վարժարանը հիմնվել է 1859 թ. Ս. Նշան եկեղեցու շրջափակում, վերաբացվել է 1921/1922 ուսումնական տարում: Մինչև 1929 թ. Ս. Նշան եկեղեցին գտնվել է Երուսաղեմի պատրիարքության հոգևոր ենթակայության ներքո: 1927/1928 ուսումնական տարում Ս. Նշան եկեղեցու ազգային վարժարանում սովորում էր շուրջ 400 աշակերտ, մանկապարտեզի բաժնում՝ 170 աշակերտ, պաշտոնավարել 20 ուսուցիչ, որոնցից 6-ը՝ այցելու[466]: 1924-1929 թթ. Ս. Նշան ազգային վարժարանում Բ, Գ, Դ դասարանների դաստիարակ-ուսուցիչն է եղել Բ. Ժամկոչյանը,

---

[464] Ալպոյաճեան Ա., նշվ. աշխ., էջ 1514, Երեւանեան Գ., նշվ. աշխ., 629, Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատեան ազգային, պատմական, մշակութային եւ ազգագրական, էջ 1039:

[465] Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 394-395, Սարգսյան Ռ., Լիբանանահայ կրթական հաստատությունները (1922-1980-ական թվականներ), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, 1990, էջ 47-53, «Հայաստանի կոչնակ», թիվ 3, հունվարի 19, 1929, էջ 75, «Ամէնուն նոր տարեցոյցը», 1938, էջ 265-268, «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», էջ 75-76:

[466] «Սուրիահայ տարեգիրք», 1929, էջ 162:

ով իր հուշերում ներկայացնում է Ս. Նշան վարժարանին վերաբերող մանրամասներ: Ըստ հեղինակի, դասարանները բաժանված էին տախտակե կտորներով, որոնք հավաքելուց հետո մեծ սենյակը վերածվում էր սրահի: Սրահին օգտագործվում էր և՛ իբրև լսարան, և՛ իբրև թատերասրահ: Դասագրքեր չկային բացառությամբ մի քանի ֆրանսերեն գրքերի[467]: 1929 թ. սույն տեղեկությունը վերաբերում է Ս. Նշան եկեղեցուն. «Անցած չորս տարուայ մէջ գաղթական հայութիւնը շինեց երկու յարկով դպրոց մը, որուն առաջին յարկը յատկացուեցաւ մանկապարտէզի բաժնին, իսկ վերի յարկը աղջկանց բաժնին»[468]:

1927 թ. Բեյրութի Մազրաա թաղամասում հիմնվում է Հայկազյան վարժարանը. «Մուսէիթ պէյ թաղին մէջ 50 աշակերտ արձանագրուած են և ուսուցչուհի մըն ալ վարձուած: Առ այժմ վարձուած է ընդարձակ սենեակ մը, որ պիտի կրնայ 50 աշակերտի բաւել»[469]:

1923 թ. հոկտեմբերի 28-ին Բեյրութի Կենտրոնական վրանաքաղաքում բացվում է Սահակյան վարժարանը[470]: Նախակրթարանում սովորում էր 200 երկսեռ աշակերտ, Անդրանիկյան մանկապարտեզում 250 երկսեռ աշակերտ[471]: 1933 թ. հունվարի 30-ին վրանաքաղաքում տեղի ունեցած հրդեհի պատճառով դպրոցը զգալի վնասներ է կրում: 1933/1934 ուսումնական տարում դպրոցը վերաբացվեց նոր շենքում: Նախակրթարանն ուներ 330-ից ավելի, իսկ Անդրանիկյան մանկապարտեզը 125 աշակերտ[472]: 1935 թ. լույս է տեսնում Սահակյան վարժարանի Կանոնագիրը, որտեղ ամփոփված են վարժարանի նպատակը, կազմակերպական խնդիրները և ընդհանուր կարգապահական կանոնները[473]:

---

[467] Յուշարձան ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի, էջ 368-370:
[468] «Յուսաբեր», թիվ 25, ապրիլի 30, 1929:
[469] Նույն տեղում, թիվ 222, դեկտեմբերի 19, 1927:
[470] Յուշագիրք հայ ազգ. Սահակեան բարձրագոյն վարժարանի. 1923-1948, էջ 7:
[471] «Լիբանան», թիվ 512, նոյեմբերի 19, 1930:
[472] «Պատկերազարդ կիլիկիեան տարեցոյց», Հալեպ, 1934, էջ 88-95:
[473] Կանոնագիր Ազգ. Սահակեան վարժարանի, էջ 1-23:

Ամանոս վրանաքաղաքում գտնվում էր Մեսրոպյան վարժարանը, որտեղ 1931 թ. սովորում էր 279 աշակերտ, որոնցից 116-ը հաճախում էր մանկապարտեզ: Նախակրթարանում պաշտոնավարում էր 8 կրթական պաշտոնյա: Որպես ուսման վճար, մանկապարտեզի աշակերտներից յուրաքանչյուրի համար տարեկան գանձվում էր 2, իսկ նախակրթարանում սովորողներից 3 սիրիական ոսկի[474]:

1928 թ. տվյալներով վրանաքաղաքի Սահակ–Մեսրոպյան վարժարանում սովորում էր 1100, Ս. Նշան եկեղեցու ազգային վարժարանում 450, Էշրեֆիեի Եփրեմյան վարժարանում 150 աշակերտ[475]:

Անդր Նաիրի շրջանում գործում էին Ս. Գրիգոր Լուսավորիչ տախտակաշեն եկեղեցին, Նուբարյան վարժարանը, ինչպես նաև Սին էլ ֆիլի մանկապարտեզը: Նախակրթարան էին հաճախում 100, մանկապարտեզ 110 աշակերտ[476]: Նշված ժամանակաշրջանում Սին էլ Ֆիլում գործում էին Հին և Նոր Արամյան վարժարանները: Հին Արամյան վարժարանը կարճ ժամանակով վերանվանվեց Կյուլպենկյան, որից հետո նորից անվանվեց Արամյան: Հաճախում էր 50 աշակերտ: Նոր Արամյան վարժարանում սովորում էր 120 աշակերտ, պաշտոնավարում 4 կրթական պաշտոնյա[477]:

1930 թ. Անդր-Նաիրի Նոր Սիս թաղամասում գտնվող Լուսինյան վարժարան էր հաճախում 92 աշակերտ: 1932 թ. վեց սենյակից բաղկացած երկհարկանի շենքը դառնում է նախակրթարան[478]: Լուսինյան վարժարանը բացվեց Սսի հայրենակցական միության ջանքերով: Վարժարանի շրջանավարտներից է եղել հայականավոր հոգևորական Վահան արքեպիսկոպոս Թոփալյանը: Մ. Քելեշյանը

---

[474] «Յուսաբեր», թիվ 243, հունվարի 16, 1931:
[475] Նույն տեղում, թիվ 61, հունիսի 13, 1928:
[476] «Լիբանան», թիվ 510, նոյեմբերի 12, 1930:
[477] «Արարատ», թիվ 58, փետրվարի 6, 1938, թիվ 78, մարտի 2, 1938, թիվ 79, մարտի 3, 1938:
[478] Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 447:

ներկայացնում է Լուսինյան վարժարանի հետևյալ վիճակագրական ցանկը[479].

| *Ուս. տարի* | *Ուսուցիչ և վարժուհի* | *Դասարան (թիվ)* | *Տղա (թիվ)* | *Աղջիկ (թիվ)* | *Գումար* |
|---|---|---|---|---|---|
| 1932-33 | 3 | 4 | 48 | 52 | 100 |
| 1933-34 | 5 | 7 | 86 | 112 | 198 |
| 1934-35 | 11 | 10 | 136 | 194 | 330 |
| 1935-36 | 7 | 8 | 151 | 148 | 299 |
| 1936-37 | 9 | 9 | 179 | 187 | 366 |
| 1937-38 | 12 | 11 | 238 | 235 | 473 |

1923 թ. սկսած Էշրեֆիե թաղամասի տարածքում հաստատվում են գաղթական հայեր[480]: 1927 թ. կեսերից սկիզբ է առնում Էշրեֆիե հայկական թաղամասի կառուցումը: Ս. Անթոյանի հիշատակմամբ, 1929 թ. մի քանի տասնյակ նորակառույց տներ կային Էշրեֆիեում[481]: 1929 թ. որոշվում է այստեղ նախակրթարան և մանկապարտեզ բացել[482]:

1932 թ. տեղի ունեցավ Հայկաշեն թաղամասի Թորգոմյան ազգային վարժարանի բացման արարողությունը նախագահությամբ Գ. Իփեկյանի[483]: 1930 թ. բացվեց Նոր Մարաշի վարժարանը, ուր հաճախում էր 120 աշակերտ[484]: 1934 թ. Թրատի Աբգարյան վարժարան էր հաճախում 160 աշակերտ, 1936 թ. 230 աշակերտ, պաշտոնավարում էին 7 մնայուն և 1 այցելու ուսուցիչ[485]: 1931 թ. հոկտեմբերի 18-ին բացվեց Ռըմեյլի Ռուբինյան վարժարանը, որը 1938 թ. ուներ 20 աշակերտ[486]: 1932 թ. բացվեց Նոր Ադանայի Կիլիկյան

---

479 Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 702:
480 «Սարկաւագին տարեցոյցը», Կահիրե, 1931, էջ 118-119:
481 Անթոյեան Ս., նշվ. աշխ., էջ 53:
482 «Յուսաբեր», թիվ 174, հոկտեմբերի 24, 1929:
483 Նույն տեղում, թիվ 107, օգոստոսի 5, 1932:
484 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 502:
485 «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», էջ 82-84, «Պատկերազարդ կիլիկիեան տարեցոյց», 1934, էջ 75:
486 «Արարատ», թիվ 31, հունվարի 4, 1938, «Արեւ», թիվ 3881, հոկտեմբերի 29, 1931:

վարժարանը: 1939 թ. Անդր-Նահրի հայ բնակչության թիվը հասնում էր 15.000-20.000: Հայաբնակ թաղերն էին՝ Նոր Մարաշը, Նոր Սիսը, Նոր Ադանան, Կյուլլապաշենը, Թրատը, Թիրոն և Սին էլ ֆիլը[487]:

1937 թ. վերաբերող մի տեղեկության մեջ նշված է. «Պէյրութի մէջ Հայերն ունին Ս. Նշան Մայր եկեղեցին եւ նոյնանուն Ազգ. երկսեռ վարժարանը: Նորագոյն միւս երեք եկեղեցի եւս ունին իրենց ուրոյն Թաղ. խորհուրդները, նախակրթարանները եւ ծաղկոց-մանկապարտէզները: Շրջակայ քաղաքներու եւ գիւղերու մէջ կան 11 մեծ ու փոքր թեմեր, որոնցմէ շատեր ունին եկեղեցի, քահանա եւ Ազգ. Վարժարաններ: Ասոնց աշակերտութեան համագումարը 1000-է աւելի է»[488]:

1930-ական թթ. Բեյրութում հիմնվել են Հայ ճեմարանը և ՀԲԸՄ Դարուհի-Հակոբյան վարժարանները:

1930 թ. փետրվարի 23-ին բացվում է Բեյրութի Հայ ճեմարանը[489], որի տնօրինությունը ստանձնեցին Լ. Շանթը և Ն. Աղբալյանը: 1930-1939 թթ. աշակերտության թիվը 15-ից հասել է 129-ի[490]: Ուսումնական ծրագիրը պատրաստված էր մեկ պատրաստական, չորս լրիվ դասարանների և լսարանական բաժնի համար: Լսարանական բաժինն ուներ գիտական, գրական և առևտրական ճյուղեր[491]: Հայ ճեմարանում դասավանդում էին մասնագետ ուսուցիչներ, իսկ ուսուցանվող առարկաներն էին՝ հայոց լեզու, հայոց պատմություն, աշխարհագրություն, թվաբանություն, հայ գրականություն, օտար լեզուներ, մարմնամարզություն և այլն[492]: Պարտադիր առարկաներից զատ մասնավոր հիմունքներով

---

487 Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հ. Ա, էջ 240-245, «Հայաստանի կոչնակ», թիվ 17, ապրիլի 29, 1939, էջ 411:

488 «Հայաստանի կոչնակ», թիվ 35, օգոստոսի 28, 1937, էջ 841:

489 Նույն տեղում, թիվ 14, ապրիլի 5, 1930, էջ 440:

490 Համազգայինի եւ Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ. 1929-1954, էջ 121:

491 Պէյրութի հայ ճեմարանին ծրագիրը, էջ 7, «Յուսաբեր», թիվ 204, նոյեմբերի 28, 1930:

492 Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 107:

դասավանդվում էին նաև ջութակ կամ դաշնամուր, նկարչություն, ձեռագործ[493]:

1939 թ. հոկտեմբերի վերջին բացվեց ՀԲԸՄ Դարուհի-Հակոբյան աղջիկների բարձրագույն նախակրթարանը, ուր գործում էր նախապատրաստական 2 դասարան, պաշտոնավարում 8 ուսուցիչ, որոնցից 2-ը այցելու էին արաբերենի և ֆրանսերենի դասավանդության համար[494]: Առաջին տարում հաճախում էր 50 աշակերտուհի: Նպատակն էր աղջիկներին տալ անվճար բարձրագույն նախակրթություն պատրաստելով գիտակից մտավորականներ և մայրեր[495]:

1924 թ. Բեյրութի Ամերիկյան համալսարանում մեծ թիվ կազմող հայ ուսանողության խնդրանքով հայերենն ավելացվեց համալսարանի նախակրթարանում դասավանդվող առարկաների շարքում[496]: 1925 թ. ամերիկյան համալսարանն ուներ 135 հայ շրջանավարտ, վերջիններիցս միայն 32-ն էին մասնակցել հայերենի դասընթացներին[497]: Բեյրութի ամերիկյան համալսարանը յուրաքանչյուր ուսումնական տարեշրջանում ունենում էր հայ շրջանավարտներ: 1927 թ. Համալսարանի 150 շրջանավարտից 32-ը հայ էին, 1929 թ. 28-ը[498]:

1924 թ. Անթիլիասում և Ճելտիպում գործում էր վարժարան 30 աշակերտով: Ըստ Գրիգոր քահանա Պողարյանի, հայ ընտանիքների տեղափոխման պատճառով հաջորդ տարի վարժարանը ամենայն հավանականությամբ չէր բացվելու[499]:

1930-ական թթ. Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի կողմից հովանավորվող Անթիլիասի որբանոցը դադարեցրեց իր գործունեությունը. նախ համաձայնություն կայացվեց որբանոցը 5 տարի անվճար տրամադրել Կիլիկիո

---

493 Պէյրութի հայ ճեմարանին ծրագիրը, էջ 7:

494 «Միութիւն», թիվ 200, նոյեմբեր-դեկտեմբեր, 1939, էջ 82:

495 Մելքոնյան Է., նշվ. աշխ., էջ 421-422:

496 «Հայաստանի կոչնակ», թիվ 5, փետրվարի 2, 1924, էջ 146:

497 «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 34-35:

498 «Յուսաբեր», թիվ 73, հունիսի 27, 1927; թիվ 70, հունիսի 22, 1929, Babikian M., ibid, p. 183.

499 «Հայաստանի կոչնակ», թիվ 30, հուլիսի 28, 1923, էջ 944-945, «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 46:

կաթողիկոսությանը, այնուհետև որբանոցի շենքերը վաճառվեցին: 1930 թ. կաթողիկոսությունը հաստատվեց Անթիլիասում, և նույն տարում հիմնվեց Դպրեվանքը[500]:

Դպրեվանքի վերատեսուչ Շահե եպիսկոպոսը հաստատության նպատակը ներկայացնելիս նշում է, որ Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքը հիմնվել է քահանաներ և ուսուցիչներ պատրաստելու նպատակով: Հատկապես ուսուցիչներ պատրաստելու հատուկ կենտրոնների չգոյության պատճառով Դպրեվանքը պարտավոր է մասամբ լրացնել այդ բացը: Այդ իսկ պատճառով Դպրեվանքի ուսումնական ծրագրում հայերեն գրաբար ու աշխարհաբար լեզվի, կրոնների պատմության և եկեղեցու պատմության կողքին դասավանդվում են հոգեբանություն, մանկավարժության և փիլիսոփայության պատմություն[501]:

Ըստ Բ. Եղիայանի, Դպրեվանքի ուսումնական ծրագիրը բաղկացած էր մի քանի բաժնից: Լեզուների բաժնի մաս էին կազմում գրաբարը, արդի աշխարհաբարը, ֆրանսերենը, անգլերենը և արաբերենը: Գիտությունների բաժնի մաս էին կազմում մաթեմատիկան, բնագիտությունը, կենդանաբանությունը, տոմարագիտությունը, ընդհանուր պատմությունը: Մասնագիտական բաժնի մաս էին կազմում աստվածաբանությունը, մանկավարժությունը, պատմության փիլիսոփայությունը, Հին և Նոր կտակարանների ուսուցումը, պատմության քննությունը, հոգեբանությունը, ընկերաբանությունը, քաղաքակրթությունը, ընդհանուր եկեղեցու պատմությունը և այլ առարկաներ: Ազգային ուսումնառության բաժնի մաս էին կազմում ազգային պատմությունը (քննական և վերլուծական), հայ մատենագրությունը, հայ եկեղեցու պատմությունը, հայ երաժշտությունը, քարոզախոսությունը[502]:

---

500 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 435, «Հայաստանի կոչնակ», թիվ 7, փետրվարի 13, 1932, էջ 197:
501 «Հասկ», թիվ 1, հունվար, 1932, էջ 2:
502 «Հայաստանի կոչնակ», թիվ 31, օգոստոսի 3, 1935, էջ 733-734, «Հասկ», թիվ 2, փետրվար, 1932, էջ 5-6:

1932 թ. Դպրեվանք էր հաճախում 40 աշակերտ, պաշտոնավարում 12 ուսուցիչ, որոնցից 5-ը այցելու: Բաբկեն Կյուլեսերյան աթոռակից կաթողիկոսը դասավանդում էր հայ մատենագիտություն և գրաբար, իսկ Շահե եպիսկոպոսը հայ եկեղեցու պատմություն առարկաները: Երիտասարդ բանաստեղծ Վ. Վահյանը դասավանդում էր աշխարհաբար հայերեն[503]: 1935 թ. Դպրեվանքն ունեցավ 16 շրջանավարտ, որից 2-ը ձեռնադրվեց կուսակրոն քահանա, 1-ը ընդունվեց Բրյուսելի համալսարան, 11-ը ուսուցչական պաշտոն զբաղեցրեց Սիրիայի և Լիբանանի ազգային վարժարաններում, 2-ի մասին հիշատակումներ չկան[504]:

1931 թ. Մերձավոր Արևելքի ընկերակցության Հալեպի մասնաճյուղում Անթիլիասի դպրեվանքից Հ. Շեոհմեյանի ընդհանուր հսկողությամբ կազմակերպվում են ամառային դասընթացներ 160 տղայի համար, որտեղ դասավանդվում են բարոյախոսություն, ձեռագործ և ձեռարվեստ[505]: Ամառային դպրոցները գործում են նաև մյուս տարիներին: 1932 թ. Դպրեվանքի նախաձեռնությամբ Հալեպում և Բեյրութում բացված ամառային դպրոցներ էին հաճախում 500, 1934 թ. 575 աշակերտ[506]: 1938 թ. Լ. Զենյանի հսկողությամբ Հալեպի ամառային դպրոց էր հաճախում 250, Հոմսի 65, Թարապլուսի 70 աշակերտ[507]: Ամառային դպրոցների ընթացքում աղջիկ երեխաները սովորում էին ձեռագործ: Ավելի կարևոր էր ազգային և սուրբ գրական պատմությունների, երաժշտության, աղոթքների, շարականների, սաղմոսների, բարոյախոսության, մարմնամարզության դասավանդումը[508]:

---

[503] ԳԱԹ, Թ. Թորանյանի ֆ., գ. 31, թ. 5, Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 337-373:
[504] Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Դ, էջ 119:
[505] «Արև», թիվ 3830, օգոստոսի 30, 1931:
[506] «Յուսաբեր», թիվ 189, նոյեմբերի 10, 1932, «Հասկ», թիվ 11, նոյեմբեր, 1934, էջ 95:
[507] «Հասկ», թիվ 11, նոյեմբեր, 1938, էջ 162:
[508] Հայ Ավետարանական եկեղեցին ամառային վարժարաններ էր կազմակերպում Զանից երիտասարդական միության ջանքերով (Տե՛ս, «Զանասեր», թիվ 4, ամառաշուն, 1939, էջ 85, 106):

ՀԲԸՄ աջակցությամբ Դպրեվանքի կողքին կազմակերպվեց մանկապարտեզ, որը արտակարգ կարևոր նշանակություն ուներ երեխաներին ուսում տալու և օտարանալու վտանգից ազատելու գործում: 1935 թ. մանկապարտեզ էր հաճախում 52 աշակերտ, որից 21-ը մանկապարտեզի ծաղկոց և Ա դասարան, 31-ը նախակրթարանի Բ, Գ, Դ դասարաններ: Այս մանկապարտեզի Դ դասարանը համապատասխանում էր լրիվ նախակրթարանի Ա դասարանին[509]:

Զաhլեի գաղութի կազմակերպման գործում կարևոր ներդրում է ունեցել եգիպտահայ բարերար Բ. Պալըգճյանը[510]: 1922 թ. բացվել է տեղի Հայ ազգային վարժարանը: 1929 թ. վարժարանն անվանակոչվել է հայ ազգային Պալըգճյան վարժարան: 1924 թ. վարժարան են հաճախել մոտ 100, 1927 թ. 130 աշակերտ, պաշտոնավարել 3 ուսուցիչ[511]: Աշակերտության թիվը գնալով աճել է 1933 թ. հասնելով 200-ի[512]: Զաhլեի վարժարան հաճախող աշակերտության թվի մասին պատկերացում ենք կազմում վիճակագրությունից. 1939 թ. Զաhլեի ազգային վարժարան էր հաճախում 220, Ռայագի 90, Բաալբեքի 30, Շթորայի 60 աշակերտ[513]:

1925 թ. Ռայագում բացված դպրոց էր հաճախում 30-35 աշակերտ, պաշտոնավարում էր մեկ ուսուցիչ[514]: Ս. Վարժապետյանը հիշատակում է Ռայագի մատուռ-վարժարանի մասին: Ըստ հեղինակի, հայ գաղթականների կողմից հիմնված տախտակաշեն մատուռ-վարժարան էր հաճախում շուրջ 150 երկսեռ աշակերտ[515]:

1923 թ. Ջյունիում Հ. Նաշալյանի և Մ. Կերտմենյանի նախաձեռնությամբ բացված դպրոցը կարճ կյանք է ունենում:

---

509 «Հասկ», թիվ 7-9, հուլիս-օգոստոս-սեպտեմբեր, 1935, էջ 90-91, թիվ 10, հոկտեմբեր, 1935, էջ 111:
510 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 440-441:
511 «Յուսաբեր», թիվ 124, օգոստոսի 26, 1927, «»Սուրիական մամուլ», թիվ 259, հունիսի 12, 1924:
512 «Արեւ», թիվ 4357, մայիսի 15, 1933:
513 «Հայաստանի կոչնակ», թիվ 22, հունիսի 3, 1939, էջ 533:
514 Նույն տեղում, թիվ 5, հունվարի 31, 1925, էջ 151:
515 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 540:

Առաջինը նոր պաշտոն է ստանում և մեկնում Անթիլիասի որբանոց, երկրորդը ԱՄՆ[516]։ 1927 թ. հայ առաքելական և հայ ավետարանական համայնքների ներկայացուցիչներից կազմված հոգաբարձությունը ղեկավարում էր մանկապարտեզի և նախակրթարանի բաժիններով Միացյալ վարժարան, ուր հաճախում էր մոտ 130 աշակերտ[517]։ 1931 թ. Ե. Կարոյանը, Ջյունիի հայ ազգային գործիչների ցանկությանն ընդառաջ գնալով, բացում է նոր ազգային վարժարան, ուր հաճախում էր 40 աշակերտ, պաշտոնավարում 1 ուսուցիչ[518]։ 1933 թ. վարձակալած շենքում գտնվող ազգային նախակրթարան էր հաճախում դարձյալ 3 հարանվանությունը ներկայացնող 100 աշակերտ, պաշտոնավարում էր 3 ուսուցիչ[519]։

1929 թ. որոշվում է ժողովրդական հանգանակություններով նպաստել Բիկֆայայի և Ալեյի վարժարաններին[520], ինչը բարեհաջող իրագործվում է. 1929 թ. հոկտեմբերի 1-ին բացվում է Բիկֆայայի վարժարանը[521]։

1923 թ. Տրիպոլիում բացվել է ազգային տախտակաշեն վարժարանը, որտեղ 1923 թ. հաճախում էր 40, 1926 թ. 130 աշակերտ։ 1932 թ. բացվել է նախակրթարան 71, մանկապարտեզ 103, իսկ 1939 թ. 160 աշակերտով[522]։ Տրիպոլիի ազգային վարժարանում անցկացվում էին տարբեր միջոցառումներ, գործում էր «Սուրբ Մեսրոպ» գրադարանը[523]։ 1927 թ. Տրիպոլիի հայերի թվաքանակը գնալով նվազում է. հայ ընտանիքները տեղափոխվում են Բեյրութ և այլ վայրեր։ ՀԲԸՄ-ն 45 սիրիական ոսկու չափով կրթական նպաստ է

---

516 «Սուրիահայ տարեցոյց», 1924, էջ 46։
517 Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, հ. Ա, էջ 421-422, Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 474-475, «Յուսաբեր», թիվ 199, նոյեմբերի 22, 1927։
518 «Արեւ», թիվ 3926, դեկտեմբերի 20, 1931։
519 «Հայաստանի կոչնակ», թիվ 12, մարտի 25, 1933, էջ 281, «Եփրատ», թիվ 555, հունվարի 18, 1933։
520 «Յուսաբեր», թիվ 152, սեպտեմբերի 27, 1929։
521 «Սիհուն», թիվ 9, հուլիս, Բեյրութ, 1930, էջ 82։
522 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 463, «Արեւ», թիվ 53, փետրվարի 12, 1923, «Յուսաբեր», թիվ 69, հունիսի 23, 1926, թիվ 109, օգոստոսի 8, 1932։
523 «Յուսաբեր», թիվ 75, հունիսի 30, 1933։

հատկացնում ազգային վարժարանին[524]: 1930-ական թթ. ազգային կյանքի երկփեղկման արդյունքում ՀԲԸՄ օժանդակությամբ բացվում է վարժարան, որը խիստ քննադատության է արժանանում թաղական խորհուրդը ներկայացնող դաշնակցականների կողմից[525]:

1923 թ. Երուսաղեմից ժամանած Արսեն վարդապետ Հովսեփյանի ջանքերով Սայդայում տախտակաշեն եկեղեցի ու դպրոց է կառուցվում: 1924 թ. ազգային վարժարան էր հաճախում 70 աշակերտ. «Ուսուցիչը Ամերիկացիներու կողմէ կը վճարուի, իսկ աշակերտները ամսական 20 դրուշ կը վճարեն»: 1929 թ. վարժարան էր հաճախում 50 աշակերտ[526]:

1929 թ. Սուրում ՀԲԸՄ օժանդակությամբ բացված վարժարան էր հաճախում 15 աշակերտ, պաշտոնավարում 1 ուսուցչուհի[527]:

1924 թ. սեպտեմբերի 15-ին ՀԲԸՄ օժանդակությամբ Ղազիրում բացվում է վարժարան, ուր հաճախում էր 20 աշակերտ[528]: 1933 թ. մանկապարտեզ էր հաճախում 30, նախակրթարան 25 աշակերտ: Պաշտոնավարում են 1 ուսուցչուհի, 1 մանկապարտիզպանուհի[529]: Դպրոցը օժանդակություն էր ստանում Զմմառի միաբանության կողմից: Վարժարանում բոլոր դասերը դասավանդվում էին հայերեն լեզվով[530]:

Փաստորեն, Լիբանանում նույնպես զգալի ջանքեր գործադրվեցին կրթական կյանքի կազմակերպման նպատակով: Սիրիայի համեմատությամբ Լիբանանում առկա էին որոշակի տարբերություններ: Առաջին, գաղթական հայության քիչ թվաքանակի պատճառով այստեղ վարժարանները համեմատա-

---

[524] «Հայաստանի կոչնակ», թիվ 42, հոկտեմբերի 15, 1927, էջ 1338:

[525] «Յուսաբեր», թիվ 178, հոկտեմբերի 30, 1934:

[526] Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 542, «Հայաստանի կոչնակ», թիվ 28, հուլիսի 12, 1924, էջ 888-889:

[527] «Սիւրիահայ տարեգիրք», 1929, էջ 144-145:

[528] «Հայաստանի կոչնակ», թիվ 46, նոյեմբերի 15, 1924, էջ 1463:

[529] Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Գ, էջ 174:

[530] «Սուրիահայ տարեցոյց», 1925, էջ 46:

բար ավելի քիչ էին: Դպրոցական ցանցը կենտրոնացած էր գլխավորապես Բեյրութում: Երկրորդ, հայրենակցական միությունները չունեցան սեփական վարժարաններ, փոխարենը նյութապես օժանդակեցին չունևոր երեխաներին վճարելով նրանց տարեկան վարձավճարները: Երրորդ, Լիբանանը կարևորվեց հոգևոր կենտրոն լինելու հանգամանքով: Կարևոր գործունեություն սկսեցին ծավալել դպրեվանքերը պատրաստված կադրերով մատակարարելով ոչ միայն Սիրիային և Լիբանանին, այլև սփյուռքահայ մյուս համայնքներին: Անթիլիասի, Զմմառի դպրեվանքերը, ինչպես նաև Բեյրութի աստվածաբանական ճեմարանը ունեցան համասփյուռքյան նշանակություն:

1922 թ. մայիսի 16-ին Բեյրութում Կենտրոնական վրանաքաղաքում հիմնվում է Ա ավետարանական եկեղեցու վարժարանը, որը գործում էր լաթե պատերով և տախտակե առաստաղով կառուցված շինությունում, ուր հաճախում էր 120 աշակերտ[531]: 1923 թ. այս նախակրթարանը Պ. Քարծայրի ջանքերով վերածվում է տղաների ավետարանական բարձրագույն վարժարանի: 1933 թ. հոկտեմբերին տղաների ավետարանական բարձրագույն վարժարանը միավորվում է «Հայուհեաց ամերիկյան վարժարանի» հետ (ներքոհիշյալ Ուեպ քույրերի վարժարան–Կ. Ժ.) և հիմնվում է Հայ ավետարանական բարձրագույն վարժարանը: 1932 թ. այս ուսումնական հաստատությունը տեղափոխվում է Էշրեֆիե: Վարժարանի նորակառույց շենքը կառուցվում է Հ. Րիկգի ջանքերով ի հիշատակ իր կնոջ և դստեր[532]: Ե. Քասունու հիշատակմամբ, 1931-1935 թթ. Կեդրոնական վարժարանից զատ այս վարժարանը իր մասնաճյուղերն է հիմնում Ամանոս վրանաքաղաքի տարածքում, Նոր Հաճընում (Կերթմենյան

---

[531] Խըլըբեան Տ., Ոսկեմատեան, հ. Ա, էջ 383:
[532] «Հայաստանի կոչնակ», թիվ 20, մայիսի 14, 1932, էջ 532, «Արեւ», թիվ 4021, ապրիլի 12, 1932:

վարժարան), Անդր Նաիրում, Զեյթունիեում: 1937/1938 ուսումնական տարում աշակերտության թիվը 76[533] էր:

1922 թ. հոկտեմբերի 16-ին հիմնվում է հայ ավետարանական երկրորդ վարժարանը:

1921 թ. հոկտեմբերի 1-ին հիմնվում է «Հայուհեաց ամերիկյան վարժարանը» կամ «Միս Ուէպի վարժարանը», որը հովանավորություն էր ստանում Արտաքին առաքելությունների ամերիկյան հանձնախմբի կողմից: Ե. Քասունին նշում է. «Միս Ուէպ ալ 1923-ին Ատանայի Ամերիկեան Աղջկանց վարժարանին հայկական բաժինը Պէյրութ փոխադրեց»[534]: Ուեպ քույրերի վարժարանը անկախ գործում է մինչև 1933 թ.: 1925 թ. Ուեպ քույրերի աղջիկների վարժարան էր հաճախում մոտ 200 աշակերտուհի[535]:

1932 թ. Բեյրութի Կրոնական գործիչների դպրոցի և Կ. Պոլսից Աթենք տեղափոխված Մերձավոր Արևելքի կրոնական վարժարանի միավորմամբ հիմնադրվում է Մերձավոր Արևելքի աստվածաբանական ճեմարանը, որի նպատակն էր ավետարանական եկեղեցու հովիվներ պատրաստել: Դպրոցի կրթական տեսուչն էր Լ. Լևոնյանը, ուսանողների թիվը 25-30[536] էր: Լ. Լևոնյանը նշում է. «Հաստատութեանս մէկ երրորդ նպատակը եղած է ոչ միայն հոգևոր հովիւներ պատրաստել եկեղեցիներու մէջ պաշտօնավարելու համար, այլ կրթական, բարեսիրական, ընկերային զանազան մարզերու, հաստատութեանց և ընկերակցութեանց մէջ ալ օգտակար ըլլալու համար գործիչներ հայթայթել»[537]:

1929 թ. հիմնվել է Մերձավոր Արևելքի հայ ավետարանական միության Հայկաշենի հայ ավետարանական վարժարանը, 1934 թ. Նոր-Մարաշի Շամլյան-Թաթիկյան

---

[533] Հայ աւետարանական գոլեճ. 1923-2008, Բեյրութ, 2008, էջ 6, «Յուսաբեր», թիվ 3, ապրիլի 4, 1928, «Ջանասեր», թիվ 4, ամառ, 1938, էջ 99:

[534] Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 473:

[535] «Յուսաբեր», թիվ 68, սեպտեմբերի 10, 1925:

[536] Ահարոնեան Յ., նշվ. աշխ., էջ 35, 101, Թութիկեան Վ., Կարեւոր դէպքեր եւ դէմքեր հայ քրիստոնէական պատմութեան մէջ, Միչիգան, 2001, էջ 286:

[537] Խրլոբեան Տ., Քսանհինգամեայ հունձքը, Հալեպ, 1948, էջ 28-29:

երկրորդական վարժարանը, 1937 թ.՝ Կենաց երկրորդական վարժարանը, 1939 թ.՝ Սին-էլ-ֆիլի Շաբաթապահ Գալստական միսիոներության Գալստական վարժարանը, նույն տարում Այնճարի հայ ավետարանական վարժարանը[538]։

1928 թ. Բեյրութում հայ կաթոլիկ համայնքի ներկայացուցիչներն ունեին վեց կրթական հաստատություն՝ Զմմառի դպրեվանքը, Հռիփսիմյան աղջիկների վարժարանը, Լուսավորիչ աղջիկների վարժարանը, հայ կաթոլիկ տղաների վարժարանը, վրանաքաղաքի տղաների և աղջիկների վարժարանները[539]։ 1930-ական թթ. հայ կաթոլիկ կրթական հաստատություններն ավելի կազմակերպված են գործում։ 1930-ական թթ. Լիբանանում գործում էին Նոր Մարաշի Մեսրոպյան՝ 700, Հազմիեի Մխիթարյան՝ 280, Անարատ հղության քույրերի Ս. Ագնես վարժարանները՝ 600 աշակերտով[540]։

Հիսուսյան հայրերը Բեյրութում հիմնեցին 3 վարժարան 400 աշակերտով, որից մեկը մանկապարտեզ էր[541]։

1924 թ. բացվել է Հիսուսյանների Ս. Գ. Լուսավորիչ վարժարանը, որն այնուհետև տեղափոխվել է Էշրեֆիե։ 1932 թ. վարժարան է հաճախել 581, 1935 թ.՝ 545 աշակերտ, պաշտոնավարել է 14 ուսուցիչ[542]։ «Անարատ հղության քույրերի» վարժարաններն էին Հռիփսիմյանը և Ս. Աննան[543]։ 1922 թ. հինգ քույր գալիս են Կ. Պոլսից Բեյրութ վարժարան հիմնելու նպատակով։ Նոր հիմնադրված Հռիփսիմյան վարժարանի ղեկավարությունը ստանձնում է Մայր Թեոպիստեն, ապա Է. Պոյաճյանը, այնուհետև քույրեր Բ. Թաշճյանը, Ֆ. Ուլուհոջյանը։ Վարժարանին կից գործում էր նաև Ս. Աննա աղքատ աշակերտուհիների դպրոցը։ Ֆ. Ուլուհոջյանի ղեկա-

[538] Վարժապետեան Ս., նշվ. աշխ. հ. Բ, էջ 423-428, 472-477, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 295-296, http://shamlian-tatikian.blogspot.com/2010/03/75.html.
[539] Նաճարեան Ս., նշվ. աշխ., էջ 64, «Սահակ-Մեսրոպ», թիվ 4, փետրվար, 1928, էջ 556։
[540] «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 301-302, Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 349։
[541] «Եփրատ», թիվ 4, հուլիսի 16, 1927։
[542] «Աւետիք», թիվ 5, հուլիս, 1932, էջ 28, թիվ 11, նոյեմբեր, 1935, էջ 170։
[543] Նույն տեղում, թիվ 5, հուլիս, 1932, էջ 30։

վարության ժամանակ հիմնվում է Նոր Մարաշի վարժարանը, Թրատի մանկապարտեզը, իսկ Պատրիարքարանի կողմից հիմնված Մազրաայի անվճար դպրոցը հանձնվում իր տեսչությանը: Նոր Մարաշի վարժարանն ունեցել է 275 աշակերտուհի, Մազրաայի Ս. Թերեզա վարժարանը 80, Ս. Հռիփսիմե վարժարանը 150 աշակերտուհի[544]:

1922 թ. Զահլեում գործում էր հայ ավետարանական վարժարան, որը 1933 թ. ուներ 60 աշակերտ: Նույն տարում Ֆրանչեսկյան միաբանությունը ներկայացնող մարաշցի մի հոգևորական Պ. Բալու անունով Զահլեում բացում է վարժարան, ուր հաճախում էին 350 հայ և 150 տեղացի աշակերտներ: Վարժարանում հայերեն չէր դասավանդվում: 1936 թ. գործել է Զահլեի «Անարատ հղության քույրերի» «Սիրտ Հիսուսի» վարժարանը[545]:

1936 թ. հիմնվել է Տրիպոլիի ավետարանական Կրտսեր վարժարանը, 1937 թ. Շթորայի հայ ավետարանական վարժարանը[546]: Տրիպոլիի վարժարանը գործել է Միացյալ վարժարանի գոյության պայմաններում: 1927 թ. Տրիպոլիի հայ ավետարանական դպրոց են հաճախել 30-40 աշակերտ[547]:

1938 թ. հետևյալ պատկերն էր Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում.

| *Հ/հ* | *Վարժարան* | *Վարժարանների թիվը* | *Աշակերտների թիվը* | *Ուսուցիչների թիվը* | *ՀԲԸՄ-ից նպաստ* |
|---|---|---|---|---|---|
| 1. | Հայ ազգ. Վարժ. | 76 | 8769 | 317 | 14767 |
| 2. | Հայ ավետ. վարժ. | 16 | 2959 | 118 | 1616 |
| 3. | Հայ կաթոլիկ վարժ. | 6 | 726 | 56 | 880 |
| | *Ընդհանուր* | *98* | *12454* | *491* | *17263* |

544 «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», էջ 39-41:
545 «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 295-296, Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 477, «Արեւ», թիվ 4357, մայիսի 15, 1933, «Յուսաբեր», թիվ 291, մարտի 13, 1933:
546 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 436-437:
547 Նույն տեղում, հ. Գ, էջ 460:

Փաստորեն, 1920-1930-ական թթ. Սիրիայում և Լիբանանում վարժարանների, աշակերտների և ուսուցիչների թվաքանակով առաջին տեղում էին հայ ազգային վարժարանները: Դա պայմանավորված էր մի շարք հանգամանքներով. հայ Առաքելական համայնքի ներկայացուցիչները թվական գերակշռություն ունեին մյուս հարանվանությունների հետևորդների նկատմամբ, այդ պատճառով շատ վայրերում հայ ավետարանական և հայ կաթոլիկ համայնքների ներկայացուցիչները վարժարաններ չէին հիմնում, իսկ նրանց զավակները հաճախում էին հայ ազգային վարժարաններ: Սակայն ի տարբերություն հայ ազգային վարժարանների ոչ պատշաճ վիճակի, ավելի լավ շենքային-տեխնիկական պայմաններով էին ապահոված հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանները: Այնուամենայնիվ, վերջիններս հայ ազգային վարժարանների կողքին կարողացան հավատարիմ մնալ իրենց կոչմանը և առաջնային նշանակություն ձեռք բերել Հայոց ցեղասպանությունից փրկված սերնդի կրթության գործում:

## 2.4. Կիրակնօրյա դպրոցները Սիրիայում և Լիբանանում

Ինչպես հայ ազգային, այնպես էլ հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարաններում պարտադիր էր կրոնների պատմության դասավանդումը: Հայ ազգային վարժարանում կարևոր էր նաև հայ եկեղեցու պատմության դասավանդումը: Կիլիկիո կաթողիկոս Սահակ Բ Խապայանը և նրա աթոռակից կաթողիկոս Բաբկեն Ա Կյուլեսերյանը գիտակցեցին, որ հայ ազգային վարժարաններում դասավանդվող վերոհիշյալ առարկաները բավարար չեն մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության համար, քանզի շատ վարժարաններում ուսուցչի բացակայության, նյութական սուղ պայմանների

հետևանքով կարող էր առարկան չդասավանդվել: Նշված ժամանակաշրջանում հայապահպանության տեսանկյունից հոգևոր դաստիարակությունը խիստ անհրաժեշտություն էր ներկայացնում հատկապես Մերձավոր Արևելքում:

1920-ական թթ. կրոնական-բարոյական բանախոսություններ էին կազմակերպվում հայկական լսարաններում: 1926 թ. Բերիո թեմի քաղաքական ժողովի որոշմամբ կազմակերպված հայկական լսարանը մատաղ սերնդին հատվածական դաստիարակությունից զերծ պահելու և հասարակությանը եկեղեցուն ու հոգևոր արժեքներին ավելի մերձեցնելու փորձ էր[548]: Լիբանանում նույնպես կազմակերպվեցին հայկական լսարաններ: Կ. Ալեքսանյանը, խոսելով Բեյրութի վրանաքաղաքում գործող հայկական լսարանի մասին, նշում է, որ բեմախոսությունների նյութերը վերաբերում են գաղթական հայության կենսունակությանն ու նկարագրին նպաստելով բարոյականության բարձրացմանը[549]: 1930-ական թթ. շարունակվեց հայկական լսարանների գործունեությունը: Հալեպում, Բեյրութում և հայաշատ մյուս քաղաքներում կազմակերպվեցին նոր լսարաններ[550]:

1923 թ. Հալեպի Հայկազյան վարժարանում փորձ է կատարվում հիմնել կիրակնօրյա դպրոց: 1924-1925 թթ. գաղափարը գործնական հողի վրա է դրվում ամերիկաբնակ Լ. Զենյանի Մերձավոր Արևելքում գտնվելու ընթացքում:

1927 թ. Հալեպի թեմի կրոնական ժողովը քննարկում է Հայաստանյայց եկեղեցու քրիստոնեական ուսուցման ընդհանրացման հարցը: 1929 թ. ապրիլին Զահլեում տեղի ունեցած խորհրդակցական ժողովից հետո հուլիսին, Լ. Զենյանը նշանակվում է «Վարիչ-Տնրէն Հայաստանեայց Եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դպրոցներու» և սկսում կիրակնօրյա

---

548 «Յուսաբեր», թիվ 85, հուլիսի 12, 1926:

549 «Լիբանան», թիվ 19, հունիսի 15, 1924:

550 Կանոնագիրք հայ եկեղեցասէր տիկնանց միութեան Ս. Նշան եկեղեցւոյ, էջ 6, «Եփրատ», թիվ 285, մայիսի 3, 1930, «Սուրիական մամուլ», թիվ 130, մայիսի 10, 1923:

դպրոցների կազմակերպման գործը[551]: 1929 թ. Լիբանանի Բաալբեք քաղաքում տեղի է ունենում Համաշխարհային կիրակնօրյա դպրոցների ամերիկյան ընկերության համաժողովը, որին մասնակցում է նաև հայկական պատվիրակությունը՝ Բ. Կյուլեսերյանը, Ա. Սյուրմեյանը, Դ. Տրեզյանը[552]: Այդ համաժողովն իր հերթին արագացնում է կիրակնօրյա դպրոցների կազմակերպման գործը: Բերիո առաջնորդարանին կից կազմակերպվում է կրոնական դաստիարակության խորհուրդ, հրավիրվում են Հայկազյան, Կիլիկյան և Կրթասիրաց վարժարանների այն շրջանավարտները, ովքեր հնարավորություն ունեին վերապատրաստվելու և պաշտոնավարելու՝ որպես կիրակնօրյա դպրոցի ուսուցիչներ: Այս շրջանավարտներից կազմվում է Շրջանավարտների միություն: Լ. Զենյանը երեքշաբթի և ուրբաթ օրերին անցկացնում է մանկական հոգեբանության, կիրակի կրոնաբարոյական և ընդհանուր հոգեբանության դասախոսություններ: Շրջանավարտները քննություն են հանձնում: 1929 թ. նոյեմբերի 17-ին Հայ Առաքելական եկեղեցիների բեմերից պաշտոնապես հայտարարվում է կիրակնօրյա դպրոցների բացման մասին: Դեկտեմբերի 1-ին տեղի է ունենում բացման հանդիսավոր արարողություն: Մի քանի շաբաթում աշակերտության ընդհանուր թիվը հասնում է 560-ի, պաշտոնավարող ուսուցիչներինը՝ 40-ի[553]:

Ըստ Կ. Ֆարաջյանի, կիրակնօրյա դպրոցը «բարոյական հաստատութիւն» է և կոչված է դաստիարակել գաղափարական արժեքներ ունեցող երիտասարդների[554]: Կրոնական դաստիարակությունը հնարավոր չէր իրագործել առանց կրոնի ուսուցման: Կրոնի ուսուցման լավագույն օջախ կարող էր հանդիսանալ կիրակնօրյա դպրոցը: Ժամանակա-

---

[551] Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), էջ 432-436:

[552] Կիլիկիո կաթողիկոսութեան արխիւներ. Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, նամակ ԽԳ, էջ 184, Հարությունյան Ն., նշվ. աշխ., էջ 55:

[553] «Եփրատ», թիվ 266, փետրվարի 22, 1930, թիվ 267, փետրվարի 26, 1930:

[554] «Հունահայ տարեգիրք», 1928, էջ 402:

կիցներից մեկի հավաստիացմամբ. «Ընտանիքի, միջավայրի, եկեղեցւոյ տուած կրօնական դաստիարակութիւնը այլեւ հաճելի ակնկալութիւն է: Կարեւորը դասաւանդութեամբ ձեռք բերուած արդիւնքն է»[555]:

1930 թ. հունիսի 28-ին Սահակ Բ Խապայան կաթողիկոսը կիրակնօրյա դպրոցների մասին իր կոնդակում նշում է. «Չենք կրնար թոյլ տալ, որ աս ու ան իրենց ուզած կերպով խաղան մեր եկեղեցւոյն անուան հետ եւ մեր երիտասարդութեան ճակատագրին հետ: Վերջապէս չենք ուզեր, որ անկրօն ու տգէտ մեծնայ հայ ժողովուրդին երիտասարդ սերունդը»[556]: 1931 թ. փետրվարի 1-ին Սահակ Բ-ն վավերացնում է կիրակնօրյա դպրոցների կանոնագիրը[557]:

Այնուամենայնիվ, 1930-ական թթ. կիրակնօրյա դպրոցներն ունեին կազմակերպական խնդիրներ և լիարժեք կայացած չէին: Սկզբնական շրջանում մի կողմից բացակայում էին համապատասխան կադրերը, մյուս կողմից քիչ էր աշակերտների թիվը: Գաղթական հայությունը որոշակի վերապահումներով էր մոտենում կիրակնօրյա դպրոցի կազմակերպմանը համարելով այն օտարածին կրթավայր և նրանում տեսնելով ուծացման վտանգ: Դեռ 1929 թ. հունիսի 25-ին Բ. Կյուլեսերյանը Սահակ Բ-ին գրած նամակում նշում է. «Պիտի խնդրեմ որ Ձեր օրհնաբաշխ կոնդակով Տիար Լեւոն Զենեան յանձնարարէք Սուրիոյ մէջ Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմական առաջնորդներուն եւ Եկեղեցիներուն, որպէս զի գիտնան որ Կիրակնօրեայ Դպրոցներու կազմութիւնը Ձեր գիտութեամբ եւ հրամանով է պիտի ընէ Զէնեան, որ հարազատ որդին է Հայց. Եկեղեցւոյ, որ պիտի գործադրէ այն ծրագիրը զոր մենք պիտի պատրաստենք hոս, վերջապէս Զէնեան ո՛չ բողոքական է, ո՛չ ալ գործիք «Միսիոնարական էնթրիկներու» (այս վերջին կէտը կ'արժէ նկատի առնել մեր մէջը միայն, որովհետեւ հաւանական է որ

---

[555] «Դրազարկ» տարեգիրք Հ.Ե.Կ.Դ., Գ տարի, էջ 263:
[556] Սարգիսեան Ս., Կիրակնօրեան օրրանը հայ մանուկին, Անթիլիաս, 1996, էջ 47:
[557] «Հասկ», թիվ 4, ապրիլ, 1932, էջ 19-20:

ոմանք այս մուրը քսեն անձին եւ գործին վրայ իրենց մանածը ներկելու համար ժողովուրդին եւ եկեղեցականութեան միտքերու պղտորումին մէջ)»[558]: 1937 թ. Հալեպի գավառական ժողովին ուղղված նամակում հոգևորականներին կոչ է արվում ավելի լայն օժանդակություն ցույց տալ կիրակնօրյա դպրոցներին: Նամակագիրն այդ առթիվ իր մտահոգությունն է հայտնում հաշվի առնելով կրոնական դաստիարակության պակասը[559]:

1930 թ. հոկտեմբերի 15-ին Լ. Զենյանը ժամանում է Ազեզ կիրակնօրյա դպրոց կազմակերպելու նպատակով: Ձեռնարկը պսակվում է հաջողությամբ. կազմվում է ղեկավար մարմին Ս. Պալյանի գլխավորությամբ[560]:

1931 թ. Ճարապլուսի (Սիրիա) կիրակնօրյա դպրոցը գործում էր Հ. Շեոհմեսյանի ղեկավարությամբ, ով ուներ 2 օգնական ուսուցչուհի: Կիրակնօրյա դպրոց էր հաճախում 140 աշակերտ. «Տեղւոյս գաղութը շատ գոհ է այս ձեռնարկին համար, որ մատաղ սերունդին մէջ կրօնական զգացումներու զարթնումին եւ զարգացման կը նպաստէ առաւելապես»[561]:

1939 թ. Լիբանանում հիմնվել էին Նոր Մարաշի և Զահլեի կիրակնօրյա դպրոցները[562]:

Հայ ավետարանական եկեղեցուն կից նույնպես գործում էին կիրակնօրյա դպրոցներ, որոնք նպաստում էին երեխայի «ամբողջական դաստիարակութեանը»[563]: 1933 թ. նոյեմբերին Բեյրութում կազմվում է հայ ավետարանական եկեղեցու կիրակնօրյա դպրոցների տեղական միությունը, որի մեջ մտնում էր հայ ավետարանական Ա եկեղեցին 119 աշա-

---

558 Կիլիկիո կաթողիկոսութեան արխիւներ. Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, նամակ ԽԹ, էջ 202:
559 «Արեւ», թիվ 5628, հուլիսի 6, 1937, «Դրազարկ» տարեգիրք Հ.Ե.Կ.Դ., Ա տարի, էջ 5:
560 Ղազարեան Ս., Հայկական փոքր գաղութներ: Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, էջ 57:
561 «Արեւ», թիվ 3833, սեպտեմբերի 3, 1931:
562 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Բ, էջ 459:
563 Ճիզմէճեան Մ., Քրիստոնէական դաստիարակութիւն եւ կիրակնօրեայ դպրոց, Երևան, 2012, էջ 89:

կերտով և 8 ուսուցչով, Էշրեֆիեի եկեղեցին 170 աշակերտով և 9 ուսուցչով, Նոր Մարաշի եկեղեցին 200 աշակերտով և 10 ուսուցչով, Թրատի եկեղեցին 75 աշակերտով և 3 ուսուցչով[564]:

Փաստորեն, կիրակնօրյա դպրոցները հաջողությամբ գործում էին Հայ Առաքելական և Հայ Ավետարանական եկեղեցիների շրջանակներում: Չնայած նախնական դժվարություններին, կիրակնօրյա դպրոցները կայացան որպես հոգևոր դաստիարակության օջախներ և շարունակում են իրենց հայապահպան գործունեությունը մինչ օրս: Կիրակնօրյա դպրոցներին հաջողվեց լրացնել հոգևոր դաստիարակության բացը, եկեղեցու միավորիչ հարկի տակ հավաքել մատաղ սերնդին տալով հոգևոր բնագավառին վերաբերող գիտելիքներ հնարավորինս զերծ պահելով հատվածական դաստիարակությունից:

---

[564] «Ջանասեր», թիվ 3, գարուն, 1938, էջ 74:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

# ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ

### 3.1. Թատերական կյանքը

Մեծ Եղեռնից մազապուրծ գաղթական հայությունը 1920-1930-ական թթ. ջանք չէր խնայում հայ համայնքներում մշակութային կյանքի կազմակերպման և սփյուռքահայ մշակույթի ստեղծման ու զարգացման առաքելությունն իրագործելու համար: Այս գործընթացն առավել ակնառու էր սիրիահայ և լիբանանահայ համայնքներում: Հայաշատ բնակավայրերում գործում էին եկեղեցիներ, դպրոցներ, հրատարակվում էին թերթեր: Մշակութային կյանքի զարգացման գործն ամբողջանում էր նախևառաջ թատերական կյանքի գոյությամբ: Ինչպես այլ, այնպես էլ թատերական գործունեության բնագավառում նախկին օսմանահպատակ հայերն ունեին ավանդույթներ: Նախաեղեռնյան տարիներին լուրջ զարգացում էր ամրագրվել հատկապես պոլսահայ թատերական կյանքում:

1920-1930-ական թթ. Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում թատերական կյանքի զարգացումն ուներ կարևոր առանձնահատկություն՝ մասնագիտացված թատրոնի բացակայությունը: Թատրոնը առկա չէր որպես մշակութային-հասարակական կառույց[565], չէին գործում հայկական թատերասրահներ, դերասանների ու բեմադրիչի մասնագիտացման կենտրոններ: 1920-ական թթ. Բեյրութում հայտնի էին «Cristal» (500 տեղ), «Empire» (700 տեղ), «Grand Theatre»

---

[565] Ասատրյան Ա., նշվ. աշխ., էջ 22, Լէփէճեան Կ., նշվ. աշխ., էջ 8, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 314, Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 62-63, «Սուրիահայ տարեգիրք», 1929, էջ 293:

(մոտ 2000 տեղ) թատերասրահները[566], որոնք վարձակալվում էին հայերի կողմից: Թատերական ներկայացումները շատ հաճախ ցուցադրվում էին վրաններում, թիթեղաշեն ու փայտաշեն կացարաններում, նույնիսկ բացօդյա[567]: Առանձին թատերախմբեր կային նաև որբանոցներում. Անթիլիասի որբանոցում գործող թատերախումբը ղեկավարում էին չափահաս որբեր Հ. Յապուջյանը և իր ընկեր Արամը: Որբերը մասնակցում էին թատերախմբի գործունեությանը: Այս թատերախմբի կողմից ներկայացվել են մի շարք հայտնի բեմադրություններ[568]: 1926 թ. մայիսի 15-ին Մերձավոր Արևելքի որբերի ընկերակցության թատերախումբը ներկայացրել է «Վահան Մամիկոնյան» դրաման[569], իսկ 1933 թ. Հայ երիտասարդաց ընկերակցության թատերախումբը Ծլկատինցու «Կտակը» պիեսը[570]:

Թատերական կյանքն աստիճանական զարգացում էր ապրում մի շարք սիրողական թատերախմբերի և հյուրեկ դերասանների շնորհիվ: 1924 թ. Հալեպում Ս. Քյուրքճյանի կողմից հիմնվում է «Վասպուրական» թատերախումբը[571]: 1920-1930-ական թթ. Հալեպում հանդես են եկել «Տիգրիս», «Պանդուխտ», «Հայ երիտասարդաց միություն», «Ուսումնասիրաց», «Զավարյան», «Ասպարեզ», ՍԴ Հնչակյան կուսակցության «Զանգ»-«Անդրանիկ»-«Դրամատիկ», թատերախմբերը, Բեյրութում՝ Կ. Խաչիկյանի «Դրամատիկ» և Գնդունու «Ուսանողական միություն», Պ. Մենտիլյանի «Գաբրիել Սունդուկյան» թատերախմբերը[572]: Հյուրեկ դերասանները չունեին կանոնա-

566 «Յուսաբեր», թիվ 28, մայիսի 3, 1929:
567 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 597:
568 Անթոյեան Ս., նշվ. աշխ., էջ 51:
569 «Յուսաբեր», թիվ 43, մայիսի 22, 1926:
570 Ոսկեմատեան.1931-1981, Հալեպ, 1982, էջ 53:
571 Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմության եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, էջ 54:
572 Ասատրյան Ա., նշվ. աշխ., էջ 22, Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, հ. Ա, էջ 27-33, 58-63, Լէփէճեան Կ., նշվ. աշխ., էջ 5-13, «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 314, 530, Պողարեան Գ., Այնթապականք, հ. Ա, Բեյրութ, 1974, էջ 106-107:

վոր թատերախմբեր. նրանք իրենց շուրջն էին հավաքում տեղական ուժեր և ներկայացումներ կազմակերպում[573]:

Թատերական բնագավառում հայերի և արաբների համագործակցության մասին վաղ էր խոսելը: Հ. Միքայելյանի հավաստիացմամբ պատճառը «...հայերու անփոփուածութիւնն էր հայկական շրջանակներէ ներս, հայկական ձեռնարկներու մէջ»[574]: Ա. Շորվողյանը, ներկայացնելով սիրիահայերի և լիբանանահայերի թատերական կյանքը, նշում է, որ տեղացիները (արաբները–Կ. Ժ.) շատ ավելի ուշ անդրադարձան այս պահանջին, և իրենք էլ հետևեցին հայերին[575]: Հարկ է նշել, որ հետօսմանյան տիրապետության ժամանակաշրջանում արաբներն ունեցել են թատերախմբեր[576], իսկ թատերական ներկայացումներ ցուցադրելու արտոնագրերը տրամադրվում էին ֆրանսիական մանդատային իշխանությունների կողմից[577]:

Սիրիահայ և լիբանանահայ համայնքներում թատերական կյանքը նաև նպաստեց մայրենի լեզվի պահպանմանը, էթնիկ հիշողության ու հայրենասիրական դաստիարակության ամրապնդմանը, կրթության կազմակերպմանը: Հալեպի Կիլիկյան գաղթականների վարժարանի հուշագրքում նշված է, որ թատերական շարժման ծառայողների գլխավոր նպատակն է եղել զարկ տալ մայրենի լեզվի զարգացմանը, ուսանողության շրջանում մշակել ճարտասանության արվեստը, և նրանց հոգիները լցնել բարոյական սկզբունքներով ու հայրենասիրական զգացումներով[578]:

Գաղթական հայության շրջանում թրքախոսության տարածված լինելու պատճառով սկզբնական շրջանում թուրքերենով

---

[573] Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 593-594, «Սուրիահայ տարեգիրք», 1929, էջ 294-300, «Արեւ», թիվ 78, մարտի 14, 1923, «Յուսաբեր», թիվ 160, հոկտեմբերի 8, 1928:
[574] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Զ, 2000, էջ 215:
[575] Նույն տեղում, գ. Ա, 1975, էջ 398:
[576] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Զ, 2000, էջ 216:
[577] ՀԱԱ, ֆ. 1421, ց. 1, գ. 55, թ. 1., ց. 2, գ. 71, թ. 1-2:
[578] Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), էջ 116:

էին անցկացվում ոչ միայն եկեղեցական արարողությունները, դպրոցական միջոցառումները, այլև թատերական ներկայացումներից շատերը: 1930-ական թթ. սկսած թրքախոսության դեմ պայքարն ավելի կազմակերպված բնույթ ստացավ, ինչն արտացոլվեց նաև թատերական կյանքում: 1935 թ. Բեյրութի Սահակյան վարժարանում «Պանդուխտ» թատերախմբի կողմից ներկայացվող «Զեյթուն» պիեսի ազդագրի վրա հատուկ ծանուցվել է, որ ներկայացման թուրքական բաժինը պետք է կատարվի թուրքերեն լեզվով[579]: Հանդիսատեսին այս մասին նախապես զգուշացնելը փաստում է թուրքերենի հանդեպ ունեցած վերաբերմունքի մասին: Հայերեն լեզվով ներկայացվող թատերական ներկայացումները մեծ նպաստ բերեցին մայրենի լեզվի պահպանմանը:

Ցեղասպանության հիշողությունը դեռ թարմ էր գաղթական հայության շրջանում: Ցեղասպանության թեման արդիական դարձավ հայ թատերական կյանքում: Էթնիկ հիշողության ամրապնդման տեսանկյունից հրամայական էր, որ թե մեծահասակները, թե որբացած սերունդը օտար միջավայրում չմոռանան իրենց պատմությունն ու սեփական կենսագրությունը: 1920-ական թթ. այդ նկատառումներով Բեյրութի Ս. Նշան եկեղեցու բակում Պ. Մենտիլյանի ջանքերով ցուցադրվել են «Ժիրայր», «Քսան մահապարտներ», իսկ 1924 թ.՝ Ս. Տխրունու «Ելլտըզը Սասուն» պիեսը, 1930-ական թթ.՝ Ս. Շահենի «Թալաաթի անկումը», «Զեյթուն» պիեսները, «Կարկառուն կամարներ», «Անդրանիկ կամ Լրտեսը» դրամաները: 1930-ական թթ. Հալեպում ցուցադրվել են «Անդրանիկ», «Գևորգ Չաուշ», «Քսան կախաղանները», «Սասունն այրվում է» պիեսները, «Սասուն» դյուցազներգությունը [580]:Թատերական ներկայացումները մեծապես նպաստում էին մատաղ սերնդին հայրենասիրական ոգով դաստիարակելու առաքելությանը: Տարբեր ժանրերի շրջանակներում կատար-

---

[579] Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 74-75:
[580] Ասատրյան Ա., նշվ. աշխ., էջ 21, Հովակիմյան Բ., նշվ. աշխ., էջ 62-77:

ված բեմադրությունները արտացոլում էին սփյուռքահայության կյանքի տարբեր դրվագներ, պատմական իրադարձություններ: Այս ցուցադրությունները հայրենասիրական լիցքեր էին հաղորդում թե՛ հանդիսատեսին, թե՛ խաղացողներին:

Թատերական կյանքի դերը բացառիկ է կրթության կազմակերպման գործում: Առաջին հայացքից միմյանց հետ աղերս չունեցող թատրոնն ու վարժարանը մեծ փոխներգործություն ունեցան և զգալիորեն նպաստեցին միմյանց՝ որպես առանձին կառույցներ կայանալու և զարգանալու գործում: Թատերական գործունեությունը դպրոցին առաջին հերթին նպաստում էր նյութապես:

Նշված ժամանակաշրջանում Սիրիայի և Լիբանանի հայ համայնքներում Հայ Առաքելական եկեղեցու հովանու ներքո գործող ազգային վարժարանների, հայ ավետարանական և հայ կաթոլիկ վարժարանների բյուջեն ձևավորվում էր աշակերտների վարձավճարների, ինչպես նաև ՀԲԸՄ, հայրենակցական միությունների, միսիոներական կազմակերպությունների, անհատների կատարած նվիրատվությունների և դպրոցական հանդեսների միջոցով: Վերջիններս կազմակերպվում էին ոչ միայն տարեվերջյան հաշվետվությունները ներկայացնելիս, այլև ողջ տարվա ընթացքում: Դպրոցական հանդեսները շատ հաճախ ավարտվում էին երկու կամ երեք արարից բաղկացած թատերական ներկայացումով, որից հետո ներկաները նվիրատվություն էին կատարում դպրոցին. դպրոցի բյուջեն զգալիորեն հավասարակշռվում էր:

Ավանդույթի ուժով Վարդանանց տոնի առթիվ ամեն տարի Հալեպում ցուցադրվում էր Ս. Բյուրատի «Վարդանանքը»[581], իսկ 1929 թ. «Ասպարեզ» թատերախումբը ներկայացրել է «Խաղամոլի վախճանը» «...ի նպաստ Ազգ. վարժարանի և «Կրթասիրաց» միութեան»[582]:

---

[581] Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, էջ 25, Ոսկեմատեան. 1931-1981, էջ 53:
[582] «Յուսաբեր», թիվ 274, փետրվարի 20, 1929:

Թատերական ներկայացումների անցկացման գործում լուրջ ներդրում ունեին հայ ուսուցիչները: Թ. Թորանյանը նշում է, որ թատերական կյանքի կերտման գործում առաջնային դերը ստանձնել են սփյուռքահայ ուսուցիչները, ովքեր, չնայած նյութական սուղ պայմաններին, շաբաթներ ու ամիսներ էին տրամադրում հայ պատանիների շրջանում թատրոնի նկատմամբ սեր արթնացնելու նպատակով[583]: Ուսուցիչները հաճախ կազմակերպում էին ուսուցչական թատերախմբեր, իսկ Ջիբեյլի որբանոցն ուներ իր ուսուցչական թատերախումբը[584]:

Դպրոցի բյուջեն հավասարակշռելու նպատակով թատերական ներկայացումներ էին կազմակերպում տվյալ դպրոցի շրջանավարտների միությունների թատերախմբերը: 1934 թ. Այնթապի կրթասիրաց վարժարանի շրջանավարտների միության վարչությունը դիմում է միության թատերական հանձնախմբին «Ագահ» զավեշտը ներկայացնելու խնդրանքով, որպեսզի որպեսզիդպրոցական գրադարանին նյութական աջակցություն ցուցաբերվի[585]:

Կրթամշակութային կյանքի այլ բնագավառների նման թատերական շարժումը Մերձավոր Արևելքի հայ համայնքներում հիմնականում զարգանում էր Հալեպում, Դամասկոսում, Բեյրութում:

1920-ական թթ. Հալեպում Կիլիկյան գաղթականաց վարժարանին օժանդակելու նպատակով ելույթներով հանդես է եկել ՍԴ Հնչակյան կուսակցության «Անդրանիկ» թատերախումբը[586]: 1922 թ. հունիսի 25-ին նույն թատերախումբը ներկայացրել է «Ռոմեո և Ջուլիետ»-ը «Լունապարկի» ամառային թատրոնում «...Ազգ. երկսեռ վարժարանաց ի նպաստ»[587]: Հօգուտ Մարաշի ազգային Մեսրոպյան

---

[583] Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, էջ 15:

[584] «Սուրիական մամուլ», թիվ 123, ապրիլի 15, 1923:

[585] ՀԱԱ, ֆ. 1421, ց. 2, գ. 105, թ. 15:

[586] «Օշական», թիվ 1-2, հունվար-հունիս, 1988, էջ 36:

[587] «Սուրիական մամուլ», թիվ 43, հուլիսի 2, 1922:

վարժարանի ներկայացումներով հանդես է եկել «Գերմանիկ Վասպուրական» թատերախումբը[588]:

1921 թ. Դամասկոսի Ազգային միությունը ղեկավարում էր ազգային վարժարանը, լսարանը և պարբերական թատրոնը[589]: Դամասկոսում գործել են հյուրեկ թատերախմբեր: 1924 թ. հիշատակվում է պարբերաբար ներկայացումներ տվող «Պանդուխտ» թատերախումբը, որը կազմված էր տեղական ուժերից: Ցուցադրվող ներկայացումներից գոյացված միջոցներն ուղղվում էին գաղթականների խնդիրների լուծմանը[590]:

Սիրիայի այլ շրջաններում նույնպես աշխույժ էր թատերական կյանքը: 1928 թ. դերասան Բ. Աբովյանը թատերական ներկայացումներ է կազմակերպել Սուետիայի Խըդր Բեկ և Քաբուսիե գյուղերում: Այս առիթով դերասանը մատնանշում է. «...կարծեմ բաւական հասոյթ եղաւ ի նպաստ դպրոցին»[591]: Բ. Աբովյանը թատերական ներկայացումներով է հանդես եկել նաև այլ վայրերում, ապա իր հուշերում հիշատակել, որ 1920-1930-ական թթ. ներկայացումներ է տվել նաև Արաբ-Բունարում, Բիթիասում, Կամիշլիում և այլն[592]:

Բեյրութի Սահակյան վարժարանի հուշագրքում նշված է, որ 1934 թ. մարտի 10-ին վարժարանին օժանդակելու նպատակով կազմակերպվում են թատերական ներկայացումներ[593]: Ա. Գրաճյանի հիշատակումը վերաբերում է 1930-ական թթ.: «Ղարիբ» թատերախումբը Բիքֆայայի «Նապոլեոն» թատերասրահում ցուցադրել է «Չարչըը Արթին աղա» կատակերգությունն օժանդակելով տեղի հայ ազգային վարժարանին[594]: 1931 թ. Ջյունիում հայ ազգային վարժարանին օժանդակելու

---

588 Քէշիշեան Վ., նշվ. աշխ., էջ 70, 81:
589 «Հայաստանի կոչնակ», թիվ 40, հոկտեմբերի 1, 1921, էջ 1214:
590 Նույն տեղում, թիվ 27, հուլիսի 5, 1924, էջ 724:
591 ԳԱԹ, Բ. Աբովյանի ֆ., գ. 11/1, թ. 1:
592 Նույն տեղում, գ. 2/1, թ. 1-137:
593 Յուշագիրք հայ ազգ. Սահակեան բարձրագոյն վարժարանի: Արծաթեայ յոբելեան. 1923-1948, էջ 55:
594 Գրաճեան Ա., նշվ. աշխ. էջ 22:

նպատակով կազմակերպվում է թատերական ներկայացում, որին ներկա էր Ջյունիի երեսփոխան շեյխ Յուսուֆ էլ Խազեն: Վերջինս հայ հանդիսականներին դիմել է կոչով. «Պարոններ, երբեք մի թողուք դուք այն աւանդութիւններն ու յիշատակները, զորս դուք կը բերէք ծեզի հետ: Այդ յիշատակները, պատմական, թէ աւանդական, ունին իրենց գեղեցկութիւնն ու հրապոյրը: Պահեցէք զանոնք հաւատարմօրէն, մշակեցէք զանոնք երկիւղածօրէն, եւ խառնեցէք անոնց հետ զորս կը գտնեք մեր քով»[595]:

Փաստորեն, թատերական կյանքը, լինելով հայապահպանության կռվաններից մեկը, իր ուրույն նպաստը բերեց նաև կրթության կազմակերպման ու կայացման գործին: Մի կողմից թատերական միջավայրը օժանդակում էր դպրոցին նյութապես, իսկ մյուս կողմից դպրոցականներն ու ուսուցիչներն էին իրենց մասնակցությունը բերում թատերական շարժման զարգացմանը: Սիրողական թատերախմբերից դուրս եկան այնպիսի դերասաններ, ովքեր մի քանի տարի անց կազմելու էին սիրիահայ և լիբանանահայ համայնքի մասնագիտացված թատրոնի սերուցքը:

## 3.2. Գրական կյանքը

Սփյուռքահայ գրականությունը արևմտահայ գրականության շարունակությունն է: Այն սկիզբ է առել 1920-ական թթ.[596]:

Մեծ Եղեռնից մազապուրծ արևմտահայ գրական դեմքերը հաստատվեցին դրսաշխարհում: Ա. Չոպանյանը նշում է, որ գաղութների գրական շարժումը կարևորվում է արևմտահայ գրական դեմքերի Սփյուռքում գտնվելով: Մեծ գրողը բոլորի

[595] «Հայաստանի կոչնակ», թիվ 35, օգոստոսի 29, 1931, էջ 1117:

[596] Սեւան Գ., Հայրենիք-սփիւռք գրական կապերը (1920-1985), Երևան, էջ 3, «Ազգ», թիվ 49, մարտի 16, 2002, Սրապիոնյան Ս., Լիբանանահայ գրականությունը սփյուռքահայ գրականության համապատկերում, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր», Երևան, 2012, էջ 129:

պարտքն է համարում պահպանել այդ «ազգային հարստութիւնը»[597]: Խնդրո առարկա ժամանակաշրջանում սփյուռքահայ գրական շարժման կենտրոններն էին Փարիզը և Բոստոնը, իսկ մնացած հայաշատ վայրերում գրական շարժումը զարգանում էր տարերայնորեն չունենալով հստակ ուղղվածություն: Ավելի շատ զարգացում էր ապրում սիրողական կամ «առօրեայ» գրականությունը: Ժամանակի հանդեսներում լույս էին տեսնում հարյուրավոր գրական ստեղծագործություններ հայտնի ու անհայտ հեղինակների կողմից:

Նշված ժամանակաշրջանում կանոնավոր հրատարակությունների և դրամական միջոցների սղության պատճառով գրականության զարգացման գործում անգնահատելի է մամուլի դերը: Գրական ստեղծագործություններ էին լույս տեսնում հատկապես դպրոցներում տպագրվող հանդեսներում ու շաբաթաթերթերում: Ինքնատիպ ստեղծագործություններով հանդես էին գալիս ինչպես ուսուցիչները, այնպես էլ աշակերտները:

1925 թ. նոյեմբեր – 1927 թ. հոկտեմբեր ժամանակահատվածում Բեյրութում Ե. Քեշիշյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Կրթասիրաց» գրական, գիտական, գեղարվեստական ամսագիրը, «...որ կը ձգտի իր էջերով երեւան բերել ժողովուրդին հոգեկան բարձրութիւնը եւ քաղաքակրթական յատկութիւնները»[598]: 1927-1931, 1933-1934 թթ. Բեյրութում լույս է տեսնում Մ. Նաջարյանի «Սահակ-Մեսրոպ» շաբաթաթերթը, 1929 թ. հունվար-հուլիս ամիսներին Վ. Գեորգյանի «Ջահակիր» երկշաբաթաթերթը: Ա. Տեր-Խաչատուրյանը այս երեք օրգանը մատնանշում է որպես լիբանանահայ առաջին գրական օրգան նշելով. «Սակայն գաղութը տակաւին պատրաստ չէր մարսելու գրականութիւնը, ո՛չ ալ հրատարակիչները նիւթական զօրեղ միջոցներ ունէին

[597] Չօպանեան Ա., նշվ. աշխ., էջ 13:

[598] «Հայաստանի կոչնակ», թիվ 41, հոկտեմբերի 9, 1926, էջ 1424:

տպագրական ծախսերուն տոկալով հետզհետէ գրական ճաշակ ստեղծելու եւ իրենց գրական ամսագիրներուն ամուր կռուան մը ապահովելու համար»[599]:

1930 թ. «Սիհուն» ամսագրում նշվում էր. «Լիբանանահայ գրականութիւն չկայ..., բայց կարելի է յառաջացնել»[600]:

1932-1934 թթ. լույս է տեսնում Ս. Զարիֆյանի խմբագրած «Երիտասարդ հայուհի» ամսաթերթը, որին աշխատակցում էին երիտասարդ գրողներ: Այն ուներ հետևյալ տարբերագիրը «հայ իգական գրական և հասարակական ամսաթերթ»[601]:

1939 թ. Բեյրութում սկիզբ է առնում երկու գրական թերթի տպագրությունը «Հայ գիր» և «Ծիածան»: Առաջինը Վ. Այգունու, իսկ երկրորդը ՀԲԸՄ ՀԵԸ գրասեր երիտասարդների միության նախաձեռնությունն էր[602]:

Հանդեսներում, օրաթերթերում, ամսաթերթերում ու պարբերականներում տպագրվող բանաստեղծությունները, վեպերը, պատմվածքները «առօրեայ գրականութեան» մաս էին կազմում կրելով մեծամասամբ սիրողական բնույթ. «Շատ քիչ բան, մեր առօրեայ գրականութենէն, կը խանդավառէ մեզ...»[603]: Այդ իրավիճակը շարունակվեց մոտ քսան տարի: 1943 թ. Հ. Աղբաշյանը նշում է, որ Սփյուռքի ձևավորման սկզբից անցած քսան տարվա ընթացքում Սիրիայում և Լիբանանում ստեղծված գրականությունը իրենից ներկայացնում է մի քանի գրական պարբերաթերթ, լրագիր: Գրողներն էլ ստեղծագործում են անցյալի մասին. «Ծուխի ծէն մը գիւղէն, առուակ մը, գերեզմանատան մը մէջ հասակ քաշած մենակեաց նոճի մը պզտիկ յուզումներ կը պատճառեն անոնց»[604]:

---

599 Հայկազեան հայագիտական հանդես, Բեյրութ, 1971, էջ 267:
600 «Սիհուն», թիվ 3, փետրվարի 8, 1930:
601 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Դ, էջ 66:
602 Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը եւ հայ երիտասարդաց ընկերակցութիւնը (Անդրանիկ) Լիբանանի մէջ – Համառօտ Ակնարկ, Բեյրութ, 2006, էջ 5, Հայկազեան հայագիտական հանդես, 1971, էջ 269:
603 «Յուսաբեր», թիվ 156, հոկտեմբերի 3, 1931:
604 «Ժողովուրդի ձայն», Բեյրութ, թիվ 1, հունվար, 1943, էջ 1:

1920-ական թթ. լիբանանահայ գրական շրջանակներում էին գործում Վ. Գեորգյանը, Դ. Չարըզը, Լ. Շանթը, Ն. Աղբալյանը, Կ. Սասունին, Գ. Իփեկյանը և այլոք[605]: Ա. Տոնոյանի հավաստիացմամբ լիբանանահայ գրականությունը սկիզբ է առել բանաստեղծությամբ: Սփյուռքահայ արձակը սկզբնավորվեց ամերիկահայ և ֆրանսահայ արձակագիրների ստեղծագործություններով: Մերձավոր Արևելքի արձակը երևան եկավ ավելի ուշ[606]:

Լիբանանահայ գրողների մեծամասնությունը գրական գործունեությունը սկսել է Հալեպ քաղաքից:

Ըստ Ժ. Դանիելյանի, Լիբանանի և Սիրիայի հայ համայնքներում գրականությունը սկիզբ է առել որբանոցներից: Գրողների գլխավոր հատկանիշներն էին. «...հայրենապաշտութիւն կամ հայրենիքի կարօտ, անցեալապաշտութիւն, որբի հոգեբանութիւն, թուրքին դէմ ցասում, ոմանց մօտ յոռետեսութիւն իսկ ուրիշներու մօտ լաւատեսութեան ձգտող բան մը»[607]: 1930-ական թթ. լիբանանահայ գրականության ջահակիրներն էին Վ. Վահյանը, Մ. Իշխանը, Ա. Ծառուկյանը: Այս սերնդի առանձնահատկություններն էին Մեծ Եղեռնի, ծննդավայրի կորստյան հետ կապված հիշողությունները, սփյուռքյան նոր իրողությունները, Հայաստանի իրականությունն ու նրա հետ կապված հույսերը, լեզվական ձեռքբերումները[608]:

Սփյուռքահայ գրականության ուղղվածությունը համակարգվեց մի քանի տասնամյակի ընթացքում: 1920-ական թթ. Սփյուռքում սկզբնավորվեց և զարգացավ գյուղագրությունը կամ կարոտի գրականությունը, որը խիստ քննադատության արժանացավ ժամանակակիցների մի մասի կողմից: Քննադատող թևի կարծիքով ավելի նպատակահարմար էր պատկերել նոր Սփյուռքի կյանքը մի կողմ թողնելով

---

605 Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Դ, էջ 11:

606 Հայկազեան հայագիտական հանդէս, 1970, էջ 195:

607 «Նաւասարդ», Բէյրութ, 1964, էջ 49:

608 «Դրազարկ» տարեգիրք Հ.Ե.Կ.Դ.-ի, 1971, էջ 40-45:

արևմտահայ գյուղը. «Արդ ի՞նչ կը ներկայացնէ մեր գրականութեան ներկան: Մեր ապրած կեանքի պատկերը (ճիշտ է, որ անցեալ կեանքի մը հետքերը դեռ ջնջուած չեն բոլորովին): Ի՞նչ պէտք է ներկայացնէ մեր գրականութեան ապագան: Մեր ապրելիք կեանքին պատկերը: Այսօր մենք յուշերով ու տպաւորութիւններով կապուած ենք մեր հայրենիքին ու մօտավոր անցեալին: Սակայն յուշերն ու տպաւորութիւնները, որքան ալ զօրաւոր ըլլան, չեն կրնար մեր գրականութիւնը փրկել իր անհողութեան արատէն: Ի հարկէ, նոր կեանքի մը պայմանները, միջավայրը և այլազան ազդեցութիւնները նոր դէմքեր երեւան պիտի բերեն, թերևս աւելի ինքնատիպ ու աւելի տիրապետող»[609]: Այնուամենայնիվ, գյուղագրությունը կայացավ որպես գրական ուղղություն:

Սփյուռքահայ գրականությունը հարատևեց ոչ միայն զուտ գրական ավանդների, այլ ստեղծված սոցիալ-մշակութային նոր միջավայրի արդյունքում: Այդ միջավայրում ազգային ավանդույթները բախվեցին օտար մշակութային արժեհամակարգի հետ[610]: Սփյուռքահայ գրականությունը նույնպես խնդիր դրեց նպաստել հայապահպանությանը անցյալի և ներկայի համադրմամբ:

1930-ական թթ. Վահե Վահյանի գրական գործունեությունն ամփոփված է «Արեւ-անձրեւ» և «Ոսկի կամուրջ» ժողովածուներում, լույս տեսած Բեյրութում համապատասխանաբար 1933 թ. և 1946 թ., Մ. Իշխանինը «Տուներու երգը», «Կրակը» ժողովածուներում լույս տեսած Բեյրութում համապատասխանաբար 1936 թ. և 1938 թ., Ա. Ծառուկյանի «Առագաստներ» ժողովածուն լույս տեսած Հալեպում 1939 թ.:

Փաստորեն, 1920-1930-ական թթ. լիբանանահայ գրականությունը գտնվում էր զարգացման ավելի բարձր մակար-

---

609 Գաբրիելյան Վ., նշվ. աշխ., էջ 68-72, Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր, էջ 61, Գալստյան Գ., Արևմտահայ գյուղը սփյուռքի գրականության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 1, 1974, էջ 220-224, «Յուսաբեր», թիվ 268, փետրվարի 13, 1929:

610 Գասպարյան Գ., Սփյուռքահայ գրականության զարգացման մի քանի հարցեր, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, 1986, էջ 153:

դակում, քան սիրիահայ գրականությունը: Լիբանանում լույս էին տեսնում գրական թերթեր, ամսագրեր: Նշված ժամանակաշրջանում հենց այդ գործընթացն էր գրական մտքի զարգացման գլխավոր ուժը: Առաջնակարգ էին հատկապես դպրոցներում և որբանոցներում լույս տեսնող թերթերն ու ամսագրերը: Ճիշտ է, համեմատած Եվրոպայի, ԱՄՆ-ի հայ համայնքների, Մերձավոր Արևելքի հայ համայնքներում գրականությունը դեռ նոր էր սկսում զարգանալ, այնուամենայնիվ, այն մաս կազմեց սփյուռքահայ գրականությանը և նույնպես խնդիր էր լուծում հայապահպանության տեսանկյունից աղերսներ ունենալով կրթական գործունեության հետ: Թատերական ներկայացումների ընթացքում բեմադրվում էին տարբեր գրական ստեղծագործություններ, իսկ գրական գործերը տպագրվում էին համապատասխան թերթերում: Գյուղագրությունն ու «առօրեայ» գրականությունն իրենց նպաստն ունեցան սիրիահայ և լիբանանահայ գրականության ստեղծման գործում:

## 3.3 Պարբերական մամուլը

Սփյուռքահայ մամուլը, ծնունդ առնելով 1920-ական թթ. և հանդես գալով արևմտահայ մամուլի շարունակողի դերում, դարձավ հայապահպանման կարևոր առանցքներից մեկը: Ս. Գասպարյանը նշում է, որ առանց դպրոց-մամուլ համատեղ գոյակցության Սփյուռքում չէր կարող պահպանվել հայկականությունը, հայոց պահանջատիրությունը[611]: Սփյուռքահայ մամուլն անքակտելիորեն կապվեց մշակութային կյանքի մյուս ասպարեզների հետ: Թ. Թորանյանը նշում է, որ հայ դպրոցից զատ «...կար ուրիշ լծակ մը, առանց որուն թատերական կեանքի զարգացումը պիտի կաղար: Այդ, հայկական մամուլի

[611] Գասպարեան Ս., Միջազգային մամուլ եւ չորրորդ իշխանութեան դրոյթը, էջ 70, «Ազգ», թիվ 212, նոյեմբերի 19, 2003:

գոյութեան հարցն էր: Եկեղեցի, դպրոց, մամուլ: Ահա այն առանցքը, որուն շուրջ եւ որուն շնորհիւ կը դառնար հայ կեանքը»[612]: Նոր ձևավորվող սիրիահայ և լիբանանահայ մշակույթի ճյուղերը սերտորեն փոխկապակցված էին միմյանց: Սփյուռքահայ մամուլի դերը շատ կարևոր էր տարբեր համայնքների միջև կապ պահպանելու տեսանկյունից[613]:

1920-1930-ական թթ. Սիրիայում և Լիբանանում տպագրվող մամուլը ուներ ոչ միայն տեղեկատվական, այլև կրթական-դաստիարակչական նշանակություն: Այդ մասին է վկայում հայտնի մանկավարժ Պ. Քարծայրի դիմումը Նյու Յորքում լույս տեսնող «Հայաստանի կոչնակ» ամսագրի խմբագրությանը: «Թերթ եւ գիրք հայ տարագրեալներուն» խորագրով դիմումի մեջ մի շարք մանկավարժների անունից խնդրվում է որբերի համար «Հայաստանի կոչնակ»-ի օրինակներ և «...կրօնական եւ մաքուր ու բարոյական գրքեր» ուղարկել[614]:

Այնուամենայնիվ, առկա էին կազմակերպական խնդիրներ: 1925 թ. «Հայաստանի կոչնակի» ամանորյա համարի խմբագրականը նվիրված է սփյուռքահայ մամուլի առջև ծառացած խնդիրներին, որոնց լուծման համար առաջարկվում են հետևյալ դեղատոմսերը.

- Ազգային կամ հանրային շահը վեր դասել անձնական, կուսակցական կամ խմբակցային շահերից:
- Եզրակացություններ անելիս հիմնվել իրողությունների, այլ ոչ զրույցների, կարծիքների կամ ենթադրությունների վրա:
- Քննադատական կամ վիճաբանական հոդվածներից հանել վիրավորական ոճը:
- Զգուշանալ տվյալ երկրի բնիկների նկատմամբ անհարկի արտահայտություններ թույլ տալուց:

---

[612] Թորանեան Թ., Սուրիահայ թատրոնը եւ Բարսեղ Աբովեանի յուշերը, էջ 21:
[613] Գասպարյան Ս., Միջազգային մամուլ եւ չորրորդ իշխանութեան դրոյթը, էջ 122:
[614] «Հայաստանի կոչնակ», թիվ 10, մարտի 10, 1923, էջ 311:

• Չմոռանալ մամուլի դաստիարակչական կոչման մասին[615]:

1920-1930-ական թթ. Սիրիայում և Լիբանանում տպագրվել են թերթեր, ամսագրեր, տարեգրքեր, տարեցույցեր, օրացույցեր և այլն: Կրթական գործին նպաստելու և կրթամշակութային կյանքի լուսաբանման տեսանկյունից կարևոր է կուսակցական, կրոնական և կրթական ուղղվածություն ունեցող մամլուլի միջոցների ուսումնասիրությունը: Այս թերթերն ու հանդեսները բովանդակում էին հասարակական-քաղաքական, գրական-գեղարվեստական, հոգևոր, մանկապատանեկան, երգիծական և բժշկական բաժիններ:

Դաշնակցականները, հնչակյանները, ռամկավարները և համայնավարները ժամանակի ընթացքում սկիզբ դրեցին մամուլի միոցների հրատարակությանը գիտակցելով մամուլի դերը իրենց գաղափարների տարածման և համասփյուռքյան նշանակության խնդիրների վերհանման տեսանկյունից[616]:

Կուսակցությունների քաղաքական հարաբերությունները ևս իրենց արտացոլումն էին գտնում մամուլում[617]: Գաղափարական պայքարը ընթանում էր մամուլի միջոցով: ՀՅԴ պարբերականները խիստ քննադատում էին բոլոր ոչ դաշնակցական թերթերը դաշնակցական մամուլը համարելով «...մեր ազգային կեանքի լաւագոյն ուղեցոյցը...»[618]: Կահիրեի ՀՅԴ օրգան «Յուսաբեր»-ում հետևյալ կերպ են ներկայացվում «Լիբանան» և «Սուրիական մամուլ» թերթերը. «Լիբանանը թերթ մըն է, որու գոյնը դժուար է որոշել: Շատ դժուար, որովհետեւ անգոյն է: Գոյութեան ոչ մէկ խարիսխ ունի ան, չունի նաև ընթերցող»: «Լիբանան»-ը լույս է տեսնում «Հնչակեան շեֆերու գործակցութեամբ»[619]: 1932 թ. «Լիբանան» թերթի հրատարակումն անորոշ ժամանակով

---

615 «Հայաստանի կոչնակ», թիվ 2, հունվարի 10, 1925, էջ 35:
616 Թորանեան Թ., Սուրիահայ թատրոնը եւ Բարսեղ Աբովեանի յուշերը, էջ 22:
617 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 584-585:
618 «Յուսաբեր», թիվ 127, օգոստոսի 29, 1929, թիվ 196, նոյեմբերի 19, 1930:
619 «Հայաստանի կոչնակ», թիվ 32, օգոստոսի 9, 1924, էջ 1010:

կասեցվում է: Ըստ «Յուսաբերի» «...չանթաժի բնոյթ կրող յօդուած մը հրատարակած ըլլալուն համար...»[620]: «Սուրիական մամուլը»-ը անվանվում է «ողորմելիութեան գլուխգործոց», որն «...իր խմբագրականներում երբեմն սոցիալիստ է, յաճախ համայնավար, քիչ մը անիշխանական և ուզած րոպէին ազգայնական մոլի ու թթու»[621]:

1929 թ. մարտի 7-ից հայատառ թուրքերենով հրատարակվող «Լիբանան» թերթը լույս է տեսնում հայերենով[622]: «Սուրիական մամուլը» իր հերթին քննադատել է ՀՅԴ պարբերականներին, անդրադարձել Խորհրդային Հայաստանի տնտեսական նվաճումներին և մշակութային վերելքին[623]:

1918-1926 թթ. Սիրիայում լույս է տեսել 17, իսկ 1927-1944 թթ. 10 անուն հայկական թերթ[624]: Նշված ժամանակաշրջանում Սիրիայում կուսակցական մամուլի օրգաններն էին «Սուրիական մամուլը» (ՍԴ Հնչակյան կուսակցություն) և «Եփրատը» (ՌԱԿ):

1922-1927 թթ. Հալեպում լույս է տեսել «Սուրիական մամուլը»: Սեփականատերն էր Հ. Թորոսյանը, պատասխանատու տնօրենը Տ. Երեցյանը[625]: 1927 թ. Հ. Ջառիկյանի հաղորդմամբ Հալեպի ՍԴ Հնչակյան մասնաճյուղը նախաձեռնում է «Փարոս» օրաթերթի հրատարակությունը որպես «Սուրիական մամուլի» շարունակություն: Լույս է տեսել 13 համար: Օրինակներ չեն պահպանվել[626]:

1927 հուլիսի 6-ից մինչև 1949 թ. Հալեպում լույս է տեսել «Եփրատ» թերթը, որի սեփականատերն էր Ե. Բենյանը,

---

620 «Յուսաբեր», թիվ 166, հոկտեմբերի 14, 1932:
621 Նույն տեղում, թիվ 93, հուլիսի 21, 1926:
622 Նույն տեղում, թիվ 302, մարտի 25, 1929:
623 «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 534:
624 Հայկազեան հայագիտական հանդես, 1972, էջ 202:
625 Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան. 1887-1962, հ. Ա, էջ 497, Պարիկեան Հ. Վարժապետեան Յ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, էջ 141-145, 208:
626 Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, Հալեպ, 1978, էջ 7:

պատասխանատու տնօրենը Խ. Պողոսյանը[627]: 1936 թ. ապրիլից պաշտոնապես համարվել է ՌԱԿ-ի օրգան: Հ. Պարիկյանի հավաստիացմամբ. «1931-ին, նիւթական և այլ պատճառներ կը դիմակալեն և թերթին հրատարակութիւնը կը յանձնուի Հրատարակչական մարմնի մաս կազմող Ռամկավար Կուսակցութեան անդամներուն և խմբագիր-ներուն, որոնք թերթը կանգուն կը պահեն մինչեւ 1949-ի ապրիլի վերջը»[628]:

Սիրիայում կրոնական թերթերից հայտնի էր Հայ ավետարանական միության հրատարակած «Նոր աւետա-բերը»: Լույս է տեսել 1927 թ. նոյեմբերի 5-ից մինչև 1934 թ. ամառը, սեփականատերն էր Կ. Հարությունյանը, պատասխա-նատու տնօրենը Տ. Խրլոբյանը: Ունեցել է նաև հայատառ թուրքերենով գրված բաժին[629]:

1921 թ. փետրվարին Մուսա Լեռան Յուղուն Օլուք գյուղում հրատարակվել է «Կոկոն» ամսաթերթը: Առաջին չորս համարը լույս է տեսել ձեռագիր, ապա խմորատիպ: Խմբագիր-հրատա-րակիչն էր Զ. Գազանջյանը[630]: 1924 թ. Ալեքսանդրետում հրատարակվել է «Զարթոնք» շաբաթաթերթը, որը բաղկացած էր 16 էջից: Ֆրանսերենին և հայերենին հատկացվել են 8-ական էջեր[631]: 1930 թ. Հալեպի Բեթել եկեղեցին հրատարակել է 4 թվից բաղկացած «Լոյս» ձեռագիր ամսաթերթը[632]:

Կրթական պարբերականներ էին տպագրվում Հալեպի հայտնի վարժարաններում: Հալեպի Կիլիկյան վարժարանում են պատրաստվել նախ «Մուրճ», ապա «Յոյս» խմորատիպ

---

[627] Դանիէլեան Ժ., Ռամկավար ազատական մամուլը (Մատենագիտական ակնարկ), էջ 25, Պարիկեան Հ. Վարժապետեան Յ., նշվ. աշխ., էջ 141-145, Պողարեան Գ., նշվ. աշխ., հ. Ա, էջ 29, «Յուսաբեր», թիվ 81, հուլիսի 5, 1929:
[628] «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գ. Ե, 1996, էջ 89:
[629] Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, էջ 17, Հայկազեան հայագիտական հանդես, 1972, էջ 215:
[630] Դանիէլեան Ժ., Հայ պարբերական մամուլի հարցեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1977, էջ 299:
[631] «Հայաստանի կոչնակ», թիվ 32, օգոստոսի 9, 1924, էջ 1010:
[632] Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, էջ 28:

պարբերաթերթերը, որոնց աշխատակցում էին շրջանավարտները: «Յոյս» պարբերաթերթը լույս է տեսել 1931-1938 թթ.: Նույն վարժարանում հայտնի էին նաև «Պատի թերթերը», որտեղ գրվում էին լավագույն շարադրությունները[633]: Այնթապցիների կրթասիրաց վարժարանի շրջանավարտների միության պաշտոնաթերթը «Կեանք» ձեռագիր խմորատիպ պարբերաթերթն էր, որը լույս է տեսել 1929 թ. օգոստոսից մինչև 1935 թ. սեպտեմբեր 29 համարով: Խմբագիրն էր վարժարանի տնօրեն Գ. Պողարյանը[634]:

Լիբանանում կուսակցական մամուլի օրգաններն էին «Ազդակը» (ՀՅԴ), «Արարատը» (ՍԴՀԿ), «Զարթոնքը» (ՌԱԿ):

1923 թ. Լիբանանում լույս են տեսնում «Փիւնիկ», ապա «Նոր Փիւնիկ» թերթերը: 1924 թ. հունիսից հրատարակվող «Փյունիկ»-ի պատասխանատու տնօրենն էր Մ. Պողոսյանը[635]: Այնուհետև «Նոր Փիւնիկը» անվանակոչվում է «Ազդակ»: 1927 թ. մարտի 7-ին Բեյրութում Հ. Պալյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Ազդակի» առաջին համարը: Սկզբնական շրջանում եղել է եռօրյա, 1930 թ. երկօրյա թերթ, 1932 թ. օրաթերթ[636]:

1924 թ. Մ. և Ժ. Աճեմյանների խմբագրությամբ լույս է տեսնում «Լիբանան» թերթը, որը անուղղակիորեն գտնվել է Հնչակյան կուսակցության ազդեցության տակ[637], և գործել ընդհատումներով: 1928-1930 թթ. թերթի խմբագիրն է եղել Հ. Պալյանը (Սուրեն Պահլավունի)[638]:

1925-1926 թթ. լույս տեսած «Հայ կեանքը» Մ. Շամտաճյանի խմբագրությամբ հայկական անկախ թերթ էր, բայց շատ կարճ

---

[633] Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), էջ 89:

[634] Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, էջ 36:

[635] Նաճարեան Մ., նշվ. աշխ., էջ 72, Վարժապետեան Ս., նշվ. աշխ., հ. Դ, էջ 63, «Հայաստանի կոչնակ», թիվ 24, հունիսի 14, 1924, էջ 753:

[636] «Հայ սփյուռք» հանրագիտարան, էջ 318, Տէր-Խաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990), էջ 19-22, «Ազգ», թիվ 46, մարտի 14, 2007:

[637] Թոփուզյան Հ., նշվ. աշխ., էջ 287, Հայկազեան հայագիտական հանդէս, 1971, էջ 266, «Հայաստանի կոչնակ», թիվ 32, օգոստոսի 9, 1924, էջ 1010:

[638] Քէլէշեան Մ., նշվ. աշխ., էջ 491:

պահպանեց իր գոյությունը: «Հայ կեանքի» խմբագրությունը նպատակ էր հետապնդում դառնալ չեզոք ուժերի պարբերականը. «Փորձառու եւ կարող խմբագրի մը անձնական ձեռնարկով լոյս կը տեսնէ այժմ անկախ հայթերթ մը, «Հայ կեանք» ինչ որ մեր շատերուն փափաքն էր շատոնց ի վեր եւ կը փնտռուէր, արդեօք պիտի կրնայ՞ ապրիլ, պէտք եղած քաջալերութիւնը կը վայելէ՞: Մեր ուսեալ, լուր չէզոք դասակարգը, անհատաբար կամ հաւաքաբար զայն խրախուսելու պարտաւոր չե՞ն արդեօք»[639]:

1937 թ. սեպտեմբերի 26-ին Բեյրութում լույս է տեսնում «Զարթնք» օրաթերթի առաջին համարը, որի առաջին խմբագիրը Վ. Թեքեյանն էր, ով իր անդրանիկ խմբագրականում նշում է, որ թերթը Լիբանանի հանդեպ հավատարիմ և ուղղամիտ քաղաքացու, արաբ ժողովրդի հանդեպ սրտակից բարեկամի, իսկ Խորհրդային Հայաստանի հանդեպ բարիք և մեծություն ցանկացող, ջանասեր զավակների դիրք է որդեգրել[640]:

1937 թ. նոյեմբերի 7-ին Բեյրութում լույս է տեսնում «Արարատի» առաջին համարը: 1938 թ. տարեսկզբին գրված է հետևյալը. «Արարատի խմբագրութեան որպէս առաջնորդ կանգնած է հայ Սոցիալ լրագրութեան պատուական վետերաններէն և նախապատերազմեան Հնչակեան Ուսանողութեան տիտան առաջնորդներէն ընկ. Արսէն Կիտուրը...»[641]:

Նշված ժամանակաշրջանում մամուլի կայացման գործում լուրջ ներդրում է ունեցել ՍԴ Հնչակյան կուսակցությունը, որն ունեցել է և՛ կուսակցական, և՛ անուղղակիորեն կուսակցությանը ենթարկվող պարբերականներ[642]:

1925 թ. Բեյրութում լույս է տեսնում հայ համայնավարների «Նոր Փարոս» թերթը 2 համարով, 1931-1932 թթ. «Կարմիր արշալույս» թերթը 4 համարով, 1934 թ. «Մարտակոչ» թերթը 4

---

[639] «Հայ կեանք», թիվ 51, նոյեմբերի 23, 1925:

[640] Դանիէլեան Ժ., Ռամկավար ազատական մամուլը (Մատենագիտական ակնարկ), էջ 25, «Ազգ», թիվ 192, հոկտեմբերի 25, 2005, թիվ 69, ապրիլի 14, 2007:

[641] «Արարատ», թիվ 45, հունվարի 22, 1938:

[642] Տէր-Խաչատուրեան Ա., Սոցիալ-դեմոկրատ հնչակեան կուսակցութեան մամուլը (1887-1992), էջ 3:

համարով: 1938 թ. փետրվարի 6-ին Բեյրութում լույս է տեսնում հայ համայնավարների «Ժողովուրդի ձայնը»[643]:

1938-1946 թթ. Հ. Դեվեջյանի խմբագրությամբ լույս տեսած «Առաւօտ» թերթը հայտնի էր որպես «...դժգոհ դաշնակցականներու թերթ»[644]:

Կրոնական մամուլի միջոցները գործում էին միմիայն Բեյրութում «Հասկ» (Կիլիկիո կաթողիկոսություն), «Աւետիք» (Հայ կաթողիկէ պատրիարքություն), «Ջանասեր» (Սիրիայի և Լիբանանի հայ ավետարանական քրիստոնեական Ջանից ընկերակցություն), «Պատանեկան արձագանք» (Լիբանանի Ջանից ընկերակցություն):

1931 թ. դեկտեմբերի 12-ին Կիլիկիո կաթողիկոսը դիմում է Լիբանանի ներքին գործերի նախարարությանը «Հասկ» ամսաթերթի համար արտոնագիր տրամադրելու համար, և նույն թվականի դեկտեմբերի 16-ին այն տրամադրվում է[645]: Ամսագրի հրատարակման համար այլ խոչընդոտներ չկային: 1932 թ. «Հասկ» անվամբ 4 էջանոց ամսաթերթ է սկսում լույս տեսնել Անթիլիասում որպես Կիլիկիո կաթողիկոսության օրգան[646]:

1936 թ. դեկտեմբերի 1-ից լույս է տեսել «Պատանեկան արձագանքը», որի խմբագիրն էր Մ. Շնորհքյանը: 1937 թ. աշնանից «Պատանեկան արձագանքը» հրատարակել է իր հավելվածը «Ջանասերը»: 1932 թ. մարտի 28-ին լույս է տեսնում «Աւետիք»-ի առաջին համարը[647]:

1925-1926 թթ. 12 թվով լույս է տեսել «Ովասիսը», իսկ 1933-1934 թթ. Հ. Ղազարյանի «Հայ պատանին»[648]: «Ովասիս»-ի առաջին համարի խմբագրականում նշված է. «Ովասիս պիտի ըլլայ նոյն ատէն հանդէս մը, որուն պիտի կապուի մօտաւոր ու

---

[643] Հայկազեան հայագիտական հանդես, 1971, էջ 268, 272:
[644] Նույն տեղում, էջ 273:
[645] Դանիէլեան Ժ., Բանասիրութեան բաւիղներուն մէջ, Երևան, 2011, էջ 149, նույնի, Բանասիրական որոնումներ, Բեյրութ, 1996, էջ 117:
[646] «Յուսաբեր», թիվ 254, հունվարի 29, 1932:
[647] Քասունի Ե., նշվ. աշխ., էջ 544, Հայկազեան հայագիտական հանդես, 1971, էջ 268, 273:
[648] Հայկազեան հայագիտական հանդես, 1971, էջ 273:

արտասահմանի ծանօթ գրական ուժեր, զայն իր անունին արժանի ամսագիր մը դարձնելու համար: Այս առաջադրութեամբ կոչ կ'ընենք Սուրիահայ երկսեռ պատանեկութեան համախմբուիլ «Ովասիսը» ղեկավարող սկզբունքներու շուրջ»[649]: «Ովասիսը» լույս էր տեսնում ՀՅԴ Սիրիայի և Լիբանանի շրջանային միության հովանավորությամբ: Նախավերջին համարում նշված է, որ ՀՅԴ վերին շրջանային ժողովում որոշվել է «...երիտասարդ սերնդի դաստիարակութեան գործը տանել այնպիսի ուղիով, որ այդ սերունդը խորապէս գիտակցի հայկական դատի նշանակութիւնը»: Այդ նպատակին հասնելու համար առաջարկվում է պատանեկան միությունների ղեկավարներին կազմակերպել պատանեկան դպրոցներ՝ 6-ամսյա դասընթացով: Դասավանդվող առարկաների շարքում կարևոր էին պետական իրավունքը, քաղաքային տնտեսությունը, հայ նոր գրականության պատմությունը, հայոց պատմությունը, հայ ազատագրական շարժումների պատմությունը[650]:

Ուսանողական մամուլից հայտնի էին «Այգ», «Նոր դար», «Հոսանք»-«Տուն» որբանոցային խմորատիպ թերթերը: Առաջինը Ջյունիի, երկրորդը Նահր Իբրահիմի, երրորդը Ջիբեյլի որբանոցի ձեռնարկներն էին: Հայ ավետարանական տղաների վարժարանում լույս է տեսնում «Սիփան» թերթը: Առաջին համարը լույս է տեսել 1925 թ.[651]: 1932 թ. Ղազիրի որբանոցում հրատարակվում էր «Լոյս» ամսաթերթը, որը 1939 թ. դառնում է երկամսաթերթ[652]:

1933 թ. հուլիսի 1-ից Բեյրութում լույս է տեսնում հայալեզու «Էքօնօմիա» խորագրով շաբաթաթերթը տնօրինությամբ Գ. Սախջյանի. «Շաբաթաթերթը նուիրուած պիտի ըլլայ

---

649 «Ովասիս», թիվ 1, մարտի 1, 1925, էջ 1-2:
650 Նույն տեղում, թիվ 10-11, դեկտեմբեր-հունվար, 1925-1926, էջ 156:
651 Հայկազեան հայագիտական հանդես, 1973, էջ 268-269, «Նաւասարդ», 1964. էջ 105:
652 «Հասկ», թիվ 11-12, 1966, էջ 448:

բացառաբար տնտեսական, առեւտրական, ելեւմտական եւ ճարտարուեստական հարցերու»[653]:

1924 թ. հոկտեմբերին Հալեպում լույս տեսավ «Պայքար կենաց» պարբերականի միայն մեկ թիվ[654], որի տպագրությունը 1925 թ. տեղափոխվեց Բեյրութ: 1925 թ. լույս տեսավ որբերի Մերձավոր Արևելքի դաշնության պարբերականը, որի առաջին համարի խմբագրականում նշված է. «Մերձաւոր Արևելքի դաշնակցութեան պաշտօնաթերթը՝ որ անցեալ տարուայ ընթացքին տարբեր վայրերու մէջ լոյս տեսած է մէկէ աւելի յորջորջումներով, այս անգամ դուրս կու գայ Պէյրութի մէջ, «Որբաշխարհի աստղը» թափանցիկ մակագրութեամբ»[655]:

Փաստորեն, նշված ժամանակաշրջանում լիբանանահայ և սիրիահայ մամուլը լուրջ հաջողություններ արձանագրեց նաև կազմակերպական բնագավառներում: Կուսակցական մամուլում տպագրվում էին միջազգային լուրեր, տվյալ կուսակցությանը, համայնքին և Սփյուռքին վերաբերող նյութեր, գովազդ: Կրոնական թերթերում տպագրվում էին տվյալ հարանվանությանը վերաբերող ընթացիկ տեղեկություններ, հատվածներ սուրբ գրական պատմություններից, եկեղեցիների գործունեությունից: Այս երկու, ինչպես նաև կրթական ուղղվածություն ունեցող թերթերում ու ամսագրերում, առկա էին կրթական վիճակագրություններ, տարբեր վարժարաններին վերաբերող տեղեկություններ, աշակերտների գրական ստեղծագործություններ: Անհնար է ուսումնասիրել նշված ժամանակի քաղաքական, հասարակական-տնտեսական, կրթական-մշակութային կյանքը, առանց հարուստ տեղեկություններ պարունակող մամուլի:

---

653 «Յուսաբեր», թիվ 78, հուլիսի 4, 1933:

654 Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, էջ 34:

655 «Որբաշխարհի աստղը», թիվ 1, մարտ, 1925, էջ 1:

# ՎԵՐՋԱԲԱՆ

Սփյուռքի սկզբնավորմանը նախորդում են որոշակի գործընթացներ, որոնք պարարտ հող են նախապատրաստում Սփյուռքը ներկայացնող համայնքների առաջացման համար: Վերջիններս ձևավորվում են էթնիկական, քաղաքական, կրոնական կամ տնտեսական գործընթացների արդյունքում:

Հայ սփյուռքի ձևավորման գլխավոր պատճառը 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին Օսմանյան կայսրության տարածքում իրականացված Հայոց ցեղասպանությունն էր, որի հետևանքով Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայությունը սփռվեց աշխարհով մեկ: Գաղթական հայերը հաստատվեցին և հայկական գաղթօջախներում, և նոր բնակավայրերում գոյավորելով հայկական Սփյուռքը:

Նշված ժամանակաշրջանում սփյուռքահայ համայնքները կազմավորվեցին հոգևոր, քաղաքական և հասարակական տարրերի գոյության պայմաններում: Հոգևոր բնագավառը ներկայացված էր ի դեմս հայ հարանվան եկեղեցիների, քաղաքական բնագավառը հայ ավանդական կուսակցությունների, հասարակական բնագավառը հայրենակցական միությունների, հասարակական, կրթական, մշակութային, բարեգործական, երիտասարդական, կանանց, սպորտային կազմակերպությունների ու միությունների:

1920-1930-ական թթ. սփյուռքահայ իրականությունը արձանագրեց կրթական ու մշակութային լուրջ տեղաշարժեր: Սփյուռքահայ տարբեր համայնքներում բացվեցին եկեղեցիներ, դպրոցներ, տպագրվեցին թերթեր, զարկ տրվեց թատերական և գրական կյանքի զարգացմանը: Կրթամշակութային այս վերելքը նպաստեց ինչպես հայապահպանությանը, այնպես էլ Սփյուռքի կայացմանը: Արդյունավետ կրթամշակութային գործունեություն ծավալվեց Մերձավոր Արևելքի հայ համայնքներում մասնավորապես Սիրիայում և Լիբանանում: Հիմնադրված կրթական հաստատություններից ու մշակու-

թային օջախներից շատերը կարճ կյանք ունեցան պայմանավորված առաջին հերթին նյութական սուղ պայմաններով: Այնուամենայնիվ, այդ հաստատությունները իրենց ներդրումն ունեցան մատաղ սերնդի դաստիարակման և սփյուռքահայ մշակույթի զարգացման գործում: Կրթամշակութային այն հաստատությունները, որոնք կարողացան պահպանել իրենց գոյությունը, աննախընթաց վերելք ապրեցին նաև հետագայում: Նշված ժամանակաշրջանում հաստատված նախակրթարաններն ու մանկապարտեզները, երիտասարդական միություններն ու կիրակնօրյա դպրոցները լուծեցին հայապահպանության տեսանկյունից մեծ կարևորություն ներկայացնող խնդիրներ: Նախ, նրանց հաջողվեց հայեցի կրթություն տալ Ցեղասպանությունից մազապուրծ մատաղ սերնդին, ապա դաստիարակել որպես օրինապաշտ քաղաքացիներ: Նշված ժամանակաշրջանում մի շարք հիմնախնդիրների առկայության հետևանքով հայ կրթական հաստատությունները անհավասար մրցակցության մեջ մտան ֆրանսիական հաստատությունների հետ: Չնայած բազմաթիվ դժվարություններին, աստիճանաբար լուծվեցին բոլոր հիմնախնդիրները: Հայ համայնքերն ամրապնդվեցին տեղերում և իրենց ուրույն տեղը գրավեցին ոչ միայն Մերձավոր Արևելքի երկրների հայ համայնքերի շրջանում, այլև ողջ Սփյուռքում:

Աշխատանքի հիմնական բովանդակությունից կարելի է եզրակացնել.

- Նորաստեղծ սիրիահայ և լիբանանահայ համայնքները միայնակորեն կարողացան ստեղծել ուրույն կրթական և մշակութային համակարգ: Համակարգի ստեղծման գործում իրենց մասնակցությունը ցուցաբերեցին հատկապես Կիլիկիո կաթողիկոսությունը, հայ ավանդական կուսակցությունները, ՀԲԸՄ-ն և մյուս բարեգործական կազմակերպությունները, հայրենակցական միությունները և ողջ սփյուռքահայությունը: Նշված ժամանակաշրջանում Խորհրդային Հայաստանի,

ինչպես նաև ֆրանսիական մանդատային իշխանությունների օժանդակությունը գաղթական հայությանը շատ չնչին էր: Սփյուռքահայությանը ղեկավարող կենտրոնական մարմնի բացակայության պայմաններում Կիլիկիո կաթողիկոսությանը հաջողվեց աստիճանաբար ամրապնդել իր դիրքերը, համակարգել գաղթական հայության կրթական ու մշակութային գործերը:

- Արևմտահայության և կիլիկիահայության սոցիալ-մշակութային արժեհամակարգի մաս կազմող մայրենի լեզվի, հայ ավանդական ընտանիքի և հայ հարանվան եկեղեցիների պահպանումը Սիրիայում և Լիբանանում նպաստեցին կրթական և մշակութային գործի սկզբնավորմանը: Հայ ազգային վարժարաններում դասավանդությունը հայերեն լեզվով կազմակերպելու արդյունքում թուրքերենը այլևս չկիրառվեց, իսկ ֆրանսերեն և արաբերեն լեզուները ուսուցանվեցին սահմանված կարգով: Հայ ավանդական ընտանիքի գոյությունը զգալիորեն կանխեց ապօրինի, համարյուն և խառնամուսնությունների, ինչպես նաև անուրիության տարածումը: Հայ ընտանիքը երեխայի առաջին կրթավայրն էր, և ընտանիքի օժանդակությամբ երեխան դպրոց էր հաճախում: Հայ հարանվան եկեղեցիները մեծապես նպաստեցին դպրոցի կայացմանն ու մշակույթի զարգացմանը: Հատկապես Հայ Առաքելական ու Հայ Ավետարանական եկեղեցիների նպաստը մեծ է այդ գործում: Ազգային և հայ ավետարանական վարժարանները կառուցում էին եկեղեցուն կից: Եկեղեցին առաջինն էր հոգում դպրոցի կարիքները, դիմումներ ներկայացնում ֆրանսիական մանդատային իշխանություններին: Փայտաշեն եկեղեցիների սրահներում բազմիցս կազմակերպվել են թատերական ներկայացումներ, բանախոսություններ, կիրակնօրյա դպրոցներ:

- Կրթական և մշակութային կյանքի կազմակերպման առաջին նախադրյալն այն էր, որ հայերը անծանոթ չէին Սիրիային և Լիբանանին: Սիրիայում հայկական գաղթօջախներ

էին ստեղծվել վաղ ժամանակներից: Երկրորդ կարևոր նախադրյալը Ցեղասպանությունից հետո արաբների բարյացակամ վերաբերմունքն էր հայերի նկատմամբ: Ի տարբերություն այլ երկրների, գաղթական հայությունը առանց խոչընդոտների հաստատվեց նշված երկրներում և հնարավորություն ստացավ նախաձեռնել կրթական և մշակութային կյանքի կազմակերպումը: Երրորդ նախադրյալը հայ գաղթականներին Նանսենյան միջազգային անձնագրերի տրամադրումն էր: Այդպիսով, սփյուռքահայն ստացավ քաղաքացիություն, և սկսեց իր գործուն մասնակցությունը բերել ոչ միայն ներհամայնական, այլև Սիրիայի և Լիբանանի քաղաքական, տնտեսական և հասարակական կյանքին:

- Կրթական կյանքը զարգանում էր հետևյալ ուղղություններով՝ դպրոցական, արհեստագործական (գործնական), մարմնակրթական, հոգևոր: Դպրոցական և մարմնակրթական ուղղությունները առկա էին հայ կրթական բոլոր հաստատություններում հատկապես ազգային վարժարաններում: Արհեստագործական ուղղությունը լուրջ զարգացում արձանագրեց հատկապես որբանոցներում: Հոգևոր կրթական ուղղությունը զարգացավ Լիբանանում հայ հարանվանությունների կողմից հիմնված հոգևոր կրթական հաստատություններում:
- Հայ ազգային վարժարանները կազմակերպվել էին նախաեղեռնյան փորձառությամբ: Նշված ժամանակաշրջանում վարժարանն ուներ երկու բաժին՝ նախակրթարան և մանկապարտեզ, որից յուրաքանչյուրն ուներ իր կարգերը: Վարժարանում, սակայն, առկա էին կազմակերպական խնդիրներ. աշակերտների սակավության պատճառով ոչ բոլոր նախակրթարաններում էին գործում սահմանված կարգերը: Դարձյալ նույն պատճառով բոլոր վարժարանները չէ, որ ունեին մանկապարտեզի բաժիններ: Տարբեր հանգամանքների առկայությամբ տեղի էին ունենում տնօրենների և ուսուցչական կազմի պարբերական փոփոխություններ:

- Որբանոցները կարևոր նշանակություն էին ներկայացնում ոչ միայն հայապահպանության, այլև կրթական ու մշակութային տեսանկյուններից: Հատկապես ամերիկյան Մերձավոր Արևելքի նպաստամատույց կոմիտեի կողմից հովանավորվող որբանոցներում գործում էին հայ նախակրթարաններ, մանկապարտեզներ, ուսանողական և ուսուցչական թատերախմբեր, գրական խմբակներ, հրատարակվում էին թերթեր:
- Սիրիայում և Լիբանանում հիմնվեցին հայ առաքելական (ազգային), հայ ավետարանական, հայ կաթոլիկ վարժարաններ: Նշված ժամանակաշրջանում այդ վարժարանների գործունեությունը կանոնավորված չէր, և առկա էին մի շարք հիմնախնդիրներ: Հատկապես օրակարգային էին կրթական միասնական ծրագրին, ուսուցիչների մասնագիտացմանը, դասագրքերին, վարժարանների շենքային պայմաններին վերաբերող հիմնախնդիրները, որոնք լուծելու նպատակով ջանք չէին խնայում Բերիո և Լիբանանի թեմերի ուսումնական խորհուրդները, ՀԲԸՄ-ն, հայ ուսուցչական միությունները:
- Հայ Առաքելական եկեղեցու նախաձեռնությամբ հիմնված կիրակնօրյա դպրոցները կարևոր դերակատարում ունեցան մատաղ սերնդի հոգևոր դաստիարակության գործում: Ազգային վարժարաններում դասավանդվում էր կրոնի պատմություն: Մյուս առարկաների նման դասընթացները կանոնավորված չէին, ինչը լրացնելու նպատակով որոշվեց հաստատել կիրակնօրյա դպրոցներ, որոնք իրենց գոյությունը շարունակում են մինչ օրս:
- Հայապահպանության տեսանկյունից առաջնահերթ նշանակություն ունեին թատերական կյանքի, գրական կյանքի զարգացումը և պարբերական մամուլի գոյությունը: Կարճ ժամանակում հիմնված հայկական թատերախմբերը սիրողական էին. մասնագիտացված թատրոն գոյություն չուներ: Գրական կյանքը շատ դանդաղ էր զարգանում: Նշված ժամանակաշրջանում սփյուռքահայ գրական կենտրոններն

էին Փարիզը և Բոստոնը: Սիրիայում և Լիբանանում մասնագետ գրողները թվով շատ քիչ էին: Պարբերական մամլո օրգաններից մի քանիսը կարողացան իրենց գոյությունը պահպանել: Մեծամասնությունը կարճ կյանք ունեցավ:

- Նշված ժամանակաշրջանում ուսումնասիրվող թեմայի կարևոր առանձնահատկությունն է կրթության և մշակույթի որոշ ճյուղերի փոխկապակցվածությունը: Սիրիահայ և լիբանանահայ մշակույթի ճյուղերը իրենց նպաստն էին բերում կրթությանը, իսկ դպրոցն այն վայրն էր, որտեղ զարգանում էր թատերական ու գրական կյանքը, տպագրվում էին թերթեր:

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

## 1. Արխիվային սկզբնաղբյուրներ

*ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)*

1.1 ֆ. 409, ց. 1, գ. 4743:
1.2 ֆ. 430, ց. 1, գ. 790, 799, 843:
1.3 ֆ. 1421, ց. 1, գ. 27, 55, 117, 125, 154, ց. 2, գ. 9, 50, 71, 105:

*բ) Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան (ԳԱԹ)*

1.4 Բ. Աբովյանի ֆ., գ. 2/1, 11/1:
1.5 Թ. Ազատյանի ֆ., գ. 8իբ:
1.6 Թ. Թորանյանի ֆ., գ. 21, 31, 49:
1.7 Վ. Մալեզյանի ֆ., գ. 65, 76:

*գ) Մ. Մաշտոցի անվան Մատենադարան (ՄՄ)*

1.8. Ա. Ալպոյաճյանի ֆ., թղթ. 8, վավ. 24/11, 24/13, թղթ.14, վավ. 32/52:

## 2. Հրատարակված սկզբնաղբյուրներ

*ա) հայերեն*

2.1 Ազգային Հայկազեան վարժարան, Ծրագիր, Հալէպ, տպ. Արարա, 1931, 136 էջ:
2.2 Աղազարեան Մ., Սիսի վերջին աթոռակալը եւ իր մեղապարտ գաւառականը, Պէյրութ, 1926, 150 էջ:
2.3 Անուանացանկ Ճիպէյլի ամերիկեան որբանոցի սաներու. 1920-1925, Պէյրութ, 1969, 24 էջ:
2.4 Արշակունի Ա., Վահան Վարդապետեան եւ Լիբանանի ազգային գաւառական ժողովը, Պէյրութ, տպ. Հրազդան, 1927, 75 էջ:

2.5 Արտաւազդ արքեպիսկոպոս, Ընտանեկան դաստիարակութիւնը մեր տուներէն ներս, Հալէպ, տպ. Տէր-Սահակեան, 1937, 143 էջ:
2.6 Գրաճեան Ա., Քանի մը օր Լիբանանի լեռներուն վրայ եւ լիբանանահայ կեանք, Պէյրութ, տպ. Վահագն, 1934, 119 էջ:
2.7 Գույումճեան Մ., Քէլէկեան-Միսուան որբանոցի վերջին անցքերու առթիւ, ա.հ.տ., 1930, 48 էջ:
2.8 Երկու տանիմարգացի յոբելեարներ. միս Մարիա Փ. Ճէզըպյըն եւ միս Քարէն Մ. Փիթըրսըն, Պէյրութ, տպ. Տարօն, 1937, 61 էջ:
2.9 Թղթակցութիւն Սահակ Ա. եւ Բաբգէն Բ. կաթողիկոսներու, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի տանն Կիլիկիոյ, 1999, 352 էջ:
2.10 Թղթակցութիւն Սահակ Բ. Կաթողիկոսի եւ Պետրոս արք. Սարաճեանի, Նիկոսիա, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 2010, 478 էջ:
2.11 Կանոնագիր Ազգ. Սահակեան վարժարանի, Պէյրութ, տպ. Կ. Տօնիկեան, 1935, 23 էջ:
2.12 Կէրկէրեան Օ., Դպրոցական առողջապահութիւն: Ուսուցիչներու, աշակերտներու, հոգաբարձուներու, ծնողքներու և ամէն անհատի համար, Պէյրութ, «Հրազդան», 1932, 68 էջ:
2.13 Կրթական ծրագիր ազգային նախակրթարաններու, Պէյրութ, տպ. Ազատ, 1931, 63 էջ:
2.14 Կրթական ծրագիր ազգային վարժարանաց Բերիոյ թեմին, Հալէպ, տպ. Տէր-Սահակեան, 1934, 36 էջ:
2.15 Կրթական ծրագիր ծաղկոց-մանկապարտէզներու, Պէյրութ, տպ. Ազատ, 1930, 10 էջ:
2.16 Հայ ազգային առաջնորդարան, Ծրագիր-կանոնագիր կրթական տուրքի Հայ ազգ. առաջնորդարանի, Հալէպ, տպ. Մամուլ, 1923, 8 էջ:
2.17 Հայ եկեղեցասէր տիկնանց միութիւն, Կանոնագիր Հայ եկեղեցասէր տիկնանց միութեան Ս. Նշան եկեղեցւոյ: Հիմնուած 1927-ին, Պէյրութ, տպ. Դպրևանուց կաթ. Կիլիկիոյ, 1934, 14 էջ:

2.18 Հայկական բարեգործական ընդհանուր միութիւն, Ուսման ծրագիր գաղթական համայնքներու յատուկ նախակրթարաններու, Գահիրէ, տպ. Սահակ-Մեսրոպ, 1936, 42 էջ:
2.19 Հայ որբախնամ ընկերութիւն, Կանոնագիր հայ որբախնամ ընկերութեան, Աղեքսանդրիա, տպ. Զ. Պէրպէրեան, 1916, 8 էջ:
2.20 Հայ որբախնամ ընկերութիւն. Այնթապի որբանոց, Ակնարկ մը հաստատութեան պարագաներուն եւ քառամեայ պատմութեան վրայ (1919 օգոստոսէ 1923 յունիս), Աղեքսանդրիա, տպ. Ա. Գասպարեան, 1923, 40 էջ:
2.21 Հովհաննիսյան Ա., Գաղութահայ խնդիրներ, Երևան, Պետհրատ, 1925, 26 էջ:
2.22 ՀՕԿ, Ծրագիր-կանոնագիր Հ. Օ. Կ. Հայաստանի օգնութեան կոմիտէի Սուրիոյ եւ Լիբանանի շրջան, Պէյրութ, տպ. Մասիս, 1936, 16 էջ:
2.23 Մանուր Ֆաթիմի Յ., Կիլիկիոյ կաթողիկոսութիւնը եւ գաղութահայութիւնը, Երևան, տպ. Սահակ-Մեսրոպ, 1934, 24 էջ:
2.24 Մարտունի Ալ., Կուսակցությունները գաղութահայության մեջ, Երևան, Պետհրատ, 1924, 141 էջ:
2.25 Նիկոլ Ա., Սուրիա եւ մենք, Գահիրէ, ա. հ., 1932, 30 էջ:
2.26 Չարըգ Ղ., Յուշարար ազգ. դաստիարակութեան եւ ուսուցմանց: Ուսուցիչներու, աշակերտներու եւ ծնողներու համար, Պէյրութ, տպ. Տէր Յովհաննէսեան, 1928, 55 էջ:
2.27 Չօպանեան Ա., Մեր գրականութիւնը, Բարիզ, տպ. Յ. Պօղոսեան, 1926, 38 էջ:
2.28 Պետրոսեան Ղ., Որբին գիրքը: Յիշատակներ Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյց ընկերութեան գործունէութենէն: Սուրիա, Լիբանան եւ Պաղեստինի շրջան. 1915-1930, Պէյրութ, տպ. Ազատ, 1932, 118 էջ:
2.29 Պէյրութի հայ ճեմարանին ծրագիրը 1930, ա. տ., տպ. Հրազդան, 95 էջ:
2.30 Սահակ Բ կաթողիկոս Կիլիկիոյ, Կոնդակներ եւ հայրական խօսքեր, Անթիլիաս, տպ. Դպրևանուց կաթ. Կիլիկիոյ, 1934, 151 էջ:

2.31 Սերոբեան Մ., Ազգ. դաստիարակութիւն ազգ. նկարագիր, Պէյրութ, տպ. Տէր Յովհաննէսեան, 1928, 53 էջ:
2.32 Սիւրիոյ Երուսաղէմապատկան թեմերու Կիլիկիոյ կաթողիկոսութեան փոխանցումը, Երուսաղէմ, տպ. Ս. Յակոբեանց, 1930, 57 էջ:
2.33 Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գ. Դ, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատարակչություն, 1997, 589 էջ:

*բ) այլ լեզուներով*

2.34 Армянский вопрос на Лозанской конференции, Тифлис, Закkнига, 1926, 36 стр.
2.35 Борьян Б., Армения, международная дипломатия и СССР, ч. 2, Москва, 1929, 434 стр.
2.36 Кряжина В., Национально-освободительное движение на Ближнем Востоке, ч. 1, Москва, Мосполитграф, 1923, 152 стр.
2.37 Babikian M., Civilization and Education In Syria and Lebanon, Beyrut, 1936, not pp.
2.38 Barton J., Story of Near East Relief (1915-1930), New York, The Macmillan Company, 1930, 479 p.
2.39 O'zun Raymond, Les Etats du levant sous mandat Francais, Paris, 1931, 155 p.

## 3. Ուսումնասիրություններ, հուշագրություններ

### Գրքեր

*ա) հայերեն*

3.1 Աբրահամյան Ա., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, գ. Բ, Երևան, Հայպետհրատ, 1964, 421 էջ:
3.2 Ազատեան Լ., Հայ որբերը Մեծ Եղեռնի, գ. Ա, Լոս Անճելըս, 1995, 240 էջ:
3.3 Ազգային միացեալ վարժարան, Դամասկոսի միացեալ վարժարանի քսանհինգամեայ յոբելեան. 1929-1954, Հալէպ, տպ. Արեւելք, 1956, 101 էջ:

3.4 Աթիկեան Յ., Համառօտ պատմութիւն հայ գաղթավայրերու, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1985, 289 էջ:
3.5 Ալէմէտտին Ի., Փափա Քինցլեր եւ հայերը, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1999, 190 էջ:
3.6 Ալպոյաճեան Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրութ, տպ. Սեւան, 1961, 1535 էջ:
3.7 Ահարոնեան Յովհ., Հայ աւետարանական եկեղեցին ճանապարհներու խաչաձեւումին, Պէյրութ, տպ. Թեքնոփրես, 1988, 335 էջ:
3.8 Անթոյեան Ս., Ինքնակերտումի ճամբով, Պէյրութ, տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 2006, 175 էջ:
3.9 Ասատրյան Ա., Սփյուռքահայ արվեստ. արդի վիճակը և զարգացման հեռանկարները: Լիբանանահայ թատրոն, Երևան, «Ոսկան Երևանցի», 2011, 184 էջ:
3.10 Ավագյան Գ., Հայաստանը և հայերս աշխարհում, Երևան, 1994, 168 էջ:
3.11 Գաբրիելյան Վ., Հայ նորագույն գրականություն: Սփյուռքահայ գրականություն: Ուսումնական ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 424 էջ:
3.12 Գասպարեան Ս., Միջազգային մամուլ եւ չորրորդ իշխանութեան դրոյթը, Հալէպ, Կիլիկիա, 2005, 79 էջ:
3.13 Գասպարեան Ս., Ինքնութեան խճանկար, Պէյրութ, 2001, 158 էջ:
3.14 Գասպարյան Ս., Սփյուռքահայ գաղթօջախներն այսօր: Մշակութային կյանքի ուրվագիծ, Երևան, Հայպետհրատ, 1962, 248 էջ:
3.15 Ղալլաքյան Կ., Ռամկավար ազատական կուսակցության պատմություն (1921-1940), գիրք առաջին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 1999, 309 էջ:
3.16 Ղալլաքյան Կ., Հայ սփյուռքի պատմություն: Համառոտ ակնարկ, Երևան, «Զանգակ-97», 2004, 288 էջ:
3.17 Դանիէլեան Ժ., Լիբանանահայ դպրոց: Թիւեր եւ մտորումներ, Պէյրութ, 2002, 64 էջ:

3.18 Դանիէլեան Ժ., Ռամկավար ազատական մամուլը (Մատենագիտական ակնարկ), Պէյրութ, Araz Press, 1982, 48 էջ:
3.19 Դանիէլեան Ժ., Հայ պարբերական մամուլի հարցեր, «Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1977, էջ 267-320:
3.20 Դանիէլեան Ժ., Բանասիրութեան բաւիղներում մէջ, Երևան, «Մուղնի», 2011, 632 էջ:
3.21 Դանիէլեան Ժ., Բանասիրական որոնումներ, Պէյրութ, «Սիփան», 1996, 367 էջ:
3.22 Եղիայեան Բ., Ժամանակակից պատմութիւն Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ (1914-1972), Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 1975, 946 էջ:
3.23 Եղիայեան Բ., Սերունդի մը դաստիարակութիւնը, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիո, 1962, 450 էջ:
3.24 Երեւանեան Գ., Պատմութիւն Չարսանճագի հայոց, Պէյրութ, տպ. Կ. Տոնիկեան, 1956, 700 էջ:
3.25 Զաւարեան վարժարանի տասներկու տարիները. 1936-1948, Հալէպ, Զավարեան միութեան հրատ., 1948, 72 էջ:
3.26 Զէքիեան Լ., Հայապատում, Լոս Անջելես, «Ապրիլ» հրատ., 2001, 435 էջ:
3.27 Զոհրապեան Կ., Յուշեր, Վենետիկ, Մխիթարեան հրատ., 2007, 431 էջ:
3.28 Թյությունջյան Պ., Լիբանանի ժողովրդի ազատագրական պայքարը և հայ համայնքը (1920-1990 թթ.), Երևան, «Լույս» հրատարակչություն, 1992, 334 էջ:
3.29 Թորանեան Թ., Մարաշի Ազգ. Մեսրոպեան կեդր. երկսեռ վարժարանը 65 տարի հայ սերունդներու ծառայութեան մէջ, Հալէպ, Թեքնոփրես, 1988, 128 էջ:
3.30 Թորանեան Թ., Ակնարկ սուրիահայ թատերական պատմութեան եւ դերասան Բարսեղ Աբովեանի յուշերը, Պէյրութ, ա. հ., 1973, 216 էջ:

3.31 Թոփուզյան Հ., Սիրիայի և Լիբանանի հայկական գաղթօջախների պատմություն (1841-1946), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 372 էջ:
3.32 Թութիկեան Վ., Հայ Աւետարանական եկեղեցին 1846-1996 թթ., ա.տ, 1996, 378 էջ:
3.33 Թութիկեան Վ., Կարեւոր դէպքեր եւ դէմքեր հայ քրիստոնէական պատմութեան մէջ, Միչիգան, 2001, 130 էջ:
3.34 Ժամկոչյան Հ., Հիշատակ մնացողներին, Երևան, «Դալլ», 2003, 119 էջ:
3.35 Լէփէճեան Կ., 90 ամեակ Հալէպի «Անդրանիկ» թատերախումբի, Հալէպ, «Ոսկետառ», 2010, 90 էջ:
3.36 Լիբանանի հայոց անձնական իրաւունքը, Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Կիլիկիոյ, 1956, 228 էջ:
3.37 Խարբերդ եւ անոր ոսկեղէն դաշտը: Յուշամատեան ազգային, պատմական, մշակութային եւ ազգագրական, Նիւ Եորք, ա. հ., 1959, 1500 էջ:
3.38 Խրլոբեան Տ., Ոսկեմատեան, հ. Ա, Պէյրութ, 1950, 504 էջ:
3.39 Խրլոպեան Տ., Քսանհինգամեայ հունձքը: Լեւոնեան յոբելինական հատոր, Հալէպ, տպ. Ա. Տէր-Սահակեան, 1948, 294 էջ:
3.40 Խուրշուդյան Լ., Սփյուռքահայ կուսակցությունները ժամանակակից էտապում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 1964, 470 էջ:
3.41 Կիրակոսյան Ա., Հայկական հարցը և հայերի ցեղասպանությունը, Երևան, Գասպրինտ, 2007, 101 էջ:
3.42 Համազասպյան Վ., Հայկական բարեգործական ընդհանուր միությունը և Հայաստանը, Երևան, Տիգրան Մեծ, 2001, 304 էջ:
3.43 Համազասպյան Վ., Սովետական Հայաստանը և սփյուռքը, Երևան, 1980, 36 էջ:
3.44 Համազգայինի եւ Ն. Փալանճեան ճեմարանի քսանհինգամեակ. 1929-1954, Պէյրութ, տպ. Համազգային ընկերութեան, 1954, 253 էջ:
3.45 Հայ աւետարանական գոլէճ (Հիմնուած 1923-ին), Պէյրութ, 2008, 45 էջ:

3.46 Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1967, 569 էջ:
3.47 «Հայ սփյուռք» հանրագիտարան, Երևան, Հայկ. հանրագ. հրատ., 2003, 732 էջ:
3.48 Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն, Դար մը պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Գահիրէ-Փարիզ-Նիւ- Եորք, 2006:
3.49 Հայկական բարեգործական ընդհանուր միութիւնը եւ Հայ երիտասարդաց ընկերակցութիւնը (Անդրանիկ) Լիբանանի մէջ: Համառօտ ակնարկ, Պէյրութ, 2006, 90 էջ:
3.50 Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Հայ Երիտասարդաց Ընկերակցութիւն, Ոսկեմատեան. 1931-1981, Հալէպ, Հ. Ե. ընկ. գործադիր մարմին, 1982, 201 էջ:
3.51 Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուս. հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, «Միտք», 2001, 136 էջ:
3.52 Հայրունի Ա., Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, «Նաիրի», 2002, 544 էջ:
3.53 Հարությունյան Ն., Լիբանանի և Սիրիայի հայկական դպրոցները, Երևան, Զանգակ-97, 2002, 304 էջ:
3.54 Հովակիմյան Բ., Ցեղասպանության թեման հայ թատրոնում (1895-1995), Երևան, Գիտություն, 1998, 140 էջ:
3.55 Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 3, Երևան, էդիթ Պրինտ, 2011, 493 էջ:
3.56 Հովհաննիսյան Ն., Արաբական երկրների պատմություն, հ. 4, Երևան, էդիթ Պրինտ, 2011, 468 էջ:
3.57 Ղազարեան Ս., Եղեռնի հետքերով, Պէյրութ, Մալաթիոյ կրթասիրաց ընկ., 1965, 174 էջ:
3.58 Ղազարեան Ս., Հայկական փոքր գաղութներ. Ազէզ, Աֆրին, Արաբ-Փունար, Պէյրութ, տպ. Սեւան, 1965, 264 էջ:
3.59 Ղարիպ Ա., Յուշերու բազին, Պէյրութ, 2009, 335 էջ:
3.60 Ճէպէճեան Հ., Հայուն գոյապայքարի ճանապարհը, Պէյրութ, Համազգայինի Վահէ Սէթեան տպ., 2010, 464 էջ:
3.61 Ճիզմէճեան Մ., Քրիստոնէական դաստիարակութիւն եւ կիրակնօրեայ դպրոց, Երեւան, 2012, 205 էջ:

3.62 Մայըր Ք., Լոյս խաւարի մէջ: Տեղեկագիր 25 ամեայ յոբելեանին Ղազիրի կուրանց դպրոցի եւ աչազուրկներու ու համրերու դպրոցին ներկայ կեանքէն 1953, Պէյրութ, տպ. Օլիմփիք, 1953, 102 էջ:
3.63 Մարգարյան Ն., Հայոց ցեղասպանության հետևանքով Սիրիայում հաստատված հայ տարագիրների կարգավիճակը և հայ-արաբական փոխհարաբերությունները (1915-1924 թթ.), Երևան, Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտ, 2013, 180 էջ:
3.64 Մելիքեան Վ., Արևմտահայերի համագումարները և հայկական հարցի փուլերը 1917-1923 թթ., Երևան, Զանգակ-97, 2007, 78 էջ:
3.65 Մելքոնյան Է., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության պատմություն, Երևան, Մուղնի, 2005, 584 էջ:
3.66 Մեր գիւղը Դատեմ, Պոսթըն, տպ. Հայրենիք, 1958, 256 էջ:
3.67 Յուշագիրք Հայ ազգ. Սահակեան բարձրագոյն վարժարանի: Արծաթեայ յոբելեան. 1923-1948, Պէյրութ, 1948, 178 էջ:
3.68 Յուշամատեան Կիլիկեան կրթական հաստատութեան (1921-1996), Հալէպ, Կիլիկեան շրջ. խնամակալութեան հրատ., 1996, 1038 էջ:
3.69 Յուշամատեան Ճիպէյլի ամերիկեան որբանոցի. 1920-1925, Պէյրութ, Համազգային, 1969, 324 էջ:
3.70 Յուշամատեան Մուսա լերան, Պէյրութ, տպ. Ատլաս, 1970, 877 էջ:
3.71 Յուշարձան ուսուցչապետ Բենիամին Ժամկոչեանի, Երևան, ՎՄՎ-ՊՐԻՆՏ, 2010, 582 էջ:
3.72 Նաճարեան Մ., Յուշագիրք. 1918-1948: 30-ամեա ազգ. իրադարձութիւններ Սուրիոյ եւ Լիբանանի հայ կեանքէն առնուած, Պէյրութ, Մասիս, 1949, 94 էջ:
3.73 Շահինեան Գ., Վերաքաղ, Պէյրութ, Շիրակ, 2004, 598 էջ:
3.74 Շանթ Լ., Երկեր, հ. 7, Պէյրութ, Համազգային, 1952, 304 էջ:
3.75 Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան. արծաթեայ յոբելեան. 1906-1931, Բարիզ, 1935, 458 էջ:

3.76 Չոլաքեան Յ., Քարէն Եփփէ հայ գողգոթային եւ վերածնունդին հետ, Հալէպ, Արեւելք, 2001, 168 էջ:
3.77 Չոլաքեան Յ., Անտիոքի մերձակայ Ռուձի հովիտի հայերը (Պատմա-ազգագրական ուսումնասիրութիւն), Անթիլիաս, տպ. Կաթողիկոսութեան Հայոց Մեծի Տանն Կիլիկիոյ, 2006, 257 էջ:
3.78 Չոլաքեան Յ., Քեսապ, հ.168Ա, Հալէպ, տպ. Արեւելք, 1995, 570 էջ:
3.79 Չոլաքեան Յ., Հալեպահայ պարբերական մամուլի համառօտ նկարագրութիւն, Հալէպ, 1978, 64 էջ:
3.80 Չորմիսեան Լ., Համապատկեր Արեւմտահայոց մեկ դարու պատմութեան, հ. Գ, Պէյրութ, 1975, 750 էջ:
3.81 Պատմագրություն հայ յեղափոխական դաշնակցության, հ. Դ, Աթենք, ՀՅԴ բյուրոյի հրատ., 1995, 524 էջ:
3.82 Պատմութիւն Ս. Դ. Հնչակեան կուսակցութեան, հ. Ա, Պէյրութ, տպ. Շիրակ, 1962, 616 էջ:
3.83 Պարիկեան Հ., Վարժապետեան Յ., Պատմութիւն Սուրիոյ հայ տպարաններու, Հալէպ, 1973, 264 էջ:
3.84 Պողարեան Գ., Այնթապականք, հ. Ա, Պէյրութ, 1974, 260 էջ:
3.85 Սահակյան Ռ., Թուրք-ֆրանսիական հարաբերությունները և Կիլիկիան 1919-1921 թթ., Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1970, 326 էջ:
3.86 Սարգիսեան Ս., Կիրակնօրեան օրրանը հայ մանուկին, Անթիլիաս, 1996, 223 էջ:
3.87 Սիմոնյան Հ., Սփյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում, Երևան, Հայաստան, 1968, 673 էջ:
3.88 Սիւրմէեան Ա., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Ա, Հալէպ, տպ. Անի Ա. Էքմէքճեան, 1940, 1093 էջ:
3.89 Սիւրմէեան Ա., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Բ, Պէյրութ, տպ. Մազլումեան, 1946, 977 էջ:
3.90 Սիւրմէեան Ա., Պատմութիւն Հալէպի հայոց, հ. Գ, Բարիզ, 1950, 996 էջ:
3.91 Սեւան Գ., Հայրենիք-սփիւռք գրական կապերը (1920-1985), Երևան, 1988, 34 էջ:

3.92 Սևան Գ., Սփյուռքահայ գրականության պատմության ուրվագծեր (1946-1985), Երևան, Գիտություն, 1997, 368 էջ:
3.93 Վարդապետյան Ա., Հայաստանի օգնության կոմիտե (1921-1937), Երևան, Հայաստան, 1966, 124 էջ:
3.94 Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ, հ. Բ, Պէյրութ, 1981, 543 էջ:
3.95 Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ, հ. Գ, Պէյրութ, 1981, 583 էջ:
3.96 Վարժապետեան Ս., Հայերը Լիբանանի մէջ, հ. Դ, Ֆերլօն, 1983, 485 էջ:
3.97 Տանն Կիլիկիո կաթողիկոսությունը պատմության լույսի տակ (Պատմական համառոտ ակնարկ), Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1960, 119 էջ:
3.98 Տէմիրճեան Վ., Գաւազանագիրք Լիբանանի եւ Սուրիոյ հայոց թեմերու առաջնորդութեանց, հ. Ա, Անթիլիաս, տպ. Անթիլիաս, 1980, 512 էջ:
3.99 Տէր-Խաչատուրեան Ա., Հ. Յ. Դաշնակցութեան 100ամեայ մամուլը (1890-1990), Պէյրութ, տպ. Համազգայինի Վահէ Սէթեան, 1990, 87 էջ:
3.100 Տէր-Խաչատուրեան Ա., Սոցիալ դեմոկրատ հնչակեան կուսակցութեան մամուլը (1887-1992), Պէյրութ, ա. հ., 47 էջ:
3.101 Տունկեան Գ., Նիւթեր Լաթաքիոյ եւ շրջակայքի հայ ազգաբնակչութեան պատմութեան, Հալէպ, տպ. Բերիոյ թեմի ազգային առաջնորդարանի, 1983, 60 էջ:
3.102 Փաշայան Ա., Հարությունյան Լ., Սիրիայի հայ համայնքը: Արդի հիմնախնդիրներ: Երևան, Լուսակն, 2011, 154 էջ:
3.103 Փափազեան Բ., Սփիւռքահայութեան հոգեբանական հոլովոյթը եւ հայ դատը, Գահիրէ, 1980, 59 էջ:
3.104 Քասունի Ե., Լուսաշաւիղ: Պատմութիւն Հայ աւետարանական շարժման. 1846-1946, Պէյրութ, տպ. Շնորհօքեան, 1947, 603 էջ:
3.105 Քէլէշեան Մ., Սիս-մատեան, Պէյրութ, տպ. Հայ ճեմարանի, 1949, 770 էջ:

3.106 Քէշիշեան Վ., Գոյապատում: Պատմութիւն Ս. Գէորգի եկեղեցւոյ եւ Մարաշի ազգ. Մեսրոպեան վարժարանի Հալէպ, Հալէպ, Կիլիկիա, 2002, 224 էջ:
3.107 Քյունցլեր Յ., Երեսուն տարի ծառայություն Արևելքում, Երևան, ԵՊՀ հրատ., 2008, 100 էջ:
3.108 Քոթթոշյան Ռ., Հալեպի արձանագրությունները, Երևան, ՀՃՈՒՀ հրատ., 2013, 656 էջ:

*բ) այլ լեզուներով*

3.109 Григорян В., Хедвиг Бюль-эстонский друг армянского народа, Ереван, Наири, 2007, 144 стр.
3.110 Гриншилд Т., Поселение армянских беженцев в Сирии и в Ливане в 1915-1939 гг., Ереван, Академия наук Армянской СССР, 1982, 17 стр.
3.111 Дятлов В., Мелконян Э., Армянское диаспора: Очерки социокультурной типологии, Ереван, Институт Кавказа, 2009, 206 стр.
3.112 Салиби К., Очерки по истории Ливана, Москва, Прогресс, 1969, 304 стр.
3.113 Луцкий В., Национально-освободительная война в Сирии (1925-1927), Москва, Наука, 1964, 336 стр.
3.114 Тер-Мкртчян Л., Армяне в странах арабского востока на современном этапе, Москва, Наука, 1965, 60 стр.
3.115 Hitti Ph., History of Syria, London, Macmillan and Co. LTD, 1951, 749 p.
3.116 Kerr S., The lions of Marash. Personal experiences with Near East Relief. 1919-1922, Albany, State University of New York press, 1973, 318 p.
3.117 Peterson M., “Starving Armenians”, America and the Armenian Genocide, 1915-1930, Charlottesville, University of Virginia press, 2004, 199 p.
3.118 Sanjian A., The Armenian Communities under Ottoman dominion, Cambridge, Harvard University press, 1965, 390 p.

## Հոդվածներ

*ա) հայերեն*

3.119 Անտինյան Ս., Սփյուռքի հայկական կազմակերպությունների, միությունների և Հայ Եկեղեցու դերը հայկական դպրոցների ստեղծման ու զարգացման գործում, «21-րդ դար», թիվ 5, Երևան, 2011, էջ 46-67:
3.120 Բայրամյան Ա., Ալեքսանդրետի սանջաքի իրավական ստատուսը և քաղաքական խմբավորումները (1920-1930-ական թվականներ), «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ», թիվ 12, Երևան, 1964, էջ 27-36:
3.121 Գալստյան Գ., Արևմտահայ գյուղը սփյուռքի գրականության մեջ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 1, Երևան, 1974, էջ 220-224:
3.122 Գասպարյան Գ., Սփյուռքահայ գրականության զարգացման մի քանի հարցեր, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 2, Երևան, 1986, էջ 153-159:
3.123 Խուլոյան Տ., Սփյուռքի մի քանի հիմնական խնդիրների մասին, «ՀՍՍՌ ԳԱ տեղեկագիր: Հասարակական գիտություններ», թիվ 8, Երևան, 1963, էջ 63-76:
3.124 Հայրունի Ա., Կարեն Յեպեի «Դր. Լեփսիուսի արևելյան առաքելության» համապարփակ հայանվեր գործունեությունը Հալեպում 1923-1933 թթ., «Կանթեղ», թիվ 6, Երևան, 2002, էջ 149-158:
3.125 Ղազախեցյան Վ., Սփյուռքում խորհրդային իշխանության քաղաքականության հարցի շուրջ, «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2, Երևան, 2008, էջ 109-124:
3.126 Մարգարյան Ն., Արաբների վերաբերմունքը Սիրիայում հաստատված հայ որբերի նկատմամբ, «Մերձավոր Արևելք: Պատմություն, քաղաքականություն, մշակույթ», թիվ 3, Երևան, 2006, էջ 101-105:
3.127 Մելիքսեթյան Հ., Հայ գաղթականության հարցը Ազգերի լիգայում, «ՀՍՍՌ ԳԱ Տեղեկագիր: Հասարակական գիտություններ», թիվ 9, Երևան, 1961, էջ 43-60:
3.128 Չոլաքեան Յ., Ծագումով հայ լատինները Սուրիոյ մէջ, «21-րդ դար», թիվ 2, 2012, էջ 62-79:

3.129 Սարգսյան Ռ., Լիբանանահայ կրթական հաստատությունները (1922-1980-ական թվականներ), «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 2, Երևան, 1990, էջ 47-52:
3.130 Սեփոյան Ն., Ազգային կամ էթնիկական ինքնության հարցը հայ սփյուռքին մեջ, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 1, Երևան, 1992, էջ 48-55:
3.131 Սրապիոնյան Մ., Լիբանանահայ գրականությունը սփյուռքահայ գրականության համապատկերում, «Սփյուռքագիտություն. տեսության և պատմության հարցեր» տարեգիրք, Երևան, 2012, էջ 128-134:
3.132 Ֆիշենկճեան Ա., Ճարապլուս (սկիզբէն՝ 1920էն մինչև յիսունական թվականներ), «Բանբեր Հայաստանի արխիվների», թիվ 2, Երևան, 2005, էջ 230-235:
3.133 Ֆիշենկճյան Ա., Սիրիահայ կրթական հաստատությունները 1920-1980 թթ., «Կանթեղ», թիվ 1, Երևան, 2003, էջ 155-165:

*բ) ռուսերեն*

3.134 Мелконян Э., Армянская семья в условиях армянской диаспоры, «Советская этнография», Москва, N 6, 1988, стр. 98-104.
3.135 Мелконян Э., Армянская апостольская церковь во взаимотношениях Армении и Диаспоры, «Религия и политика на Кавказе», Ереван, 2004, стр. 31-52.

## 4. Պարբերական մամուլ

*ա) թերթեր*

4.1 «Ազգ», Երևան, 2002-2005:
4.2 «Աւետիք», Զմմառ, 1932-1933, 1935-1936:
4.3 «Արարատ», Բեյրութ, 1938-1939:
4.4 «Արեւ», Ալեքսանդրիա-Կահիրե, 1922-1925, 1931-1933, 1937:
4.5 «Եփրատ», Հալեպ, 1927-1930, 1932-1933:
4.6 «Զուարթնոց»: Հոգեւոր եւ հովուական հանդէս Զմմառու Արծիվեան միաբանութեան, Զմմառ, 1982, 2009:

4.7 «Ժողովուրդի ձայն», Բէյրութ, 1943:
4.8 «Լիբանան», Բէյրութ, 1924, 1926-1931:
4.9 «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1921-1939:
4.10 «Հայ կեանք», Բէյրութ, 1925:
4.11 «Հայ պատանի», Բէյրութ, 1934:
4.12 «Հասկ», Անթիլիաս, 1932-1935:
4.13 «Հրաւիրակ», Երևան, 1925-1926:
4.14 «Միութիւն», Կահիրե-Փարիզ, 1921-1922, 1925, 1927, 1931, 1933, 1939:
4.15 «Յուշարար», Բոստոն, 1927:
4.16 «Յուսաբեր», Կահիրե, 1924-1936:
4.17 «Նոր աւետաբեր», Բէյրութ, 1928:
4.18 «Ովասիս», Բէյրութ, 1925-1926:
4.19 «Որբաշխարհի աստղը», Բէյրութ, 1925-1926, 1929-1930:
4.20 «Պատանեկան արձագանք», Բէյրութ, 1937:
4.21 «Ջանասեր», Բէյրութ, 1938-1939:
4.22 «Սիոն», Երուսաղեմ, 1928-1929:
4.23 «Սուրիական մամուլ», Հալեպ, 1922-1926:
4.24 «Փիւնիկ», Բէյրութ, 1924:

*ա) ամսագրեր և տարեգրքեր*

4.25 «Ամէնուն նոր տարեցոյցը», Բ տարի, Բէյրութ, 1938:
4.26 «Գեղարդ» սուրիահայ տարեգիրք, գիրք Ա, Հալեպ, 1975, գիրք Բ, Հալեպ, 1976-1978, գիրք Գ, Հալեպ, 1985, գիրք Դ, Հալեպ, 1991, գիրք Ե, Հալեպ, 1996, գիրք Զ, Հալեպ, 2000:
4.27 «Դամասկահայ ամէնուն տարեգիրքը 1958» , Դամասկոս, ա. թ.:
4.28 «Դրազարկ» տարեգիրք Հ. Ե. Կ. Դ., Ա տարի, Անթիլիաս, 1967, Բ տարի, Անթիլիաս, 1968, Գ տարի, Անթիլիաս, 1969, Դ տարի, Անթիլիաս, 1970, Ե տարի, Անթիլիաս, 1971:
4.29 «Երիտասարդ հայուհի», Բէյրութ, 1933:
4.30 Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը 1922», Կ. Պոլիս, 1922:
4.31 Թէոդիկ, «Ամէնուն տարեցոյցը 1927», Կ. Պոլիս, 1927:
4.32 «Լիբանանահայ պատկերազարդ օրացոյց 1936», Բէյրութ, 1936:

4.33 «Հունահայ տարեգիրք», Աթենք, 1928, 1929:
4.34 «Հայկազեան հայագիտական հանդէս», Բէյրութ, 1970–1973:
4.35 «Նաւասարդ», Բէյրութ, 1964:
4.36 «Շիրակ», Բէյրութ, թիվ 10, 1986:
4.37 «Պատկերազարդ կիլիկեան տարեցոյց», Հալեպ, 1934:
4.38 «Սահակ-Մեսրոպ», Բէյրութ, 1928:
4.39 «Սարկաւագին եգիպտահայ տարեցոյցը», Կահիրե 1935:
4.40 «Սարկաւագին տարեցոյցը», Կահիրե, 1931:
4.41 «Սիհուն», Բէյրութ, 1930:
4.42 «Սուրիական ալպոմ», Հալեպ, 1929:
4.43 «Սուրիահայ տարեցոյց», Հալեպ, 1924-1925:
4.44 «Սուրիահայ տարեգիրք», Բէյրութ, 1929:
4.45 «Տաթեւ» կրօնական տարեցոյց, Հալեպ, 1926, 1929:
4.46 «Օշական», Հալեպ, 1987, 1988:
4.47 «Ֆրանսիահայ տարեգիրք», Փարիզ, 1927:

## 5. Համացանցային կայքեր

5.1 http://grtasiratz.org/topic/86.
5.2 http://sahagianschoolaleppo.com/pagea.php?id=6&lang=arm.
5.3 http://shamlian-tatikian.blogspot.com/2010/03/75.html.

# SUMMERY

The issues related to cultural and educational life and the mission of Identity preservation of Syrian and Lebanese Armenians are elucidated by the author in his scientific work.

At the outset, the author addresses to the issues related to the international situation in the post-genocide period as well as to the main features of strengthening Armenian-Diaspora relations. Due to French mandate authorities' policy in Middle East the provocations of Turkish forces were numerous. Sometimes Armenian–Arab relations have been strained by these provocations. In his turn the Soviet Armenia called the diaspora for class struggle in no way promoting the strengthening of diaspora-homeland relationship. The Social-cultural set of values of Armenians founded residence in Lebanon and Syria in the 1940's are reviewed afterwards. In this framework the preservation of traditional Armenian "family", language and churches are of great importance. These components contributed greatly to building the education work and culture. The coverage of education development backgrounds, destinations and the current issues is therefore very important. It is obvious that having Armenian traditions in Syria, good-neighborly relations between Armenians and Arabs, and giving "Nansen Passport" to Armenian refugees became an important prerequisite to organize the Armenian educational and cultural activity. Besides, existing orphanages in Syria and Lebanon as educational institutions and their role has been highlighted by the author in the viewpoint of creating unified education system.

Further on, in his scientific work the author presents the foundation and activity of Armenian national, evangelical and catholic schools in Aleppo, Damascus, and in the other Armenian populated areas of Syria in 1920-1930s. Reference has been made to the number of students, the budgets of colleges. The foundation

and activity of Armenian national, evangelical and catholic schools in Beirut and in the other Armenian populated areas of Lebanon in 1920-1930s are introduced as well. The differences and characteristics of Armenian educational networks in Syria and Lebanon are addressed as well. It was obvious that in Syria and in Lebanon after the Great Genocide the Armenian educational system was formed spontaneously and in many cases it can be considered the result of newly located refugees and not of the activity of local affiliates. However, Catholicos of Cilicia Sahak II Khabayan did a lot of work to coordinate the educational activities and to create an organized system of education. The author also referred to the establishment of Sunday schools, which was of great importance in point of giving spiritual upbringing to the generation of Genocide survivors and in terms of filling the gaps of Church and religious history classes in Armenian national schools. Sunday schools still continue their noble work.

The author also submits the theatrical and literary life. What was remarkable in the mentioned period was that in the Syrian and Lebanese communities they had not been specialized in theater and literary life was just beginning to develop. In the Diaspora especially Paris and Boston came out as Armenian cultural centers. The issues related to the periodic press can be found in this work. Migrant Armenian people had its rich media in a very short period of time. During the mentioned period both party and spiritual-educational press organs, which were solving ideological as well as a number of disciplinary problems, were of great demand. Thus, in 1920-1930s, Syrian and Lebanese communities' educational and cultural life was completed just with these branches, as the theatrical and literary life as well as the periodical press were closely related to the educational activities. The later, in his turn, contributes to the development of these cultural branches. That's why it did not touch upon these cultural branches in the work.

# РЕЗЮМЕ

Свою научную работу автор начинает с представления вниманию читателя истоков формирования культурно-образовательной жизни этих армянских общин, учитывая международное положение постгеноцидного периода, а также особенности формирования отношений между Советской Арменией и Диаспорой. Так, например, на Ближнем Востоке в результате политики, проведенной французской мандатной властью, осуществлялись провокационные действия со стороны турецких сил, которые время от времени создавали напряжение в армяно-арабских отношениях. А Советская Армения, в свою очередь, призывала армянскую Диаспору к классовой борьбе, никак не содействуя укреплению связей между родиной и Диаспорой. Анализируется социально-культурная система ценностей армян, основавшихся в Сирии и Ливане в 1920-1930 гг. В этих рамках акцентируются важность армянской традиционной семьи, сохранение родного языка и церкви. Эти составные элементы сильно способствовали организации культурной жизни и образования.

Автор освещает существующие проблемы в образовании, предпосылки и направления для его развития. Глубоко и всесторонне представляется организационная структура армянской национальной школы. И становится очевидным, что армянские традиции в Сирии, армяно-арабские дружеские отношения и предоставление «Нансенских» паспортов армянским эммигрантам в Сирии явились главными предпосылками в организации культурно-образовательной деятельности. Рассказывая о детских приютах, действующих в этот период в Сирии и Ливане, учитывается их главная роль как основных армянских образовательных учреждениях, и указывается на их важность с точки зрения создания единой образовательной системы.

После Геноцида армянская образовательная система в Сирии и Ливане формировалась стихийно, и во многих случаях была больше результатом деятельности новоутвержденной эммиграции, а не местных властей. И в этом аспекте автор анализирует основы

деятельности, структуру, бюджет, количество учеников как армянских национальных, так и протенстанских и католических школ в Алеппо, Дамаске, Бейруте и других армянонаселенных пунктах Сирии и Ливана. В тоже время, он указывает на особенности и различия этих образовательных сетей. Для духовного воспитания поколения, спасшегося от Геноцида, учитывается важность дневных воскресных школ, с точки зрения заполнения пробелов уроков по истории церкви и религий, преподаваемых в армянских национальных школах. Обратим внимание на то, что воскресные школы и по сей день продолжают свою благодарную деятельность.

Представление культурной жизни сирийской и ливанской диаспор автором расскрывается с помошью двух ее главных составляюших: театральной и литературной. В этом периоде показательно то, что действовал непрофессиональный театр, а литературная жизнь только начала развиваться. Как армянские культурные центры в Диаспоре особенно выступали Париж и Бостон.

Особое место занимает приобретение богатой периодическая печати за очень короткое время. В указанный период имели большой спрос как партийные, так и духовные, образовательные печатные органы, которые решали задачи как идейного, так и воспитательного характера.

Итак, согласно сделанным автором выводам, в 1920-1930 гг. культурно-образовательная жизнь сирийской и ливанской общин была целостной именно этими отраслями, ибо как театральная и литературная жизнь, так и периодическая печать тесно сталкивались с образовательной деятельностю. А последняя в свою очередь способствовала развитию вышеуказанных отраслей культуры.

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ........................................................................ 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ.
ՍԻՐԻԱՅԻ ԵՎ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ ՀԱՅԱՊԱՀՊԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ............................ 17
1.1. Հայկական համայնքների ձևավորման պատմությունից .........17
1.2. Հայապահպան առաքելության կազմակերպումը .................. 34
1.3. Որբանոցներ նպաստը կրթական գործի կազմակերպմանը .... 43

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.
ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ ԵՎ ԼԻԲԱՆԱՆՈՒՄ ........................................... 63
2.1. Կրթական գործի կազմակերպումը Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում ................................................... 63
2.2 Կրթական հաստատությունները Սիրիայում ........................ 77
2.3. Կրթական հաստատությունները Լիբանանում .................... 108
2.4. Կիրակնօրյա դպրոցները Սիրիայում և Լիբանանում ............ 125

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ.
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ .................................................. 131
3.1. Թատերական կյանքը ..................................................131
3.2 Գրական կյանքը ...........................................................138
3.3 Պարբերական մամուլը ................................................ 143

Վերջաբան ........................................................................ 153
Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ ............... 159
SUMMERY ........................................................................ 175
РЕЗЮМЕ ..........................................................................177

# ԿԱՐՈ ԱՂՎԱՆԻ ԺԱՄԽԱՐՅԱՆ

## Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ.

# KARO AGHVAN ZHAMKHARYAN

## Educational and cultural life and Armenian identity preservation issues in Syria and Lebanon in 1920-1930s

# КАРО АГВАНОВИЧ ЖАМХАРЯН

## Культурно-образовательная жизнь и задачи армяносохранения в армянских общинах Сирии и Ливана в 1920-30 гг.

ԱՀԱ AHA
ՊՈԼԻԳՐԱՖ POLYGRAPH

Տպագրվել է «ԱՅԱ Պոլիգրաֆ» տպագրատանը
Տպաքանակը 150 օրինակ

[2000թ.]

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0585425

104910



**ԿԱՐՈ ԱՂՎԱՆԻ ԺԱՄԽԱՐՅԱՆԸ** ծնվել է 1986 թվականի մայիսի 17-ին Երևանում: Սովորել է Երևանի Վարդանանց ասպետների անվան թիվ 106 դպրոցում: Դպրոցական տարիներին զուգահեռ հաճախել է նաև Պատանի հանդիսատեսի երաժշտական դպրոցի շեփորի բաժին:

2002 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետ՝ ստանալով բակալավրի աստիճան:

2006-2008 թթ. ծառայել է ԼՂՀ Մարտակերտի շրջանում:

2008-2010 թթ. սովորել է Խ.Աբովյանի անվան պետական մանկավարժական համալսարանում՝ ստանալով մագիստրոսի կոչում:

2009-2010 թթ. Երևանի Ներսես Մեծի անվան թիվ 124 հանրակրթական դպրոցում աշխատել է որպես պատմության ուսուցիչ:

2009-2016 թթ. աշխատել է «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամում՝ որպես վերլուծաբան:

2010-2016 թթ. հանդիսացել է նաև ՀՀ Ոստիկանության զորքերի նվագախմբի երաժիշտ՝ շեփորահար:

2012 թ. ՀՊՄՀ-ում ձևակերպվել է հայցորդ, իսկ 2015 թ. հուլիսի 3-ին ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Կրթամշակութային կյանքը և հայապահպանության խնդիրները Սիրիայի և Լիբանանի հայկական համայնքներում 1920-1930-ական թթ.» թեմայով և ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Կարո Ժամխարյանը հանդես է եկել մեկ տասնյակից ավելի գիտական զեկուցումով, հեղինակել 2 տասնյակից ավելի գիտական հոդված, որոնց հիմնական մասը հասցրել է հանձնել տպագրության:

Կարոն պլանավորում էր դեռ երկար աշխատանք տանել իր թեկնածուական թեման ընդարձակելու ուղղությամբ, անգամ հաշվի չառնելով Սիրիայում առկա պատերազմական իրավիճակը, նպատակ ուներ անձամբ գնալ Սիրիա և տեղում ուսումնասիրել հայկական համայնքների կրթամշակութային խնդիրները: Կարոն նամակ էր ուղարկել Կիլիկիայի Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա կաթողիկոսին՝ նշելով, որ ցանկանում է տպագիր աշխատության շրջանակներում ներկայացնել 1920-1930-ական թթ. սիրիահայ և լիբանանահայ համայնքների մշակույթը, քանզի հայագիտության շրջանում մինչ օրս վերոնշյալ թեմային վերաբերող համակարգված աշխատանք չի կատարվել: Ապա շարունակում է, որ գործը թերի կլինի, եթե գիտական շրջանառության մեջ չդրվեն և աշխատանքի մաս չկազմեն Անթիլիասում պահպանված արխիվային նյութերը և խնդրում իրեն արխիվային նյութերն ուսումնասիրելու և Անթիլիասի շրջափակում գիշերակաց ունենալու հնարավորություն տալ:

Ու ինչպես իր ատենախոսության էջերում նշում է Կարոն, չէր հավակնում այս մեկ աշխատանքի շրջանակներում սպառված համարել թեման:

Ավա՜ղ... Անժամանակ ընդհատվեց երիտասարդ պատմաբանի, տաղանդավոր երաժշտի, սիրված մարդու կյանքի երկրային ուղին՝ կիսատ թողնելով որքա՜ն անելիքներ...

Կարոն ամուսնացած էր: Ունի 1 դուստր՝ ԿԱՐՍԻՆԵ ԺԱՄԽԱՐՅԱՆ...

ISBN 978-9939-853-32-1

9 789939 853321